

ԿԱՌԱՎԱՐԵԼՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



ՅՈՒՆԵՍԿՕ



Համաշխարհային
ժառանգության
կոմիտե



Ի Կ Կ Ռ Օ Մ



Ի Կ Օ Մ Օ Մ



Published in 2018 by the United Nations Educational, Scientific and Cultural Organization, 7, place de Fontenoy, 75352 Paris 07 SP, France

© UNESCO /ICCROM/ICOMOS/IUCN 2018



This publication is available in Open Access under the Attribution-NonCommercial-ShareAlike 3.0 IGO (CC-BY-NC-SA 3.0 IGO) license (<http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/igo/>). By using the content of this publication, the users accept to be bound by the terms of use of the UNESCO Open Access Repository (www.unesco.org/open-access/terms-use-ccbysa-en).

Original title: **Managing Cultural World Heritage**

Published in 2013 by the United Nations Educational, Scientific and Cultural Organization.

The designations employed and the presentation of material throughout this publication do not imply the expression of any opinion whatsoever on the part of UNESCO concerning the legal status of any country, territory, city or area or of its authorities, or concerning the delimitation of its frontiers or boundaries.

The ideas and opinions expressed in this publication are those of the authors; they are not necessarily those of UNESCO and do not commit the Organization.

ICCROM

Via di San Michele 13
I-00153 Rome
Italy
Tel.: +39 06 585-531
Faks: +39 06 585-53349
E-mail: iccrom@iccrom.org
<http://www.iccrom.org>

ICOMOS

11 rue du Séminaire de Conflans
94220 Charenton-le-Pont
France
tel.: +33(0)1 41 94 17 59
fax: +33(0)1 48 93 19 16
e-mail: secretariat@icomos.org
<http://www.icomos.org>

IUCN

Rue Mauverney 28
1196 Gland
Switzerland
tel.: +41 (22) 999-0000
fax: +41 (22) 999-0002
e-mail: worldheritage@iucn.org
<http://www.iucn.org>

UNESCO World Heritage Centre

7, Place de Fontenoy
75352 Paris 07 SP
France
tel.: +33 (0)1 45 68 11 04
<http://whc.unesco.org>

Cover photo: uKhahlamba / Drakensberg Park, South Africa

© OUR PLACE – The World Heritage Collection • www.ourplaceworldheritage.com

Original Graphic design, cover design and typeset: Recto Verso

Adapted by: Hasmik Stepanyan, Nerses Kostanyan

Printed by: Master Print

Printed in Yerevan 2018

Տպագրված է 2018 թ. ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակութային կազմակերպության կողմից
7, Ֆոնտենոյ հրապարակ, 75352 Փարիզ 07 SP
Ֆրանսիա

© ՅՈՒՆԵՍԿՕ / ԻԿԿՈՒՄ / ԻԿՕՄՕՍ / IUCN, 2018 թ.



Սույն հրատարակությունը մատչելի է բաց հղմամբ՝ հեղինակության հաստատման – շահույթի չհետապնդման – տարածման 3.0 IGO (CC-BY-NC-SA 3.0 IGO) լիցենզիայի շրջանակներում (<http://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/igo/>):

Սույն հրատարակության բովանդակությունն օգտագործելիս՝ կիրառողներն ընդունում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաց ավանդապահոցի կողմից կիրառման համար սահմանված շրջանակները (www.unesco.org/open-access/terms-use-cbbyncsa-en):

Բնօրինակի վերնագիր՝ **Managing Cultural World Heritage**

Հրատարակիչ՝ 2013 թ. Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն

Սույն հրատարակությունում կիրառված սահմանումները և նյութերի ներկայացումը չի ենթադրում ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿԿՈՒՄ-ի, ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի անունից որևէ տեսակետի ներկայացում, որը կարող է առնչվել ցանկացած պետության, տարածքի, քաղաքի կամ շրջանի, կամ դրանց իշխանությունների, կամ դրանց սահմանների սահմանազմման հետ:

Սույն հրատարակությունում արտահայտված գաղափարները և տեսակետները հեղինակներին են և անպայման չէ, որ դրանք համընկնեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿԿՈՒՄ-ի, ԻԿՕՄՕՍ-ի և IUCN-ի հետ և պարտավորություն առաջացնեն կազմակերպության համար:

ԻԿԿՈՒՄ

Դի Սան Միշել 13

I-00153 Հռոմ

Իտալիա

Հեռ. +39 06 585-531

Ֆաքս. +39 06 585-53349

Էլ. ֆոստ. iccrom@iccrom.org

<http://www.iccrom.org>

ԻԿՕՄՕՍ

Սեմինար դե Կոնֆլանս փողոց 11

94220 Շարենտոն-լե-Պոնտ

75015 Փարիզ

Ֆրանսիա

Հեռ. +33 (0)1 45 67 67 70

Ֆաքս. +33 (0)1 45 66 06 22

Էլ. փոստ. secretariat@icomos.org

<http://www.icomos.org>

IUCN

Մովերնեյ փողոց 28

1196 Գլանդ

Շվեյցարիա

Հեռ. +41 (22) 999-0000

Ֆաքս. +41 (22) 999-0002

Էլ. փոստ. worldheritage@iucn.org

<http://www.iucn.org>

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգության կենտրոն

7, Ֆոնտենոյ հրապարակ

75352 Փարիզ 07 SP

Ֆրանսիա

Հեռ. +33 (0)1 45 68 18 76

Ֆաքս. +33 (0)1 45 68 55 70

Էլ. փոստ. wh-info@unesco.org

<http://whc.unesco.org>

**Շապիկի լուսանկարը՝ Ֆաթեհիուր Սիկրի, Հնդկաստան © Յան Ֆրից
Գրաֆիկական դիզայնը, շապիկի դիզայնը և շարվածքը՝ Ռեկտո Վերսո**

Կազմեցին: Հասմիկ Ստեփանյան, Ներսես Կոստանյան

Տպագրվել է: «Մաստեր Պրինտ» ՍՊԸ

Հրատարակվել է՝ Երևան 2018

Համաշխարհային ժառանգությանը նվիրված ձեռնարկների շարքի մասին

1972 թ-ին Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի ընդունումից ի վեր՝ Համաշխարհային ժառանգության ցանկը շարունակում է փոփոխվել և կայուն կերպով ընդլայնվել: Ընդլայնման հետ միասին անդամ պետությունների համար առաջ է գալիս կոնվենցիայի կիրարկման հարցում ուղղորդման անհրաժեշտություն: Փորձագետների տարբեր հանդիպումների և պարբերական զեկույցների ներկայացման արդյունքում բացահայտվել է տարբեր ոլորտներում վերապատրաստման ու կարողությունների զարգացման վրա կենտրոնանալու անհրաժեշտություն, որի ընթացքում անդամ պետություններն ու Համաշխարհային ժառանգության կառավարիչները կարիք ունեն աջակցության: Համաշխարհային ժառանգությանը նվիրված ձեռնարկների շարքը պատասխանն է այդ կարիքների:

Շարքի հրատարակումը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի խորհրդատվական երեք մարմինների (ԻԿԿՌՕՄ, ԻԿՕՄՕՍ և IUCN) ու Համաշխարհային ժառանգության կենտրոնի, որպես Կոնվենցիայի քարտուղարության, նախաձեռնությունն է: Համաշխարհային ժառանգության կոմիտեն 30-րդ նիստի ընթացքում (Վիլնյուս, Լիտվա, 2006 թ. հուլիս) իր աջակցությունը հայտնեց այս նախաձեռնությանը և պահանջեց, որ խորհրդատվական մարմինները և Համաշխարհային ժառանգության կենտրոնը սկսեն մի շարք թեմատիկ գործառնական ձեռնարկների նախապատրաստական և հրատարակման աշխատանքները: Կոմիտեի 31-րդ (2007 թ.) և 32-րդ (2008 թ.) նիստերի ընթացքում հաստատվեց հրատարակման պլանը և սահմանվեց առաջնահերթ տպագրվելիք նյութերի վերնագրերի ցանկը:

Երեք խորհրդատվական մարմինների և Համաշխարհային ժառանգության կենտրոնի ներկայացուցիչներից բաղկացած խմբագրական խորհուրդը գումարում էր կանոնավոր նիստեր՝ նախապատրաստական և հրատարակման տարբեր ասպեկտների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

Ելնելով թեմատիկայից՝ յուրաքանչյուր ձեռնարկի համար խորհրդատվական մարմիններից մեկը կամ Համաշխարհային ժառանգության կենտրոնը հանդես են եկել որպես համակարգող մարմին, մինչդեռ վերջնական հրատարակումն իրականացվել է Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից:

Ձեռնարկները նպատակ ունեն անդամ պետություններին, ժառանգության պաշտպանության ոլորտում ներգրավված մարմիններին, տեղական կառավարություններին, հուշարձանի կառավարիչներին և Համաշխարհային ժառանգության հետ կապ ունեցող համայնքներին, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմիններին խորհրդատվություն տրամադրելու կոնվենցիայի կիրարկման, իսկ մնացյալ շահագրգիռ կողմերին բացահայտման և պահպանության գործընթացների վերաբերյալ: Դրանց նպատակը գիտելիքի և աջակցության տրամադրումն է, որի շնորհիվ կձևավորվի ներկայացուցչական և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցանկ՝ բաղկացած լավագույնս պաշտպանված և արդյունավետ կառավարվող հուշարձաններից:

Ձեռնարկները կազմվել են Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի տեսանկյունից կիրառողի համար հարմարավետ կարողությունների կառուցման և իրազեկվածության աստիճանի բարձրացման համար: Դրանք կարող են ազատ գործածվել ինքնուսուցման, ինչպես նաև կրթական աշխատառնությունների ընթացքում, և պետք է լրացնեն կոնվենցիայի տեքստի ընկալման հիմնական դրույթները և Գործառնական ձեռնարկի իրականացումը:

Սույն շարքի հրատարակությունները գոյություն ունեն նաև PDF առցանց ձևաչափով, որոնք կարող են ազատորեն ներբեռնվել:

Հրատարակությունների անուններն են՝

Համաշխարհային ժառանգության համար աղեփների կառավարում (2010 թ. հունիս)

Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստում (երկրորդ հրատարակում, 2011 թ. նոյեմբեր)

Համաշխարհային մշակութային ժառանգության կառավարում (2012 թ. հունիս)

Համաշխարհային բնության ժառանգության կառավարում (2013 թ. նոյեմբեր)

Շնորհակալական խոսք

Առաջատար հեղինակներ

- Զամինի Վիջետուրիյա, ԻԿԿՌՕՄ
- Զեյն Թոմփսոն, ԻԿԿՌՕՄ-ի խորհրդատու
- Քրիստոֆեր Յանգ, ԻԿԿՌՕՄ-ի խորհրդատու

Խմբագիրներ և այլ համագործակցողներ

- Զորջ Աբունգու, նախկին տնօրեն, Քենիայի ազգային թանգարաններ
- Թիմ Բադման, IUCN
- Զիովաննի Բոկարդի, Համաշխարհային ժառանգության կենտրոն
- Կարոլինա Կաստելանո, ԻԿՕՄՕՍ
- Զոգեֆ Քինգ, ԻԿԿՌՕՄ
- Մեջթիլդ Ռոսլեր, Համաշխարհային ժառանգության կենտրոն
- Հերբ Սթովել, ԻԿՕՄՕՍ
- Նաոմի Դիգան, ԻԿԿՌՕՄ-ի պրակտիկանտ 2011 թ., Իռլանդիա
- Զիուլիա Կոտտա, ԻԿԿՌՕՄ-ի պրակտիկանտ 2011 թ., Իտալիա
- Ռուգիլե Բալկաիտե, ԻԿԿՌՕՄ-ի պրակտիկանտ 2011 թ., Լիտվա
- Էլենահինսերտի Մեդիչի, ԻԿԿՌՕՄ (մատակարարում)

ԻԿԿՌՕՄ-ի կառուցված ժառանգության պահպանության դասընթացի (CBH12) մասնակիցներ

Համաշխարհային ժառանգության կենտրոնի համակարգում

Վեսնա Վուջիչից – Լուգասսի

Լորա Ֆրանկ

Առաջաբան

Կիշորե Ռաո, Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրեն

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 40-րդ տարեդարձի տոնակատարությունները, որոնք կայացան ամբողջ 2012 թ. ընթացքում հնարավորություն տվեցին վերհանելու որոշ օրակարգային հիմնախնդիրներ, որոնց առնչվում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանները: Հոբելյանական տարվա պաշտոնական կարգախոսը՝ «Համաշխարհային ժառանգությունը և կայուն զարգացումը. տեղական համայնքների դերակատարությունը» հաստատվեց և շեշտադրվեց, թե որոնք են մեր ժամանակներում Համաշխարհային ժառանգությանն ուղղված և էական նշանակություն ունեցող մարտահրավերները, այդ արժեքների պահպանությունը հասարակության համար՝ հաշվի առնելով փոփոխությունները՝ պայմանավորված համաշխարհային երևույթներով, ինչպիսիք են անհավասարությունը, գլոբալիզացիան, կլիմայի փոփոխությունը և մասշտաբային ուրբանիզացիան: Ժառանգության պահպանության հարցերով զբաղվող ընկերությունը վաղուց գիտակցում է կոնսերվացման նոր մոտեցումների անհրաժեշտությունը, որի միջոցով կներկայացվեր իրենց աշխատանքի բարդությունը և կխթանվեր դրական փոխներգործությունն ավելի մեծ միջավայրի հետ, որտեղ էլ գտնվում են իրենց հուշարձանները՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղական համայնքներին:

Սա հատկապես կարևոր է մշակութային ժառանգությունը ներկայացնող հուշարձանների համար, որոնց նշանակությունը հաճախ վիճարկման առարկա է տարբեր շահագրգիռ կողմերի միջև՝ ելնելով սոցիալ-մշակութային արագ իրականացվող փոփոխություններից: Այդիսկ պատճառով ուրախ եմ ներկայացնելու Համաշխարհային մշակութային ժառանգության մասին Գործառնական ձեռնարկը, որը մշակվել է ԻԿԿՌՕՄ-ի կողմից՝ ԻԿՕՄՕՄ-ի, IUCN-ի և Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ խորհրդակցությամբ, և լրացնում է Համաշխարհային բնության ժառանգության մասին Գործառնական ձեռնարկին (հրատարակվել է 2012 թ. հունիսին)¹: Ինչպես մյուս տեղեկագրի դեպքում էր, այնպես էլ հիմա տվյալ ձեռնարկով չի փոխարինվում առարկայի վերաբերյալ լայնածավալ գրականությունը, այլ պարզապես հասցեական ուղղորդում է տրամադրվում Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանների կառավարման գործում՝ տրամադրելով օգտակար հղումներ գոյություն ունեցող մոտեցումներին և օրինակներին: Ձեռնարկը նաև ներմուծում է նորարարական հայեցակարգային օրակարգ մշակութային ժառանգության կառավարման համակարգը հասկանալու համար, որը 2009 թ. ի վեր ԻԿԿՌՕՄ-ի կողմից իրականացվող հետազոտության արգասիքն է: Հուսով եմք, որ այն կաջակցի ոչ միայն ժառանգության ոլորտում ներգրավված մասնագետներին, այլև քաղաքականություն մշակողներին և համայնքներին՝ լավագույնս խնդիրները սահմանելու և հուշարձաններում ի հայտ եկող խնդիրների լուծման հնարավոր ճանապարհների բացահայտման համար: Համակարգը ներկայացնում է «ընդհանուր նվազագույն հայտարարը» կառավարման հնարավոր համակարգերի երկարաձիգ շարքից, որը գոյություն ունի համաշխարհային մակարդակով մշակութային ժառանգության հուշարձանների համար, ինչպիսիք են պատմական քաղաքները, մշակութային տեղանքապատկերները, առանձին կամ հնագիտական հուշարձանները:

Հուսով եմք, որ ընթերցողներն, անհրաժեշտության դեպքում, կօգտվեն տվյալ ձեռնարկից և ակնկալում եմք ստանալ մեկնաբանություններ և առաջարկություններ՝ այն բարելավվելու և հարստացնելու առանձին օրինակներով և նախադեպերով, որոնք կներկայացնեն լավագույն փորձը և սովորած դասերը:

Կիշորե Ռաո
(2011-2015 թթ.)

1. Accessible online at: <http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-703-1.pdf>

Առաջաբան

Ստեֆանո դի Կարո, ԻԿԿՌՕՄ-ի գլխավոր տնօրեն

Սույն ձեռնարկը նպատակ ունի զարգացնելու 1972 թ. կոնվենցիայի ձեռքբերումները Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պահպանության ոլորտում՝ աջակցելով Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման գործում ներգրավված անձանց պաշտպանելու մշակութային արժեքները և հնարավորություն տալով մեծ օգուտներ ունենալ ժառանգության ոլորտում: Այն համալրում է գոյություն ունեցող ուղեցույցը՝ մասնավորապես Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործառնական ուղեցույցը և դրա ուղեկից ձեռնարկը՝ նվիրված Համաշխարհային բնության ժառանգության կառավարմանը:

Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկումը ցույց է տալիս, որ Համաշխարհային ժառանգության կոմիտեն հուշարձանը դիտարկել է որպես Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող մշակութային կամ բնության հուշարձան: Սա հանգեցնում է անդամ պետության համար լրացուցիչ պահանջների առաջացմանը կառավարման ոլորտում՝ ապահովելով պաշտպանության բարձր ստանդարտներ և համապատասխանությունը համաշխարհային ժառանգությանն առնչվող գործընթացների պահանջներին:

1972 թ. կոնվենցիայով մշակութային ժառանգությունը բաժանվել է երեք մեծ խմբի՝ հուշարձաններ, տեսարժան վայրեր և հուշարձանախմբեր: Կոնվենցիայի գոյության քառասուն տարիների ընթացքում ցանկը համարվել է հուշարձանային համալիրներով, որոնք ենթադրում են կառավարման առավել խիստ պահանջներ: Համաշխարհային ժառանգության կարգավիճակի հեղինակությունը կարող է ժառանգության նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացնել հանրության շրջանում, և անդամ պետությունները նպատակ են հետապնդում դրանք օգտագործել որպես առաջատար օրինակներ ժառանգության կառավարման համակարգի բարելավման համար: Համաշխարհային ժառանգության համակարգը անդամ պետությանը ճանաչում է հուշարձանի համար պատասխանատվություն կրող առաջնահերթ մարմին, իսկ կառավարման ոլորտում հաջողությունը կախված է առանձին հուշարձանի քաղաքական, սոցիալական, ինստիտուցիոնալ և տնտեսական համատեքստից: Անկասկած, ժառանգության ոլորտում պարզունակ ֆիզիկական պաշտպանությունից անցումը դեպի կառավարման առավել բազմաշերտ մոտեցման, որը հաշվի է առնում սոցիալական, տնտեսական կամ բնապահպանական խնդիրները, հիմք է ծառայում ժառանգությանը համայնքի կյանքում դերակատարության տրամադրմանը, ինչպես ներկայացված է կոնվենցիայի 5-րդ հոդվածում: Նման համապարփակ մոտեցումը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների կառավարումն առավել պահանջկոտ դարձրեց:

Այդ պահանջներին ի պատասխան է, որ տվյալ ձեռնարկը կենտրոնանում է ժառանգության կառավարման համակարգերը հասկանալու վրա: Այն հաստատում է դրանց բարդությունը և բազմազանությունը, բայց միևնույն ժամանակ վեր է հանում կառավարման համակարգերին բնորոշ բոլոր առանձնահատկությունները: Այն առաջարկում է վերանայել առկա ժառանգության կառավարման համակարգերը Համաշխարհային ժառանգության համակարգի և ժամանակակից պահանջների վրա ազդեցության տեսանկյունից՝ միաժամանակ շեշտադրում կատարելով մասնակցային մոտեցումների վրա:

Համաշխարհային ժառանգության համակարգն անդամ պետություններից պահանջում է մշակութային հուշարձանների կառավարման գործում ապահովել երկու տարբեր և կարևոր փուլերում ներգրավվածություն՝ միագումարության ապահովման նպատակով՝

1) Որպես ընդգրկման գործընթացի մի հատված անդամ պետությունը առաջնահերթ պետք է ցուցադրի, թե ինչպես է կառավարելու Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող հուշարձանը՝ պատասխանելով անվանակարգի ձևաչափում բարձրացված հարցերին և ներկայացնելու կառավարման պլանի կամ կառավարման այլ համակարգի առկայությունը, որը համապատասխանում է հուշարձանի պահպանության պահանջներին:

2) Ընդգրկումից հետո անդամ պետությունը պետք է հարգի Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող հուշարձանի պահպանության հարցում ստանձնած պարտավորությունները երկարաժամկետ արդյունավետ կառավարման, ինչպես նաև Համաշխարհային ժառանգությանն առնչվող մի շարք ընթացակարգերի միջոցով, որոնք թույլ կտան հաստատելու պահպանության առկայությունը:

Առաջաբան

Ստեֆանո դի Կարո, ԻԿԿՌՕՄ-ի գլխավոր տնօրեն

Մերոդական ձեռնարկը օգնում է անդամ պետություններին պարտավորությունների կատարման հարցում՝ առաջարկելով մի շրջանակ, որի միջոցով հնարավոր է դառնում ուսումնասիրել հուշարձանի գոյություն ունեցող կառավարման համակարգը: Միաժամանակ այն ուղղորդում է անհրաժեշտ միջոցառումների իրականացման հարցում, որպեսզի երաշխավորելու համակարգի արդյունավետությունը և համարաժեռ պատասխան տրվի Համաշխարհային ժառանգության բաղկացուցիչ մաս կազմող հուշարձանին հասցեագրված մարտահրավերներին:

Հիմնական շեշտադրումը Համաշխարհային ժառանգությունն է, սակայն ցուցումների մեծամասնությունը ժառանգության պահպանության գործում ընդգրկված ցանկացածը կարող է օգտագործել կարողությունների կառուցման համար:

Տվյալ ձեռնարկը ուշադրություն է դարձնում կարողությունների զարգացման գործում ԻԿԿՌՕՄ-ի փորձի վրա՝ Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանության գործում աջակցելու նպատակով: Գործընթացը սկսվեց 1993 թ-ից Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների համար կառավարչական ուղեցույցի հրապարակմամբ և շարունակվեց Համաշխարհային ժառանգության բնագավառում միջազգային դասընթաներով և քաղաքականությունների մշակման գործողություններով:

Ձեռնարկը խորհրդատվական մարմինների (ԻԿԿՌՕՄ, ԻԿՕՄՕՍ, IUCN) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնի համատեղ ջանքերի արգասիքն է՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների լավագույնս կառավարման և պաշտպանության գործում ընդգրկվածների համար: Այն մեկտեղում է նույն նպատակը հետապնդող մյուս վերագրերը:

Այն կառավարման համակարգի համապարփակ վերլուծությունն է, որը հազվադեպ է ժառանգության բնագավառին վերաբերող գրականությունում, սակայն հուսով ենք, որ գալիք մի քանի տարիների ընթացքում դրանք կհամալրվեն և կլրամշակվեն:

Ձեռնարկը մշակման գործընթացը ոգևորիչ, բայց միևնույն ժամանակ աշխատատար գործընթաց էր, և ԻԿԿՌՕՄ-ն իր երախտագիտությունն է հայտնում հեղինակների, գրախոսներին, և Համաշխարհային ժառանգության կենտրոնի և խորհրդատվական մարմինների բոլոր նրանց, ովքեր աջակցել են: ԻԿԿՌՕՄ-ը իր բարձր գնահատանքի խոսքն է հայտնում Նիկոլա Սթենլի-Փոլայսին, ով խմբագրեց ձեռնարկի վերջին տարբերակը:

Ստեֆանո դի Կարո

■	Շնորհակալական խոսք	2
■	Առաջաբան՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնի տնօրեն Կիշորե Ռաո անունից	3
■	Առաջաբան՝ ԻԿԿՌՕՄ-ի գլխավոր տնօրեն Ստեֆանո դի Կարոյի անունից	4
1	Ներածություն	7
	1.1 Ձեռնարկի մասին տեղեկատվություն	
	1.2 Հիմնական ուղղորդում	
2	Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում	12
	2.1 Ինչ է ժառանգությունը: Ինչու՞ այն կառավարել	
	2.2 Ժառանգության խնդիրների ուսումնասիրություն առավել լայն համատեքստում	
	2.3 Ժառանգության պահպանություն և կայուն զարգացում	
	2.4 Ժառանգության կառավարման անհրաժեշտություն	
	2.5 Ժառանգության պահպանության և կառավարման մոտեցումներ	
3	Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում	29
	3.1 Ինչ է Համաշխարհային ժառանգությունը, Համաշխարհային ժառանգության համակարգը և դրա պահանջները	
	3.2 1972 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիա, ինչու՞ և ինչպե՞ս կառավարել հուշարձանները և համապատասխանելիության ապահովման անհրաժեշտությունը	
	Անդամ պետությունների պատասխանատվությունը	
	3.3 Գործառնական ուղեցույց. կառավարել Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանման նպատակով	
	3.4 Համաշխարհային բացառիկ արժեք. իսկությունը և ամբողջականությունը Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման համատեքստում	
	3.5 Համաշխարհային ժառանգության փաստաթղթավորումը և կառավարման համակարգի ամրապնդման ընթացակարգերը	
	3.6 Համաշխարհային ժառանգության կոմիտեի որդեգրած ռազմավարական ուղղորդումը	
	3.7 Գիտելիքների զարգացում և քաղաքականությունների մշակում	
	3.8 Համաշխարհային ժառանգության կարողությունների կառուցման ռազմավարություն	
4		53
	4.1 Ժառանգության կառավարման համակարգը ընդհանուր և Համաշխարհային ժառանգության համատեքստում	
	4.2 Ժառանգության կառավարման համակարգի երեք բաղադրիչները	
	4.3 Ժառանգության կառավարման համակարգի երեք գործընթացները	
	4.4 Ժառանգության կառավարման համակարգի երեք արդյունքները ¹⁴⁵	
	4.5 Ժառանգության կառավարման համակարգի փաստաթղթավորում և գնահատում	
	Հավելված 1	122
	Կառավարման պլանի մշակման, իրականացման և մոնիթորինգի շրջանակ	
	A.1 Ներածություն. կառավարման պլանները կառավարման համակարգում	
	A.2 Կառավարման պլանավորման գործընթացը	
	A.3 Կառավարման պլանի բովանդակությունը	
	Հավելված 2	146
	Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը (IUCN)	
	Մատենագիտություն	148
	Կոնտակտային տեղեկատվություն	152

1 Ներածություն

Մաս 1-ը վեր է հանում ձեռնարկի մշակման նպատակը և խնդիրները, ինչպես նաև նկարագրում է, թե ինչպես է այն կառուցված (Մաս 1.1): Այն նաև թվարկում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Համաշխարհային Ժառանգությանն առնչվող հիմնարար փաստաթղթերը և Համաշխարհային Ժառանգության կենտրոնի հրապարակումներ, որոնց լրացնում է տվյալ ձեռնարկը (Մաս 1.2):

1.1 Ձեռնարկի մասին տեղեկատվություն

Ձեռնարկի նպատակը

«Կառավարում» հասկացությունն ի հայտ է եկել Համաշխարհային Ժառանգության կոնվենցիայի 40-ամյա պատմության վերջին ժամանակահատվածում, չնայած հաջողված կառավարման՝ Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող ժառանգության բացահայտում, պահպանություն, կոնսերվացում, հանրահռչակում և գալիք սերունդներին փոխանցում, արդյունքներին և օգուտներին հասնելու պահանջները հիմքում եղել են ի սկզբանե: Տարիների ընթացքում այս նպատակներին հասնելը դարձել է բարդ՝ ժամանակակից աշխարհի օրեցօր աճող ճնշման, ինչպես նաև Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկվող հուշարձանների, օրինակ՝ գյուղական մշակութային տեղանքապատկերներ, շրջանակի ընդլայնման հետևանքով:

Այս նոր մարտահրավերները այլ գործոնների հետ միասին հանգեցրել են որոշ անհետաձգելի անհրաժեշտությունների, որոնք ընդգրկում են՝

- կառավարման համակարգի սահմանման, գնահատման և կատարելագործման համար ընդհանուր հենքի հաստատում, որն իր հերթին կխթանի կառավարման ոլորտում հաջողված փորձի փոխանակումը և կատարելագործված մոտեցումների գնահատումը,
- գործնական խորհրդատվության և գործիքակազմի տրամադրումն առօրյա կառավարման պրակտիկայում, որը ենթադրում է ներգրավված կողմերի և ակնկալվող նպատակների թվաքանակի մեծացում,
- գոյություն ունեցող խնդիրների, որոնց բախվում են անդամ պետությունները, բազմազանության և դրանց ընդհանուր հենքի մասին աճող իրազեկվածություն, ինչը կխթանի համագործակցության ընդլայնմանը դրանք հաղթահարելու համար:

Համաշխարհային մշակութային Ժառանգության հուշարձանների կառավարման ձեռնարկը մշակվել է անդամ պետությունների՝ իրենց ժառանգության արդյունավետ կառավարման, դրանց արժեքների, մասնավորապես Համաշխարհային մշակութային Ժառանգության հուշարձանների, Համաշխարհային բացառիկ արժեքի (այսուհետ՝ ՀԲԱ) պաշտպանությանն աջակցելու նպատակով: Այս կապակցությամբ Համաշխարհային Ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործառնական ուղեցույցը (այսուհետ՝ ԳՈՒ) հայտարարում է, որ Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկված յուրաքանչյուր հուշարձան «պետք է ունենա համապատասխան պահպանության և կառավարման համակարգ՝ դրա պաշտպանությունը երաշխավորելու համար» (ԳՈՒ 78-րդ պարբերություն): Շարունակելով միտքը՝ ԳՈՒ-ն ասում է, որ «Կառավարման համակարգի նպատակն առաջադրվող հուշարձանի արդյունավետ պաշտպանության ապահովումն է՝ հանրահռչակման և ապագա սերունդներին փոխանցելու նպատակով» և որ «արդյունավետ կառավարման համակարգը կախված է առաջադրվող հուշարձանի տեսակից, առանձնահատկություններից և կարիքներից՝ իր մշակութային և բնության համատեքստում» (ԳՈՒ 109-րդ, 110-րդ պարբերություններ): Սույն ձեռնարկով որոշակի շեշտադրում է կատարվում կառավարման համակարգերի և դրանց կատարելագործման եղանակների վրա՝ մշակութային հուշարձանների արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով:

Ձեռնարկը խորհրդատվություն է տրամադրում անդամ պետություններին և Համաշխարհային Ժառանգության մշակութային հուշարձանների պահպանության գործում ներգրավված անձանց, թե ինչպես բավարարել կոնվենցիայով սահմանված պահանջները: Այն նաև նպատակ ունի օգնել անդամ պետություններին ապացուցելու, որ ժառանգությունն ունի դինամիկ դերակատարություն հասարակությունում և ոչ միայն քաղում, այլև օգուտ է բերում այլոց, ինչը փոխադաստիարակում է, որ հնարավոր է ստեղծել նման դերակատարությամբ:

Սույն ձեռնարկը վերաբերում է մշակութային հուշարձանների կառավարմանը: Բնության Համաշխարհային Ժառանգության հուշարձաններն ունեն նմանատիպ, բայց նաև տարբերվող խնդիրներ: IUCN-ը մշակել է բնության հուշարձանների կառավարման ձեռնարկ:

Ուժ համար է նախատեսված ձեռնարկը

Ձեռնարկը մշակվել է որպես ժառանգության, և հատկապես Համաշխարհային ժառանգության հուշարձանների մասով արդյունավետ կառավարման համար նախատեսված կարողությունների կառուցման միջոց: Այն ստեղծվել է բոլոր մասնագետներին օգնելու համար՝

- գիտելիքների, կարողությունների, հմտությունների և մարդկանց վերաբերմունքի ուժեղացման նպատակով՝ ժառանգության կոնսերվացման և կառավարման ոլորտում ուղղակի պատասխանատվությամբ,
- բարելավվել ինստիտուցիոնալ կառուցվածքները և գործընթացները՝ որոշում ընդունելու և քաղաքականություն մշակելու մարմիններին լիազորությունների տրամադրման միջոցով, և
- ժառանգության և վերջինիս գտնվելու միջավայրի միջև դինամիկ հարաբերությունների ստեղծում, ինչը կհանգեցնի ավելի մեծ փոխադարձ օգուտների ստացման ներառական մոտեցման միջոցով, ինչպիսիք են կայուն հիմքով ստացվող արդյունքները և օգուտները:

Ձեռնարկը մշակվել է բոլոր նրանց համար, ովքեր անդամ պետությունների անունից ներգրավված են Համաշխարհային ժառանգության մշակութային հուշարձանների խնամքի և կառավարման վերաբերյալ որոշումների կայացման գործում, բոլոր նրանց, ում հաշվետու են (քաղաքականություն մշակողներ և կառավարիչներ), և բոլոր նրանց, ում հետ աշխատում կամ կարող են աշխատել ապագայում:

Այդ անհատները ներկայացնում են գոյություն ունեցող կառավարչական կարողությունների երեք հիմնական ոլորտներ, ինչպես սահմանված է Կարողությունների կառուցման համաշխարհային ժառանգության ռազմավարության մեջ²

- Կիրառողներ (ներառյալ հուշարձանների կոնսերվացման և կառավարման գործում ուղղակի միջամտող անհատները և խմբերը)
- Հաստատություններ (և՛ դաշնային, և՛ ազգային մակարդակներով ներկայացված անդամ պետության կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները և այլ հաստատությունները, որոնք պատասխանատվություն են կրում կատարելագործված կառավարման և կոնսերվացման համար)
- Համայնքները և ցանցերը (ներառյալ տեղի համայնքները, որոնք հուշարձանի սեփականատերն են կամ ապրում են հուշարձանի կամ դրան հարակից տարածքում, ինչպես նաև ընդլայնված ցանցերը, որոնք հետաքրքրված են մշակութային ժառանգության կառավարման բարելավմամբ)³:

Ձեռնարկը, որպես ինքնուսուցման կամ կառուցվածքային կարողությունների զարգացման նախաձեռնությունների բաղադրիչ, միտված է՝

- տրամադրելու ռազմավարական և առօրյա ուղղորդում
- ամրապնդել գոյություն ունեցող կարողությունները կամ ստեղծել նորերը՝ կլինեն դրանք գործնականում կիրառողների, հաստատությունների կամ համայնքների և ցանցերի համար Յուրաքանչյուր դեպքում էլ անձնակազմի միջոցով է, որ կարելի է հասնել դրական փոփոխությունների ժառանգության կառավարման հարցում (տե՛ս մաս 3.8):

Այն իրավիճակը, որում յուրաքանչյուր կառավարման համակարգ շահագործվում է բավականին տարբերվում է, և ժառանգության ոլորտում գործնականում կիրառողների հարաբերական մեկուսացումը կանխում է այլոց փորձի հետ ծանաթոնալու հնարավորությունը: Հուսով ենք, որ ձեռնարկը կօգնի հաղթահարելու այս դժվարությունները:

Ինչպե՞ս է կազմված ձեռնարկը

Ձեռնարկում մեկնաբանվում է, թե ինչ է ընդգրկված Համաշխարհային ժառանգության կառավարման գործում, դրա համատեքստը, փիլիսոփայությունը և մեխանիզմները: Հավելվածների շարքը ուղղորդում է, թե ինչպես է պետք դրանց կիրառել գործնականում:

Տեքստը բաժանված է 4 բաժնի՝

Տվյալ բաժինը՝ **Բաժին 1-ը**, ձեռնարկի ներածական մասն է և ներկայացնում է Համաշխարհային ժառանգության կառավարմանն առնչվող հրատարակումների և փաստաթղթերի հղումները:

2. Capacity is defined as the 'the ability of individuals, organizations and societies to perform functions, solve problems, and set and achieve objectives in a sustainable manner'

(http://www.undp.org/cpr/iase/content/docs/UNDP_Capacity_Development.pdf

UNDP Capacity Development Practice Note, April 2006, p.3)

3. The World Heritage Strategy for Capacity Building, June 2011, whc11-35com-9Be

(<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>)

Բաժին 2-ը ներկայացնում է այն համատեքստը, որում իրականացվում է մշակութային ժառանգության կառավարումը: Այն ամփոփում է ներկայում զարգացող հայեցակարգերը հուշարձանների կոնսերվացման և կառավարման վերաբերյալ՝ հատուկ շեշտադրելով ինտեգրված մոտեցմանը: Այն ընդգծում է ժառանգությանն առնչվող կարիքներն ավելի լայն շրջանակում տեղադրելու, ժառանգությունը և կայուն զարգացումը կապելու, ինչպես նաև դիտարկելու արժեքային առաջնորդման մոտեցումը քննության առնելու անհրաժեշտությունը, որպես համաշխարհային ժառանգության կառավարման օգտակար գործիք:

Բաժին 3-ը նկարագրում է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների կառավարման որոշակի իրավիճակը և վեր է հանում, թե ինչպես Համաշխարհային ժառանգությանն առնչող ռեսուրսները և գործընթացները կարող են ամրապնդել կառավարման մոտեցումները: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման Գործառնական ուղեցույցին հղումները հաճախակի են տեղ գտնում, ինչը նպատակ ունի խթանելու վերջինիս իրականացմանը: Դրանք պարբերաբար վերանայվում են: Սույն ձեռնարկում կատարված հղումները վերաբերվում են 2012 թ. խմբագրմանը: 3-րդ բաժինը նաև ընդգծում է կարողությունների կառուցման կարևորությունը հուշարձաններում՝ կառավարման համակարգերի փոփոխությունների կատարման համար:

Բաժին 4-ը ձեռնարկի հիմնական հատվածն է և սահմանում է ընկալման ընդհանուր շրջանակ՝ փաստաթղթավորման և ժառանգության կառավարման համակարգերի ուսումնասիրության համար: Սա օգտակար կլինի, երբ կբավարարի համաշխարհային ժառանգության համակարգի պահանջները կամ մշակութային հուշարձանի կառավարման համակարգի արդյունավետության ընդհանուր գնահատման տեսանկյունից, միգուցե կառավարման պլանի մշակման կամ թարմացման համատեքստում: (4.5)-րդ եզրափակիչ բաժինն առաջարկում է կառավարման համակարգի փաստաթղթավորման և գնահատման շրջանակ, ինչը կարելի է օգտագործել Համաշխարհային ժառանգության հուշարձանի անվանակազային ձևաչափի 5-րդ բաժնի (ԳՈՒ Հավելված 5) հետ միասին:

«Ինչպես»-ի վերաբերյալ ուղղորդումը ներկայացված է հետևյալ հավելվածներում՝

Հավելված Ա-ն կառավարման պլանավորումն օգտագործում է որպես մի շրջանական հուշարձանի տեղում գործնական կառավարման համար: Կառավարման պլանավորումը միգուցե միակ միջոցն է, որն ընդգրկում է կառավարման ամբողջ համակարգը: Դրա գործառնական կիրառումը պահանջում է ուղղորդում, ինչը բխում է հուշարձաններում աշխատողների շահերից, որտեղ կառավարման պլանավորումը չի օգտագործվում:

2-րդ հավելվածը IUCN-ի մշակած «Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը» փաստաթուղթն է:

1.2 Հիմնական ուղղորդում

Համաշխարհային ժառանգություն

Համաշխարհային ժառանգության համակարգը ներկայացնող մեծաքանակյա մատչելի նյութեր կան, որոնցից շատերը ուղղակի կապված են կառավարման խնդիրների հետ: Ձեռնարկն անդրադառնում է այս նյութին՝ ըստ կիրառելիության, սակայն խորհուրդ ենք տալիս ուսումնասիրել Համաշխարհային ժառանգության կենտրոնի կայքէջերում տեղադրված նյութերը՝ սա դարձնելով համաշխարհային ժառանգության առօրյա գործնական կառավարման բաղադրիչ: Այս կայքէջը (<http://whc.unesco.org>) Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրական բազմաթիվ ասպեկտների մասին համապարփակ տեղեկատվական աղբյուր է: Այն կանոնավոր թարմացվում է նոր նյութերով: Առնչվող հիմնական նյութերին ի հավելում՝ բավականին անդրադարձ է կատարվում նաև առանձին հուշարձանների՝ ներառյալ Համաշխարհային ժառանգության կոմիտեի դրանց մասին ընդունված որոշումները:

Ուժադրության արժանի են նաև երեք խորհրդատվական մարմինների (ԻԿԿՌՕՄ, ԻԿՕՄՕՍ, IUCN) կայքէջերը՝ օգտակար խորհուրդներ ստանալու տեսանկյունից:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը առնչվել են տվյալ ձեռնարկին և էապես լրացնում են դրան:

- Համաշխարհային ժառանգության կոնվենցիան և դրա կիրարկման գործառնական ուղեցույցը, - ՅՈՒՆԵՍԿՕ. 1972. Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage. (Համաշխարհային ժառանգության կոնվենցիա). <http://whc.unesco.org/en/conventiontext> (անգլերեն կայքէջ)

1 Համաշխարհային ժառանգության մասին

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2012 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործառնական ուղեցույց <http://whc.unesco.org/en/guidelines/> (անգլերեն կայքէջ)

• ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ձեռնարկներ՝

- ՅՈՒՆԵՍԿՕ, ԻԿԿՈՍ, ԻԿՕՄՕՍ և IUCN. 2010 թ. Համաշխարհային ժառանգությանն ուղղված աղետների կառավարում. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն, (Համաշխարհային ժառանգության ձեռնարկ)
<http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-630-1.pdf>
(անգլերեն կայքէջ)

- ՅՈՒՆԵՍԿՕ, ԻԿԿՈՍ, ԻԿՕՄՕՍ և IUCN. 2011 թ. Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստում. (երկրորդ հրատարակություն). Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ձեռնարկներ.) <http://whc.unesco.org/en/activities/643/> (անգլերեն կայքէջ)

- ՅՈՒՆԵՍԿՕ, ԻԿԿՈՍ, ԻԿՕՄՕՍ և IUCN. 2012 թ. Կառավարելով Համաշխարհային ժառանգությունը. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Համաշխարհային ժառանգության ձեռնարկներ)
<http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-703-1.pdf>
(անգլերեն կայքէջ)

• ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգությանն առնչվող փաստաթղթեր՝

- Սթովել, Հ. (խմբ). 2004 թ. Համաշխարհային ժառանգության մոնիթորինգ, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր) <http://whc.unesco.org/en/series/10/>

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2007 թ. Կլիմայի փոփոխությունը և Համաշխարհային ժառանգությունը, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 22.) <http://whc.unesco.org/en/series/22/>

- Հոքինգ, Մ., Ջեյմս, Ռ., Սթոյթոն, Ս., Դադլի, Ն., Մաթյու, Վ., Մակմոր, Ջ., Կուռո, Ջ. և Փերիշ, Ջ. 2008 թ. Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը. գնահատելով բնության համաշխարհային ժառանգության կառավարման արդյունավետությունը, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 23.) <http://whc.unesco.org/en/series/23/>

- Մարտին, Օ. և Պիաթթի, Գ. (խմբ). 2009 թ. Համաշխարհային ժառանգությունը և պահպանական գոտիները, Համաշխարհային ժառանգության և պահպանական գոտիների հարցերով միջազգային փորձագիտական հանդիպում, Դավոս, Շվեյցարիա, 11-14 մարտի 2008 թ. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 25)
<http://whc.unesco.org/en/series/> (անգլերեն կայքէջ)

- Միտչել, Ն., Ռոսսել, Մ. և Տրիկոր, Պ-Մ. (հեղինակներ/խմբ.). 2009 թ. Համաշխարհային ժառանգության մշակութային տեղանքապատկերներ. պահպանության և կառավարման ձեռնարկ. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 26)
<http://whc.unesco.org/en/series/26/>

- Վան Օերս, Ռ. և Հարագուչի, Ս. 2010 թ. Կառավարելով պատմական քաղաքները. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր 27) <http://whc.unesco.org/en/series/27/>

• ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի համապատասխան որոշումները՝

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2007 թ. Համաշխարհային ժառանգության հուշարձաններում աղետների վտանգների նվազեցման ռազմավարություն, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Doc WHC-07/31.COM/7.2) <http://whc.unesco.org/archive/2007/whc07-31com-72e.pdf>

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2010 թ. Պահպանվածության վիճակի միտումների ազդեցությունը, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության

կենտրոն. (Doc WHC-10/34.COM/7C)

<http://whc.unesco.org/archive/2010/whc10-34com-7Ce.pdf>

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2010 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիան և կայուն զարգացումը. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Doc WHC-10/34.COM/5D)

<http://whc.unesco.org/archive/2010/whc10-34com-5de.pdf>

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2011 թ. Կարողությունների կառուցման Համաշխարհային ժառանգության ռազմավարության ներկայացում և հաստատում. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Doc WHC-11/35.COM/9B)

<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2011 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիան և կայուն զարգացումը. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. (Doc WHC-11/35.COM/5E)

<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-5Ee.pdf>

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն. 2008 թ. Համաշխարհային ժառանգության հուշարձանների վրա կլիմայի փոփոխության ազդեցության քաղաքականության փաստաթուղթ. Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն.

<http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-397-2.pdf>

Հետագա ընթացք

Ժառանգության կառավարման գործընթացի և կառավարման մոտեցումների բարեփոխման միջոցների մասին գոյություն ունեն բազմաթիվ հրապարակումներ: Ֆեյլդենի և Յոկիլեյտոյի Համաշխարհային ժառանգության մշակութային հուշարձանների կառավարման ուղեցույցը (1993 թ.)¹ ամենավաղ օրինակն է, իսկ մյուսները ներկայացված են մատենագրության մեջ (տես հավելվածները): Ի հակադրություն բավականին սակավ է ժառանգության համակարգին և վերջինիս գործարկման վերաբերյալ գրականությունը: Մատենագիտությունում թվարկվում են Համաշխարհային ժառանգության կառավարման տեսանկյունից օգտակար համարվող վերնագրերը:

Գոյություն ունեն Համաշխարհային ժառանգության հուշարձաններին վերաբերող տարբեր աղբյուրներ և դասընթացների թեմատիկ ուղղություններ, որոնք մշակվել են համաշխարհային ժառանգության բնագավառի խորհրդատվական մարմինների (ԻԿՕՄՕՍ, ԻԿԿՈՒՄ և IUCN) և 2-րդ կատեգորիայի կենտրոնների, ինչպես նաև նպատակային ուսումնասիրություններ և դասընթացներ կազմակերպող համալսարանների կողմից: Ընթերցողներին կոչ է արվում հղում կատարել համապատասխան վեբ կայքերին և ինտերնետային տիրույթում գտնվող ռեսուրսներին:

Նախադեպ

Համաշխարհային ժառանգության մեթոդական ձեռնարկների օգտագործումը

2013 թ. ապրիլին Հանդիման Կոնվենցիայի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակը նախաձեռնեց աղբյուրների կառավարման պլանների նախագծման ծրագիրը՝ Վիետնամի Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար: Համաշխարհային ժառանգության հուշարձանների աղբյուրների կառավարման մեթոդական ձեռնարկը օգտագործվել է որպես հենք նախաձեռնության իրականացման համար:



Հուն հուշարձանախումբ (Վիետնամ)



1. Feilden, B.M. and Jokilehto, J. 1993. Management Guidelines for World Cultural Heritage Sites. (First edition). Rome, ICCROM.

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

Բաժին 2-ում նկարագրվում է ժառանգությունը և դրա կառավարման անհրաժեշտությունը: Փորձ է արվում ժառանգության կառավարումը ներկայացնել առավել ընդլայնված համատեքստում (Բաժին 2.2)՝ հատուկ ուշադրություն դարձնելով կայուն զարգացման հետ առնչությանը (Բաժին 2.3): Այնուհետ, այն ուսումնասիրում է ժառանգության կառավարման համակարգի էությունը, ինչպես նաև նկարագրում է, թե որոնք են ամենատարածված մոտեցումները ժառանգության կոնսերվացման և կառավարման ոլորտում, որոնք են բնութագրվում որպես «սովորական» և այլընտրանքային, արժեքներին հանգեցնող մոտեցում (Բաժին 2.5):

2.1 Ինչ է ժառանգությունը: Ինչու՞ այն կառավարել:

Ընդլայնելով ժառանգություն հասկացությունը

Յուրաքանչյուր հասարակության համար ժառանգությունն ունի օրեցօր աճող նշանակություն: Թե ինչու է դա այդպես՝ ամբողջությամբ հստակեցված չէ, սակայն, հավանաբար, խոսքը վերաբերվում է արդիականացման դինամիկ զարգացման և հասարակությունում փոփոխությունների մակարդակի հետ: Նման հանգամանքներում նախկին հասարակությանն առնչվող ապացույցները կարող են առաջացնել պատկանելության զգացում և ապահովություն նորերին, ինչպես նաև լինել խարիսխ՝ արագ փոփոխվող աշխարհում: Բազմաթիվ համայնքներում նույնպես ժառանգությունը կարող է դառնալ ինքնագիտակցության սահմանման կարևոր հանգամանք: Անցյալի գիտակցումը կարող է մեծ ներդրում լինել ներկա և ապագա խնդիրների լուծման հարցում:

Այն շրջանակը, որը վերաբերում էր ժառանգությանը, էապես ընդլայնվել է վերջին հիսուն տարիների ընթացքում: Ժառանգության հուշարձաններ էին համարվում առանձին երկրպագման կամ պաշտպանական նշանակության հուշարձանները և շինությունները՝ առանց որևէ կապի իրենց շրջապատող տեղանքապատկերի հետ: Այսօր կա ընդհանուր մոտեցում, որ ամբողջ շրջակա միջավայրն իր վրա է կրել մարդկության ազդեցությունը, որի պատճառով կարող է ճանաչվել որպես ժառանգություն: Այժմ ավելի քան անհրաժեշտ է դատողություններ իրականացնել, թե որը կարևորություն ունի, և որը՝ ոչ:

Ժառանգության հասկացության ընդլայնումն անխուսափելիորեն հանգեցնում է ժառանգություն համարվող կառույցների և վայրերի տեսակների շրջանակի ընդլայնմանը: Համաշխարհային ժառանգության կոնվենցիան սահմանում է, որ ժառանգություն կարող են լինել «հուշարձանները, շինությունները խմբերը և տեսարժան վայրերը»: Գործնականում մշակվել է տիպաբանության լայն շրջանակ, որն ընդգրկում է քաղաքի կենտրոնները, հնագիտական վայրերը, մշակութային տեղանքապատկերները և ժառանգության ուղիները: Այն էապես մեծացնում է վայրերի և տեղանքապատկերների շրջանակը, որոնք պետք է կառավարվեն ժառանգության ոլորտի կառավարիչների կողմից՝ դրանով իսկ ընդլայնելով պահանջվող հմտությունների շրջանակը: Դա նույնպես մեծացնում է սպառնալիքների տեսակները և թվաքանակը, որը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ ժառանգության վայրերի վրա: Ուղղակի սպառնալիքներից զատ ժառանգության վայրերի նյութակազմին կամ բաղադրիչներին առավել քան բնորոշ է դրանց միջավայրում կառուցապատման բացասական ազդեցությունը: Այս հանգամանքներում, տնտեսական կամ սոցիալական օգտակարության տեսանկյունից ընդունված որոշումները պետք է համապատասխանացվեն ժառանգության բարեկեցության հետ:

Այն ընկալումը, որ ժառանգությունը մեկուսացված չէ, հանգեցրել է նրան, որ շրջապատող տարածքը ներկայացվել է և՛ որպես ֆիզիկական միջավայր, և՛ որպես սոցիալական, տնտեսական և բնապահպանական սպառնալիքների և հնարավորությունների շարք (տե՛ս Բաժին 2.4): Այդ շրջապատող տարածքներում կատարվածը կարող է ազդեցություն ունենալ ժառանգության վայրի և դրա կարևորության վրա: Նշանակում է, որ ժառանգության կառավարման համակարգը և բոլոր ներգրավված անձինք պետք է հնարավորություն ունենան որոշումների վրա ազդելու (տե՛ս Բաժին 2.5): Շրջակա միջավայրում փոփոխությունը հավանաբար անխուսափելի է, սակայն այն չպետք է վնասի ժառանգության վայրի արժեքը (Համաշխարհային ժառանգության հուշարձանների դեպքում Համաշխարհային բացառիկ արժեքը): Փաստացի դրանք կարող են խթանիչ դառնալ աջակցության նոր տարբերակների համար, որոնք իրենց հերթին կարող են ազդեցություն ունենալ հուշարձանի կարևորության վրա:

Սահմանելով ֆիզիկական սահմանները. հուշարձանը և շրջակա միջավայրը

Կառավարման ռազմավարություն է պահանջվում ժառանգության պահպանության և համատեղ օգտագործման համար, որով սահմանվում և մոնիթորինգի են ենթարկվում ոչ միայն հուշարձանի սահմանները, այլև լուծվում են դրանց գտնվելու շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները: Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար դրանք կարող են լինել հստակ սահմանագծված և կանոնակարգված պահպանական գոտիներ (ԳՈՒ 103-107-րդ պարբերություններ) կամ կարող են ներառել առավել մեծ «ազդեցության գոտի» (ԳՈՒ 104-րդ պարբերություն)⁵:

Հուշարձանի արժեքները, և առավել ևս Համաշխարհային բացառիկ արժեքը, հիմնական չափանիշներն են ֆիզիկական տարածք(ներ)ի սահմանման համար, որոնց հետ կապված հարցերը պետք է իրենց լուծումները ստանան կառավարման ռազմավարությունների միջոցով, ինչպես նաև այդ տարածքների երկայնքով անհրաժեշտ հսկողության տարբեր մակարդակների սահմանման համար: Հուշարձանից բացվող հեռավոր տեսարանները (օրինակ՝ Իտալիայում Պոմպեյ քաղաքից բացվող տեսարանը դեպի Վեզուվ հրաբուխը) կամ հուշարձանը տանող երթուղիները (օրինակ՝ Թաջ Մահալը Հնդկաստանում) կարող են կարևոր նշանակություն ունենալ արժեքների պահպանության տեսանկյունից: Այնուամենայնիվ, այլ չափանիշները նույնպես ազդեցություն կունենան ֆիզիկական տարածքների սահմանագծման համար, ինչպիսիք կարող են լինել՝

- սպառնալիքների տեսակները և դրանց առնչվող ժամանակահատվածները (օրինակ՝ վանդալիզմը, կառուցապատվող միջավայրի նկատմամբ հսկողության բացակայությունը, կլիմայի փոփոխությունը),
- տեղական համայնքներին և այլ շահագրգիռ մարմիններին կառավարման ռազմավարության մեջ հնարավորինս ընդգրկում (հաջողված մասնակցային մոտեցումը կարող է թույլ տալ նվազեցնելու հսկողության մակարդակը),
- կառավարման պրակտիկայում կառավարման կայուն համակարգի հնարավորինս ընդգրկում (տե՛ս Բաժին 2.3) Այն փաստի գիտակցումը, որ հուշարձանի զբաղեցրած տարածքը միայն իր ֆիզիկական սահմանները չեն, այլ մի շարք շերտերի ամբողջություն, անկասկած, դրական ազդեցություն է ունենում պահպանության վրա՝ միաժամանակ առաջ բերելով նոր կառավարման մարտահրավերներ: Այն նաև փաստում է, որ ժառանգությունը կախված է իրեն շրջապատող միջավայրից (և հակառակը):

2.2 Ժառանգության խնդիրների ուսումնասիրություն առավել լայն համատեքստում

Ժառանգության հասկացության շրջանակի ընդլայնում և ժառանգության վայրերի ու իրենց շրջապատող միջավայրերի փոխկապակցության կարևորության աճը փաստում է մտածելակերպում դրական փոփոխության մասին: Ժառանգության վայրերը չեն կարող պահպանվել մեկուսացման պայմաններում կամ ինչպես թանգարանային արժեքները՝ պաշտպանված բնական և մարդածին կամ հողօգտագործման պլանավորման ներգործություններից: Դրանք չեն կարող տարանջատվել զարգացման ուղղված միջոցառումներից, տեղի ունեցող սոցիալական փոփոխություններից կամ էլ համայնքային խնդիրներից:

Անխոս, միայն վերջերս է միջազգային հանրությունը սկսել կարևորել մշակութային ժառանգության պահպանությունը, որպես մի միջավայրի, որտեղ սոցիալական և մշակութային գործոններն իրենց դերակատարությունն են ունեցել և շարունակում ունենալ դրանց ձևավորման հարցում, այլ ոչ թե հուշարձանախմբերը, որոնք անցյալի փաստացի վկաներն են: Որպես արդյունք, միջազգային «առաջադեմ» փորձը, հաճախ ուղղորդված արևմտյան կառավարման պրակտիկայով, ժամանակի ընթացքում ոչ բավարար մակարդակով ուղղորդում է տրամադրել և ավելի շատ հանգեցրել է քայքայման, քան թե ժառանգության կառավարման ավանդական հոսսայի համակարգերի ամրապնդմանը, մասնավորապես, պատմական կենտրոններում կամ մշակութային տեսարժան վայրերում գործողների մասով, որոնք ենթարկվում են հողի և հուշարձանի շարունակական ու բազմակի օգտագործման:

Այժմյան ժառանգության հասկացության լայն շրջանակը ուղղորդում է մեծաքանակ դերակատարների կամ շահագրգիռ կողմերի կառավարման համակարգի մեջ ընդգրկվելուն: Երբ ժառանգության վայրերը հիմնականում պետության հսկողության տակ գտնվող հուշարձաններ կամ կառույցներ էին, ապա հուշարձանի կառավարիչը համեմատաբար ազատ էր իր գործողություններում հուշարձանի տարածքում: Սակայն այժմ այդպես չէ: Եթե նույնիսկ ժառանգության վայրը հանդիսանում է պետության սեփականությունը և կառավարվում դրա կողմից, ապա կառավարիչը պետք է աշխատանք տանի ներգրավված շահագրգիռ կողմերի և մարմինների հետ հուշարձանին շրջապատող տարածքի մասով: Առավել ցրված հուշարձանների մասով, սեփականության իրավունքի հետ կապված հարցերի շրջանակը նույնպես ընդլայնվում է: Օրինակ՝ ժառանգություն համարվող քաղաքներում պատմական շինությունների զանգվածը կարող է հանդիսանալ մասնավոր սեփականություն և օգտագործվի

5. Martin, O. and Piatti, G. (eds). 2009. World Heritage and Buffer Zones, International Expert Meeting on World Heritage and Buffer Zones, Davos, Switzerland, 11–14 March 2008. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 25).

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

ոչ ժառանգությանը բնորոշ նպատակներով: Գյուղական լայնամասշտաբ տեսարժան վայրերի տարածքները նույնպես կարող են մասնավոր սեփականություն լինել և մշակվել բերք ստանալու նպատակով կամ ծառայել որպես արոտավայրեր: Տեղական համայնքների կենցաղը կարող է կախված լինել ժառանգության վայրերի հասույթաբեր օգտագործումից: Ժառանգության ոլորտի մասնագետները պետք է համագործակցեն հանրային կառավարման մարմինների հետ տարածական պլանավորման և տնտեսական զարգացման քաղաքականության հիմնախնդիրների շուրջ:

Սա նշանակում է, որ ժառանգության մասնագետները չեն կարող գործել անկախ և առանց խորհրդակցելու այլ շահագրգիռ կողմերի հետ: Դա կարևոր է, որպեսզի ժառանգության պահպանության ոլորտում գործունեություն իրականացնող մարմինները հնարավորինս աշխատեն շահագրգիռ կողմերի հետ յուրաքանչյուր ժառանգության վայրի համար կառավարման տեսանկյունից համաձայնեցված տեսլական և քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար՝ դրա ֆիզիկական և սոցիալական լայն համատեքստում: Նման մոտեցումը համագործակցության սկզբունքային կարևորություն է արտացոլում, ինչպես նաև շահագրգիռ կողմերի թանփանցիկ և լիարժեք ընդգրկումը՝ ինչպես և առաջարկվել է ԳՈՒ-ում: Ցանկացած կառավարման համակարգ, ներառյալ կառավարման պլանների մշակումը և իրականացումը, պետք է նախատեսի դա:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ




Պատկեր 1. Ժառանգության կառավարման արդյունքը բացառապես պահպանվածության ապահովման և պաշտպանության տեսանկյունից

Ժառանգության կառավարման ընդլայնված պարտավորություններ

Մեծավ մասամբ մշակութային հուշարձաններում կառավարումը բնութագրվում է բազմակի նպատակներով: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է գնահատել ինստիտուցիոնալ և կազմակերպչական (և խոչընդոտների) հարցերի, սոցիալական ընկալման, գիտելիքների, արժեքների (և ներկա, և ապագա սերունդների հաճախ հակամարտությունների մեջ գտնվող) և այլ գործոնների մի մեծ շրջանակ: Այս գործոնները հաճախ աշխատում են համալիր ցանցում, և կայուն կառավարման մոտեցումների ներմուծումը և հետագա պահպանությունը ամենաաղժվար հատվածն է:

Այս մարտահրավերների հաղթահարումը կենսական նշանակություն ունի մշակութային ժառանգության կառավարման ապագայի համար:



Պատկեր 2. Ժառանգության կառավարման հին և նոր խնդիրների որոշ օրինակներ

Համապարփակ մոտեցում

Բազմաթիվ նպատակների հասնելու համար անհրաժեշտ է լայնամասշտաբ մասնակցության ապահովում. առավել մեծ բարդության խնդիրները պահանջում են առաջադեմ մոտեցումներ կառավարման պրակտիկայում: Սակայն չպետք է հասկանալ, որ ամենաբարձր մակարդակի մոտեցումներն են միակ ճանապարհը բազմաթիվ հիմնանդիրների լուծման համար: Ժառանգության ոլորտում <<կառավարում>> եզրույթը կիրառվել է բավականին լայն իմաստով. և քանի որ հիմնախնդիրները դառնում են առավել բարդ, ապա կարիք է առաջանում դառնալ առավել հասցեական: Կառավարման մոտեցումները պետք է պարունակեն տեղաշարժ (որն ի հայտ է եկել բոլորվին վերջերս աշխարհի տարբեր մասերում) դեպի լայն, առավել համապարփակ մոտեցում ժառանգության կառավարման ոլորտում և մեծ շեշտադրում ունենան համայնքների ներգրավվածության վրա:

Չնայած բնության հուշարձանների համար մշակված լինելուն՝ Ադրիան Ֆիլիպը մշակել է «նոր մոդել՝ պահպանվող տարածքների համար», որը կրկին անգամ ներկայացվել⁶ է 2003 թ. IUCN-ի պահպանվող տարածքների կառավարման պլանավորման ուղեցույցում՝ մեկ անգամ ևս վեր հանելով ժառանգության կառավարման և համայնքների ներգրավվածության հարցում վերջին տարիներին առավել լայն, համապարփակ մոտեցման աճող կարևորությունը: (Աշխարհի որոշ հատվածներում այն արդեն իսկ տեղի է ունենում): Ուղեցույցի մեծ մասը կիրառելի է նաև մշակութային հուշարձանների մասով:

6. Thomas, L. and Middleton, J. 2003. Guidelines for Management Planning of Protected Areas. Gland, Switzerland, IUCN and Cambridge, UK. <http://data.iucn.org/dbtw-wpd/edocs/PAG-010.pdf> (English web page).

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

Աղյուսակ 1. Պահպանվող տարածքների նոր մոդել (Ա. Ֆիլիպս)⁷

Թեմա	Ինչպես է եղել. Պահպանվող տարածքները նախկինում...	Ինչպես կլինի. պահպանվող տարածքները ներկայում...
Խնդիրներ	- Առանձնացվել են պահպանության համար - Հիմնադրվել են գերազանցապես վայրի բնության և գեղատեսիլ տեղանքապատկերների պաշտպանության համար - Հիմնականում կառավարվում են այցելուների և զբոսաշրջիկների համար - Գնահատվում են, որպես վայրի բնություն - Նախատեսված են պաշտպանության համար	- Շահագործվել է նաև սոցիալական և տնտեսական խնդիրների լուծման նպատակով - Հաճախ հիմնվում են գիտական, տնտեսական և մշակութային պատճառներից ելնելով - Կառավարումն իրականացվում է տեղի բնակչության շահերը հաշվի առնելով - Արժևորվում է մշակութային կարևորության համար, որպես «վայրի բնության հատվածներ»
Կառավարում	Իրականացվել է կենտրոնական կառավարության կողմից	Իրականացվում է գործընկերների միջոցով և ներգրավված է շահագրգիռ կողմերի լայն շրջանակ
Տեղական բնակչություն	- Պլանավորվել և կառավարվել է առանց տեղի բնակչության շահերը հաշվի առնելով - Կառավարումն իրականացվել է առանց տեղի բնակչության կարծիքը հաշվի առնելու	- Շահագործվել է տեղի բնակչության համար և որոշ դեպքերում նրանց կողմից - Կառավարվել է տեղի բնակչության կարիքները բավարարելու համար
Առավել լայն համատեքստ	- Զարգացել է առանձնացվածության պայմաններում - Կառավարվել են որպես «կղզիներ»	- Պլանավորվել է որպես ազգային, տարածաշրջանային և միջազգային համակարգի մասնիկ - Զարգացել են որպես «ցանցեր» (խիստ պահպանվող տարածքներ, որոնք պահպանված և կապված են կանաչ միջանցքներով)
Ընկալում	- Դիտարկվում էին հիմնականում որպես ազգային սեփականություն - Դիտարկվում էին հիմնականում որպես ազգային մտահոգություն	- Դիտարկվում էին հիմնականում որպես համայնքային սեփականություն - Դիտարկվում էին նաև որպես միջազգային մտահոգություն
Կառավարման տեխնիկա	- Հակազդող կառավարում կարճաժամկետ հեռանկարում - Տեխնոկրատական մոտեցում կառավարման ընթացքում	- Հարմարեցված կառավարում երկարաժամկետ հեռանկարում - Կառավարվել է քաղաքական նկատառումներով
Ֆինանսներ	Վճարվել է հարկատուների կողմից	Վճարվել է տարբեր աղբյուրներից
Կառավարման հմտություններ	- Կառավարվել է գիտնականների և բնական պաշարների ոլորտի փորձագետների կողմից - Կառավարումն իրականացրել են փորձագետները	- Կառավարվում է տարբեր հմտություններ ունեցող անհատների կողմից - Տեղական գիտելիքների օգտագործում

Ժառանգության կառավարման ոլորտում միահավաք մոտեցման կիրառման հետևանքները
Ստորև ներկայացվում է բնության ժառանգության կառավարման ոլորտում միահավաք մոտեցումից բխող հետևանքների ակնարկը՝ ավստրալիական ուսումնասիրությունների հիման վրա, ինչը կիրառելի է նաև մշակութային ժառանգության կառավարման պարագայում⁸։
Իրենց վերլուծություններում միահավաք մոտեցումը մեկնաբանվում է երեք տարբեր ճանապարհով՝ որպես փիլիսոփայություն, որպես գործընթաց և որպես արտադրանք։

7. Phillips, A. 2003. 'Turning ideas on their head: the new paradigm for protected areas', in: The George Wright Forum 20, No. 2. 2003, pp.8-32. <http://www.uvm.edu/conservationlectures/vermont.pdf>
8. Wijesuriya, G. 2008. 'An Integrated Approach to Conservation and Management of Heritage', in: ICCROM Newsletter 34, 2008, p.8. Rome, ICCROM.

Աղյուսակ 2. Միահավաք մոտեցում

Ժառանգության և դրանց պահպանության հետ կապված խնդիրների ուսումնասիրություն առավել լայն համատեքստում. միահավաք մոտեցում ժառանգության կառավարման ոլորտում⁹

1. Սկզբունքներ <i>Ռեսուրսների միավորում</i>	2. Որպես գործընթաց <i>Ճկունություն հաստատության շրջանակներում</i>	3. Որպես արտադրանք <i>Օրենսդրական նորարարություններ</i>
- Համագործակցային մոտեցում, որը պահանջում է առաջադեմ փոփոխությունների ներմուծում կազմակերպության, մշակույթների և մասնակիցների վերաբերմունքի մեջ - Տեղեկատվության և աղբյուրների միավորում - Տեղեկատվական բոլոր աղբյուրների լավագույն օգտագործում - Առարկաների և ոլորտների բոլոր ուղղություններով - Հիմնական խնդիրների բացահայտում - Փաստաթղթավորման որակ	- Գործակալությունների, տեղի կառավարությունների, համայնքային խմբերի միջև համակարգման խթանում - Գործակալությունների ամբողջական ինտեգրում - Այլ պլանների ուսումնասիրություն - Այլ պլանների հետ փոխկապակցվածության բացատրում - Խորհրդատվություն - Հանրային խորհրդատվություն	- Լրացուցիչ կանոնակարգող միջոցների մշակման խթանում - Տարբեր օրենքների ինտեգրում - Ինտեգրման համար օրենսդրական պահանջներ - Ինտեգրման հիմնավորում - Այլ օրենսդրական ակտերի հետ փոխկապակցվածության բացատրում - Մոնիթորինգի պահանջներ

Հետազոտությունը ցույց տվեց, որ տարբեր բնագավառներում միահավաք մոտեցման կիրառման նպատակով անհրաժեշտ են փոփոխություններ: Դրանք խմբավորվել են կառավարման երեք հիմնական ոլորտներում՝ օրենսդրություն, ինստիտուցիոնալ և ռեսուրսների փոխանցում (տե՛ս կարմիրով վերհանած տեքստը), որոնք կուսումնասիրվեն 4-րդ մասում (տե՛ս 4.2-րդ կետը):

Ընդլայնված մասնակցության ապահովում. ինչպե՞ս բոլոր կողմերին դարձնել տեսանելի և ներգրավված

Կառավարման բնագավառում մասնակցային մոտեցումը խթանվել է տարբեր ոլորտներում և հատկապես ժառանգության բնագավառում՝ հիմք ընդունելով ժառանգության՝ որպես համայնքների միասնակ սեփականություն հանդիսացող ընկալումը և գործոն, որով ապահովվում է այդ համայնքների կայունությունը: Ժառանգության հուշարձանի սեփականության տեսակը կարող է էապես տարբեր լինել հատկապես քաղաքային կամ մշակութային տեղանքապատկերների դեպքերում: Սա կարող է բավականին կարևոր հանգամանք լինել Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար, երբ Համաշխարհային բացառիկ արժեքի բացահայտումը պահանջում է առավել լայն պարտավորություններ և սեփականություն՝ հաշվի առնելով, որ ժառանգությունը ընկալվում է որպես մարդկության հավաքական սեփականություն՝ կառավարման բնագավառում միջազգային մասնակցության տարրի ընդգրկմամբ:

Այս թեմաներով օգտակար հղումներ կարելի է գտնել Համաշխարհային ժառանգության փաստաթղթեր No. 13 աշխատությունում՝ «Կապելով համաշխարհային և տեղական արժեքները, կառավարելով կայուն ապագա Համաշխարհային ժառանգության համար»,¹⁰ No. 26-ը՝ «Համաշխարհային ժառանգության մշակութային տեղանքապատկերները, պահպանության և կառավարման ձեռնարկ»¹¹ և No. 31-ը՝ «Համայնքների զարգացումը Համաշխարհային ժառանգության միջոցով»¹² վերնագրերով: Դրանք մեկտեղում են հետաքրքիր փաստաթղթեր, մի շարք առաջարկություններ (դրանցից որոշներն իրենց ազդեցությունն են ունեցել ԳՈՒ-ի վերանայման հարցում), և ակնարկ, թե որքան է փոփոխվել մտածելակերպը վերջին տարիների ընթացքում:

Վայրերից ստացված տեղեկատվությունը ցույց է տալիս, որ գործնականում ժառանգության կառավարման համակարգերը հաճախ ծախսողվում են տեղի գործընկերներին ներգրավելու հարցում: Եվ եթե համայնքի ներգրավումը տեղ չի գտնում, ապա որոշում կայացնելու գործում տեղի մասնակիցների և ներադրումներ կատարելու կարողությունները հաճախ սահմանափակվում են:

9. Mitchell, B. and Hollick, M. 1993. 'Integrated Catchment Management in Western Australia: The Transition from Concept to Implementation', in: Environmental Management, Vol. 17 Iss: 6, 1993. pp. 735-43. Springer-Verlag.
10. de Merode, E., Smeets, R. and Westrik, C. (eds). 2004. Linking Universal and Local Values : Managing a Sustainable Future for World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Paper 13) <http://whc.unesco.org/en/series/13/>
11. Mitchell, N., Rössler, M. and Tricaud, P.-M. (authors/eds). 2009. World Heritage Cultural Landscapes: A handbook for conservation and management. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 26). <http://whc.unesco.org/en/series/26/>
12. Albert, M.-T., Richon, M., Viñals, M.J. and Witcomb, A. (eds). 2012. Community Development through World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 31). <http://whc.unesco.org/en/series/31/>

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

Այնուամենայնիվ, գոյություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնք կարող են հետ մղել մասնակցային մոտեցման կիրառումը և հանգեցնել ժառանգության հուշարձանների կառավարման գործում տեղի համայնքի ներգրավման անհաջող փորձերի. օրինակ՝ կառավարման համակարգն ինքնին, շահագրգիռ կողմերի կամ քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնների միջև իշխանության անհավասարակշռությունն առավել լայն միջավայրի համատեքստում (աղքատություն և քաղաքացիական անհնազանդություն կամ առավել խորը նստած մշակութային արժեքներ):

Ավելին, բոլոր շահագրգիռ խմբերում, մասնավորապես նրանցում, որոնք հաճախ մարգիլացված են՝ կանայք, երիտասարդներ և տեղի բնակչություն, մասնակցային մոտեցման կիրառման ձախողումը կարող է փաստացի ավելի մեծ վնաս հասցնել, քան օգուտ բերել: Այն կարող է հանգեցնել խոտանված ծրագրերի, քանի որ ժառանգության մասնագետները հնարավոր է պատշաճ մակարդակով տեղեկացված չլինեն կարևոր ասպեկտների վերաբերյալ, կամ թյուրմբռնեն, ինչը կարող է հետաձգել կամ արգելափակել նախագծերի իրականացումը: Զբոսաշրջության կառավարման Համաշխարհային ժառանգության ձեռնարկն¹³ ունի օգտակար գլուխ՝ «Շահագրգիռ կողմերի ներգրավում. հանրային մասնակցության օգուտները և մարտահրավերները» վերտառությամբ:

Արդյունավետ մասնակցային մոտեցումը, որը կարող է օգտակար լինել մշակութային հուշարձանի և հանրության համար, կախված է ընկալումից, թե՛

- ովքեր են մասնակցում որոշումների կայացման, պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացին, և ինչպես,
- ովքեր են աջակցում փորձով, գիտելիքներով և հմտություններով, և ինչպես,
- ովքեր են շահույթ ստանում տնտեսական, սոցիալ-մշակութային և հոգեբանական տեսանկյուններից, և ինչպես:

Համալիր դեպքերում կարող է անհրաժեշտություն առաջանալ քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական և ինստիտուցիոնալ խորը ուսումնասիրությունների իրականացման: Իհարկե, յուրաքանչյուր շահագրգիռ խումբ կարող է կարիք ունենալ տրոհվելու բաղկացուցիչ մասերի (կամ սոցիալ-մշակութային խմբերի)՝ հաշվի առնելով այն գործոնները (սեռ, տարիք, խավ, լեզու, ծագում, կրթություն, կրոն և այլն), որոնք բնորոշում են նրանց մասնակցության բնույթը և դրանով խթանել ներգրավվումը մշակութային ժառանգության հիմնախնդիրների հարցերում:

Միաժամանակ կարևոր է հասկանալ, թե ով արդեն ունի տեղեկատվության, կրթության և այլնի համար որոշում կայացնելու արտոնություն, իսկ ով՝ ոչ: Եթե հստակ չէ, որ խոչընդոտները հետաձգում են օգուտվելու հնարավորությունը, ապա գնահատման գործընթացը պետք է հանգեցնի ուղղիչ միջոցառումների իրականացմանը: Գնահատումը պետք է իրականացնել դուրս մնացած շահագրգիռ կողմերի շրջանում, այն քանակով, ինչն իրականացվում է ժառանգության ոլորտում: Այսպիսով, տարբեր սոցիալական բաղադրիչներ կդառնան ավելի տեսանելի, որպեսզի գործողություններն իրականացվեն այնպես, որ մեծաքանակ շահագրգիռ կողմերի ներդրումը, սեփականությունը և մասնակցությունը հնարավոր լինի երաշխավորել:

Օրինակ, եթե պարզվի, որ կանայք դուրս են մնացել, ապա անհրաժեշտ կլինի ներմուծել գենդերային հավասարությունը որպես պաշտոնական մոտեցում պլանավորման, իրականացման և մոնիթորինգի բոլոր գործընթացներում՝ տվյալ մասնավոր խումբը տեսանելի դարձնելու նպատակով և դրանց հնարավոր ներդրումները, հմտությունները և կարիքները դժվարությունների հաղթահարման ընթացքում տիրապետելու նպատակով:

Մասնակցային մոտեցումը հաճախ պահանջում է դժվար փոխզիջումներ և բանակցային զիջումներ ընդունելու պատրաստակամություն: Անկողմնակալ մոտեցումը և մշակութային ժառանգության հուշարձանի հարցում ընդլայնված համագործակցությունը կամ փոխգործակցությունը կարող են դյուրացնել այս՝ հաճախ դժվար թվացող գործընթացը:

Նախաձեռնությունները, որոնք ուղղված են ժառանգության ոլորտում մասնակցության նոր կամ գոյություն ունեցող ձևաչափերի ամրապնդմանը՝ աշխատելով առավել լայն կամ շահագրգիռ կողմերի մեծ շրջանակի հետ, հաճախ կոչվում են «մասնակցային մոտեցում»: Նման հարցադրումները դիտարկվում են 4-րդ մասում և Հավելված Ա-ում:

13. Pedersen, A. 2002. Managing Tourism at World Heritage Sites: a Practical Manual for World Heritage Site Managers. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Manual 1.) <http://whc.unesco.org/en/series/1/> (English web page).

2.3 Ժառանգության պահպանություն և կայուն զարգացում¹⁴

Նախորդ բաժիններում (2.1 և 2.2) դիտարկվում էր, թե ինչպես է ժառանգությունը կախված իր շրջապատից և ինչ է, ի վերջո, իրենից ներկայացնում այս փոխկախվածության ճևր: Տեղի համայնքները հաճախ կախում ունեն իրենց ժառանգությունից, կլինի դա սոցիալական ինքնագիտակցությունը կամ իրենց կենցաղն ամբողջությամբ, սակայն դրանք կարող են նաև օգուտ բերել ժառանգությանը, դրա մշակութային արժեքներին և կառավարմանը:

Կայուն զարգացման գործում մշակութային ժառանգության դերակատարությունը կարող է դիտարկվել որպես նման հիմնախնդիրների գազաթնակետը և ժամանակակից աշխարհում ժառանգության կառավարմանն ուղղված ամենաճնշող մտահոգություններից:

Համաշխարհային ժառանգության հուշարձանների կողմից հանրությանը, տեղական ու ազգային տնտեսություններին տված օգուտի ընկալումն ամենահրատապ է, քանի որ հուշարձանի համար մեծ կարևորություն է տրվում կայուն օգտագործմանը և շահույթների բաշխմանը: Վերջին տարիներին գլոբալիզացիայի, ժողովրդագրական աճի և կառուցապատման ազդեցության նման հիմնական երևույթների արդյունքում ժառանգության ոլորտը դարձել է կոնսերվացման և կայուն զարգացման միջև փոխկապակցվածության արտացոլումը: Դրա պատճառն այն փաստի ընկալումն է, որ նոր մարտահրավերներին ընդառաջ ժառանգությունն այլևս չի կարող «սահմանափակվել նախկին պասիվ կոնսերվացման դերակատարությամբ», այլ պետք է փոխարենը «տրամադրել նոր գործիքներ և գործողությունների շրջանակ՝ հանրության զարգացումը հղկելու, սահմանելու և խթանելու նպատակով»¹⁵: Այն նաև արտացոլում է այն միտումը, որ «ապրող» հուշարձաններն առավել քան ժառանգության մաս են, և ոչ թե սոսկ հուշարձաններ: Նման ապրող ժառանգության հուշարձանները կարևորվում են ոչ միայն նրանով, թե ինչ են դրանք մեզ պատմում անցյալի մասին, այլև արտահայտում են հին ավանդույթների շարունակականության ապահովման վկայությունը ժամանակակից մշակույթում՝ ներկայացնելով դրանց կայունության վերաբերյալ չբացահայտված փաստեր:

Ժառանգության և կայուն զարգացման միջև կապը մեկնաբանվում է տարբեր եղանակներով՝ կախված տարբեր դերակատարների առանձին հեռանկարներից և գոյություն ունեցող հավակնությունների որոշակի աստիճանից: Արդյո՞ք հուշարձանի կառավարումը ներգործում է կայուն զարգացման վրա կամ պարզապես երաշխավորում է կայուն պրակտիկան: Արդյո՞ք ժառանգության կառավարման համակարգերը նույնպես կգնահատվեն ապագայում՝ այն հենքով, թե ինչպես են դրանք ազդելու¹⁶ ՄԱԿ-ի զարգացման նպատակների¹⁷ վրա:

Կայուն զարգացման հայեցակարգը

Որպես մեր օրերի ամենակարևոր մոդելներից մեկը կայուն զարգացումը վերաբերում է ռեսուրսների օգտագործման օրինակին, որը հավասարակշռում է մարդու հիմնական կարիքները սահմանափակ ռեսուրսների իմաստուն օգտագործման ու զարգացման հետ: 1992 թ. Ռիոյի գազաթնաժողովից ի վեր՝ կայուն զարգացման մոդելն ավելի է ընդլայնվել՝ ընդգրկելով երեք հիմնական, բայց միմյանց փոխլրացնող տարրեր. շրջակա միջավայրի պաշտպանություն, տնտեսական աճ և սոցիալական հավասարություն: Կառավարման արդյունավետ համակարգի կարևորությունը նույնպես ընդգծվել է՝ ներառելով մասնակցային, տարբեր շահագրգիռ կողմերի ընդգրկման քաղաքականությունը և դրա իրականացումը:

Տեղական, ազգային և միջազգային մակարդակներով բոլոր զարգացման քաղաքականություններն այսօրվա կայուն զարգացման համաշխարհային մակարդակով համաձայնեցված և ամենագոյ նպատակն է: Վերջերս կատարած ուսումնասիրություններից սերող նոր մոտեցումները ներկայացնում են սոցիալական կայունության հայեցակարգի արտահայտման նորարարական միջոցները և

14. Boccardi, G. 2012. Introduction to Heritage and Sustainable Development. Paper presented at Special Module on Sustainable Development during ICCROM's course on Conservation of Built Heritage.

15. ICOMOS. 2011. 17th General Assembly and Scientific Symposium, 'Heritage, Driver of Development' 27 November – 2 December 2011. in: ICOMOS News, Vol. 18, No.1, p.9. Paris, ICOMOS.

16. In 2011, a number of additions were made to the Operational Guidelines which refer to sustainable development, notably in paragraphs 6, 112, 119, 132, as well as in Annex 5, points 4.b and 5.e. These amendments are aimed on one hand at ensuring that any use of World Heritage properties be sustainable with respect to the imperative of maintaining their OUV (thus, a narrow definition of sustainability), and on the other hand to affirm, as a principle, the idea that management systems of WH properties should 'integrate sustainable development principles'.

17. United Nations Millennium Goals to be met by 2015, <http://www.un.org/millenniumgoals/bkgd.shtml>

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

«բարեկեցություն», «լավ կյանք» կամ նույնիսկ «երջանկություն» եզրույթները, որոնք իրենց ճանապարհին են հարթում կառավարությունների քաղաքականություններում և վիճակագրությունում՝ կենտրոնանալով ավելի շատ առարկայական և որակական, այլ ոչ թե զուտ քանակական ինդիկատորների վրա:¹⁸ Այս հիմնարար սկզբունքն ընդունվել է Ռիո+20-ի վերջնական փաստաթղթի՝ «Ապագան, որ ուզում ենք» 30-րդ, 58-րդ և 134-րդ պարբերություններում:¹⁹

Մշակութային ժառանգության պահպանության և կայուն զարգացման միջև հարաբերակցությունը

Մշակութային ժառանգության տեսանկյունից կայուն զարգացման հետ կապված հիմնախնդիրները կարելի է հասկանալ երկու տարբերակով՝

1. Ժառանգության պահպանության հարցով մտահոգություն, որը դիտարկվում է որպես ինքնանպատակ և բնապահպանական /մշակութային ռեսուրսների մասնիկ, որոնք անհրաժեշտ է պահպանել և փոխանցել ապագա սերունդներին՝ դրանց զարգացումը երաշխավորելու նպատակով (ներքին):

2. Որպես հնարավոր ներդրում, որ ժառանգությունը և ժառանգության պահպանությունը կարող են ունենալ կայուն զարգացման բնապահպանության, սոցիալական և տնտեսական պարամետրերում (գործիքային):

Առաջին մոտեցումը հիմնված է այն եզրակացության վրա, որ մշակութային ժառանգությունը և անցյալի ընկալման հնարավորությունը դրա մնացորդների միջոցով, որպես մշակութային բազմազանության ատրիբուտներ, հիմնարար դերակատարություն ունեն ուժեղ համայնքների ձևավորման գործում՝ աջակցելով անհատների ֆիզիկական և հոգևոր բարեկեցությանը, ինչպես նաև խթանելով փոխըմբռնումը և խաղաղությունը: Այս առումով մշակութային ժառանգության պահպանությունը և խթանումը կարող է հանդիսանալ, այսպես կոչված, իրավագործ նպատակ հանրությանն օգուտ տալու շրջանակներում:

Երկրորդ մոտեցումը ծագել է այն ընկալումից, որ ժառանգության ոլորտը, որպես սոցիալական հարթակի կարևոր դերակատար և որպես փոխկախվածության մեջ գտնվող բաղադրիչների ընդլայնված համակարգի տարր, պետք է պատասխանատվություն կրի կայունությանն ուղղված միջազգային մարտահրավերների առնչությամբ: Մարդկային գործունեությամբ, նվազող ֆինանսավորման և շրջակա միջավայրի պահպանության ու կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ աճող ճնշումների այժմյան համատեքստում ժառանգության պահպանության տված օգուտը կայունությանը և կայուն զարգացմանը չի կարող այլևս ընդունվել որպես այդպիսին, այլ պետք է ներկայացվի ըստ դեպքերի, յուրաքանչյուր «հենասյունի» համար. սոցիալական, տնտեսական և բնապահպանական ուղղություններ:²⁰



© ՅՈՒՆԵՍԿՕ/Դոմ Մաստան

«Համաշխարհային ժառանգությունը խաղաղության և կայուն զարգացման հիմքն է: Այն տեղի համայնքների լի-նեղության և արժանապատվության աղբյուրն է, գիտելիքի գանձատուն և համատեղ օգտագործման համար ուժ»:

Իրինա Բոկովա, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն

Համաշխարհային ժառանգության կոն-վենցիայի անդամ պետությունների 18-րդ զագաթնաժողով

18. An example is the the Royal Government of Bhutan's Commission for Gross National Happiness, <http://www.gnhc.gov.bt/mandate/>

19. Accessible online at:

<http://www.uncsd2012.org/content/documents/727The%20Future%20We%20Want%2019%20June%201230pm.pdf>

20. Boccardi, G. 2007. World Heritage and Sustainability; Concern for social, economic and environmental aspects within the policies and processes of the World Heritage Convention. London, M.Sc. dissertation, UCL Bartlett School of the Built Environment.

Բնապահպանության, սոցիալական կապիտալի և տնտեսական աճի գործում ժառանգության տված օգուտը ստանում է լայն ճանաչում: Այլ ոլորտներից ժառանգության խնդիրների արհեստական մեկուսացումը պարզապես աննպատակահարմար կլինի, քանի դեռ արտաքին գործոնները «կշարունակեն բացասական ազդեցության ունենալ ժառանգության պրակտիկ գործնության վրա, ինչպես և ժառանգության կառավարման ոլորտում մեկուսացված որոշումների կայացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ժառանգության և դրա համատեքստի փոխհարաբերությունների վրա»²¹:

Սա բացահայտ է վերջին մի քանի տարիների ընթացքում (տե՛ս 3.7-րդ մասը) Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանվածության վրա ազդեցություն ունեցած գործոններում: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ դեպքերի մեծամասնությունում այդ հուշարձանների վիճակի վատթարացման խնդիրները ծագում են «հուշարձանի սահմաններից դուրս, և տեղի կառավարիչը, չնայած նրան, որ բարեխիղճ է, սահմանափակված է փոփոխությունների իրականացման հարցում»²²: Տվյալ համատեքստում կայուն զարգացմանը նպաստելը ժառանգության ոլորտի համար չի դառնա միայն էթիկապես ճիշտ պարտավորություն, այլ գոյակցության երկարաժամկետ հարց, հատկապես ներկայիս ֆինանսական ճգնաժամի պայմաններում, որտեղ պահպանությանն ուղղված պետական ծախսերը օրեցօր դժվար է դառնում հիմնավորել:

Առաջին փաստարկի վրա կենտրոնացումը (մշակութային ժառանգությունը որպես իրավազոր ինքնանպատակ), երբ մշակութային ժառանգության աջակցությունը մարդկային բարեկեցության հիմնական արժեքներին, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը կամ այլ նյութական օգուտները, ապացուցված չէ փաստերով, ժառանգության պահպանությունը հաճախ հետ են մղել, այսպես կոչված, թերի ֆինանսավորվող լավ մտադրությունների «հատուկ պահոց»: Այն վարկածը, որ ժառանգության հուշարձանները, այդ թվում նաև մշակութային տեղանքապատկերների վերաբերյալ Գործառնական ձեռնարկում հիշատակված «կայուն հողօգտագործումը», իրենցից ներկայացնում են զարգացման մոդելներ, մասնավորապես, երբ առաջնահերթությունը տրվում է «պահպանությանը» և փոփոխությունների համար ընդունելի սահմանները հստակեցված չեն: Սա հանգեցրել է մտահոգության, որ քանի դեռ դրա աջակցությունը մյուս երեք հենասյուներին հստակ միավորված և ճանաչված չէ, ապա ժառանգությունը վտանգված է մնալ մարգինալացված՝ կայուն զարգացման առավել ընդլայնված շրջանակում:

Մյուս կողմից որոշները շեշտադրեցին, որ սոցիալ-տնտեսական «զարգացմանն» արդեն իսկ բավականին մեծ ուշադրություն է դարձվել, և որ արդեն վճռորոշ է հնարավորինս մեծ քանակությամբ մեզ հասած ժառանգության հուշարձանների փրկության հարցը՝ անկախ տեղի համայնքներին դրանց տված ուղղակի օգուտներից, քանի որ դա ապագա սերունդների զարգացումը երաշխավորող հիմնարար կապիտալի բաղկացուցիչն է: Որպես իրավազոր ինքնանպատակ նրանք կողմնակից են ուժեղ դիրքորոշման ժառանգության պահպանության, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների նման բացառիկ տեսարժան վայրերի համար: Այս համատեքստում ժառանգության հուշարձաններից բխող սոցիալ-տնտեսական օգուտները կարող են լինել ցանկալի, բայց ոչ խստորեն պահանջված՝ դրանց կոնսերվացումը հիմնավորելու համար:

Երկրորդ մոտեցումից բխող հետևանքները (այսինքն ժառանգությունն իր ներդրումն ունի կայուն զարգացման երեք հենասյուներում) կարևոր նշանակություն ունեն ոլորտի համար, քանի որ ենթադրում են առաջընթաց բացառապես հուշարձանի կոնսերվացման փոխոփայության և բարոյական տեսանկյունից աշխարհի տարբեր հատվածներում:

Տեսական և գործնական գիտակարգերում կլինեն նաև դրանցից բխող կարևոր փոփոխություններ: Ժառանգության ոլորտում մասնագիտացողները պետք է ընկալեն ժառանգության և տնտեսական, սոցիալական և բնապահպանության ոլորտների (լայն իմաստով) միջև բազմակի փոխկապակցվածությունը, ինչը հստակեցում է մտցնում դրանց փոխներգործության և համապատասխանաբար գործելու ընթացակարգերի մեջ: Նրանք պետք է գործ ունենան մեծ թվով տարբեր մասնագիտացում և փորձառություն ունեցող մարդկանց հետ, ինչպես նաև դիտարկեն շահագրգիռ կողմերի լայն շրջանակը: Հուշարձանների պահպանության վերաբերյալ որոշումների կայացումն այլևս չի մնա ժառանգության մասնագետների ձեռքում, այլ կքննարկվի բազմաթիվ գործընկերների հետ՝ հիմք ընդունելով ուժեղ փաստարկները և միասնական նպատակները, փոխգիշումների իրականացումը:

Ամենայն հավանականությամբ պահանջվում է երկու մոտեցումների համախմբում, որոնք փոխադարձաբար բացառող չեն, մի կողմից՝ վերահաստատելով ժառանգության մշակութային արժեքը՝ առավել հստակ ներկայացնելով դրա շահավետությունը համայնքի բարեկեցության և երջանկության տեսանկյունից ; և մյուս կողմից՝ փնտրելով այնպիսի պայմաններ, որ կարող են ժառանգությունը դարձնել առավել հզոր ներդրում կատարող բնապահպանության, սոցիալական և տնտեսական կայունության գործում՝ դրա առաջնահերթության արդարացի դիրքով համաշխարհային և ազգային զարգացման օրակարգերում:

Հուշարձանի և դրա շրջապատող տարածքին փոխադարձաբար շահավետություն ապահովող նախաձեռնությունները կարող են էական չթվալ Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության

21. Boccardi, G. 2012. Introduction to Heritage and Sustainable Development. Paper presented at Special Module on Sustainable Development during the ICCROM's course on Conservation Built Heritage.
22. Ibid.

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

համար, սակայն կարող են իրենց կարևորությունն ապացուցել երկարաժամկետ հեռանկարում, քանի որ դրանք կապում են հուշարձանն իր համատեքստի հետ դրական և կայուն ճանապարհով՝ դրանով իսկ խթանելով իր երկարաժամկետ գոյատևումը: Օրինակ՝ հուշարձանի կոնսերվացման ոլորտում տարբեր վայրերից նոր տաղանդների վերապատրաստման փոխարեն տեղի մասնագետների հմտությունների զարգացման փոխադարձ շահավետությունը կարող է ի հայտ գալ երկարաժամկետ հեռանկարում:

Ամենայն հավանականությամբ պահանջվում է երկու մոտեցումների համախմբում, որոնք փոխա-դարձաբար բացառող չեն, մի կողմից՝ վերահաստատելով ժառանգության մշակութային արժեքը՝ առավել հստակ ներկայացնելով դրա շահավետությունը համայնքի բարեկեցության և երջանկության²³ տեսանկյունից; և մյուս կողմից՝ փնտրելով այնպիսի պայմաններ, որ կարող են ժառանգությունը դարձնել առավել հզոր ներդրում կատարող բնապահպանության, սոցիալական և տնտեսական կայունության գործում՝ դրա առաջնահերթության արդարացի դիրքով համաշխարհային և ազգային զարգացման օրակարգերում:

Հուշարձանի և դրա շրջապատող տարածքին փոխադարձաբար շահավետություն ապահովող նախաձեռնությունները կարող են էական չթվալ Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության համար, սակայն կարող են իրենց կարևորությունն ապացուցել երկարաժամկետ հեռանկարում, քանի որ դրանք կապում են հուշարձանն իր համատեքստի հետ դրական և կայուն ճանապարհով՝ դրանով իսկ խթանելով իր երկարաժամկետ գոյատևումը: Օրինակ՝ հուշարձանի կոնսերվացման ոլորտում տարբեր վայրերից նոր տաղանդների վերապատրաստման փոխարեն տեղի մասնագետների հմտությունների զարգացման փոխադարձ շահավետությունը կարող է ի հայտ գալ երկարաժամկետ հեռանկարում:

Ինտեգրելով կայունություն: մի օրինակ

Անգլիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի ազգային հիմնադրամը ժառանգության ոլորտում շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ մշակութային, բնության և խառը հուշարձանների ոլորտում գործունեություն իրականացնելու առաքելությամբ: Այն որոշում է կայացրել իր գործառույթներում և որոշում կայացնելու գործընթացներում ներմուծել կայուն զարգացման հետ կապված հիմնախնդիրները: Մշակած գործիքակազմը նպատակ ունի հասցեական լուծում տալ կայուն զարգացման հետ կապված խնդիրներին, համապարփակ ինտեգրել դրա կիրառումը ժառանգության կառավարման համակարգում՝ փոփոխությունների (պլանավորման) կառավարման և մոնիթորինգային գործընթացների իրականացման նպատակով:

Ժողովուրդ, ֆինանսներ և միջավայր ուղղվածություններից որոշումների և մոտեցումների ազդեցության գնահատումը դառնում է ստուգման կարևոր չափորոշիչ ժառանգության կառավարման գործընթացի համար: Գործիքը, որը հայտնի է Եռակի չափորոշիչ գործիք անվամբ, մոդելավորվել է այն գաղափարով, որ տնտեսական շահի, սոցիալական բարեկամության և բնապահպանության միջև հավասարակշռությունը անհրաժեշտ է պահպանել, որպեսզի կազմակերպությունը և նրա ենթակայության ժառանգության հուշարձաններն ունենան կայունություն երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև ժառանգության հուշարձանների պրամադրած արտոնությունից օգտվելու նպատակով²⁴:



Սթադիոն Թագավորական զբոսայգին շարժականների ավերակներով Աբբի (Միացյալ Թագավորություն)

© Վալերի Լի Վիլկին

2.4 Ժառանգության կառավարման անհրաժեշտություն

Հասարակության օրեցօր աճող ներգրավվածությունը ժառանգության պահպանության գործում որպես մեկ ամբողջություն նշանակում է, որ այն այլևս ակադեմիկոսների և հնախալքների մենաշնորհ չէ, թեթե նույնիսկ եղել է նախկինում: Ներկայում համայնքներն ավելի ակտիվ ներգրավված են իրենց ժառանգության պահպանության գործում: Մշակույթի հուշարձաններն ունեն կարևոր սոցիալ-տնտեսական գործառույթներ, իսկ որոշները շարունակում են ամուր կապ ունենալ համայնքների հետ՝ արժեքների նյութական և ոչ նյութական արտահայտությունների հետ միասին: Ժառանգության հուշարձանները դեռևս շարունակում են օգտագործվել իրենց սկզբնական նպատակով: Երկրագրության և կենցության վայրերը, մշակութային տեղանքապատկերները կամ տարբեր տեսակի հաստատությունները դրանց օրինակներն են: Ժառանգության բազմաթիվ այլ վայրեր հարմարեցվել են նոր կիրառության համար՝ դրանց տրամադրելով մի գործառույթ, որը երաշխավորում է վերջիններիս շարունակական պահպանությունը և կարևորությունը հասարակության համար:

23. The increasing emphasis on quality of life and well-being as the ultimate goals of development in global and national development agendas suggests that aspects such as creativity, spiritual fulfilment, knowledge and beauty might find their way into official statistics on social sustainability by making 'culture' and heritage legitimate and significant constituents of sustainable development.

24. Lithgow, K. 2011. 'Sustainable decision-making: change in National Trust collections conservation', in: Journal of the Institute of Conservation, Vol. 34 ,No. 1, 2011, pp. 128-142. London, ICON.

Գոյություն ունի նաև աստիճանաբար աճող ուշադրություն ժառանգության կողմից կայուն զարգացման և սոցիալական համախմբվածության գործում ունեցած ներդրման նկատմամբ: Այն համակցվում է նաև առարկաների ընդլայնված շրջանակի հետ, որոնք կարող են ժառանգություն համարվել, օրինակ՝ ամբողջական տեղանքապատկերները, քաղաքային կենտրոնները, նախկին արդյունաբերական և ռազմական հաստատությունները, ինչպես նաև այն ամենը, ինչը սովորաբար դիտարկվել է ժառանգություն, ինչպիսիք են հնավայրերը, ավերակները և մեծ կառույցները:

Այս համատեքստում շրջապատում եղած ժառանգությունը պետք է ցանկություն առաջացնի հասարակության մեջ մասնակցելու ժառանգության համապարփակ կառավարմանը, այլ ոչ թե առանձին կառուցվածքների պահպանությանը, ինչպես նախկինում էր: Հաշվի առնելով հուշարձան համարվող օբյեկտների ընդլայնված շրջանակը և դրանց առնչվող խնդիրների համալիրությունը՝ լինի դա զբոսաշրջություն կամ այլ նպատակ, ժառանգության հանդեպ խնամքը ենթադրում է որոշումների կայացում, թե որ փոփոխությունն է ընդունելի, իսկ որը՝ ոչ: Տարբեր այլընտրանքների միջև ընտրություն կատարելը նշանակում է, որ ժառանգության կառավարման մոտեցումների մեջ փոփոխություններ են տեղի ունենում: Առավել կարևորություն է ստանում ժառանգության հուշարձանի որոշակի արժեքների բացահայտման անհրաժեշտությունը (տես 2.5-րդ մասը), որպեսզի որոշվի, թե ինչպես կարելի է փոփոխություն մտցնել՝ բացառելով բացասական ազդեցությունն արժեքների վրա: Ժառանգության կառավարումը օրեցօր պահանջկոտ է դառնում, միաժամանակ ավելի մեծ են դառնում կառավարման գործընթացներից օգուտների և եկամուտների ստացումը:

Աղյուսակ 3. Ակնարկ. ժառանգության կառավարման հանդեպ աճող պահանջները

Բազմակի նպատակները, որոնք բնորոշում են մշակութային ժառանգության աճող դերակատարությունը

Ընդհանուր անցյալի պահպանությունը ավանդական մոտեցումների միջոցով, այսինքն՝ հուշարձանի համար անհրաժեշտ գործողությունների իրականացում:

Մշակութային հուշարձանները պահպանում են սոցիալական և տնտեսական գործառնությունները:

Մշակութային հուշարձանները պահպանում են համայնքների միջև ամուր կապը և իրենց նպաստը բերում հանրությանը

Որպես արդյունք պահպանել հավելած նյութական և ոչ նյութական ինքնարտահայտման միջոցները

Ժառանգության կառավարման հանդեպ լայն պարտավորությունների ստանձնում, ինչը հանգեցնում է՝

Մշակութային բազմազանության խթանում
Բնական միջավայրերի պահպանություն (մասնավորապես, հուշարձանների տարածքներում և դրա շրջապատում գտնվող էկոհամակարգերը):

Պահպանել ոչ նյութական ակտիվներ հուշարձանների շրջանակում (համայնքներ, մշակույթներ և գիտելիքներ):

Ապահովել համայնքների կենսունակությունը:

Թույլատրել շարունակական համահունչ հողօգտագործում կամ տնտեսական գործունեություն:

Ավելի շատ կարևորություն է տրվում ընդհանուր շրջանակներին, որոնք սահմանում են կառավարման համակարգը և կառավարման մշակույթը (տես 4-րդ բաժինը):

Ինչ ենք հասկանում «կառավարման համակարգ» ասելով մշակութային ժառանգության համար

«Կառավարում» նշանակում է գործընթաց՝ միջոցների հիմնավորված օգտագործում վերջնանպատակին²⁵ հասնելու համար՝, իմաստը սահմանված է բառի ստուգաբանությամբ:²⁶

«Կառավարման համակարգը» կարելի է բացատրել որպես մի շարք գործընթացների միասնություն՝ արդյունքների հասնելու համար, որոնցից որոշները վերադարձվում են համակարգ՝ գործողությունների և ձեռքբերումների շարունակական բարելավումը, վեր բարձրացող պարույրի ստեղծումն ապահովելու նպատակով: Մշակութային ժառանգության կառավարման համակարգ(եր)ի որոշ ձևաչափ(եր) գոյություն ունի (ունեն) յուրաքանչյուր երկրում: Կառավարման այդ համակարգերը տարբերվում են, դրանցից որոշները գոյություն ունեն դարեր ի վեր, մինչդեռ մյուսները ձևավորել են վերջին

25. Definition provided by www.merriam-webster.com/dictionary/management

26. The verb manage is thought to come from the Italian maneggiare – to handle, manage, touch, treat – which in turn derives from the Latin manus (hand). The Old French word mesnagement (later ménagement) – the handling or training of horses – influenced the development in meaning of the English word management in the 17th and 18th centuries. en.wikipedia.org/wiki/Management – Oxford English Dictionary.
T. F. Hoad. 'manage.' The Concise Oxford Dictionary of English Etymology. 1996. Encyclopedia.com. (February 20, 2012). <http://www.encyclopedia.com/doc/1O27-manage.html>

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

Ժամանակահատվածում: Որոշները գործարկվում են ազգային մակարդակով, մյուսները՝ մարզային, տեղական և հուշարձանի մակարդակով: Աշխարհի որոշ մասերում ժառանգության համար գոյություն ունեն ոչ ֆորմալ, կոնսերվացման առկա որոշումների կայացման մեխանիզմներ, որոնք կարող են չհամապատասխանել ժառանգության ոլորտին կառավարման համակարգի տեսանկյունից, սակայն շարունակում են մնալ համակարգ:

«**Մշակութային ժառանգության համար կառավարման համակարգը**» օգնում է պահպանել և կառավարել տվյալ հուշարձանը կամ հուշարձանախումբը այնպես, որ պաշտպանվեն մշակութային արժեքները՝ մասնավորապես դրա Համաշխարհային բացառիկ արժեքը, եթե Համաշխարհային ժառանգության հուշարձան է, ինչպես նաև հնարավորության դեպքում խթանի սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտների շրջանակը յուրաքանչյուր հուշարձանի սահմաններից դուրս: Առավել ընդլայնված ներգրավումը ոչ միայն կանխում է մշակութային ժառանգությանն ուղղված բացասական պրակտիկան, այլև խթանում է ժառանգության հուշարձանի արժեքների բացահայտմանը և հանրահռչակմանը: Ավելին, մշակութային ժառանգությունը կառուցողական դերակատարություն ունի մարդկային զարգացման գործում, ինչը հետ է վերադարձվում՝ դրանով իսկ ապահովելով մշակութային ժառանգության կայունությունը (տես 2.3-րդ մասը):

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին է ժառանգության կառավարման համակարգը, դրա հետագա հաջողությունը, մասնավորապես Համաշխարհային ժառանգության համար, էապես կախված է նրանց կարողություններից, ի թիվս այլերի՝

- որդեգրելու արժեքներով առաջնորդվելու մոտեցումը (տես 2.5-րդ բաժինը),
- կիրառել այնպիսի մոտեցումներ, որոնք ենթադրում են փոփոխություններ և դրանց կառավարում,
- ներդրում կատարել ժառանգության և հանրության փոխհարաբերակցության մեջ՝ հաստատակամությամբ քննության առնելով, թե ինչու և ինչպես մշակութային ժառանգությունը կարող է պահպանվել և ուժից ու ում միջոցով:

2.5 Ժառանգության պահպանության և կառավարման մոտեցումներ

Կառավարման համակարգը, լինի դա ոչ ֆորմալ կամ լավ փաստաթղթավորված, կարիք ունի ժառանգության կառավարման համաձայնեցված հիմքի: Վերջին տասնամյակներում գոյություն է ունեցել երկու մոտեցում, դրանցից մեկը կոչվել է «ավանդական», իսկ երկրորդը՝ «արժեքների վրա հիմնված» մոտեցում, որը առավել գերակշռող է դարձել ամենայն հավանականությամբ իր ճկունության պատճառով: Երկու մոտեցումները միմյանց բացառող չեն: Բազմաթիվ կառավարման համակարգեր երկու մոտեցումներից էլ տարրեր են պարունակում: Այստեղ մենք համեմատում և հակադրում ենք այս երկու մոտեցումները, ինչպես նաև փորձում ենք բացատրություն տալ, թե ինչու է արժեքների վրա հիմնված մոտեցումն ավելի համապատասխան Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման և պահպանության համար:


«Ավանդական» մոտեցում

«Ավանդական» մոտեցումը վերաբերում է կոնսերվացման ոլորտի մասնագետների ընդունած մեթոդաբանությանը՝ Արևմտյան աշխարհում ժամանակակից պահպանության շարժման ծննդի հետ միասին: Հիմնական ուղադրությունը կենտրոնացված էր կոնսերվացման նյութերի կամ անցյալի կառուցվածքների վրա, որոնք նախանշվել են որպես հուշարձաններ և տեսարժան վայրեր, որոնք անհրաժեշտ է պահպանել ապագա սերունդների բարօրության նպատակով:

Պահպանության ոլորտի մասնագետները սկսել են նախանշել և սահմանել, թե ինչ է անհրաժեշտ պահպանել (որը հետագայում ամրապնդվել էր առանձին երկրներում այն նպատակով ընդունած օրենսդրությամբ):

Գոյություն ունեցող կառույցների վիճակի ուսումնասիրությունը հանգեցրել է տաբեր միջամտությունների գոյություն ունեցող նյութերի կյանքը երկարաձգելու նպատակով: 20-րդ դարի կեսերին այս մոտեցումը միջազգային ճանաչում ունեցավ այնպիսի դոկտրինների միջոցով, ինչպիսիք են Վենետիկյան խարտիան և ԻՎՕՄՕՍ-ի նման կազմակերպության աշխատանքը:

Աղյուսակ 4. Ավանդական մոտեցում պլանավորման գործում




Տվյալ մոտեցումն ընդունված է համաշխարհային մասշտաբով և ունի օգտակար ու թերի կողմեր: Վերջերս մշակված արժեքների վրա հիմնված մոտեցումը թվում է՝ ժողովրդականություն է ձեռք բերում ժառանգությանը շրջապատող խոչընդոտների հասցեական լուծում տալու կարողության և, մասնավորապես Համաշխարհային ժառանգության ոլորտում կիրառելիության համար:

Արժեքների վրա հիմնված մոտեցում

Բոլոր առումներով արժեքների վրա հիմնված մոտեցումը ժառանգությանն առնչվող օրեցօր աճող դժվարությունների հասցեագրված պատասխանն է: Այն մշակվել է աշխարհի տարբեր հատվածներում, օրինակ՝ Կանադայում և ԱՄՆ-ում, և առավել ճանաչում է ստացել Բուրայի խարտիա անվամբ, որն առաջին անգամ մշակվել է 1979 թ-ին Ավստրալիայի ԻԿՕՄՕՍ-ի կողմից և հետևողականորեն թարմացվել է: Խարտիայով բարձրացվել է բոլոր շահագրգիռների կողմից վայրին՝ արժեքների հիման վրա կարևորության գնահատման և «Կարևորության մասին» հայտարարության կիրառման հարցերը, որպես պահպանության և կառավարման ռազմավարությունների մշակման հիմք: Այս հայեցակարգն իր զարգացումը ստացավ հետագայում Ջեյմս Կեռոի (1982 թ.) կոնսերվացման պլաններին նվիրված աշխատությունում: Նա սիստեմատիկ մոտեցում ներմուծեց կոնսերվացման և կառավարման պլաններում՝ հիմք ընդունելով արժեքները և, որն առավել կարևոր է, հանրության համար ժառանգության վայրի մշակութային տեսանկյունից կարևորությունը: Տվյալ մոտեցումը խարսխված է այն գաղափարի վրա, որ հասարակության անդամները ժառանգությանը վերագրում են տարբեր արժեքներ:

Աղյուսակ 5. Արժեքների վրա հիմնված մոտեցումը պլանավորման գործում



Այս մոտեցումն իր հետագա զարգացումը ստացավ ամենուրեք, օրինակ՝ անգլիական ժառանգության կողմից իր կոնսերվացման պլանների մասին ուղեցույցում:

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

Անգլիական ժառանգության կոնսերվացման պլանների մասին ուղեցույց (1998 թ.)

ՇԵՖԻԼԴ ՔԱՂԱՔԻ ՏԻՊԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԸ ՈՐՊԵՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՄՈԴԵԼ

Սա կոնսերվացման պլանի համար առաջարկվող վերնագրերի ցանկն է: Դուք կարող եք հարմարեցնել այն սեփական պահանջներին և Ձեր ենթակայության տակ գործող հուշարձանի կարիքներին կամ այլ մոտեցումներ փնտրելու գործընթացին համապատասխան:

1. Ամփոփում. մեկ էջի սահմաններում ամփոփող հայտարարություն, որը նկարագրում է պլանի հիմնական եզրահանգումները:

2. Ներածություն: Պլանի հանգամանքները, Պլանի շրջանակը (ներառյալ ուսումնասիրությունների շրջանակը), Ուսումնասիրությունների սահմանափակումները, Հեղինակային պատկանելություն, Հարաբերակցություն ցանկացած այլ առնչվող պլանների հետ, Ովքեր են խորհրդատվություն տրամադրել պլանի առնչությամբ, Երբ և ում կողմից է հաստատվել պլանը:

3. Հասկանալով տարածքը (հուշարձանը). տարածքի վերլուծություն, որն ուշադրությունը կենտրոնացնում է փաստաթղթերի և ֆիզիկական (հնագիտություն, ճարտարապետություն, տեղանքապատկեր և այլն), ինչպես նաև բնապահպանական փաստերի հետ միասին, տեղեկատվություն, որը վերաբերում է կառավարման գործին: Պատկերազարդված են լուսանկարներով, քարտեզներով և փուլային պլաններով: Տարածքի համառոտ պատմությունը: Հիմնական պատմական հուշարձանները կամ հողօգտագործման փուլերը (համալրված են քարտեզներով և պլաններով): Կարևոր առանձնահատկությունների նկարագրություն, տեղագրական և տեղանքապատկերների առանձնահատկությունները: Տարածքի հիմնական առանձնահատկությունները (օրինակ՝ շինություններ, կարևոր սենյակներ կամ տարածքներ, բնութագրիչ տարածքներ, տեղանքային առանձնահատկություններ, եզերատնկում, բնակիչներ, հավաքածուներ, մեքենաներ): Լրացուցիչ այլ տեղեկատվություն (օրինակ՝ երկրաբանություն, բնապահպանություն): Փաստաթղթավորում (աղբյուրներ և արխիվներ):

4. Կարևորության գնահատում. գնահատել տարածքի կարևորությունը և՛ ընդհանրական, և՛ հուշարձանի յուրաքանչյուր հիմնական բաղադրիչի մանրամասնությամբ՝ հատուկ ուշադրություն դարձնելով պատմական, բնապահպանական, երկրաբանական, մշակութային, գեղագիտական, հնագիտական, տեխնոլոգիական, սոցիալական և կարևորությունն ընդգծող այլ բաղադրիչների վրա: Կարևորության ընդհանուր ամփոփագիրը (միակողմանի A4), բոլոր կամ առանձին մասերի կանոնադրական կարգավիճակը, մշակութային / հողային նպատակներով օգտագործման փուլերի կարևորությունը, բաղադրիչի /տարածքի կարևորությունը (կարող է լինել աղյուսակային կամ նկարագրական), այլ արժեքներ կամ բնութագրիչներ, որոնք տարածքը կարևոր են դարձնում (օրինակ՝ համայնք):

5. Խնդիրներ /խոցելի կողմեր/. սահմանվում են այն հիմնախնդիրները, որոնք կարող են բացասաբար ազդել հուշարձանի կարևորություն վրա կամ ունեն ներուժ այն վտանգելու ապագայում՝ ներառյալ ֆիզիկական վիճակը, սեփականատիրոջ նպատակները, ներկայիս օգտագործումը, սահմանները, տրամադրության տակ եղած միջոցները, արտաքին գործոնները, հուշարձանի վերաբերյալ գիտելիքները, նախկինում հասցրած փաստերը, պետական և համայնքային սպասելիքները, օգտվելու հնարավորությունը, կանոնադրական հսկողությունները և հնարավոր հակամարտությունները: Հուշարձանի վերաբերյալ տեղեկատվություն (իրավական սեփականություն, զբաղեցրած տարածք, մատչելիություն, նպատակ, անվանում), շրջապատող տարածք, տեղանքապատկեր, թաղված հնագիտություն, կառուցված շինություններ, ներսույթներ, հավաքածուներ, բնապահպանություն, դերակատարությունը համայնքի համար:

6. Կոնսերվացման քաղաքականություն. սահմանում է տարածքի կոնսերվացման քաղաքականությունը կամ <<տեսլականը>>, ինչը ներկայացնում է, թե ինչպես եք նախանշելու տեղին օգտագործումը, բավարարում կանոնադրական պահանջները, աշխատում ռեսուրսների հետ, առաջանախերթություն սահմանում վերականգնման գործում, լուծում շահերի բախման հետ կապված խնդիրները, ձևավորում կոնսերվացման փիլիսոփայությունը, խթանում գնահատանքը հանրության շրջանում, պահպանում և կառավարում հուշարձանը և հսկում միջամտությունը կարևորության պահպանության նպատակով: Քաղաքականությունները կարող են վերաբերել նաև նոր ծառայությունների մատուցմանը, կիրառման նոր տեսակների կամ նոր նախագծային փիլիսոփայությանը:

Օգտագործեք երևակայությունը:

Կանոնադրական հսկողություններ, առնչվող պլանավորում և այլ քաղաքականություններ, առնչվող ոչ կանոնադրական ուղղորդում, կոնսերվացման քաղաքականություններ, միջավայր, տեղանքապատկեր, թաքնված հնագիտություն, կառուցված շինություններ, ներսույթներ-հավաքածուներ, բնապահպանություն, հանրահոջակում, մեկնաբանություն և կրթություն, այցելուների կառավարում (ներառյալ սահմանափակ կարողություններով մարդկանց համար օգտվելու հնարավորությունը, մատչելիությունը, սարքավորումները), դերակատարությունը համայնքում, ապագա հետազոտություններ:

7. Իրականացում և վերանայում. նախանշում է հաջորդ քայլերը՝ ներառյալ կոնսերվացման պլանի իրականացման ռազմավարությունը (օրինակ՝ սխեմայի մշակում, որով բացատրվում է, թե ինչպես և ում կողմից կվերանայնվի պլանը):

Ռազմավարություն. կոնսերվացման պլանից կարող են բխել տարբեր ռազմավարական փաստաթղթեր՝ ներառյալ նոր սխեմաների գնահատման համար տարբերակներ, վերականգնման առաջարկություններ և ծախսերի հիմնավորումներ, կառավարման առաջարկություններ կամ գոյություն ունեցող սխեմայի ազդեցության գնահատում, ինչպես նաև կոնսերվացման պլանին հակադրվող միջոցառումներ:

Աղբյուրներ.

Հավելվածներ. համապատասխան քարտեզների, նշանակման փաստաթղթերի, քաղաքական փաստաթղթերից մեջբերումներ, տեղանքի ուսումնասիրություններ, տեխնիկական տեղեկատվություն, նախագծեր և այլ տեղեկատվություն, որոնք նախկինում ներկայացված չեն եղել:
Կիրառեք հավելվածները՝ հիմնական տեքստը արհեստական չուճացնելու նպատակով:

(Քեյթ Կլարկից, Պալմանյան շինությունների կաներվալացման համադրեքստը 57 – մարտի 1998 թ.):

Շատ ու շատ երկրներ ժառանգության կոնսերվացման ոլորտում կիրառում են արժեքների վրա հիմնված մոտեցում: Տվյալ մոտեցման մեջ առաջին հերթին հաստատվում է ժառանգության օբյեկտի կարևորությունը մասնակցային գործընթացում, որի շրջանակներում կներգրավվեն բոլոր շահագրգիռ կողմերը: Սահմանելով կարևորությունը (կարևորության մասին հայտարարություն)՝ այն դառնում է կոնսերվացման քաղաքականության և ռազմավարության իրականացման շրջանակը, որտեղ հուշարձանի պահպանվածության վիճակը, կանոնները և կանոնակարգումները, համայնաբանների կարիքները և այլն հաշվի են առնված:

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան փաստացի արժեքների վրա հիմնված մոտեցման առաջին օրինակն է ընդունումից ի վեր, դրա կիրարկման հենքը Համաշխարհային բացառիկ արժեքի բացահայտումն ու պահպանությունն է, որի նշանակությունը տարածքին համայն մարդկության համար կարևորություն է տալիս: Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման նպատակը դառնում է պահպանության կամ տվյալ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի երկարաժամկետ պահպանվածության ապահովման երաշխիք:

Այդ իսկ պատճառով արժեքների վրա հիմնված մոտեցումը շատ հարմար է Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման և կառավարման համար, 3-րդ մասն այն ուսումնասիրում է առավել մանրամասնությամբ: Արժեքների վրա հիմնված մոտեցումը նյութակազմից զատ կենտրոնանում է արժեքների առավել մեծ շրջանակի վրա, որոնք կարևոր են ոչ միայն ժառանգության ոլորտի մասնագետների խմբի, այլև իրավասու շահագրգիռ կողմերի վրա: Այնուամենայնիվ, կառավարման մոտեցումները կարիք ունեն ավելի արձագանքող լինելուն, քանի դեռ այդ ժառանգության արժեքները, որոշումների ընդունման համար հիմք հանդիսացող շարժիչ ուժերը կայուն վիճակում չեն գտնվում: Դրանք կախված են այդ արժեքների նկարագրման գործընթացներին մասնակցող սոցիալական խմբերից, որոնք կարող են փոփոխության ենթարկվել ժամանակի ընթացքում՝ իրենց հավասարացնելով առավել լայն սոցիալական, մշակութային, բնապահպանական կամ կիրառման արժեքներին: Ժամանակի ընթացքում կարող են լինել բախումներ՝ հուշարձանին վերագրվող ժառանգության տարբեր արժեքների միջև և կարիք կլինի որոշելու դրանց հարաբերվող առաջնահերթությունները:

«Կարևորության մասին հայտարարության» նախապատրաստումը արժեքների վրա հիմնված մոտեցման հենքն է, որի կիրառումը կոնսերվացման և կառավարման ռազմավարությունների սահմանման հիմքն է: Այս հայեցակարգը Համաշխարհային ժառանգության քննույթ մուտք է գործվել 1995 թ-ից և ներառվել է ԳՈՒ-ում 1997 թ-ից, որտեղ նշված է, որ «կարևորության մասին հայտարարությունը պետք է հստակ ներկայացնի, թե որոնք են հուշարձանի կողմից ընդգրկված արժեքները ...»:

2000 թ. տեղի ունեցավ ԳՈՒ-ի վերանայմանը նվիրված հանդիպում (Քենթենբերի, ՄԹ, ապրիլ 2000 թ.), որի շրջանակներում ներմուծվեց «Համաշխարհային ժառանգության արժեքների մասին հայտարարությունը»: Համաշխարհային ժառանգության կոմիտեի 25-րդ նստաշրջանի ընթացքում (Հելսինկի, 2001 թ.) այն փոխարինվեց առավել տեղին եզրույթով, որը կոչվում է «Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարություն», հապավումը ՀԲԱՀ: Ի վերջո ՀԲԱՀ-ը ներառվեց ներկայիս ԳՈՒ-ում 2005 թ.: 155-րդ պարբերությունը տալիս է աշխատանքային սահմանում, մինչդեռ 51-րդ պարբերությունը հստակեցնում է, որ «Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանն ընդգրկելիս կոմիտեն հաստատում է Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքի մասին հայտարարությունը, որը դառնում է հիմնական հենանիշը հուշարձանի հետագա արդյունավետ պաշտպանության և կառավարման համար»:


2007 թ-ին կոմիտեն հուշարձանների ընդգրկման հետ մեկտեղ սկսեց հաստատել ՀԲԱՀ-ը: Սակայն ՀԲԱՀ-ների շարադրման ոճի մեջ գոյություն ունեին բազմաթիվ անհամապատասխանություններ, որի համար համաձայնեցված ձևաչափը ներմուծվեց 2008 թ. սեպտեմբերին: ԻԿԿՈՒ-ի ուսումնասիրությունից հետո՝ աշխատաժողով և մի շարք քննարկումներ կազմակերպվեցին, ինչի արդյունքում Համաշխարհային ժառանգության կենտրոնը և իր խորհրդատվական մարմինները համաձայնեցրեցին մի ձևաչափ, որն այժմ ինտեգրված է գործառնական ուղեցույցում և քննարկվում է անվանակարգի ձեռնարկի շրջանակներում: Անդամ պետությունները, խորհրդատվական մարմինները

2 Համատեքստ: մշակութային ժառանգության կառավարում

և կոմիտեն ավարտին են հասցնում մինչև 2007 թ. ընդգրկված հուշարձանների Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության համաձայնեցված հետհիմնավորումները: Այս հայտարարությունները հիմնված են ընդգրկելու մասին կոմիտեի նախաձեռնության որոշման և այդ պահին քննվող փաստաթղթերի հիման վրա:

Խորհուրդ է տրվում արժեքների վրա հիմնված մոտեցումն օգտագործել որպես Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման միջոց 4-րդ գլխում քննարկված կառավարման համակարգի հետ միասին: Հավելված 1-ում լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացված տվյալ հարցի վերաբերյալ:

Աղյուսակ 6. Համաշխարհային ժառանգության կառավարման պլանավորման համար արժեքների վրա հիմնված մոտեցումը



Փոփոխվող պատմական միջավայրի կառավարում

Մշակութային հուշարձանի կառավարչի համար էական պարտավորություններ են առաջանում՝ ելնելով պատմական միջավայրի միավորող էության և դրա կարևորության, որպես մեկ ամբողջություն, գիտակցումից: Այս տեղաշարժի արդյունքում վերջին կես դարում հուշարձանի կառավարման ամբողջական հայեցակարգը փոփոխության ենթարկվեց:

Պատմական միջավայրը մեծապես փոփոխության է ենթարկվել և կշարունակի փոփոխվել՝ ելնելով մարդկային կարիքներից և այլ գործոններից, որոշ դեպքերում էլ աղետաբեր ուղղությամբ: Հուշարձանի կառավարիչը պետք է ընկալի, որ պատմական միջավայրի ցանկացած հատված կարող է ունենալ բազմակի և փոփոխվող արժեքներ (ինչպես վերը նշվեց), որոնք կարող են հակադրության մեջ մտնել, եթե ուշադրությամբ չկառավարվեն: Փոփոխությունները կարող են անհրաժեշտ լինել նաև վայրի՝ իր սկզբնական նպատակին համապատասխան գործառույթը շարունակելու համար: Սա բնորոշ է բազմաթիվ կրոնական նշանակության, ժառանգության և ազգային խորհրդարանի շենքերի նման վայրերին, որոնց կառուցվածքը հարմարեցվել է օրենսդրական մարմնի համար համապատասխան գործունեությունը շարունակելու նպատակով: Փոփոխությունները կարող են նաև հանգեցնել ժառանգության վայրի փոխշահավետ օգտագործման, ինչը լավագույն միջոցն է դրա հետագա պահպանությունը և պահպանվածությունը ապահովելու համար:

Այդ իսկ պատճառով պատմական միջավայրի կառավարումն իրենից ներկայացնում է փոփոխությունների կառավարում: Սա վերաբերում է ինչպես Համաշխարհային ժառանգության, այնպես էլ ժառանգության որևէ այլ դրսևորմանը: Կառավարչի նպատակը պետք է լինի տեղանքապատկերի՝ լինի դա քաղաքային կամ գյուղական, շարունակական կայուն օգտագործումը՝ հնարավորության դեպքում պահպանելով և կրկին օգտագործելով անցյալի կարևոր բաղադրիչները՝ Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության պայմանով: Որպես հետևանք, կառավարումը պետք է այնպես փոփոխության ենթարկվի, որպեսզի հաշվի առնի մյուս կողմերի տեսակետները և հուշարձանի տարածքում ապրող և աշխատող մարդկանց հետաքրքրությունները:

Արժեքների և հետաքրքրությունների տարրապատկերը բավականին լայն կարող է լինել՝ ներառելով ազգային, մարզային և տեղական կառավարությունները, օրենքով ստեղծված հաստատությունները և ոչ կառավարական գործակալությունները, ինչպես նաև տեղի համայնքները, որոնք սեփականության իրավունքով տիրապետում և զբաղեցնում են քննարկվող վայրերը, ինչպես նաև պատմական միջավայրի մի շարք որոշակի հատվածի մի շաք օգտագործողները:

Մշակութային հուշարձաններում փոփոխությունների կառավարման համար կառավարման պլանավորումը հանդիսանում է ամենակարևոր գործիքը (տես հավելված 1-ը՝ կառավարման պլանավորման վերանայման համար, և հավելված 2-ը՝ այլ գործիքակազմերի համար, որոնցից մի քանիսը օգտագործվել է ժառանգության համար, իսկ որոշները դեռ մշակման փուլում են):

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային Ժառանգության համատեքստում

3-րդ բաժինը նկարագրում է Համաշխարհային Ժառանգության կոնվենցիան: Այն նկարագրում է, թե ինչ է անդամ պետություններից պահանջվում կոնվենցիայով, ինչ է նշանակում Համաշխարհային Ժառանգության հուշարձանների կառավարում, ինչպես նաև Գործառնական ուղեցույցի դերա-կատարությունը (3.1-3.3-րդ բաժիններ): Այն բացատրություն է տալիս Համաշխարհային բացառիկ արժեքի, իսկություն և ամբողջականության եզրույթների, ինչպես նաև պարբերական զեկույցների ներկայացման և վտանգված ցուցակում ընդգրկելու ընթացակարգերի վերաբերյալ:

Այնուհետ այն քննության է առնում Համաշխարհային Ժառանգության կոմիտեի կողմից կիրառվող միջոցները՝ կոնվենցիայի կիրարկումն բարելավելու համար: Դրանք արտահայտվում են որոշումների ձևաչափով, որոնք անդամ պետություններին ներկայացվում են որպես ռազմավարական ուղղորդում և Գործառնական ուղեցույցում կատարած փոփոխություններով՝ կոնվենցիայի կիրարկման արդյունքում կուտակված փորձի շնորհիվ (3.5-3.7-րդ մասեր): Վերջին մասը նկարագրում է կարողությունների կառուցման ռազմավարությունը Համաշխարհային Ժառանգության գործում (3.8-րդ մաս):

3.1 Ինչ է Համաշխարհային Ժառանգությունը, Համաշխարհային Ժառանգության համակարգը և դրա պահանջները

Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող աշխարհի Ժառանգության հայեցակարգն ձևավորվեց 1972 թ., երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունեց Մշակութային և բնության համաշխարհային Ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան, որն առավել հայտնի է պարզ՝ Համաշխարհային Ժառանգության կոնվենցիա անվամբ: Այս իրադարձությունը միջազգային օրենսդրությունում ներմուծեց մի գաղափար, համաձայն որի Ժառանգության որոշ տեսակներ ունեն համամարդկային արժեք և որ դրանց կառավարման համար պատասխանատվությունը վեր է ազգային կարևորությունից, եթե նույնիսկ առաջնային պատասխանատվությունը շարունակում են կրել առանձին պետություններ: Այս մոտեցումն այնքան գրավիչ էր, որ 190 անդամ պետություն վավերացրեցին կոնվենցիան և մոտ հազար հուշարձան արդեն ընդգրկվել են Համաշխարհային Ժառանգության ցանկում:

Քառասուն տարի անց էլ ելակետային մոտեցումը շարունակում է զարգանալ, սակայն դրա կիրառումը անճանաչելիորեն փոփոխվել է կոնվենցիայի կիրարկման համատեքստի փոփոխության պատճառով: Նման փոփոխությունները պայմանավորված են Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների առատությամբ և Համաշխարհային Ժառանգությանն առնչվող գործընթացների գնահատմամբ, բայց մասնավորապես Ժառանգության հայեցակարգի զարգացմամբ՝ ներառյալ մշակութային Ժառանգությունը վերջին քառասուն տարիների ընթացքում: Համաշխարհային Ժառանգության հուշարձանների համարժեք կառավարման անհրաժեշտությունը վերջին ժամանակահատվածում ավելի շատ է գիտակցվում:

1978 թ. Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկվելիք առաջին հուշարձանների մեծամասնությունը մշակութային բնույթի մոնումենտալ, հնագիտական կամ քաղաքային վայրեր էին, չնայած կային որոշները, որոնք արդյունաբերական կամ ասոցացված արժեք ունեին: Դրանից հետո մշակութային Ժառանգության հայեցակարգը փոփոխվեց անճանաչելիորեն՝ գիտակցելով, որ մարդկությունն իր ազդեցությունն է ունեցել ամբողջ երկրագնդի վրա: Նման ազդեցության փաստը կարող է դիտարկվել որպես Ժառանգություն, նույնիսկ եթե դրանց մեծամասնությունը չի ճանաչվի որպես Համաշխարհային բացառիկ արժեք:

Համանմանորեն ընդլայնվել են կոնվենցիայի կիրարկման շրջանակները, որոնք նպատակ ունեն ներառել ոչ միայն իշխող դասակարգերի կողմից դարերի ընթացքում կառուցած հիասքանչ շինությունները և քաղաքային կենտրոնները, այլև հավասարապես կարևոր, եթե ոչ ավելին, քան փխրուն, հիմնական գործընթացների վկայությունները, որոնց միջոցով մարդիկ զարգացրել են հանրությունը և իր տնտեսական հենքը: Որպես արդյունք, Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների բնույթն ընդլայնվել է՝ ընդգրկելով գիտության և տեխնոլոգիաների, արդյունաբերության և գյուղատնտեսության վկայությունները, ինչպես նաև մշակութային տեղանքապատկերների հայեցակարգը: Տվյալ գործընթացը ենթադրում է, որ Համաշխարհային Ժառանգության հուշարձաններին առնչվող խնդիրներն իրենց բնույթով առավել համալիր են դարձել 1972 թ. համեմատությամբ:

3.2 1972 թ. Համաշխարհային ժառանգության կովենցիա, ինչու և ինչպես կառավարել հուշարձանները և համապատասխանելիության ապահովման անհրաժեշտությունը

Համաշխարհային ժառանգության համակարգի բազային կառուցվածքը շարունակում է հիմնարկված մնալ Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի կողմից, որն անփոփոխ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1972 թ. ընդունումից հետո: Կոնվենցիայի կիրարկման փոփոխություններին կարելի է հետևել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործառնական ուղեցույցի հետևողական խմբագրումների միջոցով, սկսած առաջին՝ 1972 թ-ին կատարած խմբագրումից մինչև վերջինը՝ 2012 թ.: Դրանք Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի սկզբունքների մեկնաբանության հիմնական շարժիչ ուժն են, որոնց շնորհիվ մանրամասն ուղղորդում է տրամադրվում գործնական կիրառման համար:

Համաշխարհային ժառանգության համակարգը ներառում է մի շարք դերակատարների: Կոնվենցիայի կառավարող մարմինը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե): Այն բաղկացած է 21 անդամներից, որոնց ընտրում են անդամ պետությունները երկու տարին մեկ գումարվող զագաթնաժողովի ընթացքում: Վերջին տարին անդամ պետությունների զագաթնաժողովն առավել ակտիվ դերակատարություն ունի կոնվենցիայի կիրարկման համար ընդհանուր քաղաքականությունների մշակման հարցում:

Որպես կանոն անդամ պետությունները կոմիտեում պաշտոնավարում են չորս տարի: Կոմիտեն պատասխանատու է կոնվենցիայի կիրարկման համար: Դրա հիմնական գործառնություններն են, ինչպես նկարագրված է Գործառնական ուղեցույցում՝

- համատեքստի վերանայում (կոնվենցիայի նպատակը, ինստիտուցիոնալ շրջանակը, Համաշխարհային բացառիկ արժեքի սահմանում և պաշտպանության, կառավարման ստանդարտներ) (I և II բաժիններ),
- հուշարձանների առաջադրում (Բաժին III),
- հուշարձանների մոնիթորինգ (IV և V բաժիններ),
- աջակցություն և միջազգային օգնություն (VI և VII բաժիններ):²⁷

Կոմիտեի հիմնական գործառնություններ են՝

- ա) նախնական ցանկի հիման վրա և անդամ պետությունների ներկայացրած անվանակարգային փաթեթներից բացահայտել Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող մշակութային և բնության հուշարձանները, որոնք անհրաժեշտ է պաշտպանել կոնվենցիայով և դրանք ընդգրկել Համաշխարհային ժառանգության ցանկում,
- բ) ուսումնասիրել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանվածության վիճակը արձագանքող մոնիթորինգի և պարբերական զեկույցների ընթացակարգերի միջոցով,
- գ) որոշել, թե Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված որ հուշարձանը պետք է ներառվի կամ դուրս հանվի Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկից,
- դ) որոշում կայացնել Համաշխարհային ժառանգության ցանկից հուշարձանը հանելու վերաբերյալ,
- ե) սահմանել ընթացակարգը, համաձայն որի պետք է քննության առնվեն միջազգային աջակցության հայտերը, ինչպես նաև կազմակերպվեն ուսումնասիրություններ և խորհրդատվություններ, որոնք անհրաժեշտ են որոշում ընդունելու համար,
- զ) որոշել, թե ինչպես օգտագործել Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցները՝ անդամ պետությունների Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող հուշարձանների պաշտպանության գործին հնարավորինս արդյունավետ աջակցելու համար,
- է) միջոցներ է փնտրում Համաշխարհային ժառանգության հիմնադրամի ընդլայնման համար,
- ը) իր իրականացրած աշխատանքների մասին հավետվություն է ներկայացնում անդամ պետությունների զագաթնաժողովին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի վեհաժողովին,
- թ) պարբերաբար վերանայում և գնահատում է կոնվենցիայի կիրակումը,
- ժ) վերանայում և ընդունում է Գործառնական ուղեցույցը:

Կոմիտեի նիստը տարեկան գումարվում է հունիս / հուլիս ամիսներին և կարող է արտակարգ նիստ հրավիրվել տարվա ցանկացած ժամանակ: Կոմիտեն մասնագիտական խորհրդատվություն է ստանում կոնվենցիայում նշված երեք մարմիններից: Այդ երեք մարմինների հիմնական դերակատարությունը մասնագիտական խորհրդատվության տրամադրումն է և աջակցությունը կոմիտեին և քարտուղարությանը (Համաշխարհային ժառանգության կենտրոն): Դրանք են՝

- Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրման միջազգային կենտրոնը (կենտրոնակայանը՝ Հռոմ) (ԻԿԿԻՕՄ), որի հիմնական գործառնությունը դասընթացների կազմակերպումն է,

27. <http://whc.unesco.org/archive/opguide11-en.pdf>

- Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ (ԻԿՕՄՍՍ), որի հիմնական գործառնությունը մշակութային հուշարձանների անվանակարգերի գնահատումն է և ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների պահպանվածության վիճակի վերաբերյալ զեկույցների պատրաստումը,
- Բնության պահպանության միջազգային միություն (IUCN), որի հիմնական գործառնությունը բնության հուշարձանների անվանակարգերի գնահատումն է և ցանկում ընդգրկված բնության հուշարձանների պահպանվածության վիճակի վերաբերյալ զեկույցների պատրաստումը:

Խորհրդատվական մարմինները՝

- ա) խորհրդատվություն տրամադրել Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ իրենց մասնագիտացման ոլորտների մասին,
- բ) ռաջակցել քարտուղարությանը կոմիտեի փաստաթղթերի, նիստերի նախապատրաստման, ինչպես նաև կոմիտեի որոշումների իրականացման հարցերում,
- գ) աջակցել ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցուցակ ունենալու համաշխարհային ռազմավարության մշակման և իրականացման, Միջազգային վերապատրաստման ռազմավարության (2011 թ-ից փոխարինվել է <<Կարողությունների կառուցման Համաշխարհային ժառանգության ռազմավարությունով>>), պարբերական զեկույցների ներկայացման, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության հիմնադրամի արդյունավետ օգտագործման հարցերում,
- դ) մոնիթորինգի ենթարկել Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների պահպանվածության վիճակը և ուսումնասիրել միջազգային աջակցության հայտերը,
- ե) ԻԿՕՄՍՍ-ի և IUCN-ի դեպքերում, խորհրդակցելով և քննարկելով անդամ պետությունների հետ, գնահատում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու նպատակով ներկայացված անվանակարգերը և կոմիտեին են ներկայացնում իրենց կազմած գնահատման զեկույցները, և
- զ) մասնակցում են Համաշխարհային ժառանգության կոմիտեի և դրա բյուրոյի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով (ԳՈՒ 31-րդ պարբերություն):

Կոմիտեի քարտուղարության աշխատանքներն իրականացում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոնը: Կենտրոնի հիմնական գործառնությունը Համաշխարհային ժառանգության կոմիտեին ծառայությունների մատուցումն է, որոշումների կատարումը և կոնվենցիայի հիմնական գործընթացների կառավարումը:

Քարտուղարության հիմնական խնդիրներ են՝

- ա) գազաթնաժողովի և կոմիտեի նիստերի կազմակերպումը,
- բ) Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումների և գազաթնաժողովի ընդունած բանաձևերի իրականացումը, ինչպես նաև դրանց իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- գ) Համաշխարհային ժառանգության ցանկի համալրման նպատակով ստացված անվանակարգերի ընդունում, գրանցում, ամբողջականության ստուգում, արխիվացում և փոխանցում համապատասխան խորհրդատվական մարմիններին,
- դ) հետազոտությունների և գործողությունների համակարգումը, որպես ներկայացուցչական, հավասարակշռված և արժանահավատ Համաշխարհային ժառանգության ցուցակ ունենալու համաշխարհային ռազմավարության մաս,
- ե) պարբերական զեկույցների ներկայացման կազմակերպում և արձագանքող մոնիթորինգի համակարգում,
- զ) միջազգային աջակցության համակարգում,
- է) Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման և կառավարման համար արտա-բյուջետային միջոցների հավաքագրում,
- ը) կոմիտեի ծրագրերի և նախագծերի իրականացման համար աջակցության տրամադրում անդամ պետություններին, և
- թ) Համաշխարհային ժառանգության և կոնվենցիայի հանրահռչակում անդամ պետությունների, խորհրդատվական մարմինների և հանրության շրջանում տեղեկատվության տարածում (ԳՈՒ 28-րդ պարբերություն):

Անդամ պետությունների պատասխանատվությունը

Կառավարումը, որպես այդպիսին, հիշատակված չէ Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի մեջ: Այնուամենայնիվ, կոնվենցիան հստակ սահմանում է, որ առաջինը՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների Համաշխարհային բացառիկ արժեքները պետք է պաշտպանվեն որոշակի մակարդակով (4-րդ հոդված), և որ երկրորդ՝ կոնվենցիայի անդամ պետությունները տեղում պետք է ունենան և՛ բնության, և՛ մշակութային ժառանգության արժեքների

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

պաշտպանության համար ստեղծված ընդհանուր համակարգ (5-րդ հոդված): 4-րդ հոդվածով հստակ սահմանվում է տրված Համաշխարհային ժառանգության հուշարձանների նկատմամբ կոնվենցիայի նպատակները, որոնք պետք է ուղղորդող լինեն կառավարման ընթացքում, մինչդեռ 5-րդ հոդվածով վեր է հանված ազգային մակարդակով կառավարման գերազանց համակարգ: 29-րդ հոդվածը թույլ է տալիս ենթադրել, որ կոնվենցիայի իրականացման մոնիթորինգի որոշակի մեխանիզմ պետք է սահմանված լինի ի սկզբանե:

Կոնվենցիայով հստակ սահմանվում է, որ հուշարձանների կառավարման պատասխանատվությունն ընկնում է առանձին անդամ պետությունների վրա: Միաժամանակ, 6.1-ին հոդվածով նշվում է, որ նման (այսինքն՝ Համաշխարհային) ժառանգությունն աշխարհի ժառանգության մասն է, որի պաշտպանության համար միջազգային հանրությունը պետք է համագործակցի, ինչպես նաև կյանքի կոչի Համաշխարհային ժառանգության կոմիտեի, Համաշխարհային ժառանգության հիմնադրամի գործունեությունն ապահովող միջազգային աջակցության միջոցների նախատեսմամբ: 29-րդ հոդվածով անդամ պետությունները ստանձնել են պարտավորություն զեկույց ներկայացնել կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ (ներկայում գործընթացը կազմակերպվում է պարբերական զեկույցների միջոցով, տես 3.5-րդ մասը):

Կոնվենցիայի 11.4-րդ հոդվածով սահմանվում է մի գործընթաց, համաձայն որի կոմիտեն պետք է հետևի, թե արդյոք Համաշխարհային ժառանգության հուշարձանը վտանգված է, իսկ 13-րդ հոդվածով սահմանված են ճանապարհները, թե ինչպես կոմիտեն կարող է աջակցություն տրամադրել անդամ պետություններին:

1972 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայում «կառավարման» մասին հղումներ

1972 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայից ստորև ներկայացված մեջբերումներն իմաստային առումով ամենամոտ հասկացություններն են, որոնք առնչվում են մշակութային ժառանգության կառավարմանը: 4-րդ հոդվածը հիմնականում վերաբերում է Համաշխարհային ժառանգության հուշարձաններին, մինչդեռ 5-րդ հոդվածը ամենաուղղակի հղումն է կառավարման մոտեցումներին և ներառում է անդամ պետության պարտավորությունները մշակութային և բնության ժառանգության նկատմամբ:

1972 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայում «կառավարման» մասին հղումներ

4-րդ հոդված

Սույն կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն ընդունում է, որ 1-ին և 2-րդ հոդվածներում հիշատակված (այսինքն՝ Համաշխարհային ժառանգությունը) և իր տարածքում գտնվող մշակութային ու բնության ժառանգության հայտնաբերումը, պաշտպանությունը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին հանձնումն ապահովելու պարտավորությունը դրվում է նախ և առաջ իր վրա: Այդ նպատակով այն պետք է անի ամեն ինչ իր ռեսուրսների, ընձեռած հնարավորությունների շրջանակում և, անհրաժեշտության դեպքում, միջազգային օգնության և համագործակցության, մասնավորապես, ձեռք բերված ֆինանսական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական օգնության միջոցով:

5-րդ հոդված

Սույն կոնվենցիայի յուրաքանչյուր մասնակից պետություն՝ երաշխավորելու համար, որ իր տարածքում գտնվող մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու համար ձեռնարկվում են արդյունավետ և ակտիվ միջոցառումներ, ձգտում է, հնարավորինս, իր պայմաններին համապատասխան:

1. վարել ընդհանուր քաղաքականություն՝ մշակութային և բնության ժառանգությանը հասարակական կյանքում որոշակի գործառնություններ հաղորդելու նպատակով, և այդ ժառանգության պաշտպանությունը ներառել ընդհանուր պլանավորման ծրագրերում,
2. իրենց տարածքում ստեղծել, եթե դեռևս ստեղծված չեն, մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու մեկ կամ մի քանի ծառայություններ՝ համապատասխան անձնակազմով և միջոցներով, որոնք թույլ կտան իրականացնել այդ գործառնությունները,
3. զարգացնել, գիտական և տեխնիկական ուսումնասիրություններ ու հետազոտություններ, կատարելագործել աշխատանքի այն մեթոդները, որոնք պետությանը հնարավորություն են տալիս հակազդելու իր մշակութային և բնության ժառանգությանը սպառնացող վտանգներին,
4. ձեռնարկել իրավական, գիտական, տեխնիկական, վարչական և ֆինանսական համապատասխան միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են այդ ժառանգության հայտնաբերման, պաշտպանության, պահպանության, հանրամատչելի դարձնելու և վերականգնման համար, և
5. աջակցել մշակութային և բնության ժառանգության պաշտպանության, պահպանության և հանրամատչելի դարձնելու բնագավառում կադրերի վերապատրաստման ազգային կամ տարածաշրջանային կենտրոնների ստեղծմանը կամ զարգացմանը, ինչպես նաև խրախուսել այդ բնագավառում գիտական հետազոտությունները:

29-րդ հոդված

Սույն կոնվենցիայի մասնակից պետությունները Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր խորհրդատվություն, վերջինիս սահմանած ժամկետներով և ձևով ներկայացրած զեկույցներով, տեղեկացնում են սույն կոնվենցիայի կատարման նպատակներով իրենց ընդունած օրենսդրական ու վարչական դրույթների և այլ գործողությունների, ինչպես նաև այդ բնագավառում իրենց կուտակած փորձի մասին:

2. Այդ զեկույցները հանձնվում են Համաշխարհային ժառանգության կոմիտեին:

3. Կոմիտեն իր գործունեության մասին զեկույց է ներկայացնում Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր խորհրդատվության յուրաքանչյուր հերթական նստաշրջանում:

Կոնվենցիայից զատ կոմիտեն մշակել է Գործառնական ուղեցույց (ԳՈՒ՝ կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ առավել գործնական խորհրդատվություն տրամադրելու նպատակով: ԳՈՒ-ը պարբերաբար վերանայվում է և վերջինը տեղ է գտել 2012 թ-ին (տես 3.3-րդ մասը): Կոմիտեն հաստատել է նաև այլ ձեռնարկներ, որոնք կարող եք գտնել ընդունված որոշումների մեջ (հասանելի է Համաշխարհային ժառանգության կենտրոնի վեբ-կայքում և այլ հրատարակություններում) (տես 3.4-րդ մասը):

3.3 Գործառնական ուղեցույց. կառավարել Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանման նպատակով

Ինչպես վերը նշվեց ԳՈՒ-ը մանրամասն տեղեկատվություն է տրամադրում կոնվենցիայի կիրարկման համար: 2005 թ-ից ի վեր ԳՈՒ-ն պարունակում է տեղեկատվություն Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման համար: Իհարկե, սա տեսական բնույթ է կրում, քանի որ խորհրդատվությունը պետք է կիրառելի լինի աշխարհի բոլոր անկյուններում գոյություն ունեցող կառավարման ոլորտներում: Այնուամենայնիվ, գոյություն ունեն կառավարման համակարգի հետապնդած նպատակների և դրա պարունակության վերաբերյալ սահմանումներ: 78-րդ պարբերությունը սահմանում է, որ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված յուրաքանչյուր հուշարձան պետք է ունենա համարժեք պաշտպանության և կառավարման համակարգ՝ Համաշխարհային բացառիկ արժեք համարվելու նպատակով:

Ստորև ներկայացվում են Համաշխարհային ժառանգության գործառնական ուղեցույցում (2012 թ. հրատարակություն) կառավարմանը վերաբերող հղումները:

ԳՈՒ108: Յուրաքանչյուր ներկայացված հուշարձան պետք է ունենա համապատասխան կառավարման պլան կամ այլ փաստաթղթավորված կառավարման համակարգ, որով պետք է մանրամասնել, թե ինչպես է հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը պահպանվում՝ գերադասություն տալով շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցին:

ԳՈՒ109: Կառավարման համակարգի նպատակը ներկա և ապագա սերունդների համար առաջարկվող հուշարձանի արդյունավետ պաշտպանության ապահովումն է:

ԳՈՒ110: Արդյունավետ կառավարման համակարգը կախված է ներկայացված հուշարձանի տեսակից, առանձնահատկությունից և դրա մշակութային ու բնության համատեքստից: Կառավարման համակարգերը կարող են տարբերվել՝ ելնելով մշակութային տարբեր տեսլականներից, մատչելի ռեսուրսներից և այլ գործոններից: Դրանք կարող են միավորել ավանդական փորձը, գոյություն ունեցող քաղաքային կամ շրջանային պլանավորման գործիքները, ինչպես նաև այլ պլանավորման հսկողական մեխանիզմներ և ֆորմալ, և ոչ ֆորմալ: Առաջարկվող միջամտությունների ազդեցության գնահատումները կարևոր նշանակություն ունեն Համաշխարհային ժառանգության բոլոր հուշարձանների համար:

ԳՈՒ111: Վերոգրյալի տարատեսակությունը գիտակցելով՝ արդյունավետ կառավարման համակարգի ընդհանուր տարրերը կարող են պարունակել՝

ա) բոլոր շահագրգիռ կողմերի հուշարձանի լիակատար ընկալում,

բ) պլանավորման, իրականացման, մոնիթորինգի, գնահատման և զեկույցների ներկայացման փուլ,

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում



- զ) միտումների, զարգացումների և առաջարկվող միջամտությունների ազդեցության մոնիթորինգ և գնահատում,
- դ) գործընկերների և շահագրգիռ կողմերի ներգրավում,
- ե) անհրաժեշտ ռեսուրսների հատկացում,
- զ) կարողությունների կառուցում, և
- է) հաշվետու, թափանցիկ նկարագրություն, թե ինչպես է կառավարման համակարգը գործում:

ԳՈՒ112: Ներկայացված հուշարձանի պաշտպանության, կոնսերվացման և հանրահռչակման նպատակով արդյունավետ կառավարման համակարգը պարունակում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ: Ժամանակի ընթացքում հուշարձանների ձևափոխությունը վերահսկելի դարձնելու և դրանց Համաշխարհային բացառիկ արժեքի բոլոր ասպեկտների պահպանվածության ապահովման համար կարևոր նշանակություն ունի ներառական (ինտեգրված) մոտեցումը պլանավորման և կառավարման ընթացքում: Նման մոտեցումը դուրս է գալիս հուշարձանի տարածքից և ընդգրկում է ցանկացած պահպանական գոտի (ներ), ինչպես նաև ընդլայնված տարածքներ:

Բովանդակության վերաբերյալ որոշակի հղումը բացակայում է, չնայած գոյություն ունի <<կառավարման պլանի>> մասին հիշատակում: Միաժամանակ, կառավարմանը վերաբերող ուղղորդումը Գործառնական ուղեցույցով չի սահմանափակվում: Անհրաժեշտ է կարգալ տեքստն ամբողջությամբ, որպեսզի հասկանալի դառնա, թե ինչպիսի ուղարկություն է դարձվում համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությանը և որքան կարևոր է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը որպես ելակետ հուշարձանի կառավարման և մոնիթորինգի համար (տե՛ս 3.4-րդ մասը):

ԳՈՒ-ն նախանշում է նաև այլ գործոններ, ինչպիսիք են աղետներին պատրաստվածությունը և կլիմայական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը, որոնք լուծում ստանալու կարիք ունեն ցանկացած կառավարման համակարգի միջոցով: Նաև պահանջվում է կատարել ազդեցությունների գնահատում՝ հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա կառուցապատման ազդեցությունը գնահատելու նպատակով, ինչպես նաև վեր հանել, թե ինչպիսի ազդեցություն են ունենում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանները կայուն զարգացման գործում՝ պայմանով, որ դա բացասական ազդեցություն չի ունենա հուշարձանի վրա (ԳՈՒ-ի 119-րդ պարբերություն):

Բացի դրանից, ԳՈՒ-ով պահանջվում է Համաշխարհային ժառանգության կոմիտեին զեկուցել Համաշխարհային ժառանգության հուշարձանների վրա հնարավոր ազդեցություն ունեցող փոփոխությունների կամ զգալի կառուցապատման առաջարկությունների մասին, նախքան դրանց մասով վերջնական որոշում կայացնելը (տե՛ս 3.5-րդ մասը):

Գործառնական ուղեցույցի 132-րդ պարբերությունում և 5-րդ հավելվածում մանրամասն խորհրդատվություն է տրամադրվում անվանակարգի ձևաչափի վերաբերյալ: Անվանակարգի նախապատրաստման ձևաչափի 4-րդ, 5-րդ և 6-րդ բաժիններում անհրաժեշտ է ներկայացնել հուշարձանին ուղղված սպառնալիքներ, պաշտպանության համար նախատեսված միջոցները և մոնիթորինգի մեխանիզմը, ինչպես նաև մանրամասն վերլուծել, թե ինչպես է պաշտպանությունը փաստացի գործում: Նաև նշվում է, որ հատուկ կարևորություն ունի համարժեք կառավարման պլանի կամ կառավարման այլ համակարգի առկայությունը, որը պետք է ներկայացնել անվանակարգի նախապատրաստման ձևաչափում: Ակնկալվում է, որ կառավարման պլանի կամ կառավարման այլ համակարգի արդյունավետ իրականացման երաշխիքներ նույնպես կներկայացվեն՝ կառավարման պլանի մանրակրկիտ վերլուծության, բացատրության կամ փաստաթղթավորված կառավարման համակարգի հետ միասին (ԳՈՒ-ի 132-րդ պարբերություն, հոդված 5 կառավարում):

4-րդ և մասնավորապես 4.5-րդ մասում խորհրդատվություն է տրամադրում անվանակարգի նախապատրաստման ձևաչափի 4-րդ, 5-րդ և 6-րդ բաժինների լրացման համար:

3.4 Համաշխարհային բացառիկ արժեք, իսկությունը և ամբողջականությունը Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման համատեքստում

Համաշխարհային բացառիկ արժեքի հասկացությունը

Կոնվենցիայի հիմնական գաղափարը մարդկության համար Համաշխարհային բացառիկ արժեք համարվող վայրերի բացահայտման, պաշտպանության, հանրահռչակման և ապագա սերունդներին փոխանցելու հասկացությունն է: Այնուամենայնիվ, տվյալ հասկացությունը փաստացի սահմանում


չի ստացել կոնվենցիայում: 11.1-ին հոդվածով սահմանված է, որ Համաշխարհային Ժառանգության կոմիտեն կհաստատի «հուշարձանների ցանկ, որոնք ունեն Համաշխարհային բացառիկ արժեք արդեն իսկ հաստատված չափորոշիչների համատեքստում»: Համաշխարհային բացառիկ արժեքի սահմանումն առաջին անգամ ընդգրկվել է 2005 թ. Գործառնական ուղեցույցում և հետևողականորեն վերանայվել է բոլոր խմբագրություններում, ներառյալ 2012 թ. հրատարակումը՝

«Համաշխարհային բացառիկ արժեքը նշանակում է մշակութային և/կամ բնության կարևորություն, որն ունի ազգայինի սահմաններից դուրս եկող բացառիկություն, ինչպես նաև ընդհանուր նշանակություն մարդկության ներկայիս և ապագա սերունդների համար» (ԳՈՒ 49-րդ պարբերություն):

Այնուամենայնիվ, Համաշխարհային բացառիկ արժեքն ունի առավել լայն հասկացություն, որն անհրաժեշտ է ըմբռնել անվանակարգի հիմնավորման ընթացքում և, որն իր հերթին, կարող է հիմք հանդիսանալ հուշարձանի կառավարման համար: ԳՈՒ-ն Համաշխարհային բացառիկ արժեքի մասով հետևյալն է սահմանում՝

«Համաշխարհային բացառիկ արժեք համարվելու համար հուշարձանը պետք է համապատասխան ամբողջականության և/կամ իսկության պահանջներին և պետք է ունենա համարժեք պաշտպանության և կառավարման համակարգ պահպանվածությունն ապահովելու նպատակով» (ԳՈՒ 77-79-րդ պարբերություններ):

Համաշխարհային Ժառանգության ցանկում ընդգրկվելու համար հուշարձանը կարիք ունի բավարարելու Համաշխարհային բացառիկ արժեքի երեք պահանջները (պատկերը տես ստորև)՝



Պատկեր 3: Համաշխարհային բացառիկ արժեքի երեք հենասյուները: Աղբյուրը՝ IUCN (2007 թ.).

Համաշխարհային բացառիկ արժեքի կառավարում

Համաշխարհային բացառիկ արժեքի մանրամասն նկարագրման համար ուղղորդում տրամադրվում է անվանակարգի նախապատրաստման 3-րդ բաժնում (ԳՈՒ 5-րդ հավելված): Լրացուցիչ տեղեկատվություն ամփոփված է Համաշխարհային Ժառանգության անվանակարգի նախապատրաստման ձեռնարկում (տես չափորոշիչներին, իսկությանը, ամբողջականությանը և կառավարմանն առնչվող ենթաբաժինները և դրանց փոխհարաբերակցությունը Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության հետ, որը դառնալու է հուշարձանի հետագա կառավարման հիմքը՝ ՀԲԱ-ն պաշտպանելու համար):

Չափորոշիչներ

Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատման չափորոշիչները հաստատվել են ավելի վաղ: Տարբեր աղիւթներով փոփոխության են ենթարկվել, ներկայում կոմիտեն կիրառում է 10 չափորոշիչ մշակութային և բնության ժառանգության գնահատման համար՝

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

Մեջբերում Գործառնական ուղեցույցից.

Կոմիտե 77. Կոմիտեն համարում է հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը (տե՛ս պարբերություններ 49-53) հիմնավորված, եթե այն բավարարում է ստորև ներկայացված չափորոշիչներից մեկը կամ ավելին: Այդ իսկ պատճառով ներկայացված հուշարձանները պետք է՝

- (i) լինեն մարդկային ստեղծարար հանճարի գլոբալ ժառանգություն, ժամանակի ընթացքում կամ աշխարհի մշակութային արեալի շրջանակում, ներկայացնեն ճարտարապետության կամ տեխնոլոգիաների, մոնումենտալ արվեստի, քաղաքային պլանավորման կամ տեղանքապատկերների ձևավորման զարգացումները,
- (iii) հանդիսանան եզակի կամ առնվազն բացառիկ վկայություն մշակութային ավանդույթների կամ քաղաքակրթության մասին՝ ապրող կամ անհետացած
- (iv) հանդիսանան մարդկության պատմության կարևոր փուլ(եր)ը ներկայացնող շինության որևէ տեսակի, ճարտարապետական կամ տեխնոլոգիական անսամբլի կամ տեղանքապատկերի բացառիկ օրինակներ,
- (v) հանդիսանան մարդկության ավանդական բնակավայրերի, հողօգտագործման կամ ծովի օգտագործման բացառիկ օրինակ, որը ներկայացնում է մեկ կամ մի քանի մշակույթ, կամ շրջակա միջավայրի հետ մարդկության փոխներգործությունը՝ հատկապես, երբ այն դառնում է խոցելի անշրջելի փոփոխության ազդեցության տակ,
- (vi) ուղղակի կամ էապես կապակցված լինեն իրադարձությունների կամ կենսունակ ավանդույթների, գաղափարների կամ հավատալիքների, գեղարվեստական և գրական աշխատանքների հետ, որոնք ունեն բացառիկ համաշխարհային նշանակություն: (Կոմիտեն գտնում է, որ սույն չափորոշիչը գերադասելի է օգտագործել մեկ այլ չափորոշիչի հետ միասին),
- (vii) պարունակեն անգերազանցելի բնական երևույթ կամ բացառիկ բնական գեղեցկության և գեղագիտական կարևորության շրջաններ,
- (viii) հանդիսանան երկրի պատմության հիմնական փուլերը ներկայացնող բացառիկ օրինակներ՝ ներառյալ կյանքի գոյության փաստերը, երկրի ռելիեֆի զարգացման ընթացքում կարևոր շարունակական երկրաբանական գործընթացները կամ կարևոր գեոմորֆիկ, ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները,
- (ix) հանդիսանան բնապահպանական և կենսաբանական շարունակական գործընթացները ներկայացնող բացառիկ օրինակներ ցամաքի, քաղցրահամ ջրերի, ափամերձ և ծովային էկոհամակարգերի, բուսական ու կենդանական համայնքների էվոլյուցիայի և զարգացման գործում, տեղում պարունակում են կենսաբանական բազմազանության կարևոր և արժեքավոր բնական արեալներ, այդ թվում նաև այն հատվածները, որոնք ներառում են գիտության կամ կոնսերվացման տեսանկյունից համաշխարհային բացառիկ արժեք հանդիսացող վտանգված օրինակներ:
- (x)

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Անվանակարգի նախապատրաստման ձևաչափի 3.1 բ) կետով (ԳՈՒ 5-րդ հավելված) անհրաժեշտ է մանրամասն նկարագրել հուշարձանի համար կիրառելի չափորոշիչը: Այն կարող է երկար նկարագրություն լինել, սակայն կարևոր են նկարագրել այն արժեքները, որոնք իրենց էությամբ բացառիկ են (այսինքն՝ ՀՔԱ)՝ հիմք ընդունելով վերը նշված չափորոշիչներից որևէ մեկը և նախանշելով այն բաղադրիչները, որոնք կրում են այդ արժեքները: Համաշխարհային բացառիկ արժեք կրող բաղադրիչների նախանշումը ԱՆՅՈՒՅԱԿԱՆ, ԱՆ ՆՅՈՒՅԱԿԱՆ, կարևոր է հուշարձանի կառավարման համար: Օգտակար հուշում, թե ինչպես կարելի է ընկալել և նկարագրել բաղադրիչները, կարելի է գտնել անվանակարգի նախապատրաստման ձեռնարկում: Լրացուցիչ տեղեկատվություն ձևակերպման վերաբերյալ կարելի է հանդիպել այստեղ:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ատրիբուտների ընկալումը. մեջբերում՝ Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստման ձեռնարկից

Ատրիբուտները հուշարձանների ասպեկտներն են, որոնք ասոցացվում կամ արտահայտում են Համաշխարհային բացառիկ արժեքը: Ատրիբուտները կարող են լինել նյութական և ոչ նյութական: Գործառնական ուղեցույցում ներկայացված է ատրիբուտների մի ամբողջություն, որոնք կարող են կրել Համաշխարհային բացառիկ արժեք ներառյալ՝

- ձևը և հարդարանքը
- նյութը և բաղադրությունը
- կիրառումը և գործառնությունը
- ավանդույթները, տեխնիկան և կառավարման համակարգերը

- գտնվելու վայրը և շրջակա միջավայրը
- լեզուն և ոչ նյութական մշակութային ժառանգության այլ ձևեր
- ոգին և զգացումները (82-րդ պարբերություն)

Ցանկն ուղղորդման համար է: Հուշարձանի նախանշված ատրիբուտները պետք է բխեն Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունից և չափորոշչի հիմնավորումից: Ատրիբուտները պետք է նախանշված լինեն, քանի որ դրանք կենսական նշանակություն ունեն իսկությունը և ամբողջականությունն ընկալելու, ինչպես նաև պաշտպանության, կոնսերվացման և կառավարման վրա կենտրոնանալու համար:

Ատրիբուտների և առանձնահատկությունների նախանշում

Համաշխարհային ժառանգության հուշարձանները Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող վայրեր են: Մշակութային արժեքը կարող է վերաբերել ոչ նյութական որակական հատկանիշներին, ինչպիսիք են սոցիալական կառուցվածքը, տնտեսական կարիքները և քաղաքական համատեքստը՝ տարածության և ժամանակի մեջ: Դա կարող է վերաբերել հայտնի իրադարձություններին, անձանց կամ արվեստի գործերին, գրականությանը, գիտությանը կամ երաժշտարվեստին: Այնուամենայնիվ, Համաշխարհային ժառանգության կոնվենցիան որոշակի հուշարձանների վրա հիմնված կոնվենցիա է. հուշարձաններն են ընդգրկվում ցանկում, այլ ոչ թե գաղափարները կամ մարդիկ՝ չնայած նրանց ունենցած համաշխարհային ազդեցությանը: Ցանկում ընդգրկված հուշարձանները պետք է կրեն Համաշխարհային բացառիկ արժեք իրենց ատրիբուտների միջոցով:

Պատկերացում կազմելով, թե ինչպիսի Համաշխարհային բացառիկ արժեքի ներուժ կարող են ունենալ բնության կամ մշակութային հուշարձանները՝ կարևորվում է դրանց ատրիբուտների ուսումնասիրումը, որոնք բնության հուշարձանների պարագայում կոչվում են առանձնահատկություններ և կրում են այդ արժեքը՝ խթանելով դրա ընկալումը:

Պաշտպանության և կառավարման միջոցառումները կենտրոնացված կլինեն այդ ատրիբուտների վրա, իսկ նրանց գտնվելու վայրը կհուշի հուշարձանի սահմանների մասին:

Ատրիբուտները կարող են լինեն ֆիզիկական հատկությունները կամ բաղադրությունը, սակայն կարող են լինել նաև հուշարձանի ֆիզիկական առանձնահատկությունների վրա ազդող և ասոցացվող գործընթացները, ինչպիսիք են բնական կամ գյուղատնտեսական գործընթացները, սոցիալական ծրագրերը կամ մշակութային գործունեությունը, որոնք էլ ձևավորել են առանձնացվող տեղանքապատկերները: Բնության հուշարձանների համար կարող են լինեն տեղանքապատկերը բնորոշող առանձնահատկությունները, բնական վայրերը, բնապահպանական որակավորումը (ինչպիսիք են անխաթարությունը, բարձր / անխախտ բնապահպանական որակները), մասշտաբը և արեալների բնական վիճակը, ինչպես նաև վայրի կենդանական աշխարհի չափաքանակը և կենսունակությունը:

Համալիր, մասնավորապես մշակութային հուշարձանների համար, որոնք ունեն արժեքների բազմաշերտ կառուցվածք, օգտակար մեթոդներից մեկը նրանց արտահայտած կարևոր ատրիբուտների և արժեքների քարտեզագրումն է: Քարտեզագրման միջոցով կարելի է ընկալել ատրիբուտների միջև փոխկապակցվածությունը, ինչպես նաև վեր հանել շահերի բախումները և կառավարման հիմնախնդիրները, որոնք էական կարևորություն ունեն սահմանազատման հարցում:

(Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապարաստման ձեռնարկ - 2010 թ.)

Ամբողջականություն

Հաջորդ պահանջը, որն անհրաժեշտ է բավարարել և որն ազդեցություն ունի կառավարման վրա, ամբողջականությունն է: Ամբողջականությունը հուշարձանի լիակատարությունն է և հիմնականում առնչվում է (ԳՈՒ 88-րդ պարբերություն)

- սահմաններին - արդյո՞ք հուշարձանն ընդգրկում է բոլոր ատրիբուտները, որոնք անհրաժեշտ են Համաշխարհային բացառիկ արժեքի արտահայտման համար
- լիակատարությանը - արդյո՞ք հուշարձանն ունի բավարար սահմաններ՝ երաշխավորելու գործընթացների ամբողջական և դրա կարևորությունը կրող առանձնահատկությունների ներկայացմանը,
- պահպանվածության վիճակը - արդյո՞ք Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտները գտնվում են բարձիթողի կամ քայքայվող վիճակում

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Անվանակարգի նախապատրաստման 3.1 գ կետը (ԳՈՒ-ի 5-րդ հավելված) ներկայացնում է ամբողջականության մասին հայտարարության հատվածը: Գործառնական ուղեցույցում և անվանակարգի նախապատրաստման ձեռնարկում կարելի է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ամբողջականության գնահատման, ինչպես նաև հուշարձանի ամբողջականության մասին հայտարարության ձևակերպման վերաբերյալ:

Իսկություն

Իսկությունը միակ եզրույթն է, որը պարտավորություններ է սահմանում: Այն վերաբերվում է Համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտող ատրիբուտների արժանահավատությանը կամ ճշմարտացիությանը: Այս նպատակով ԳՈՒ-ն հիշատակում է, որ (i)-ից մինչև (vi)-րդ չափորոշիչներով ներկայացված հուշարձանները պետք է բավարարեն ամբողջականության պայմանները: ԳՈՒ-ի 79-86-րդ պարբերությունները և 4-րդ հավելվածը, որը պարունակում է նաև իսկության մասին Նառայի փաստաթուղթը, ներկայացնում է հուշարձանի իսկությունը քննության ենթարկելու գործնական հիմքը: Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու անվանակարգերի նախապատրաստման ձեռնարկը նույնպես տրամադրում է խորհրդատվություն:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Իսկության վերաբերյալ մեջբերումներ՝ Համաշխարհային ժառանգությանն առնչվող փաստաթղթերից

Մշակութային ժառանգության տեսակներից և դրանց մշակութային համատեքստից կախված՝ հուշարձանները պետք է ապահովեն իսկության պայմանները, եթե դրանց մշակութային արժեքները (ինչպես ներկայացված է անվանակարգի չափորոշյում) և արժանահավատությունն արտահայտված են տարբեր որակական հատկանիշներով:

(ԳՈՒ 82-րդ պարբերություն)

Յուրաքանչյուր հուշարձանի ատրիբուտ, որը նախանշվել է որպես Համաշխարհային բացառիկ արժեքներ կրող, անհրաժեշտ է քննության առնել այնպիսի եղանակով, որ արժեքի կրումը կամ արտահայտումը «արժանահավատ» կերպով ներկայացված լինի: Օրինակ՝ քաղաքային տարածքների համար նպատակահարմար կլինի քննության առնել շինությունները, ծավալատարածական պլանավորումները, ինչպես նաև հուշարձանի տարածքում բնակություն հաստատած և ապրող համայնքների ավանդույթները և սոցիալական, տնտեսական, բնապահպանական կառուցվածքը, որոնք թույլ են տալիս արտահայտել հուշարձանի արժեքը:

Այդ իսկ պատճառով իսկության միջոցով չափվում է, թե որքան լավ է ներկայացված Համաշխարհային բացառիկ արժեքը: Իսկությունը կարող է խախտվել, եթե ատրիբուտները թույլ են՝ համայնքները չեն առաջադիմում, շինությունները ավերվում են, ավանդույթներն անհետանում և այսպես շարունակ:

Հնագիտական հուշարձանների պարագայում իսկությունը չափվում է հնագիտական մնացորդների կողմից իրենց նշանակության մասին ճշմարտացի ներկայացման հնարավորությանը համապատասխան: Բազմաթիվ դեպքերում ենթադրական վերականգնում կարող է հետ գցել գործընթացը և վտանգի տակ դնել իսկությունը: Նմանապես, եթե անավարտ շենքերի և շինությունների վերականգնում կարելի է հիմնավորել որոշ հանգամանքներում, ապա դա կարող է նաև ազդեցություն ունենալ իրենց նշանակությունն արժանահավատ կերպով ներկայացնելու հնարավորության վրա:

(Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապատրաստման ձեռնարկ - 2010 թ.)

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Անվանակարգի նախապատրաստման 3.1 դ կետը (ԳՈՒ-ի 5-րդ հավելված) ներկայացնում է իսկության մասին հայտարարության ձևակերպման հատվածը: Իսկության մասին հայտարարության ձևակերպման վերաբերյալ ուղղորդող խորհրդատվություն կարելի է գտնել նաև Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու անվանակարգեր նախապատրաստման ձեռնարկում:

Պահպանության և կառավարման պահանջները

Տարբեր գործոններ և դրական, և բացասական ազդեցություն են ունենում ատրիբուտների, իսկության և ամբողջականության վրա: Անվանակարգի նախապատրաստման 4-րդ, 5-րդ և 6-րդ բաժինները (ԳՈՒ-ի 5-րդ հավելված) մշակվել են խնդրո առարկայի հասցեական լուծումը և անդամ պետության կողմից Համաշխարհային բացառիկ արժեքը պաշտպանելու մեխանիզմները ներկայացնելու համար: 3.1. և մասը (ԳՈՒ-ի 5-րդ հավելված) կառավարման մասին հայտարարությունը լրացնելու համար:

Անվանակարգի նախապատրաստման 4-րդ, 5-րդ և 6-րդ բաժինները (ԳՈՒ-ի 5-րդ հավելված) պատասխանները պահանջում են մանրամասն խորհրդատվություն, և հիմնական շեշտադրումը կատարվում է տվյալ ձեռնարկի վերջին երկու գլուխներին (4-րդ մաս և 1-ին հավելված):

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարություն

Կառավարման նպատակների իրականացման համար անդամ պետությունը նախապատրաստում է Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը, որը ներառում է վերոգրյալ բաղադրիչները (անվանակարգի նախապատրաստման ձևաչափի 3.1. բ, գ, դ և ե բաժինները, ԳՈՒ-ի 5-րդ հավելված) և որը Համաշխարհային ժառանգության կոմիտեն հաստատում է ցանկում ընդգրկելիս: ԳՈՒ-ին համապատասխան՝ <<Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը պետք է լինի հուշարձանի հետագա պահպանության և կառավարման հիմք>>: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը նպատակ ունի ներկայացնել հստակ, ընդհանուր և հասկանալի հիմնավորում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկման համար և թե ինչ է անհրաժեշտ կառավարման համակարգում Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունը երկարաժամկետ հեռանկարում կազմակերպելու համար:

Համաշխարհային ժառանգության կոմիտեն ցանկում ընդգրկելիս յուրաքանչյուր հուշարձանի համար սահմանում է բավականին բնորոշ Համաշխարհային բացառիկ արժեք՝ օգտագործելով և անհրաժեշտության դեպքում փոփոխության ենթարկելով անդամ պետության կողմից նախապատրաստած Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը՝ չնայած Համաշխարհային բացառիկ արժեքն առավել լայն իմաստով նկարագրված է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայում և ԳՈՒ-ում: Հայտարարության նպատակը սահմանման հստակ ձևակերպումն է: Սահմանվելուն պես հայտարարությունը դառնում է հուշարձանի հետագա կառավարման հիմնակետը:

Կարևոր է, որ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը հնարավորինս նախանշի Համաշխարհային բացառիկ արժեք կրող ատրիբուտները, որոնք անհրաժեշտ է կառավարել: Դրանք հնարավորություն են տալիս Համաշխարհային բացառիկ արժեքը ներկայացնել այնպես, որպեսզի ընձեռնվի դրանց կառավարելու հնարավորությունը, ինչպես նաև դառնա հիմք իսկության և ամբողջականության գնահատման համար: Ատրիբուտների հստակ նախանշումը կարևոր քայլ առաջ է դեպի արժեքների վրա հիմնված կառավարմանը, որն ուղղված է հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությանը:

Ոչ բոլոր հայտարարությունները, սահմանափակ ձևաչափում, կարող են ներկայացնել հուշարձանների Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտները: Անհրաժեշտ է կատարել ատրիբուտների մանրամասն վերլուծություն կառավարման համակարգի փաստաթղթավորման շրջանակներում: Ստորև ներկայացվող առաջարկությունները կարող են օգտակար լինել այս տեսանկյունից:

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունները պետք է ունենան հետևյալ բաժինները (1) համառոտ նկարագրություն, (2) չափորոշիչի հիմնավորում, (3) ամբողջականության մասին հայտարարություն (բոլոր հուշարձանների համար), (4) իսկության մասին հայտարարություն (i-ից մինչև vi-րդ չափորոշիչներով առաջադրվող հուշարձանների համար) և (5) պահպանության և կառավարման պահանջներ (լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է 155-րդ պարբերությունում և ԳՈՒ-ի 10-րդ հավելվածում, ինչպես նաև անվանակարգերի նախապատրաստման ձեռնարկում):

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը ձևակերպելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ ձևաչափը (երկու A4 էջ առավելագույնը):

- Համառոտ նկարագրություն.
 - համառոտ փաստացի տեղեկատվություն (ինչից է բաղկացած հուշարձանը, աշխարհագրական և պատմական համատեքստը, առավելագույնը 150 բառ),
 - որակական հատկանիշների ամփոփում (արժեքներ, ատրիբուտներ, առավելագույնը 150 բառ),

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում



- չափորոշիչի հիմնավորում (դրանք կրող արժեքները և ատրիբուտները, և ինչպես է հուշարձանը հիմնավորում յուրաքանչյուր առաջարկվող չափորոշիչը, յուրաքանչյուր չափորոշիչի համար առավելագույնը 200 բառ),
- ամբողջականության մասին հայտարարություն (թուր ի հուշարձանների համար) նախագծի նախապատրաստման / ցանկում ընդգրկելու օրվա դրությամբ (հուշարձանի ատրիբուտները և առանձնահատկությունները, որոնք ներկայացնում են Համաշխարհային բացառիկ արժեքը և տեղակայված են հուշարձանի սահմաններում, առավելագույնը 200 բառ),
- իսկության մասին հայտարարություն (i-vi-րդ չափորոշիչներով առաջադրված հուշարձանների համար է միայն պահանջվում հայտարարությունը) նախագծի նախապատրաստման / ցանկում ընդգրկելու օրվա դրությամբ (արդյո՞ք Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտները արժանահավատորեն արտահայտում են այդ արժեքը, առավելագույնը 200 բառ),
- պահպանության և կառավարման պահանջներն անհրաժեշտ են հնարավոր Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության համար (ինչպես են կազմակերպվում պահպանության և կառավարման միջոցառումները, համակարգերը, և պլանները, բավարար չափով կենսունակ են հուշարձանի պահպանությունը և կառավարումն առաջ մղելու համար այնպես, որ պահպանվի հնարավոր Համաշխարհային բացառիկ արժեքը) (82-91-րդ էջերում քննարկվել է պահպանությունը և կառավարումը),
- ընդհանուր հենքը (առավելագույնը 200 բառ),
- առանձնահատուկ երկարաժամկետ ակնկալիքներ՝ հիմնախնդիրները, որոնք կարիք ունեն երկարաժամկետ ուղղորդության (օրինակ՝ պաշտպանությունը հիմնական սպառնալիքներից, կարողությունների և ֆինանսների կայունության ապահովում, համայնքային աջակցության խթանում, առավելագույնը 150 բառ):

(Համաշխարհային ժառանգության անվանակարգերի նախապարաստման ձեռնարկ - 2011 թ. երկրորդ հրապարակություն)

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության կիրառումը կառավարման պլանավորման գործընթացում նկարագրված է տվյալ ձեռնարկի 1-ին հավելվածում:

3.5 Համաշխարհային ժառանգության փաստաթղթավորումը և կառավարման համակարգի ամրապնդման ընթացակարգերը

Անդամ պետությունները, Համաշխարհային ժառանգության կոմիտեն, խորհրդատվական մարմինները և Համաշխարհային ժառանգության կենտրոնը ներգրավված են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների կառավարման գործում մի շարք եղանակներով: Անդամ պետությունը նախապատրաստում է հուշարձանի կառավարմանը վերաբերող փաստաթղթեր՝ որպես անվանակարգի մաս ներառելով հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի առաջարկվող սահմանումը: Կոմիտեն այն մարմինն է, որը խորհրդատվական մարմինների առաջարկությամբ սահմանում է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելիք յուրաքանչյուր հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը: Այն նաև ներգրավվում է Համաշխարհային ժառանգության հուշարձանների վերաբերյալ պարբերական զեկույցների, ինչպես նաև առանձին հուշարձանների վրա ազդող առանձնահատուկ խնդիրներից բխող ցանկացած արձագանքող մոնիթորինգի գործընթացներում: Նման գործընթացները պետք է ներգրավեն հուշարձանների կառավարիչներին, ինչպես նաև անդամ պետություններին և Համաշխարհային ժառանգության համակարգում ընդգրկված միջազգային մարմիններին:

Այն անձինք, ովքեր մտադիր են ներգրավվել Համաշխարհային ժառանգության համակարգի մեջ պետք է իրազեկվեն այս ձեռնարկների և գործընթացների վերաբերյալ, քանի որ կարող են ազդեցություն ունենալ գործունեության և նպատակների, ինչպես նաև կառավարման համակարգի բնույթի վրա: Խելամիտ կլինի կանոնավոր կերպով մոնիթորինգի ենթարկել Համաշխարհային ժառանգության կենտրոնի և համապատասխան խորհրդատվական մարմինների կայքէջերը՝ վերջին գարգացումների մասին տեղեկանալու համար: Առանձին հուշարձանների վերաբերյալ փաստաթղթերի մեծամասնությունը, որոնց տիրապետում է կենտրոնը, մատչելի են կայքէջում Համաշխարհային ժառանգության ցանկում հուշարձանի ընդգրկման անվանումների տակ: Ժառանգության հարցերով զբաղվողները, որոնք գործ ունեն առանձին հուշարձանների հետ պետք է ծանոթանան Համաշխարհային ժառանգության կենտրոնի վեբկայքում հրապարակված տեղեկատվության հետ:

Փաստաթղթավորում. անվանակարգային փաթեթ

1978 թ-ից առաջին հուշարձանների ընդգրկումից ի վեր բազմաթիվ անգամ փոփոխվել է անվանակարգային փաթեթի ձևաչափը: Ընդհանուր առմամբ մշակութային հուշարձանների համար անվանակարգային փաթեթը ներառել է հուշարձանի նույնականացման և գտնվելու վայրի մասին տեղեկատվությունը, նկարագրությունը և պատմությունը, դրա Համաշխարհային բացառիկ արժեք լինելու մասին հիմնավորումը, իսկությունը և (2005 թ-ից ի վեր) ամբողջականությունը, հուշարձանի վրա ազդող գործոնների, պահպանության և կառավարման պահանջների, հուշարձանը մոնիթորինգի ենթարկելու համար հիմնական ինդիկատորների վերաբերյալ տեղեկություն: Այդպիսով,

անվանակարգային փաթեթով ներկայացվում է, որ հուշարձանը բավարարում է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու պահանջը, ինչպես սահմանված է ԳՈՒ-ում: Կենտրոնը պետք է պահպանի անվանակարգային փաթեթի բնօրինակը՝ ներառյալ կառավարման պլանը խորհրդատվական մարմինների կողմից հուշարձանի գնահատման հետ միասին, եթե այդպիսիք գոյություն ունեն, կոմիտեի հետ համաձայնեցված Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը: Բացի նշվածից, փաթեթը պետք է լինի տեղեկատվական աղբյուրի հիմքը՝ հուշարձանի կառավարումն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, լավագույն ուղղորդումը ներկայացված կլինի Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունում, որը նախապես մշակում է անդամ պետությունը և հաճախ փոփոխվում է խորհրդատվական մարմինների կողմից, նախքան կոմիտեի հաստատումը և որտեղ ներկայացվում են հուշարձանի վերաբերյալ կոմիտեի մտադրություններն ու մտահոգությունները ընդգրկման պահին: Կոմիտեի հաստատումից հետո հայտարարությունը գերակա է դառնում անվանակարգային փաթեթում ներկայացվածի հետ համեմատությամբ: Նույն կերպ խորհրդատվական մարմինները կարող են կոմիտեին փոփոխություններ առաջարկել չափորոշիչի հարցում. եթե հաստատվում է կոմիտեի կողմից, ապա դրանք գերակա են դառնում անվանակարգային փաթեթում ներկայացվածի հետ համեմատությամբ: Սահմանների և պահպանական գոտիների սահմանազատման պես մյուս տեղեկատվությունը մնում է անփոփոխ, քանի դեռ փոփոխության չի ենթարկվել կոմիտեի որոշմամբ, որի ընդունմանը նախորդել է ԳՈՒ-ով նախատեսված ընթացակարգի ացկացումը ցանկում ընդգրկելիս կամ դրանից հետո: Օգտակար տեղեկատվական աղբյուր են նաև, հատկապես վերջին ընդգրկումների համար, համապատասխան խորհրդատվական մարմինների անվանակարգային փաթեթների գնահատումները: Մշակութային հուշարձանների դեպքում ԻՎՕՄՕՍ-ի կատարածն է, չնայած խառը կամ մշակութային տեղանքապատկերների դեպքերում ներագրավում է նաև IUCN-ը: Սովորաբար գնահատման միջոցով տրամադրվում է արժեքավոր և օգտակար վերլուծություն, ինչպես նաև հուշարձանի վրա ազդող հարցերի մասին տեղեկատվություն: Այս վերլուծությունը պետք է կիրառվի կառավարման համակարգի ձևավորման և իրականացման ընթացքում, մասնավորապես ընդգրկման առաջին տարիների ընթացքում:

Փաստաթղթավորում. կառավարման պլան

Դեպքերի մեծ մասում անվանակարգային փաթեթի հետ միասին ներկայացվում է նաև առաձին կառավարման պլան: Դրա խնդիրներից է հուշարձանի կառավարման համակարգի նկարագրությունը, որը կառավարման պլանի անքակտելի մասն է: Այս ամբողջությունը ձևավորում է հուշարձանի հետագա կառավարման հիմքը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ կոմիտեն կարող է փոփոխել չափորոշիչը և Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը՝ հաճախ իրենց նախաձեռնությամբ կամ հիմք ընդունելով խորհրդատվական մարմինների առաջարկությունները: Կոմիտեի առաջարկությունները արտահայտվում են նաև իր որոշման վերջնական տարբերակում, որը կարող է հետևանքներ ունենալ կառավարման վրա: Անդամ պետությունն առաջին հերթին պետք է վերանայի կառավարման պլանն այդ փոփոխությունների ներմուծման նպատակով և օգտագործի հուշարձանի կառավարման նոր տարբերակը՝ ցանկացած անհրաժեշտ փոփոխություն կատարելով կառավարման համակարգում:

Պարբերական գեկույցների ներկայացում

Պարբերական գեկույցների ներկայացումը Համաշխարհային ժառանգության համակարգի պաշտոնապես ձևակերպված պահանջներից է, համաձայն որի անդամ պետություններից պահանջվում է յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ ներկայացնել իրենց երկրում Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման մասին գեկույց: Պարբերական գեկույցները ներակայացվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի գազաթնաժողովին Համաշխարհային ժառանգության կոմիտեի միջոցով: Անդամ պետությունը գեկույցում է օրենսդրական և վարչարարական կարգավորումների և իրականացրած այլ միջոցառումների մասին՝ ներառյալ իրենց Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանվածության վիճակի մասին (ԳՈՒ-ի 199-րդ պարբերություն): Ցանկում ընդգրկված հուշարձանների համար սա կարևոր գործընթաց է երկարաժամկետ արդյունավետ պահպանվածության ապահովման տեսանկյունից, ինչը նաև ուժեղացնում է կոնվենցիայի կիրարկման արժանահավատությունը (ԳՈՒ-ի 202-րդ պարբերություն): Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ապահովել անդամ պետությունների, համապատասխան ինստիտուտների ամբողջական մասնակցությունը և տարածաշրջանային փորձաքննության իրականացումը: Լինելով օգտակար կոմիտեի և այլոց համար՝ պարբերական գեկույցների ներկայացումը արժեքավոր գործիք է հուշարձանի կառավարիչների և ազգային մարմինների համար, քանի որ պետք է ներկայացվի պարբերական ուսումնասիրություն իրենց կառավարման համակարգի արդյունավետության վերաբերյալ:

Պարբերական գեկույցի ներկայացումը ծառայում է չորս հիմնական նպատակի՝

- ա) ներկայացնում են անդամ պետության կողմից Համաշխարհային ժառանգության մասին կոնվենցիայի կիրարկման գնահատականը,
- բ) ներկայացնում և գնահատում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների Համաշխարհային բացառիկ արժեքների ժամանակի ընթացքում պահպանության վերաբերյալ,
- գ) ներկայացնում են թարմացված տեղեկատվություն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների մասին՝ վերջիններիս պահպանվածության վիճակում և հանգամանքներում փոփոխությունները գրանցելու նպատակով,

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

դ) ապահովում են կոնվենցիայի կիրարկման և Համաշխարհային ժառանգության պահպանության վերաբերյալ տարածաշրջանային համագործակցությունը և տեղեկատվությունը, ինչպես նաև փորձի փոխանակումը անդամ պետությունների միջև:

(ԳՈՒ-ի 201-րդ պարբերություն).

Պարբերական զեկույցների ներկայացումը կատարվում է ըստ տարածաշրջանների, որպեսզի խթանվի տարածաշրջանային համագործակցությունը և որպեսզի կոմիտեն ի վիճակի լինի հասցեական պատասխաններ ներկայացնել յուրաքանչյուր տարածաշրջանի համար: Սա, մասնավորապես, օգտակար է նաև անդրսահմանային հուշարձանների դեպքերում համակարգման խթանման համար: Պարբերական զեկույցների ներկայացման վեցամյա շրջափուլից հետո յուրաքանչյուր տարածաշրջան գնահատվում է մեկ անգամ ևս նույն կարգով:

(ԳՈՒ-ի 203-205-րդ պարբերություններ).

Անդամ պետությունները պետք է հասցեական լուծումներ տան գործընթացի ժամանակ բացահայտված հիմնախնդիրներին: Ժամանակի ընթացքում հերթականությամբ ներկայացված զեկույցներն արժեքավոր արձանագրություններ են հուշարձանի տարածքում տեղ գտած զարգացումներին հետևելու համար: Կանոնավոր մոնիթորինգի իրականացումը Համաշխարհային ժառանգության կառավարման համակարգի և պարբերական զեկույցների կարևոր մասն են կազմում և պետք է ներառվեն դրանց մեջ (տես 4.4-րդ և 4.5-րդ մասերը):

Պարբերական զեկույցների նախապարաստման արդյունքները

Պարբերական զեկույցների ներկայացման վեցամյա շրջափուլը եզակի հնարավորություն է տարածաշրջանի երկրների համար ներկայացնելու իրենց հուշարձանների պահպանվածության վիճակը, տեղեկատվությամբ կիսվել մյուսների հետ և համատեղ ուժերով բացահայտելու և առաջնահերթություններ սահմանելու կոնվենցիայի արդյունավետ իրականացման կարիքների մասով: Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, որը պարբերական զեկույցների ներկայացման երկրորդ շրջափուլն է իրականացրել 2010-2011 թթ-ին, մշակեց գործողությունների երկու առանձին պլան. մեկը Ասիայի համար, իսկ երկրորդը՝ խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար: Գործընթացում ընդգրկված էին 41 անդամ պետություն և 198 հուշարձան: Օրինակ՝ Սուվրնուում (Հարավային Կորեա) Ասիայի համար մշակած գործողությունների պլանով նախանշվեցին կոնվենցիայի կիրարկման տեսանկյունից հեթկալ առաջնային ուղղություններ. մշակում, / կառավարման պլանների/ համակարգերի վերանայում, աղեկների կառավարում, տարածաշրջանային համագործակցություն, համայնքների ընդգրկվածության մակարդակի մեծացում:



© Կորեայի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողով
Աղբյուրը: DRK NatCom Jihon

Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պարբերական զեկույցների ներկայացում

Պահպանվածության վիճակի մասին զեկույցներ

Համաշխարհային ժառանգության կոմիտեն ցանկանում է տեղեկացված լինել Համաշխարհային ժառանգության հուշարձանի վրա ազդող հիմնական ճեռնարկումներից և միջամտություններից, որպեսզի հնարավորություն ունենան քննության առնել նման առաջարկությունները և առաջարկել տեխնիկական համագործակցություն՝ Համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկից հուշարձանի դուրս մնալը բացառելու նպատակով (ԳՈՒ-ի 170-րդ պարբերություն): Արձագանքող մոնիթորինգը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների պահպանվածության վիճակի մասին կոմիտեին զեկույցելու գործընթաց է (ԳՈՒ-ի 169-րդ պարբերություն):

Անդամ պետություններին կոչ է արվում մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը ներկայացնել առանձին զեկույցներ յուրաքանչյուր տեղ գտած դեպքի կամ նախաձեռնած աշխատանքի մասին, որոնք կատարվել են բացառիկ պայմաններում և որոնք կարող են ազդեցություն ունենալ

հուշարձանի պահպանվածության վիճակի վրա (ԳՈՒ-ի 169-րդ պարբերություն): ԳՈՒ-ի 172-րդ պարբերությունով անդամ պետություններին առաջարկվում է կոմիտեին իրազեկել ... կոնվենցիայով պաշտպանվող տարածքում լայնածավալ վերականգնումներ կամ նոր շինարարական աշխատանքներ նախաձեռնելու կամ լիազորելու իրենց մտադրությունների մասին, որոնք կարող են ազդել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի վրա: Ծանուցումը պետք է ներկայացվի հնարավորինս արագ, որպեսզի կոմիտեն հնարավորություն ունենա ներկայացնել իր դիտարկումները, նախքան որոշման ընդունումը, որը դժվար կլինի չեղարկել: Համաշխարհային ժառանգության կենտրոնը կամ խորհրդատվական մարմինները կարող են նույնպես զեկույցներ ստանալ երրորդ կողմից Համաշխարհային բացառիկ արժեքի, ամբողջականության և իսկության վրա հնարավոր ազդեցություն ունեցող, ի հայտ եկող կամ հանկարծակի բացահայտված սպառնալիքների վերաբերյալ:

Անդամ պետություններն ազատ են տեխնիկական, խորհրդատվական առաքելություններ կամ միջազգային աջակցություն հայցելու հարցում: Դա կարելի է ի կատար ածել ցանկացած պահի և դրա կատարումը պարտադիր չէ, որ կախված լինի կոմիտեի որոշումից: Որոշ դեպքերում սա կարող է օգտակար ներդրում լինել որոշում կայացնելու գործում՝ առաջարկվող գործողությունների ուղղվածության կամ հուշարձանում միջամտություն կատարելու տեսանկյունից:

Բոլոր դեպքերում կենտրոնը քայլեր կձեռնարկի ստացված զեկույցներում տեղ գտած փաստերը վերահաստատելու ուղղությամբ, որից հետո տեղեկատվություն կպահանջի անդամ պետությունից սպառնալիքի բնույթի և լրջության վերաբերյալ, եթե զեկույցը չի նախապատրաստվել անդամ պետության կողմից: Ելնելով պատասխանից՝ կենտրոնը կարող է որոշում կայացնել <Պահպանվածության վիճակի մասին զեկույցը>> Համաշխարհային ժառանգության կոմիտեին ներկայացնելու մասին՝ ներառելով որոշման նախագիծը, որով առաջարկվում կամ պահանջվում է անդամ պետությունից պատշաճ կառավարչական լուծումներ գտնել որոշակի խնդիրների լուծման նպատակով: Այդ գործընթացը նկարագրված է ստորև:

Պահպանվածության վիճակի մասին զեկույցների գործընթացը.²⁸

- Որոշումների նախագծի նախապատրաստում. անդամ պետությունից տեղեկատվությունը ստանալուց հետո Համաշխարհային ժառանգության կենտրոնը և խորհրդատվական մարմինները համատեղ մշակում են պահպանվածության վիճակի մասին զեկույց, որին կցվում են որոշման նախագիծը և առաջարկվող գործողությունները Համաշխարհային կոմիտեի նիստին ընդառաջ: Որոշման նախագծի փաստաթղթերը պետք է համապատասխանեն Գործառնական ուղեցույցով սահմանված ստանդարտներին (23-րդ պարբերություն):
- Որոշումների ընդունում. այնուհետ որոշումներն ուսումնասիրվում են և անհրաժեշտության դեպքում քննարկվում կամ վերանայվում Համաշխարհային ժառանգության կոմիտեի նիստի ընթացքում: Կոմիտեի նստաշրջանի ընթացքում որոշման հաստատման գործընթացը սահմանված է կոմիտեի կանոնակարգով:
- Կոմիտեի որոշումների մասին տեղեկատվությունը. կոմիտեի նիստից հետո Համաշխարհային ժառանգության կենտրոնը կոմիտեի ընդունած բոլոր որոշումների մասին զեկույցը փոխանցում է անդամ պետություններին նստաշրջանի ամսվա ընթացքում (168-րդ պարբերություն): Կոմիտեի կայացրած որոշումների մասին տեղեկատվությունը պարտադիր չէ, որ գտնվի Համաշխարհային ժառանգության առանձին հուշարձաններում աշխատողների համար: Այս առումով օգտակար կլինի, եթե ուսումնասիրության ենթարկվեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կայքէջը կամ Համաշխարհային ժառանգությանը վերաբերող որոշումների շտեմարանը՝ առանձին հուշարձանների մասով ընդունած որոշումների կարգավիճակը ստուգելու համար: Բոլոր որոշումները համարակալված են նստաշրջանի օրակարգին համապատասխան՝ ըստ քննարկումների: Ընդհանուր առմամբ պահպանվածության վիճակին առնչվող որոշումները դասակարգվում են COM 7: A, B, C համարակալմամբ:
- Որոշումների կատարումը. պահպանվածության վիճակի մասին զեկույցները անդամ պետությունից պահանջում են պաշտոնապես զեկույցել իրականացված գործողությունների մասին՝ ի կատարումն հուշարձանի պահպանվածության վերաբերյալ Համաշխարհային ժառանգության կոմիտեի ընդունած որոշումների: Հուշարձանի կառավարիչները պետք է ներգրավված լինեն գործընթացում և որոշումներում, արտացոլված միջոցառումների իրականացումն ուսումնասիրելու նպատակով հաճախակի կազմակերպվում են նպատակային առաքելություններ:

Կարևոր է, որ հուշարձանի կառավարիչները և ազգային, և տեղական մակարդակով ուշադրություն դարձնեն այդ որոշումներին: Այս փուլում անդամ պետությունը կարող է վերանայել կառավարման պլանը կամ գործողությունները, որոնք շարունակական բնույթի են և տեսնել, թե կարող է այն դրանց համապատասխանեցնել կամ մշակել նոր գործողություններ՝ նպատակային լուծում տալու համար: Սա կարող է հետևանքներ ունենալ գործողությունների և ռեսուրսների պլանավորման տեսանկյունից,

28. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2012. Managing Natural World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual.) <http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-703-1.pdf> (English web page).

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

որոնք անհրաժեշտ կլինի հետագայում վերագնահատել: Անհրաժեշտ կլինի ճանապարհ գտնել կոմիտեի մտահոգություններին հասցեական լուծում տալու նպատակով և զեկուցել դրանց մասին մեկ կամ երկու տարիների ընթացքում, իսկ այնուհետ՝ կանոնավոր կերպով, քանի դեռ կոմիտեն բավարարված չի լինի արդյունքներով:

Կոմիտեի որոշումներով կարող են առաջարկվել գործողությունների մի քանի տարբերակներ: Դրանք կարող են ընդգրկել՝

- (կոմիտեն) կարող է որոշում կայացնել, որ հուշարձանը լրջորեն վնասված չէ և որ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը բացակայում է,
- եթե կոմիտեն որոշում է, որ հուշարձանը լրջորեն վնասվել է, սակայն ոչ այն աստիճանի, որ վերականգնումն անհնար է դարձել, ապա կարող է որոշել հուշարձանը ցանկում պահելու մասին՝ անդամ պետության կողմից հուշարձանը խելամիտ ժամկետներում վերականգնելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման պայմանով: Կոմիտեն կարող է նաև որոշել, որ Համաշխարհային ժառանգության հիմնադրամից տեխնիկական օժանդակություն տրամադրվի հուշարձանի տարածքում իրականացվելիք վերականգնողական աշխատանքների համար՝ առաջարկելով անդամ պետությանը այդ աջակցության համար ներկայացնել հայտ, եթե այդպիսին արդեն իսկ չի արվել,
- եթե 177–182-րդ պարբերություններով սահմանված պահանջները պահպանվել են, ապա կոմիտեն կարող է որոշում կայացնել հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու վերաբերյալ՝ 183-189-րդ պարբերություններին համապատասխան,
- եթե գոյություն ունի ապացույց, որ հուշարձանն այն աստիճանի է վնասվել, որ անվերադառնալի կորստյան են մատնվել այն առանձնահատկությունները, որոնք հիմք են ծառայել ցանկում ընդգրկելու համար, ապա կոմիտեն կարող է որոշում կայացնել հուշարձանը ցանկից հանելու վերաբերյալ: Նախքան նման գործողություն իրականացնելու՝ քարտուղարությունը դրա մասին տեղեկացնում է շահագրգիռ անդամ պետությանը: Անդամ պետության կողմից կատարած ցանկացած մեկնաբանություն կներկայացվի կոմիտեի ուշադրությանը:

(ԳՈՒ-ի 176-րդ պարբերություն)

Բացառությամբ ամենահրատապ իրավիճակների՝ կոմիտեն կարող է առաջարկել, որ նախքան վտանգվածների ցուցակում ընդգրկելու կամ այլ ծանրակշիռ գործողություն իրականացնելը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի խորհրդատվական մարմիններից ձևավորված առաքելություն ուղարկվի հանգամանքները քննելու համար: Կոմիտեն կարող է նաև առաքելություն ուղարկելու մասին որոշում կայացնել՝ հուշարձանի տարածքում վերջին ժամանակահատվածում փոքրամասշտաբ գործողությունների իրականացման համար՝ փաստերը որոշակիացնելու նպատակով:

Առաքելությունը կուսումնասիրի, թե արդյոք գոյություն ունի որևէ սպառնալիք կամ, ի հակադրություն, էական բարելավումներ հուշարձանի պահպանության գործում՝ Համաշխարհային ժառանգության կոմիտեին վերջին ներկայացված զեկույցից հետո: Այն նաև քննության կառնի, թե արդյոք հուշարձանի պահպանվածության վիճակի մասին կոմիտեի վերջին որոշումներից բխող միջոցառումներ են ձեռնարկվել, ինչպես նաև կներկայացնի տեղեկատվություն Համաշխարհային բացառիկ արժեքին ուղղված հնարավոր կամ որոշակի սպառնալիքի, վնասի կամ կորստի՝ այդ թվում ամբողջականության և իսկության մասին: (ԳՈՒ-ի 173-րդ պարբերություն):

Համաշխարհային ժառանգության կենտրոնն է ստանում այս տեղեկատվությունը, որը, խորհրդակցելով շահագրգիռ անդամ պետության և խորհրդատվական մարմինների հետ, Համաշխարհային ժառանգության կոմիտեին է ներկայացնում պահպանվածության վիճակի մասին զեկույցը: Բացառիկ դեպքերում դա կարող է հանգեցնել հուշարձանը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելուն:

Պահպանվածության վիճակի մասին որոշումներ

Համաշխարհային ժառանգության կոմիտեն հուշարձանների համալիր կառավարման, համակարգերի բարելավման նպատակով որոշակի պահանջներ է ներկայացնում, ինչպիսիք են սպորտ նշվածները:

«Սրտեղծել գործող և արդյունավետ կառավարման համակարգ որոշում կայացնելու գործընթացը համակարգելու և հուշարձանի պահպանության ու կառավարման հարցում համագործակցության խթանման նպատակով՝ իրավական շրջանակների սահմանման, Համաշխարհային ժառանգության հուշարձանի համար կենտրոնացված կառավարման համակարգի սրտեղծման, ներգրավված վարչական մարմինների դերերի և պատասխանատվության շրջանակների և անհրաժեշտ ռեսուրսների տրամադրման միջոցով՝ տեղական, մարզային և ազգային մակարդակով գործելու համար»:

<http://whc.unesco.org/en/decisions/4758>



Բրազիլիա (Բրազիլիա)

Վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու գործընթացը

Հիմք ընդունելով պահպանվածության վիճակի մասին զեկույցը և խորհրդատվական մարմինների առաջարկությամբ, ինչպես նաև անդամ պետությունների հետ խորհրդակցելուց հետո՝ կոմիտեն կարող է հուշարձանն ընդգրկել Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում: Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկը հաստատվել է Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 11.4-րդ հոդվածին համապատասխան, որն ընդգրկում է լուրջ և առանձնահատուկ կերպով վտանգված Համաշխարհային ժառանգության հուշարձաններ, որոնց պաշտպանությունը պահանջում է <<շոշափելի գործողություններ և որոնց իրականացման համար աջակցություն է խնդրվել>> (ՅՈՒՆԵՍԿՕ 1972 թ.): Գործառնական ուղեցույցի IV.B գլուխը (ՅՈՒՆԵՍԿՕ 2012 թ.) մանրամասներ է ներկայացնում վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու գործընթացի վերաբերյալ (ԳՈՒ-ի 177-րդ պարբերություն), և վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու համար որպես չափորոշիչ օգտագործվում են կամ <<որոշակիացված>>, կամ էլ <<հնարավոր>> կատեգորիաները (ԳՈՒ-ի 178-180-րդ պարբերություններ): Երբ հուշարձանի վիճակը ցանկացած պարագայում բավարարում է չափորոշիչներից որևէ մեկին, ապա կոմիտեն կարող է որոշում կայացնել այն վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

<<Որոշակիացված վտանգը>> վերաբերում է ուրույն և հաստատված, մոտեցող վտանգին, և մշակութային հուշարձանների պարագայում չափորոշիչը ընդգրկում է նյութակազմի, կառուցվածքների կամ ճարտարապետական, քաղաքային կամ գյուղական պլանավորման ամբողջականությանը, ինչպես նաև պատմական վավերականության կամ մշակութային կարևորության կորստին: <<Հնարավոր վտանգը>> այն սպառնալիքներն են, որոնք կարող են բացասաբար ազդել հուշարձանի Համաշխարհային ժառանգության արժեքների վրա: Մշակութային հուշարձանների պարագայում նման սպառնալիքները կարող են ներառել իրավական կամ վարչարարական համատեքստում ցանկացած փոփոխություն, որում հուշարձանի պաշտպանության ապահովման մակարդակը կարող է նվազեցվել: Կոնսերվացման քաղաքականության բացակայությունը, մարզային կամ քաղաքային պլանավորման սպառնացող ազդեցությունը, զինված ընդհարումների առաջացումը կամ դրա սպառնալիքը, ինչպես նաև երկրաբանական, կլիմայական կամ այլ բնապահպանական գործոններով պայմանավորված աստիճանական փոփոխությունը (ԳՈՒ-ի 179-րդ պարբերություն): Անպայման չէ, որ սպառնալիքներն իր հայտ գան բուն հուշարձանի տարածքում, մինչդեռ պահպանական գոտու կամ առավել ընդլայնված տարածքում իրականացվող գործողությունները նույնպես կարող են վտանգել դրա Համաշխարհային բացառիկ արժեքը:

Մինչ վտանգված հուշարձանների ցանկում ներառելու կամ չներառելու մասին որոշում կայացնելը Համաշխարհային ժառանգության կոմիտեն յուրաքանչյուր հուշարձան քննության է առնում առանձին-առանձին: Մասնավորապես՝ որոշակիացված վտանգների պարագայում հուշարձանի ֆիզիկական կամ մշակութային արժեքին հասցված վնասի չափը պետք է որոշվի դրա ազդեցությունների ուժգնությանը համապատասխան, մինչդեռ հնարավոր վտանգների պարագայում սպառնալիքը գնահատվում է հուշարձանի գտնվելու վայրի սոցիալական և տնտեսական համատեքստում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ <<հնարավոր վտանգի>> կատեգորիայի դեպքում հնարավոր չէ գնահատել սպառնալիքների ազդեցության մակարդակը, ինչպիսին կարող է լինել զինված ընդհարման դեպքում մշակութային ժառանգության վրա ունեցած ազդեցությունը (ԳՈՒ-ի 182-րդ պարբերություն):

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

Վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելիս խորհրդատվական մարմինները, անդամ պետությունների հետ խորհրդակցելով, հուշարձանի համար մշակում են ցանկալի պահպանվածության վիճակի մասին փաստաթուղթ և սահմանում են ցանկալի վիճակին հասնելու համար ուղղիչ գործողությունների շարք: Դրանք հաստատում է կոմիտեն, իսկ իրականացման ընթացքի վերաբերյալ կոմիտեն ներկայացվում է տարեկան զեկույց:

Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար ցանկալի պահպանվածության վիճակը մի հայտարարություն է, որով ուրվագծվում է պահպանվածության այն ցանկալի վիճակը, որն անհրաժեշտ է վտանգված հուշարձանների ցանկից դուրս հանելու համար: Այն հասցեական լուծում է տալիս հուշարձանին բնորոշ վտանգներին, վեր է հանում անհրաժեշտ բարեփոխումներն այդ վտանգների կանխարգելման համար և սահմանում է վտանգված հուշարձանների ցանկից հուշարձանը դուրս հանելու շեմը՝ պահպանվածության ցանկալի վիճակին հասնելուց հետո:

Ուղղիչ գործողությունների մշակման նպատակով Համաշխարհային ժառանգության կենտրոնը, համագործակցելով անդամ պետության հետ, որոշակիացնում է հուշարձանի փաստացի վիճակը, հուշարձանին սպառնացող վտանգները և ուղղիչ գործողություններ նախաձեռնելու նպատակահարմարությունը: Սա կարող է անհրաժեշտություն առաջացնել խորհրդատվական մարմինների կամ այլ կազմակերպությունների առաքելության կազմակերպման հարցում՝ սպառնալիքների բնույթը և չափը գնահատելու, միջոցառումների իրականացման մասով առաջարկություններ ներկայացնելու համար: Մինչ օրս գոյություն չունի պաշտոնապես ընդունված ձևաչափ պահպանվածության ցանկալի վիճակի մասին հայտարարության նախապատրաստման կամ նախքան կոմիտեի հաստատումը դրանց նկատմամբ հսկողության իրականացման գործընթացի կազմակերպման մասով:

Նման իրավիճակներում անդամ պետությունը կարիք ունի վերանայելու շարունակական բնույթի կառավարման գործողությունները, որպեսզի կոմիտեի նախաձեռնած խնդիրներին, ըստ առաջնահերթության, հասցեական լուծում տա: Այստեղ նույնպես անդամ պետությունը հնարավորություն կունենա պահանջել տեխնիկական /խորհրդատվական/ առաքելություն՝ կազմակերպելու և միջազգային աջակցության հայտ ներկայացնելու համար: Անդամ պետությունները կարող են նաև դոնորներից աջակցություն ստանալու հայտ ներկայացնել, որի համար կոմիտեն կարող է ընդլայնել իր համագործակցության շրջանակը բանակցություններում՝ ըստ անհրաժեշտության: Կոմիտեն, կենտրոնը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենը կարող են ներգրավված լինել տարբեր փուլերում, եթե հիմնախնդիրները քաղաքական բնույթի են:

Կոմիտեն յուրաքանչյուր տարի վերանայում է Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկված բոլոր հուշարձանները: Կոմիտեն դուրս է հանում օբյեկտը Վտանգված հուշարձանների ցանկից պահպանվածության ցանկալի վիճակին հասնելուն պես: Եվ հակառակը, եթե վատթարացումը շարունակվում է, ապա կոմիտեն կարող է որոշել, որ հուշարձանի վիճակն այն աստիճանի է վատթարացել, որ կորցրել է Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար հիմք հանդիսացող առանձնահատկությունները (ԳՈՒ-ի 191 Ե կետ): Այս իրավիճակում կոմիտեն կարող է որոշել հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկից դուրս հանելու մասին, քանի որ դրա Համաշխարհային բացառիկ արժեքն անվերապահ զրկվել կամ կորսվել է:

3.6 Համաշխարհային ժառանգության կոմիտեի որդեգրած ռազմավարական ուղղորդումը

Տարիների ընթացքում Կոմիտեն նաև հաստատել է ռազմավարական ուղղություններ: 2002 թ. կոմիտեն հաստատեց չորս ռազմավարական ուղղություն, իսկ 2007 թ-ին ավելացվեց հինգերորդը: Հայտնի լինելով որպես հինգ «C»-եր, ներկայիս հինգ ռազմավարական ուղղություններն են՝

1. Համաշխարհային ժառանգության ցանկի արժանահավաստության ամրապնդում,
2. Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման արդյունավետության ապահովում,
3. Անդամ պետությունների տարածքներում արդյունավետ կարողությունների զարգացման խթանում,
4. Հանրային իրազեկվածության ասփիճանի բարձրացում՝ հաղորդակցման միջոցով համաշխարհային ժառանգության գործում ներգրավվածության և աջակցության ապահովման նպատակով,
5. Խթանել համայնքների դերը Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի կիրարկման գործում: (ԳՈՒ-ի 25-րդ պարբերություն)

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 18-րդ գագաթնաժողովի ընթացքում անդամ պետությունները համաձայնեցրել են ռազմավարական գործողությունների պլանը մինչև 2022 թ.՝

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի շրջանակներում իրականացվող միջազգային համագործակցությունը և ստանձնած պատասխանատվությունը երաշխավորում է մեր ընդհանուր մշակութային բնության և մշակութային ժառանգության արդյունավետ պահպանությունը, աշխարհի համայնքների և մշակույթների հանդեպ ձևավորում են հարգանք և ընկալում, ինչպես նաև ներդրում ունենում դրանց կայուն զարգացման գործում:

Համագործակցության միջոցով կոմիտեն ձգտում է՝

- կայուն միջավայրի, որում անդամ պետությունները միջազգային հանրությունից ստանում են քաջակերություն, աջակցություն և օգնություն իրենց ստանձնած պարտավորություններն ամոլջությամբ կատարելու և Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով իրենց իրավունքներից օգտվելու նպատակով,
- ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում տեղական, ազգային և միջազգային համայնքների կողմից բնության և մշակութային համաշխարհային ժառանգության հետ կապի ընկալմանը, աշխատանքների ներգրավմանը՝ օգտվելով դրան գոյությունից և օգտագործումից,
- արժանահավատ, պատշաճ և աշխարհի ամենաբացառիկ ժառանգության ներկայացուցչական հուշարձաններից ընտրված Համաշխարհային ժառանգության ցուցակի,
- թափանցիկ, անաչառ, հաշվետու և մշտապես փոփոխվող աշխարհի պահանջներին համապատասխանող Համաշխարհային ժառանգության համակարգի:

Մինչ 2022 թ. համաձայնեցված նպատակներն են՝

Նպատակ 1: Համաշխարհային ժառանգության հուշարձանների համաշխարհային բացառիկ արժեքները պահպանված են

Նպատակ 2: Համաշխարհային ժառանգության ցուցակը աշխարհի ամենաբացառիկ մշակութային և բնության ժառանգության արժանահավատ ընտրանին է

Նպատակ 3: Ժառանգության պաշտպանությունը և կոնսերվացումը հաշվի է առնում ներկա և ապագա բնապահպանական, սոցիալական և տնտեսական կարիքները

Նպատակ 4: Համաշխարհային ժառանգությունը պահպանում կամ խթանում է որակական հատկանիշները

Նպատակ 5: Կոմիտեն կարող է լուծում տալ քաղաքական և ռազմավարական հիմնախնդիրներին

Նպատակ 6: Կանոնադրական հանդիպումների որոշումները հիմնավորված են և արդյունավետ իրականացվում են

Հինգ «C»-երի և գործողությունների պլանի խնդիրները պետք է հաշվի առնվեն Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար կառավարման համակարգերի մշակման ընթացքում, կոմիտեի կողմից ժամանակ առ ժամանակ ընդունվող ուղեցույցների հետ միասին, ինչպես օրինակ կոնվենցիայի 40-ամյակի տոնակատարությունների ընթացքում Համաշխարհային ժառանգության հուշարձանների և տեղական համայնքների ու կայուն զարգացման միջև կապի վրա շեշտադրման կատարումը: Դրանք պետք է կամ ուղղակի ներմուծվեն Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման համակարգի մեջ, օրինակ՝ պահպանությունը և հաղորդակցումը, կամ կարող են ազդել հուշարձանի կառավարման եղանակի վրա, օրինակ, երբ արմատավորվում է կոնվենցիայի արժանահավատությունը՝ Համաշխարհային բացառիկ արժեք ունեցող վայրերի բացահայտման, պաշտպանության, կոնսերվացման, հանրահոգակման և գալիք սերունդներին փոխանցելու տեսանկյունից:


3.7 Գիտելիքների զարգացում և քաղաքականությունների մշակում

Համաշխարհային ժառանգությանն առնչվող գիտելիքները զարգանում են՝ ընդգրկելով գործընթացների վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև հուշարձանների կառավարումը: Կոմիտեն իր խորհրդատվական մարմինների և Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ միասին փորձում է հնարավորինս արագ անդամ պետություններին փոխանցել որոշակի զարգացման աստիճանի հասած գիտելիքները: Դա իրականացվում է կոմիտեի ընդունած որոշումների միջոցով, օրինակ՝ կարողությունների զարգացման կամ կլիմայի փոփոխության մասով: Ավելին, դա կազմակերպվում է նաև Գործառնական ուղեցույցի վերանայումների և մեթոդական ուղեցույցների կազմման (ինչպիսին հանդիսանում է այս մեկը), թեմատիկ ուսումնասիրությունների և տարբեր միջոցներով հրապարակված ուսումնասիրությունների (որոնցից հիմնականը Համաշխարհային ժառանգության փաստաթղթերի շարքն է (տե՛ս մատենագիտությունը)) միջոցով: Այդիսկ պատճառով հուշարձանների կառավարման համար լիազորված մարմիններին խորհուրդ է տրվում պարբերաբար ստուգել կենտրոնի և խորհրդատվական մարմինների (Համաշխարհային ժառանգությանը վերաբերող բաժինները) կայքէջերը՝ թարմացված տեղեկատվություն ստանալու համար:

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

Նոր գիտելիքների ձևավորում

Հաշվի առնելով Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված կրոնական բնույթի հուշարձանների կառավարման դժվարությունը՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնը ԻԿԿՌՕՄ-ի և ԻԿՕՄՕՄ-ի հետ համապեղ 2013 թ. մայիսին Ռուսաստանի Դաշնության Նովոդևիչի վանքում կազմակերպել է սեմինար՝ կրոնական նշանակության Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման և օգտագործման գործում ներգրավված ներկայացուցիչների համար: Սա մասն է կազմում կոմիտեի հաստատված «Կրոնական նշանակության ժառանգությանը վերաբերող նախաձեռնություն» ծրագրի (<http://whc.unesco.org/en/religious-sacred-heritage/>):



Նովոդևիչի վանական համալիրը (Ռուսաստանի Դաշնություն)

Նման օրինակներից է 2005 թ.-ից ընդունված համաշխարհային բացառիկ արժեքների ատրիբուտների բացահայտման և օգտագործման մասին ուղեցույցը: Մասնավորապես, օգտակար հղումներ են Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հետիմնավորումներին վերաբերող ցուցումներն են, անվանակարգերի նախապատրաստման Մեթոդական ցուցումը և Համաշխարհային ժառանգության փաստաթղթերի շարքից N 26 Համաշխարհային ժառանգության մշակութային տեղանքապատկերներ. կոնսերվացման և կառավարման ձեռնարկը:

Հաջորդիվ 2011 թ.-ին ԳՈՒ-ում կատարված հարցումներ են, որոնք վերաբերում են կայուն զարգացմանը, մասնավորապես 112-րդ, 119-րդ, 132-րդ պարբերություններում, ինչպես նաև 5-րդ հավելվածում՝ 4.b և 5.e կետերում: Նման փոփոխությունների իրականացման նպատակը մի կողմից Համաշխարհային ժառանգության հուշարձանների կայուն վիճակի ապահովում է՝ համաշխարհային բացառիկ արժեքների պարտադիր պահպանության (այսպիսով, «կայունության» եզրույթի նեղ սահմանում) տեսանկյունից, իսկ մյուս կողմից որպես սկզբունք հաստատում է մի գաղափար, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման համակարգերը պետք է «ինտեգրված լինեն կայուն զարգացման սկզբունքներում» (տե՛ս 2.2-րդ մասը, Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում և 4.5-րդ մասը):

Չնայած ԳՈՒ-ով, որը կոնվենցիայի կիրարկման հիմնական ուղեցույցն է, չի սահմանվում կառավարման համակարգերի հստակ հայեցակարգ, դրանով առանձնացվում են կառավարման համակարգի կարիքները և հիշատակում են որոշ պահանջներ, թե ինչ այն պետք է ընդգրկի: Նաև հստակ է, որ կառավարման համակարգի առաջնային նպատակը Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունն ու աներեքության ապահովումն է: Ինչպես վերն արդեն նշվեց, տարբեր հատվածներում ԳՈՒ-ը զգալի չափով տեղեկատվություն է պարունակում, թե ինչ է հարկավոր ընդգրկել կառավարման համակարգում և դրա փաստաթղթերի մեջ: Այս պահանջները կարևոր գործոն են ուղեցույցի մշակման համար:


Համաշխարհային ժառանգությանը վերաբերող գործընթացները նույնպես ստեղծում են գիտելիքների միազուլարություն, որոնք կարևոր են ժառանգության ամբողջ ոլորտի համար: Օրինակ՝ 200-ից ավել հուշարձանների համար 2005-2009 թթ. ժամանակահատվածում 766 պահպանվածության վիճակի մասին զեկույցների մասին վերլուծությունն է: Դրանք հետաքրքիր կերպով ներկայացրեցին Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների համաշխարհային բացառիկ արժեքի վրա ազդեցություն ունեցող գործոնները, ինչպես նաև սպառնալիքների տեսակների կապը հուշարձանի տեսակի հետ՝ ըստ տարածաշրջանների:

Անխոս հուշարձանների վրա ազդում են ազդեցությունների համադրության հետևանքով առաջացող բազմաթիվ գործոններ և խնդիրներ, սակայն, ինչպես ներկայացվում է հաջորդ էջի պատկերում, սպառնալիքների երկու հիմնական խումբ են առաջանում, որպես ընդհանուր խնդիր, անկախ հուշարձանի տեսակից և տարածաշրջանից:

- Զարգացում և ենթակառուցվածք, շինություններ և կառուցապատում, տրանսպորտային ենթակառուցվածք, ինժեներական կամ ծառայությունների ենթակառուցվածքներ, աղտոտվածություն, ֆիզիկական ռեսուրսի արդյունահանում:
- Կառավարում, իրավական հարցեր և հաստատութենական գործոններ:

Հատուկ ուշադրության է արժանի հուշարձանների զգալի մի հատված (յուրաքանչյուր հինգից մեկը), որ բախվում են նեղ սահմանում ունեցող «այլ հիմնախնդիրների» հետ. «ավերվելու վտանգ կամ որակական հատկանիշների վատթարացում՝ ելնելով հուշարձանի տարիքից, շինարարական համակարգերի կայունության հետ կապված խնդիրներ և այլն», և ենթադրվում է, որ իրավական և կառավարչական խնդիրները, ամենայն հավանականությամբ, ավելի են խորացնում նման տեսակի ուղղակի վտանգները:

2010 թ. պահպանվածության վիճակի միտումների մասին Համաշխարհային ժառանգության զեկույցում եզրահանգվում է, որ «2005 թ-ից ի վեր ոչ համարժեք կառավարչական գործողությունները նույնպես կարող են աստիճանաբար ազդել հուշարձանների իսկության պայմանների վրա»:²⁹



Պատկեր 4: Սպառնալիք հանդիսացող գործոնների հիմնական խմբերից յուրաքանչյուրի ազդեցությունը Համաշխարհային ժառանգության հուշարձանների վրա տոկոսային հարաբերակցությամբ (2005 թ-ից մինչև 2009 թ., ձախից աջ)³⁰

Վեր հանելով աշխարհով մեկ ժառանգությունը ներկայացնող արժեքներին սպառնացող կառավարման, ինստիտուցիոնալ, իրավական, կառուցապատման և ենթակառուցվածքներով պայմանավորված գործոնները՝ օրեցօր ակնհայտ է դառնում գոյություն ունեցող ժառանգության կառավարման համակարգերի բազմազանության մեջ ընդհանուր հարթակների բացահայտման առավելությունը: Սա է 4-րդ մասի նպատակը:

3.8 Համաշխարհային ժառանգության կարողությունների կառուցման ռազմավարություն

Ներածություն

Քանի որ օրեցօր ավելանում են մշակութային շառանգության և դրա կառավարման հանդեպ ազդեցությունները և պահանջը (Մաս 2), ժառանգության ոլորտում ներգրավված հաստատությունների շրջանում մեծանում է այն տեսակետը, որ պարզապես գործողությունների իրականացումը բավարար չէ, անհրաժեշտ է ձգտել փոփոխության: Ժառանգության ոլորտում ներգրավված մասնագետների

29. UNESCO World Heritage Centre. 2010. Reflection on the Trends of the State of Conservation. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-10/34.COM/7C) p.21. <http://whc.unesco.org/archive/2010/whc10-34com-7Ce.pdf>

30. Ibid., p.5, Chart 2.

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

վերապատրաստումից ակնկալվող օգուտն օգտագործման արդյունավետության բարձրացումն է, մինչդեռ ժառանգության կոնսերվացման ու կառավարման պրակտիկայում արդյունավետությունը վաղուց հաստատված է: Այնուամենայնիվ, ժառանգության ընդլայնվող հայեցակարգը, ինչպես նաև ժառանգության վայրերի և հանրության անկախ լինելու հանգամանքի աճող ճանաչումը (տես Մաս 2) հանգեցրել է այն եզրահանգման, որ ավանդական դասընթացների կազմակերպումն այլևս արդյունավետ չէ: Կարողությունների աստիճանական զարգացման³¹ մոտեցումը հաստատում է, որ ժառանգության տարածքներում փոփոխություններ մտցնելու և հեռանկարային առումով վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է թիրախավորել լայն, բազմազան և աճող լսարանը: Հաստատությունների և միավորումների կարողությունների ստեղծումը և ամրապնդումը, որը կապում է ժառանգության ոլորտը հասարակության լայն շերտերի հետ նույնչափ առաջնահերթություն ունի, որքան անհատ մասնագետների վերապատրաստումը: Հաջողության պարագայում արդյունքն ավելի կուռ կազմակերպչական համակարգերն են, ժառանգության ու շրջակա միջավայրի փոխշփումը՝ դրանով իսկ հնարավորություն տալով անհատներին, նույնիսկ նրանց, ովքեր դուրս են ժառանգությանն առնչվող մասնագիտությունների շրջանակից, առավել արդյունավետ գործողություններ իրականացնել:

Մտածելակերպի մեջ այս առաջխաղացումն ընդունվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից 2011 թ. կարողությունների կառուցման Համաշխարհային ժառանգության ռազմավարություն ընդունելիս³² (այսուհետ՝ ռազմավարություն):

Կարողությունների կառուցման եզրույթը

Ռազմավարությամբ հստակ սահմանված է կարողությունների կառուցում եզրույթը (որը հաճախ օգտագործվում է որպես վերապատրաստման հոմանիշ)՝ Համաշխարհային ժառանգության նախաձեռնությունների առնչությամբ, որն ավանդապես գերակշռող դիրք է ունեցել շառանգության ոլորտի միջին օղակի ներկայացուցիչների համար դասընթացների կազմակերպման ծրագրերում: Ռազմավարությունը ոչ միայն նախանշում է ժառանգության ոլորտում ներգրավված մասնագետներին, այլև թիրախային լսարանի լայն սպեկտրը, ինչը կարևոր է ժառանգության հուշարձաններն արդյունավետ և կայուն կառավարման համար:

Եթե կարողությունը «անհատների, կազմակերպությունների և համայնքների հնարավորությունն է իր գործառնությունների իրականացման, խնդիրների լուծման նպատակների սահմանման և դրանց հասնելու համար»³³, ապա կարողությունների կառուցումը Համաշխարհային ժառանգության արդյունավետ կառավարման համար կհանգեցնի՝

- գիտելիքների, կարողությունների, հմտությունների և մարդկանց վերաբերմունքի ամրապնդմանը ժառանգության կոնսերվացման և կառավարման համար ուղիղ պատասխանատվության սահմանմամբ,
- ինստիտուցիոնալ համակարգերի և գործընթացների բարեփոխմանը որոշում կայացնելու լիազորություն ունեցող անձանց և քաղաքականության մշակողների լիազորությունների ընդլայնման միջոցով,
- ժառանգության և դրա համատեքստի միջև գոյություն ունեցող առավել դինամիկ փոխհարաբերությամբ, որն իր հերթին առավել մեծ առավելությունների կհանգեցնի համապարփակ մոտեցման կիրառման շնորհիվ՝ ժառանգության օբյեկտների Համաշխարհային բացառիկ արժեքի արդյունավետ և կայուն պահպանության ապահովման նպատակով:

Կարողությունների կառուցում, լինի դա մասնագետների, հաստատությունների կամ համայնքների ու միությունների համար, դիտվում է որպես մարդակենտրոն փոփոխության վիճակ, որը ենթադրում է աշխատանք անհատական խմբերի հետ՝ մշակութային ժառանգության կառավարման մոտեցումներում բարեփոխումներ իրականացնելու համար:

Հաշվի առնելով Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի վարկանիշը և դրա հանդեպ ցուցաբերած քաղաքական աջակցությունը՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել Համաշխարհային ժառանգության կարողությունների կառուցման ռազմավարության իրականացման ուղղությամբ՝ ի շահ ժառանգության կոնսերվացման և կառավարման կարիքների բարելավման լայն շրջանակի: Անխոս ռազմավարությունը հստակ սահմանում է, որ կարողությունների կառուցման ուղերձը Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար կոնսերվացման և կառավարման լավ փորձի խթանումն է՝ առանց խտրականություն դնելու Համաշխարհային ժառանգության և մյուս հուշարձանների միջև³⁴: Ամենակարևորը, կարողությունների կառուցումը պետք է հասկանալ որպես ամենարդյունավետ միջոցով, որով Համաշխարհային ժառանգության կոմիտեն կարող է պաշտպանել Համաշխարհային բացառիկ արժեքը և Համաշխարհային ժառանգության հուշարձանների մյուս արժեքները, ինչպես նաև երաշխավորել փոխադարձ շահավետ դինամիկան ժառանգության և հանրության միջև: Խթանելով գոյություն ունեցող կարողությունները կամ ստեղծելով նորերը՝ առաջին քայլն է կատարվում ժառանգության կառավարման համակարգի (տես 4.5-րդ մասը) գնահատման արդյունքում ի հայտ եկած բացթողումներին հասցեական լուծում տալու ուղղությամբ: Կառավարման համակարգում էական փոփոխություններ պետք է ձեռնարկել, երբ

31. One of the five strategic directions of the World Heritage Committee.

32. UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B)
<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

33. http://www.undp.org/cpr/iasc/content/docs/UNDP_Capacity_Development.pdf

UNDP Capacity Development Practice Note, April 2006, p.3.

34. This is important because many practitioners, institutions and networks work in environments that cannot draw distinctions between these categories.

պարզ է դառնում, որ <<մարդակենտրոն փոփոխությունների>> հնարավորությունները սպառվել են: Կարողությունների կառուցման եզրույթը նախանշում է երեք հիմնական ոլորտներ, որտեղ կարողությունները գոյություն ունեն՝ կիրառողներ, հաստատություններ, ինչպես նաև համայնքներ ու միություններ: Սա է թիրախային լարանի բացահայտման հիմքը կարողությունների կառուցման նախաձեռնությունների իրականացման համար: Սա մի մոտեցում է, որը Համաշխարհային ժառանգությունը համապատասխանեցնում է այլ ոլորտների հետ, օրինակ՝ ՄԱԶԾ-ն ու առողջապահության և սննդի օգնության ոլորտի հասարակական կազմակերպությունները: Ստորև ներկայացվող աղյուսակը կապում է երեք թիրախային լարանները կրթական ոլորտների և կարիքների հետ՝ չնայած անխուսափելիորեն գոյություն ունեցող էական միաձափման միացման:

Աղյուսակ 7. Ժառանգության ոլորտի փաթեթը լարանները և կրթական ոլորտները

Որտեղ են կարողությունները.
Կարողությունների կառուցման
համար թիրախային լարան

Ոլորտի մասնագետներ (ներառյալ անհատներ և խմբեր, որոնք ուղղակի ներգրավված են Համաշխարհային ժառանգության հուշարձանների կոնսերվացման և կառավարման գործում)

Հաստատություններ (ներառյալ անդամ պետության ժառանգության ոլորտի կազմակերպություններ, Համաշխարհային ժառանգության կոմիտե, խորհրդատվական մարմիններ և այլ հաստատություններ, որոնք պատասխանատվություն են կրում կառավարման և կոնսերվացման համար պայմաններ ստեղծելու հարցում)

Համայնքներ և միություններ (ներառյալ տեղի համայնքները, որոնք ապրում են կամ մոտ են գտնվում հուշարձանների տարածքներին, ինչպես նաև մեծ թվաքանակով միությունները, որոնք մշակում են դրանք)

**Կրթության հիմնական
ոլորտները**

- Կոնվենցիայի կիրարկում (Նախնական ցանկեր, անվանակարգեր և այլն)
- Կոնսերվացման և կառավարման հետ կապված հիմնախնդիրներ. պահպանում, կիրարկում և մոնիթորինգ
- տեխնիկական և գիտական հիմնախնդիրներ
- ռեսուրսների օգտագործում և կառավարում
- վերոգրյալ կրթական ոլորտների համար քաղաքականության մշակում
- իրավական հարցեր
- ինստիտուցիոնալ շրջանակ /հարցեր (կառավարում, ապակենտրոնացում)
- ֆինանսական հարցեր
- մարդկային ռեսուրսներ
- գիտելիքներ
- փոխշահավետություն և կապը կայուն զարգացման համայնքների հետ
- խնամակալություն
- հաղորդակցություն /հանրահռչակում/

«Առանց հասկանալու և հանրության լայն շերտերի աջակցության՝ Համաշխարհային ժառանգության իրական պահպաններ հանդիսացող տեղական համայնքների հարգանքի և ամենօրյա խնամքի բացակայության, ցանկացած քանակությամբ գումար կամ փորձագետների բանակ բավարար չեն լինի հուշարձանների պահպանության ապահովման համար»:

Կոիչիրո Մացուրա

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր տնօրեն



© ՅՈՒՆԵՍԿՕ

<http://whc.unesco.org/archive/2007/whc07-31com-13be.pdf>

3 Կառավարման ընկալումը Համաշխարհային ժառանգության համատեքստում

Կարողությունների կառուցման ռազմավարությունների մշակում ազգային մակարդակով Ռազմավարությունն իր տարբեր առաջարկությունների միջոցով խորհուրդ է տալիս անդամ պետություններին մշակել կարողությունների կառուցման ազգային ռազմավարություն (եթե դա արդեն իսկ արված չէ)՝ տարածաշրջանային մակարդակով Համաշխարհային ժառանգության համար մշակված ռազմավարություններին համապատասխանեցնելու համար, հաճախ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2-րդ կատեգորիայի կենտրոնների տեսքով:

Մեջբերում՝ կարողությունների կառուցման համաշխարհային ռազմավարությունից

11. Կարողությունների կառուցման ազգային ռազմավարություններ Շահագրգիռ անդամ պետությունների համար օգտակար կլինի մշակել կարողությունների կառուցման ազգային ռազմավարություններ: Այդ ռազմավարությունները կարող են օգտագործել տարածաշրջանային մակարդակին հավասար նույն մեթոդաբանություններից մեկը, ինչպես նաև կարող են իրականացվել նախապատրաստման և պարբերական զեկույցների հարցաշարերին պատասխանելու ժամանակահատվածում: Նման վարժանք յուրաքանչյուր անդամ պետության համար հնարավորություն կտա լավագույնս հասկանալու ազգային առանձնահատուկ և հուշարձանի կարիքներից բխող կարողությունների կառուցումը: Անդամ պետությունը կարող է ուսումնասիրել, թե ինչպիսի ազգային, տարածաշրջանային և միջազգային կարողությունների հաստատություններ գոյություն ունեն, որոնք կարող են աջակցել ազգային և տեղական կարողությունների զարգացմանը: Այդ կարողությունների կառուցման ազգային ռազմավարությունները կարող են բավականին օգտակար լինել անդամ պետությունների համար՝ հնարավորություն տալով վերլուծել մարդկային ռեսուրսների ճշգրիտ կարիքները ազգային հաստատություններում (ոչ միայն ժառանգության ոլորտի, այլև զբոսաշրջության, պլանավորման, զարգացման և այլնի հետ գործ ունեցող կազմակերպությունների համար): Այդ ազգային ռազմավարությունները կարող են լավագույնս հարմարեցվել տեղում՝ երաշխավորելով, որ կարողությունների կառուցումն իրականացվում է այլ շահագրգիռ կողմերի համար Համաշխարհային ժառանգության հուշարձանների և որոշակի տեղական համայնքների մակարդակով: Ուրույն դեպքերում դա կարող է օգտակար լինել մեկից ավել երկրների համար, որոնք աշխատում են միասնական ռազմավարության վրա:

Կարողությունների կառուցման Համաշխարհային ժառանգության ռազմավարություն, էջ 20 (WHC-11/35.COM/9B)

Համաշխարհային ժառանգության պարբերական զեկույցների մաս կազմող հարցաշարերը կառավարման համակարգերի գնահատման հետ միասին (տես 4.5-րդ մասը) կհանդիսանան ցատկահարթակ՝ կարողությունների կառուցման նախաձեռնությունների նախանշման և համակարգման համար, որոնք ուղղված են պակասող կամ բացակայող կարողությունների ստեղծմանն ու ամրապնդմանը:

Նախադեպ

Կարողությունների կառուցման գործողությունները որպես պարբերական զեկույցների ներկայացման արդյունք

Պարբերական զեկույցների ներկայացման վարժանքը Աֆրիկայում բացահայտեց աղետների վրանգի բացակայությունը՝ որպես տարածաշրջանում հասցեական լուծում պահանջող հիմնահարց: Ժառանգության զարգացման կենտրոնն Աֆրիկայում և Աֆրիկայի Համաշխարհային ժառանգության հիմնադրամը, որպես արդյունքով պայմանավորված գործողություն կազմակերպեցին ժառանգության ոլորտում վրանգների դեպքում պարաստվածությունը նվիրված վերապատրաստման դասընթացներ, որոնք տեղի ունեցան 2013 թ. մայիսի 6-18-ը Ձիմբաբվեի ազգային համաշխարհային ժառանգության հուշարձանի տարածքում (Ձիմբաբվե): Տարածաշրջանի 18 երկրներից ժամանած 19-ը հոգի մասնակցեցին միջոցառմանը:



Աֆրիկայի պարբերական զեկույցի վարժանք (Ձիմբաբվե)

Աղբյուրը՝ Ի-ԿԿՈՍՄ

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

4-րդ մասը սկսվում է Ժառանգության համակարգերի ընդհանուր և Համաշխարհային Ժառանգության համատեքստում դրանց ունեցած դերակատարության վերլուծությամբ: Այնուհետ անդրադարձ է կատարվում դրանց բաղադրիչներին: Ներկայացվում են ընդհանուր դիտարկումներ, որոնց հաջորդում են օգտակար խորհուրդները և կառավարման համակարգերի գնահատման համար ձևավորված հարցերի ստուգման թերթիկները: Ի վերջո այն մեթոդական ցուցում է ներկայացնում Ժառանգության համակարգի փաստաթղթավորման և գնահատման առնչությամբ (4.5-րդ մաս):

4.1 Ժառանգության կառավարման համակարգը ընդհանուր և Համաշխարհային Ժառանգության համատեքստում

Ձեռնարկի այս հատվածը քննության է ենթարկում Ժառանգության կառավարման համակարգերը: Նախանշվում են ինը հիմնական առանձնահատկություններ (կամ «ամենացածր ընդհանուր հայտարարներ»), որոնք բնորոշ են Ժառանգության կառավարման բոլոր համակարգերին (այսինքն՝ այն վճռորոշ բաղադրիչները, որոնց կարելի է հանդիպել բոլոր օրինակներում): Այնուհետ ինն առանձնահատկությունները խմբավորվում են բաղադրիչներում (իրավական, ինստիտուցիոնալ հարցեր և ռեսուրսներ), երեք գործընթաց (պլանավորում, իրականացում և մոնիթորինգ) և երեք արդյունք (արդյունքներ, արտադրանք և բարեփոխումներ):³⁵

Աղյուսակ 8. Ժառանգության կառավարման համակարգերի սահմանման համար ընդհանուր շրջանակ

3 կատեգորիա	9 բաղադրիչ
3 բաղադրիչ	Իրավական, ինստիտուցիոնալ հարցեր և ռեսուրսներ
3 գործընթաց	Պլանավորում, իրականացում և մոնիթորինգ
3 արդյունք	Արդյունքներ, արտադրանք և բարեփոխումներ

Ինը բաղադրիչները հաճախ գործարկվում են մակրո մակարդակում, օրինակ՝ ազգային համատեքստում, երբ մի քանի կառավարման համակարգեր հասցեական լուծում են տալիս մեկից ավելի հուշարձանի կամ աշխարհագրական տեսանկյունից լայն շրջանի համար: Մյուս դեպքերում դրանք գործարկվում են մարզային հենքի կամ առանձին հուշարձանների համատեքստում, որն ունի իր առանձնահատկություններին բնորոշ մշակված կառավարման համակարգ: Հիբրիդ (խաչասերված) վիճակն ամենահաճախ հանդիպվող վիճակն է, որում մի քանի բաղադրիչներ գործարկվում են ազգային մակարդակով (օրինակ՝ իրավական հարթությունը), իսկ մյուսները՝ հուշարձանի կամ մարզի մակարդակով (օրինակ՝ Ժառանգությանը վերաբերող գործընթացներ):

4-րդ մասում առաջարկվող Ժառանգության կառավարման շրջանակը նպատակ ունի մշակութային հուշարձանների կառավարիչներին աջակցելու երկու հիմնական եղանակով՝

- ինչպես գնահատել Ժառանգության կառավարման համակարգերը, որոնք նպատակ ունեն պաշտպանել Ժառանգության արժեքները՝ ներառյալ Համաշխարհային բացառիկ արժեքը,
- ինչպես դիտարկել Ժառանգությանը վերաբերող յուրաքանչյուր հիմնահարց առավել լայն համատեքստում և խթանել ինտեգրված մոտեցումը Ժառանգության կառավարման համակարգում:

Համաշխարհային Ժառանգության հուշարձաններին վերաբերող՝ առանձին դեպքերում որպես հիմք առաջարկվում է պատասխանել անվանակարգի նախապատրաստման ձևաչափի 3.1 e, 4.5-րդ և 6-րդ բաժինների հարցերին (ԳՈԻ-ի 5-րդ հավելված):

Համապատասխանաբար, ձեռնարկի այս բաժինը քննության է առնում Ժառանգության համակարգերը ընդհանուր առմամբ, իսկ այնուհետ՝ Համաշխարհային Ժառանգության համատեքստում: Ինը համակարգային բաղադրիչներն ուսումնասիրվում են մանրամասնությամբ՝ առանձին վերնագրերի տակ (4.2–4.4-րդ մասեր):³⁶ Յուրաքանչյուր բաժին վեր է հանում կարևոր դիտարկումներ, օգտակար խորհուրդներ, գնահատման և, անհրաժեշտության դեպքում կառավարման համակարգի

35. This analysis was developed as part of an ICCROM research project undertaken with the World Heritage Centre and the other Advisory Bodies on 'Better Defining Appropriate Management Systems for World Heritage Sites' (2009).

36. Similar themes recur among the different sections but this is deliberate for the benefit of readers who consult specific sections and not the whole manual.

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

բարեփոխման համար չափորոշիչները՝ նպատակ ունենալով երաշխավորել, որ այն արդյունավետ է մշակութային ժառանգության կոնսերվացման, կառավարման համար, իսկ Համաշխարհային ժառանգության դեպքերում՝ խթանում է կոնվենցիայով և ԳՈՒ-ով սահմանված պահանջների բավարարումը: Այնուհետ 4-րդ մասում քննարկվում են 2-րդ մասում արդեն իսկ ներկայացված բազմաթիվ խաչվող թեմաներ՝ ներառյալ ժառանգության արժեքները, մասնակցային մոտեցումները և կայունության հարցերը:

Գնահատման գործընթացը մշտապես կշափի տեղում գոյություն ունեցող և հավուր պատշաճի փաստաթղթավորված ժառանգության կառավարման համակարգի առկայությունից. 4.5-րդ մասում մենք առաջարկում ենք այդ նպատակի համար մշակված ստանդարտ ձևաչափ: Համաշխարհային ժառանգության դեպքում փաստաթղթավորումը պետք է պարտադիր գործընթաց լինի հուշարձանի կամ հուշարձանախմբերի անվանակարգի նախապատրաստման գործընթացի համատեքստում (132.5-րդ պարբերություն և 5-րդ հավելված):³⁷ Այն նաև կհեշտացնի մոնիթորինգային ընթացակարգերի իրականացումը, ինչպիսին պարբերական զեկույցի ներկայացումն է:



Կառավարման համակարգի պարբերաբար գնահատման նպատակը (օրինակ՝ ինչպես Համաշխարհային ժառանգության պարբերական զեկույցների դեպքում է) համակարգի շարունակական արդյունավետ և բանիմաց կերպով գործարկման ստուգումն է: Փոփոխությունների անհրաժեշտության դեպքում, լինի դա կառավարման համակարգի բարեփոխումը կամ դրա՝ նոր կարիքներին համապատասխանեցիկությունը, գնահատումն ինքնին վեր կհանի, թե ինչ ծավալի փոփոխություններ է անհրաժեշտ ներմուծել: 4-րդ մասի հիմնական թեման է, թե ինչպես բարեփոխել կառավարման համակարգերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կառավարման գործիքների և կարողությունների կառուցման ունեցած դերակատարություններին (տես նաև 3.8-րդ մասը, և A և B հավելվածները):

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Նախադրյալ


Ժառանգության համակարգը մի կառուցվածք է, հաճախ մշտական հիմունքներով գործող, որն ունի երեք կարևոր բաղադրիչ. իրավական հենք, որով հիմնավորվում է դրա գոյությունը, ինստիտուցիոնալ, որը տեսք է տալիս դրա կազմակերպչական կարիքներին և ուղղումների ընդունմանը, ռեսուրսներ (մարդկային, ֆինանսական և մտավոր), որոնք օգտագործվում են դրա գործարկման նպատակով:

Միասին դրանք խթանում են պլանավորման, իրականացման և մոնիթորինգի միջոցառումների իրականացումը սովորաբար մեկ հուշարձանի կամ հուշարձանախմբի կամ տարածքի մակարդակով՝ հուշարձանների և դրանց հետ ասոցացվող արժեքների կայուն պահպանությունը և կառավարումը երաշխավորող արդյունքներ ստանալու նպատակով:



37. An overview of a management system may be independent or form part of a management plan. See Appendix A.

Ժառանգության կառավարման համակարգի գերնպատակը հուշարձանին բնորոշ արդյունքների ձեռքբերումն է: Այդ նպատակներին հասնելը էապես կախված է Ժառանգության գործընթաններից, որոնք ոչ միայն օգուտներ են բերում, այլև բարեփոխումներ իրականացնում կառավարման համակարգում՝ ի պատասխան բացահայտված բացթողումների կամ նոր պահանջների:³⁸



«Նախադրյալը» կիրառելի է նաև «ավանդական» համակարգերի դեպքում: Ժառանգության կառավարման որոշ համակարգեր հիմնված են ժամանակով փորձված և երբևիցե փաստաթղթային արտահայտություն չստացած մեթոդների վրա կամ կրոնական վարքագծի կանոններից բխող պրակտիկայի «խոստան»:

Միաժամանակ, շրջանակում բացահայտված ինը բաղադրիչները մշտապես կառանձնացվեն: Օրինակ՝ երեք տարրը (իրավական և ինստիտուցիոնալ հարթությունն ու ռեսուրսները) կարող են իրենց արտահայտությունը գտնել պարտականությունների բաշխման և համայնքում սոցիալական հիերարխիայի մեջ: Ավանդական կառավարման համակարգերը Ժառանգությանը նվիրված քննարկումների համատեքստում բավականին ցածր ուշադրության են արժանացել, սակայն ներկայում ճանաչվել են որպես Ժառանգության կառավարման կարևոր բաղկացուցիչ:

Նախադրյալ

Գործող ավանդական կառավարման համակարգերը

Բալիի մշակութային տեղանքապատկերը բաղկացած է բրնձի հինգ սարավանդից իրենց տառապանքներով, որոնք զբաղեցնում են 19500 հա տարածք: Տառապանքները ջրանցքներից և ամբարտակներից բաղկացած միմյանց փոխադրվող ջրի կառավարման համակարգի կիզկենսություն են՝ հայտնի «սուբակ» անվամբ, որը թվագրվում է 9-րդ դարով: «Սուբակ»-ը «Թրի Հիթա Կարանա»-ի փիլիսոփայական արտահայտությունն է, որը մեկտեղում է տարածքի ոգին, մարդկային աշխարհը և բնությունը:

«Սուբակների» մեծամասնությունը հիմնվում է գրավոր՝ «ավիգ-ավիգ» կոչվող օրենսգրքերի վրա, որոնք մանրամասն ներկայացնում են «սուբակների» անդամակցությունից բխող իրավունքներն ու պարտականությունները: «Ավիգ-ավիգները» կամ ավանդույթների վրա հիմնված օրենքները և կանոնակարգերը, ներառյալ սուբակների կառավարումը, մշակութային հուշարձանների պահպանությունն ավանդական եղանակով և կոնսերվացումը վում են Բալիի շրջանի 5-րդ կանոնակարգ, որով հստակ սահմանվում է տառապանքների նման սրբավայրերի պահպանության գոտիավորումը՝ հիմք ընդունելով տեղի ավիգ-ավիգները:

(Հղումը՝ <http://whc.unesco.org/en/list/1194>)



Բալիի մարզի մշակութային տեղանքապատկերը. «սուբակ» համակարգը որպես «Թրի Հիթա Կարանա»-ի փիլիսոփայության արտահայտում (Ինդոնեզիա)

Կառավարման համակարգի բազմազանությունը

Ժառանգության կառավարման համակարգերը բավականին տարատեսակ են, սակայն յուրաքանչյուր երկիր տեղում ունի դրանցից ներդրած մեկ կամ ավել համակարգեր (մենք դրանց կոչում ենք «կառավարման հիմնական համակարգեր»): Դրանցից շատերը Ժառանգության կառավարման համար ազգային կամ մարզային համակարգեր են՝ ներդրված որոշակի աշխարհագրական տարածքում: Դրանցից որոշները գործ ունեն ուրույն տեսակի մշակութային Ժառանգության հետ, որոշները (Նոր Զելանդիան որպես օրինակ) ինտեգրում են և՛ մշակութային, և՛ բնության Ժառանգության

38. This definition of a heritage management system emerged from research for the ICCROM paper 'Defining appropriate management systems for World Heritage sites', 2009, Chapter 4.5.2 p.53.

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

կառավարումը: Կառավարման այլ համակարգեր գործ ունեն որոշակի մշակութային հուշարձանի կամ հուշարձանախմբերի հետ: Մինչդեռ մյուսները դեռ կարող են ժամանակավոր բնույթ ունենալ, օրինակ՝ սահմանափակ ժամանակահատվածով գործընկերության արդյունք՝ որոշակի ծրագրի իրականացման համար:

Ազգային կամ տարածաշրջանային մակարդակով ժառանգության կառավարման համակարգի շրջանակը կարող է հիմնականում ընդլայնվել առավել խորը քաղաքականության մշակման, սահմանման, հուշարձանների նախանշման (ցանկերում) և պահպանության տեսանկյունից: Դրա նպատակը պահպանության տակ գտնվող հուշարձանների մշակութային արժեքների պահպանվածության պահովումն է:

Նման տեսակի կառավարման համակարգը կարող է զուգակշիռ լինել ազգային կամ տարածաշրջանային մակարդակով արդյունավետ կառավարման համար, օրինակ՝ պատմական քաղաքային կենտրոնների կամ մշակութային տեղանքապատկերների դեպքերում: Նմանօրինակ դեպքերում կառավարման համակարգի համար կարևոր է աշխատանքը պետական մարմինների, մասնավոր սեփականատերերի և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ մշակելով իրավական գործիքների և հաստատությունների, ինչպես նաև ռեսուրսների միավորման տարբերակներ: Պլանավորման հսկողությունը կարող է կախված լինել բավականին տարբեր իրավական համակարգերից, օրինակ՝ քաղաքային մարմինների կանոնակարգերից, որոնք կարող են իրենց մեջ պարունակել պլանավորման սահմանափակումներ և ամբողջ շրջանի համար մշակված զարգացման ռազմավարությունը, որը հնարավոր է կապակցված լինի հարկային արտոնություններին կամ մասնավոր սեփականատերերի և վարձակալողների անհամար դրամաշնորհներին:

Սա որոշակի ճշմարտություն է Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար: Հուշարձանի պահպանական գոտին, օրինակ, սովորաբար անդրադառնում է ոչ ժառանգության ոլորտների օրենսդրությանը, որը հավանաբար պետական կամ մասնավոր մի քանի կազմակերպությունների, ինչպես նաև սեփականատերերի պատասխանատվությունն է: Մեկ այլ օրինակ՝ մշակութային հուշարձանը, որը սերնդեսերունդ հանդիսացել է ավանդական կառավարման առարկա հնարավոր է չկարողանա բավարարել կառավարման նոր պահանջները, որոնք բխում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընգրկելուց կամ տնտեսական զարգացման բացասական ազդեցություններից: Համարժեք սցենարներ կարող են առաջանալ մշակութային տեղանքապատկերների դեպքերում, երբ հողօգտագործումը երբևիցե կանոնակարգված չի եղել:

Տվյալ բաժնում (4-րդ բաժին) ուշադրությունը սևեռված է մշակութային ժառանգության հիմնական կառավարման համակարգերի վրա, որոնց մասին հիշատակվել է սկզբում, սակայն ամբողջ տեքստում ընդգծվում է այլ համակարգերի կամ բաղադրիչների հետ դրանց ինտեգրման անհրաժեշտությունը:

Ինտեգրման անհրաժեշտությունը կարևոր նշանակություն ունի որոշումների կայացման գործընթացների վրա: Ինչպես ստորև ներկայացվող պատկերն է ցույց տալիս, ժառանգության կառավարման հիմնական համակարգը կարիք ունի փոփոխության ենթարկելու իր որոշումների կայացման գործընթացը այլ համակարգերից (կամ դրանց բաղադրիչներից) արդյունավետորեն ազդեցություններն ինտեգրելու համար: Դա ուսումնասիրվում է 3-րդ մասում և ճշմարտացի է հաստատութենական շրջանակների համար (4.2-րդ մաս):

Կառավարման տարբեր սցենարներ

Թիվ առաջին կառավարման սցենար

Որոշ հուշարձանների տիրապետումը և կառավարումը իրականացվում է բացառապես կառավարման հիմնական համակարգի միջոցով (ազգային օրենսդրությամբ պաշտպանության, խնամքի ապահովում՝ ժառանգության համար պատասխանատվություն կրող հաստատության կողմից այլ ռեսուրսների հետ միասին: Սա հաճախ իր արտահայտությունն է ստանում հուշարձանի սահմանների լավագույնս սահմանազատման միջոցով: Կոնսերվացման պլանավորումը, իրականացումը և մոնիթորինգն իրականացվում է նույն հաստատության կողմից: Օգուտները և արդյունքները հաստատվում են նույն կազմակերպության կողմից: Սա փոփոխական է, բայց գոյություն ունեն բազմաթիվ օրինակներ: Բոլոր որոշումները ընդունվում են հիմնական կառավարման համակարգի միջոցով: Այլ շահագրգիռ կողմերը հնարավոր է ցանկանում են իրենց ներդրումն ունենալ, սակայն ի վիճակի չեն:



Պատկեր 5: Պատկերում է թիվ առաջին կառավարման սցենարը

Կառավարումը մեկ համակարգի միջոցով

Եվ հուշարձանը, և պահպանական գործին կառավարվում են Հիմքաբլեի ազգային թանգարանների և հուշարձանների դեպարտամենտի կողմից: Այնուամենայնիվ, մեկնարկել է տեղի համայնքների ներգրավման ծրագիր:



© Գրասիելա Բոնասկեզ Բրիգաս

Մեծ Հիմքաբլեի ազգային հուշարձան (Հիմքաբլե)

Թիվ երկու կառավարման սցենար


Ժառանգության որոշ հուշարձաններ ունեն մի քանի սեփականատեր, բնակեցվածության մի քանի մակարդակ և օգտագործման մի քանի եղանակներ: Հուշարձաններից որոշները կամ տարածքները կարող են գտնվել հիմնական կառավարման համակարգի ուղղակի հսկողության ներքո, մինչդեռ որոշները կարող են պատկանել մասնավոր սեփականատերերի: Սեփականության ձևը կամ խնամքի պատասխանատվությունը կարող է պատկանել Ժառանգության տեղական լիազոր մարմնին կամ քաղաքային իշխանություններին, մասնավորապես, ցանկում չընդգրկված շինությունների և ենթակառուցվածքների դեպքերում:

Այս դեպքերում որոշումների կայացման գործընթացը կտարբերվի՝ վարչական և կառավարման մարմինների հետ միասին ներգրավվելով սեփականատերերին և օգտագործողներին: Համատեղ կամ կոլեկտիվ որոշումների ընդունման նոր մեխանիզմներ է անհրաժեշտ մշակել՝ չնայած որոշ որոշումներ կարող են ընդունվել անհատների կողմից:


Թիվ երեք կառավարման սցենար

Համաշխարհային ժառանգության և որոշ հուշարձանների տեսակների դեպքերում հուշարձանի, ինչպես նաև պահպանական գործու կառավարման գործում կարող է ընդգրկված լինել մի քանի սուբյեկտ: Սա նույնպես կարող է վերաբերվել Համաշխարհային ժառանգության համակարգից դուրս գտնվող հուշարձաններին, որոնք ունեն սահմանափակումներ սահմաններից դուրս գտնվող «հարգանքի» տարածքների պլանավորման մասով:

Տվյալ սցենարում որոշումների կայացման գործընթացը դառնում է առավել դժվար և որոշումների կայացման նոր հարթակի ստեղծումը՝ նախապայման:



Պատկեր 6: Պատկերում է թիվ երկու կառավարման սցենարը



Պատկեր 7: Պատկերում է թիվ երեք կառավարման սցենարը

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Դրանք կարող են ներկայացված լինել բազմաթիվ օրինակներով Համաշխարհային ժառանգության հուշարձանների համատեքստում: Ստորև ներկայացվածը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Բալի մարզի մշակութային տեղանքապատկերի համար մշակած որոշումների կայացման գործընթացն է՝ «Սուբակ» համակարգը «Թրի Հիթա Կարանա»-ի փոխտնայական արտահայտությունն է որպես բոլոր շահագրգիռ կողմերին միացնող օղակ:

Նախադրեալ

Համաշխարհային ժառանգության հուշարձանի վերաբերյալ որոշում կայացնելու պատկերը


Բալիի մշակութային տեղանքապատկերը բաղկացած է բրնձի հինգ սարավանդից իրենց տարածքներով, որոնք զբաղեցնում են 19500 հա տարածք: Այն բաղկացած է գյուղական նշանակության հողերից, որոնց տիրապետումը և կառավարումը իրականացվում է մասնավոր սեփականատերերի և կրոնական համայնքների տաճարների կողմից, իսկ որոշները կառավարվում են ժառանգության ոլորտի լիազոր մարմինների և քաղաքային իշխանությունների կողմից:

Որոշումների կայացման նոր մեխանիզմը հաստատվել է ավանդական և ժամանակակից կառավարման համակարգի բոլոր շահագրգիռ կողմերին միավորելու նպատակով՝ հուշարձանի առավել արդյունավետ կառավարման համար:


Բալիի մարզային կառավարությունը հաստատվել է կառավարման պլանը: Այս պլանը կառավարման համակարգ է ներմուծում, որը նպատակ ունի ապահովել ավանդական մեթոդների կայունությունը և փոխել ոչ հարկի զարգացումների ուղղությունը: Արդեն իսկ «տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ ադապտիվ համատեքստային կառավարման» հաստատված կառավարման մեթոդները կիրառվում և փոփոխության են ենթարկվում բալիական համատեքստին հարմարացվելու համար: Այն միավորում է անհատներին, կազմակերպություններին, գործակալություններին և հաստատություններին՝ կազմակերպչական տարբեր մակարդակներում ժողովրդավարական կառավարման ժողովի միջոցներով:

(Հղում՝ <http://whc.unesco.org/en/list/1194>)

Բալի մշակութային տեղանքապատկերի քարտեզ



Ղեկավար ժողովի (Բալի) ադմինիստրատիվ կառուցվածք



4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Ինչի համար են անհարժեշտ կառավարման համակարգերը

Կառավարման համակարգերի առկայությունը պայմանավորված է հուշարձանների պահպանվածության ապահովման և շահագրգիռ կողմերի համար արդյունքի ապահովմամբ: Մշակութային ժառանգության դեպքում հիմնական նպատակը մշակութային հուշարձանի կամ հուշարձանախմբերի ժառանգության արժեքների արդյունավետ պահպանությունն է՝ ի բարօրություն ներկա և ապագա սերունդների, ինչպես նաև ի շահ հանրության լայն շրջանակների:

Կառավարման համակարգը ներառում է պլանավորման, իրականացման և մոնիթորինգի փուլերը կոնսերվացման, հանրահոգսման և մատչելիության ապահովման միջոցառումների իրականացման նպատակով, ինչը ենթադրում է ավելի լայն օրակարգ, ինչպիսին կայուն օգտագործումն է և արդյունքների համատեղ օգտագործումը: Համաշխարհային ժառանգության ԳՈՒ-ն վեր է հանում կառավարման համակարգի ոլորտի նպատակները, որոնք առնչվում են Համաշխարհային ժառանգության հուշարձաններին և քննության առնվում ստորև:

Կառավարման համակարգերի վերաբերյալ հիմնական դիտարկումները

Կառավարման համակարգը ձևավորվում է մշակութային պատկերների փոփոխությունների, տրամադրության տակ եղած ռեսուրսների և այլ գործոնների ազդեցություններից: Դրանք կարող են փոփոխել և չհամապատասխանել հուշարձանի և շահագրգիռ կողմերի փաստացի կարիքներին: Կառավարման համակարգը պետք է կանոնավոր կերպով վերանայվի և թարմացվի հուշարձաններում և դրանց միջավայրում՝ հենց կառավարման համակարգում տեղ գտնող փոփոխություններին, անհապատասխանություններին և հակառակ զարգացումներին հասցեական լուծում տալու նպատակով:

Ստորև ներկայացվող դիտարկումները կօգնեն բացատրելու, թե ինչու ժառանգության համակարգը պետք է արձագանքող լինի արդյունավետության ապահովման համար՝

- Բազմազանություն. ժառանգության յուրաքանչյուր համակարգ պետք է եզակի որոշակի չափոց լինի, քանի որ ձևավորվել է ժառանգության պահպանվածության ապահովման համար առանձին կարիքներից, մշակութային համատեքստից և սոցիալական, տնտեսական և բնապահպանական գործոններից ելնելով (ԳՈՒ-ի 110-րդ պարբերություն, սույն փաստաթղթի 3.3-րդ մաս):
- Հստակություն և համակարգում. կառավարման համակարգը բաղկացած է փուլերից՝ գնահատելով գործընթացները և ձեռքբերումներն այնպես, որպեսզի հնարավորություն լինի ուղղելու շարունակական գործողությունները և իրազեկելու հաջորդ փուլի մասին: Կառավարման մյուս համակարգերի կամ դրանց բաղադրիչների հետ փոխմիացումը հնարավորություն է տալիս ունենալ ժառանգության արժեքների համակարգված և արդյունավետ վարչական արդյունք, իսկ Համաշխարհային ժառանգության դեպքում Համաշխարհային ժառանգության բացառիկ արժեքների մասով^{39, 40}:
- Վտանգների կառավարում. կառավարման համակարգը պետք է բավականին ճկուն լինի բնական աղետների, գոյություն ունեցող ֆինանսական կամ մարդկային ռեսուրսների անկայուն վիճակների նման անկանխատեսելի իրավիճակներին հասցեական լուծում տալու համար:
- Մասնակցային մոտեցում. բոլոր շահագրգիռ կողմերի կողմից հուշարձանների նշանակության և դրանց կարևորության գիտակցումը, ինչպես նաև վերջիններիս ներգրավվումը կառավարման գործընթացներում կարող է արմատապես փոփոխել կառավարման համակարգի գործառույթները: Ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացները դառնում են առավել հասցեական, ինչպես նաև հուշարձանի և շահագրգիռ կողմերի փաստացի կարիքներին համապատասխանող արդյունքներ և օգուտներ են բերում: Նման մոտեցումը խթանում է ժառանգության ունեցած կառուցողական դերակատարությունը հանրության և կայուն զարգացման գործերում (2.3-րդ մասը):
- Ժառանգության դերը կայուն զարգացման գործում. կայուն զարգացման գործընթացներում ժառանգության համար ակտիվ դերակատարության վերապահումը բազմաթիվ փոխշահավետ արդյունքներ է ապահովում՝ հնարավորություն տալով կառավարման համակարգին առավել արդյունավետությամբ հավասարակշռություն մտցնել տարբեր և միմյանց հետ մրցակցող կարիքների մեջ, ինչպես նաև տեղորոշել աջակցության նոր տեսակները, որոնք անհրաժեշտ են ժառանգության արժեքների պահպանության ապահովման համար (2.3-րդ մասը):

Կառավարման արձագանքող համակարգը պետք է արդյունավետորեն պատասխանի փոփոխություններին և կառավարի դրանք: Այդիսկ պատճառով կարևոր է հասկանալ, թե ինչպես է գործում

39. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2011. Preparing World Heritage Nominations. (Second edition). Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual) p.89.
<http://whc.unesco.org/en/activities/643/> (English web page).

40. Management planning (see Appendix A) can be a useful tool when a multilateral approach is required so long as the plan has priority or is integrated with other types of plans (e.g. visitor management plans, urban development plans) being used by the organizations involved. Above all, the management plan must be properly integrated into the heritage management system.

կառավարման համակարգը (տե՛ս 4.2 - 4.4-րդ մասերը) և ինչպես այն կարելի է հստակ նկարագրել (տե՛ս 4.5-րդ մասը): Դրանով հիմք է ստեղծվում գոյություն ունեցող բացթողումների բացահայտման, իսկ այնուհետ ենթակառուցվածքների մոնիթորինգի և զարգացման համար թիրախավորելով համապատասխան լարանը (տե՛ս 3.8 և 4.5-րդ մասերը):

Նախաբեմ

Հուշարձանի մակարդակով հիմնական կառավարման համակարգը

Համաշխարհային ժառանգության հուշարձան համարվող Մահաբոդի տաճարային համալիրը Բոդի Գայայում իրականացվում է Բոդի Գայայի տաճարային կառավարման կոմիտեի միջոցով, որը գործում է իրավական ակտի հիման վրա: Բոդի Գայայի տաճարի ակտը (Քիհար 1949 թ-ի 17-րդը), որն ընդունվել է 1949 թ. հունիսի 19-ին պետության կառավարության համար սահմանել էր դրույթներ, համաձայն որոնց պետք է ստեղծվեին Բոդի Գայայի տաճարային կառավարման կոմիտե՝ տաճարի և դրա տարածքում գտնվող այլ կառույցների կառավարման համար: Կոմիտեն գործում է Բիհարի պետական կառավարության անմիջական ենթակայության և հսկողության ներքո: Բոդի Գայայի տաճարային կառավարման կոմիտեի համար հաստատվեց կանոնադրություն, և այն այս դերակատարությունն իրականացնում է 1953 թ-ից: Այնուամենայնիվ, նյութակազմի կոնսերվացման հիմնախնդիրները կարգավորվում են Հնդկաստանի հնագիտական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից, որն ազգային մակարդակով հիմնական կառավարման համակարգ է կիրառում:

Մահաբոդիի տաճարային համալիրը
Բոդի Գայայում (Հնդկաստան)



© Յան Ֆրից

Բովանդակություն

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական դիտարկումներ

Ժառանգության արձագանքող, արդյունավետ և ամբողջական կառավարման համակարգը պետք է ի վիճակի լինի բավարարելու Համաշխարհային ժառանգության համակարգից բխող լրացուցիչ պահանջների մեծամասնությանը: Այս առանձնահատկությունները ներկայացված են ամբողջ ձեռնարկում, իսկ որոշները՝ ստորև.

Համաշխարհային ժառանգությունից բխող լրացուցիչ պարտավորություններ.

- Նախնական ցանկերի կազմում (1972 թ. կոնվենցիան⁴¹ և ԳՈՒ-ի 62-76-րդ պարբերություններ): Դրանք տարբերվում են ժառանգության ստանդարտ տեսք ունեցող ցանկերից՝ ելնելով Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելու ունեցած ներուժից:
- Անվանակարգային փաթեթի նախապատրաստում (ԳՈՒ-ի 120-133-րդ պարբերություններ և 5-րդ հավելված), որն ազգային և միջազգային մակարդակներով պահանջում է ներդրումների իրականացում և համակարգում:
- Ժառանգության պահպանության և կառավարման գործում արժեքների վրա հիմնված մոտեցման կիրառում: Այն պետություններում, որտեղ գոյություն ունի նույնիսկ մեկը, պարտադիր գործընթաց է մշակութային միջավայրում գոյություն ունեցող արժեքների և հուշարձանին առնչվող ոչ նյութական մշակութային ժառանգության գնահատումը՝ անկախ հուշարձանի ֆիզիկական նյութակազմից:
- Մասնակցային մոտեցման կիրառումը, որը համատարած չէ բազմաթիվ երկրներում:
- Պարբերական զեկույցի ներկայացման գործընթացի և Համաշխարհային ժառանգության կոմիտեի որոշումների հետ համապատասխանելիության ապահովում:
- Սերիական անդրսահմանային հուշարձանների առաջադրման և կառավարման համար նոր մեխանիզմների մշակում և այդ նպատակով գոյություն ունեցող կառավարման համակարգերի ադապտացում:
- Ստանդերտների կանխարգելմանն ուղղված կայուն կերպով թարմացվող ռազմավարություն, որով ապահովվում է կառավարման համակարգի առկայությունն ընդդեմ մեծ աղետների կամ կանխատեսելի գործառնական բացթողումների⁴²:

41. UNESCO. 1972. Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage. (World Heritage Convention). Article 11.
42. For more information on risk preparedness: UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2010. Managing Disaster Risks for World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual). <http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-630-1.pdf> (English web page).

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Լրացուցիչ դիտարկումներ.

- Հուշարձանի համար միջնաժամկետից երկարաժամկետ իրատեսական և միասնական տեսլականի մշակման անհրաժեշտություն, որը կարող է ընդունվել նաև միջազգային հանրության կողմից:
- Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելուց հետո կառավարման համակարգում առաջացող փոփոխություններին և մարտահրավերներին հասցեական լուծում տալու անհրաժեշտություն: Օրինակ՝ ցանկում ընդգրկվելու պատճառով անհրաժեշտ է կանխատեսել և պլանավորել այցելությունների թվաքանակի հնարավոր, ինչպես նաև հուշարձանի բացատրության և այցելուների սպասարկման ենթակառուցվածքների մասով պարտավորությունների աճը:⁴³
- Առավել ընդլայնված, արդյունավետ կառավարման և բարելավված արդյունքների համար նոր կամ բարեփոխված գործիքակազմի անհրաժեշտություն, երբ պետությունները գերադասում են օգտագործել գոյություն ունեցող հաստատությունները և ռեսուրսները՝ նոր վարչարարական գործողություններ իրականացնելիս, որը բխում է հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելուց:
- Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար կառավարման նորազմավարությունների ինտեգրման անհրաժեշտությունը երբեմն հանգեցնում է կառավարման նոր կառուցվածքների ներմուծմանը: Դրանք կարող են ձևավորել նոր, առանձին ստորաբաժանում գոյություն ունեցող հաստատության մեջ և/կամ ծրագրի իրականացման խումբ կամ հուշարձանի տարածքում գործող ինստիտուտ՝ իր առանձին լիազորություններով և ռեսուրսներով:
- Համաշխարհային ժառանգության կատեգորիաների ընդլայնված սահմանումներ: Հուշարձանների մեծ մասը ընկնում են կամ մշակութային կամ բնության ժառանգության կատեգորիայի մեջ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական ենթաբաժինները:⁴⁴ Սակայն «խառը հուշարձանների» կատեգորիաները և ենթաբաժինները, ինչպիսիք են «պատմական քաղաքային կենտրոնները» կամ «մշակութային տեղանքապատկերները» ներմուծեցին նոր սահմանումներ, որոնք դեռ պետք է հասկանալ:⁴⁵
- Համաշխարհային ժառանգության կարգավիճակին ընդդիմացող որոշ խմբերի և համայնքների հետ կանխարգելիչ իրազեկման քարոզարշավի իրականացման անհրաժեշտություն:

Սերիական կամ անդրսահմանյան հուշարձաններ⁴⁶

Սերիական կամ անդրսահմանյան /անդրազգային/ հուշարձանների անվանակարգերի դեպքերում առաջնահերթությունը պետք է լինի տեղում ներդրված և արդյունավետ աշխատող, յուրաքանչյուր բաղադրիչի պահպանությունն ու կառավարումը երաշխավորող մեխանիզմի առկայությունը: Հուշարձանի բոլոր մակարդակներում պետք է առկա լինի կառավարման համակարգը, որը պետք է երաշխավորի հաղորդակցության և համակարգման իրականացումը բոլոր բաղկացուցիչ հատվածներում մասնավորապես կապված՝

- կառավարման բոլոր բաղկացուցիչ հատվածների կառավարման ներդաշնակեցման հետ՝ հնարավոր Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության ընդհանուր նպատակներին հասնելու համար,
- հուշարձանին ուղղված սպառնալիքների բացահայտման և կանխարգելման հետ, և
- մոնիթորինգի և զեկույցի նախապատրաստման համակարգման հետ, մասնավորապես Համաշխարհային ժառանգության կոնվենցիայից բխող պահանջների հարաբերությամբ:

Մեկ սերիական, սերիական կամ անդրսահմանային հուշարձանի կառավարման համակարգն անհրաժեշտ է պարբերաբար վերանայել և ուժեղացնել ըստ նպատակահարմարության՝ դրա կառավարման ամբողջության և արդյունավետության ապահովման համար՝ որպես Համաշխարհային ժառանգության հուշարձան, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մասերի վրա ազդող փոփոխություններին հասցեական լուծում տալ:

Պետք է հստակ լինի, թե ինչպես կարելի է հասնել համակարգված կառավարմանը առանձին բաղադրիչների համար, հատկապես, երբ տարբեր կառավարիչներ և կառավարման համակարգեր են գործում: Համակարգված կառավարումը պետք է արդյունավետ լինի:

43. Visitor numbers do not always increase with World Heritage listing. See examples in James Rebank's study in World Heritage Global Analysis – the Economic Gain. <http://www.lakeswhs.co.uk/>

44. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2011. Preparing World Heritage Nominations. (Second edition). Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual) Chapter 1.3, p.19.

45. Mitchell, N., Rössler, M. and Tricaud, P.-M. (authors/eds). 2009. World Heritage Cultural Landscapes: A handbook for conservation and management. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 26). <http://whc.unesco.org/en/series/26/>

46. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2011. Preparing World Heritage Nominations. (Second edition). Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual) pp.50 and 90.



Կառավարման համար հատուկ լիազոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը բացակայում է, եթե գոյություն ունեցող կառավարման պլանը կամ համակարգերը աշխատում են ու կառավարման համակարգում համալիր մոտեցում է ներկայացված: Այնուամենայնիվ, այնտեղ, որտեղ կառավարման մեխանիզմները համարժեք չեն, նոր, ուրույն մեխանիզմներ անհրաժեշտ կլինեն, որոնք պետք է արդյունավետ լինեն:⁴⁷

Սերիական անվանակարգերը կարող են օգտագործվել անդրսահմանային հուշարձանների համար, ինչպիսիք են՝ ճիզվիտների միսիոներական ներկայացուցչությունները Գուարանի ցեղախմբերի տարածքներում (Արգենտինա և Բրազիլիա, 1984 թ.), 10 պետություն միավորող Ստորովեի գեոդեզիական աղեղը (2005 թ.) և Հռոմեական կայսրության սահմանները (Գերմանիա և Միացյալ Թագավորություն, 1987 թ., 2006 թ., 2008 թ.): Քննարկման փուլում գտնվող մյուս օրինակները ներառում են հավակնային անդրազգային ժառանգության միջանցքներ՝ Մետաքսե ճանապարհներին և Վիկինգների դարաշրջանին նվիրված սերիական անվանակարգերը, որոնք բաղկացած են Հյուսիսատլանտյան օվկիանոսից մինչև Բալթիկ ծով ձգվող հողային, ծովային և քաղաքային տեղանքապատկերներից:

Համաշխարհային ժառանգության կարգավիճակից բխող առավելությունները կառավարման հաջող պրակտիկայի համար

Համաշխարհային ժառանգության պահանջներից բխող ժառանգության կառավարման համակարգերի ադապտացումը կարող է հանգեցնել դրա կանոնավոր իրականացվող գործառնությունների բարելավմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով օգտվելու Համաշխարհային ժառանգության աջակցության համակարգից: Որոշ հնարավորություններ ներկայացված են ստորև.

- Համաշխարհային ժառանգության ընթացակարգերում և պահանջներում փոփոխությունները (օրինակ՝ Գործառնական ուղեցույցում վերանայումներ) ենթադրում են ճշգրտումների ներմուծում Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման համակարգերում: Այս գործընթացները կարող են համակցվել զուգահեռ իրականացվող վերանայումներով և թարմացումներով՝ ի պատասխան ազգային և տեղական մակարդակով իրականացվող փոփոխությունների, դրանք միասին կարող են երաշխավորել, որ կառավարման համակարգը արձագանքող է բոլոր տեսակի փոփոխություններին և դրանով իսկ մնում է բացարձակ արդյունավետ:
- Համաշխարհային ժառանգության կենտրոնի կայքէջում ներկայացված է ռեսուրսների բազմազանությունը, որի նպատակը անդամ պետություններին և Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման գործում ներգրավված անձանց աջակցությունն տրամադրելն է: Որպես օրինակ կարելի է նշել մեթոդական ձեռնարկները և այս հրատարակությունը, որը «Համաշխարհային ժառանգության կարողությունների կառուցման ռազմավարության» մասն է, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության փաստաթղթերը: Բացատրելով Համաշխարհային ժառանգության համակարգի պահանջները՝ այս հրատարակությունները քննարկում են մշակութային ժառանգության բոլոր տեսակների համար ընդհանուր հիմնախնդիրներ և օգտակար են Համաշխարհային ժառանգության համակարգից դուրս գտնվող մշակութային ժառանգության կառավարման գործում ներգրավված մարմինների համար:
- Համաշխարհային ժառանգության համայնքի հնարավորություններից օգտվելու հնարավորություն օգնում է նախասնշել նախադեպերը, որոնցից ժառանգության ոլորտի մասնագետները կարող են ներշնչվել և կարողությունների զարգացման ծրագրեր իրականացնել՝ իրենց անձնական և ինստիտուտների կարողությունների բարելավման նպատակով:
- Միջազգային համագործակցությունը հիմնարար սկզբունքներից և Համաշխարհային ժառանգության ամբողջ համայնքի ներհատուկ առաջնահերթություններից մեկն է: 1972 թ. կոնվենցիայի 7-րդ հոդվածը հստակորեն ամրագրում է. «Սույն կոնվենցիայի նպատակների համար մշակութային և բնության համաշխարհային ժառանգության միջազգային պաշտպանություն ասելով՝ հասկանում ենք միջազգային համագործակցության և օգնության համակարգի ստեղծում՝ կոնվենցիայի մասնակից պետությունների՝ այդ ժառանգության պահպանմանն ու հայտնաբերմանն ուղղված ջանքերին օգնություն ցույց տալու համար»⁴⁸:

47. See for further guidance: UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B) <http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

48. UNESCO. 1972. Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage. (World Heritage Convention).


4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

4.2 Ժառանգության կառավարման համակարգի երեք բաղադրիչները

Երեք տարրի սահմանում. գոյություն ունեն երեք հիմնական տարր, որոնք փոխկախվածության մեջ են գտնվում միմյանցից ցանկացած հիմնական կառավարման համակարգում: Այս պնդումը ճշմարտացի է ինչպես ժառանգության կառավարման ազգային համակարգի, այնպես էլ այն համակարգերի համար, որոնք ձևավորվել են առանձին հուշարձանների կամ հուշարձանախմբերի համար:


1. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Անձանց և կազմակերպությանը գործելու համար լիազորող մանդատ: Դրանով սահմանվում է, թե ինչ է նշանակում ժառանգություն և չափորոշիչ պահպանության և կառավարման համար, սովորաբար օրենսդրության միջոցով:



2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳ

Կազմակերպության կառուցվածքը, որով սահմանվում է գործառնական հենքը և աշխատանքային մեթոդները, ինչպես նաև ձեռնարկվելիք գործողությունները:



3. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ


Մարդկային, ֆինանսական և մտավոր կարողություններ, որոնցով ստեղծվում է գործելու հնարավորություն և առաջ են մղվում գործընթացները:



Տառ 1: ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Ակնարկ

Յուրաքանչյուր պետությունում գոյություն ունի մշակութային ժառանգությունը սահմանելու, բացահայտելու, պաշտպանելու և կոնսերվացնելու, ինչպես նաև այն մատչելի դարձնելու լիազորություն: Դրա ձևաչափը տատանվում է օրենքի հիման վրա գործող ֆորմալ մարմնից մինչև սերնդեսերունդ փոխանցվող չգրված ավանդույթները: Դա կարող է միջազգային կոնվենցիաների և կանոնադրությունների, ինչպես ազգային օրենսդրության, տարածքային կանոնակարգումների, տեղական օրենսդրությունը և տարածքային պլանավորման միաձուլվածքը: Անկախ ձևավորման տեսքից, այն ներկայացնում է իրավական համակարգ, որով սահմանվում է կառավարման համակարգի առկայությունը և լիազորություն է տալիս համակարգում ներգրավվածների գործելու:



Պատկեր 8: Ժառանգության բացահայտման, սահմանման, պաշտպանության և կոնսերվացման իրավական համակարգը

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժառանգության օրենսդրությունը

Ինչպես և այլ ոլորտների օրենսդրությունը տարբերակվում են միմյանցից և կարող են ունենալ մի քանի նպատակներ՝ կանոնակարգել, լիազորել, կանխարգելել, ապահովել (ֆինանսներ), հաստատել, շնորհել, հայտարարել կամ սահմանափակել⁴⁹:

Մշակութային ժառանգության կառավարման իրավական շրջանակները պետք է պաշտոնապես ամրագրված լինեն հատկապես ժառանգության համար մշակված օրենսդրությունում կամ կարող են լինեն ընդհանուր օրենսդրության «հավելյալ արդյունք», որը կիրառվում է ժառանգության կառավարման նպատակներով (և նման դեպքերում դժվար է սահմանվում): Որոշ իրավական նորմեր կարող են ունենալ ոչ պաշտոնական, չգրված կարգավիճակ, որոնք պահպանվել են ամբողջական կամ մասնակի: Դրանք կարող են հանդիսանալ հանրության հետ համաձայնության կամ սերնդեսերունդ բանավոր փոխանցվող պահպանված ավանդույթների վերջին արտահայտչամիջոցներ:

Իրավական հենքը մշտական հիմունքներով է ընդունվում, սակայն որոշները բացառության կարգով կարող են ժամանակավոր բնույթ կրել կամ ընդունվել որոշակի համագործակցության իրականացման նպատակներից ելնելով:

Բազմաթիվ իրավական ակտեր ունեն տարբեր ծագում և կիրառվում են կառավարման համակարգի տարբեր մակարդակների վրա (օրինակ՝ պետության սահմանադրություն, ազգային օրենքներ, օրենսդրությունից բխող տեղական մակարդակով ընդունված իրավական ակտեր, առանձին հուշարձաններին բնորոշ պայմանագրեր և համապատասխանություն մշակութային ժառանգության կոնվենցիաների և կանոնադրությունների հետ):

Ինչի համար են նախատեսված իրավական հիմքերը

Իրավական հիմքերը, անկախ դրանց ձևակերպված լինելու հանգամանքից, մշակութային ժառանգության պահպանության համար պետք է պարունակեն բավարար քանակությամբ իրավական և կանոնակարգող բնույթի գործիքակազմ: Դա իրավական հենքի շնորհիվ է, որ պետությունը հաճախ սահմանում է պաշտպանության կարիք ունեցող հուշարձանների շրջանակը՝ օգտագործելով չափորոշիչներ, որոնք կարող են բխել օբյեկտների տարիքից և ծագումից, նշված երկուսի միաձուլումից, կամ այլ որոշակի գործոններից:

49. . <http://en.wikipedia.org/wiki/Legislation>

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Օրենսդրության երկու տարբերակ է կիրառվում, որոնցից առաջինը վերաբերում է պետության համար հատուկ նշանակության ժառանգության վայրերին, որոնք գտնվում են հատուկ հսկողության տակ, ինչպես նաև ծավալային կառուցապատմանն առնչվող ընդհանուր կանոնակարգումը, որը կարող է ներառել ժառանգության վայրերի և տեղանքապատկերների պաշտպանությանը վերաբերող քաղաքականություններ: Կանոնակարգման նման տեսակները Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի կառավարման ամակարգի անբաժանելի մասն են կազմում: Սկզբունքային կարևորություն ունի դրանց հավասարաչափ և թափանցիկ կիրառությունը, որպեսզի բոլոր կողմերը ամբողջությամբ իրազեկված լինեն, թե ինչն է հնարավոր և ոչ՝ իրավական տեսանկյունից:

Մշակութային ժառանգության «օրենսդրության» աղբյուրները

Ստորև ներկայացվողները մշակութային ժառանգության ոլորտի բոլորի կողմից ընդունված օրենսդրության տեսակներն են՝

- սահմանադրական օրենքներ, երկրի սահմանադրությունից բխող ձևակերպումներ,
- ազգային, մարզային և տեղական մակարդակով ընդունված օրենսդրություն, որը բացառապես վերաբերվում է մշակութային ժառանգության պահպանությանը և կառավարմանը,
- ավանդույթներ և ընդունված պրակտիկա:

Ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը կարող է բխել այլ աղբյուրներից՝

- մշակութային ժառանգության պահպանության և կառավարման վրա ազդեցություն ունեցող այլ իրավական ակտեր. քաղաքաշինական, բնապահպանական, հողօգտագործման և արտահանման հսկողության մասին օրենքները դրանց օրինակներն են,
- միջազգային նորմերը, օրինակ՝ միջազգային կոնվենցիաները, ինչպիսիք են 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիան, որի դրույթները պետք է ընդգրկված լինեն ազգային օրենսդրությունում և քաղաքականությունների մեջ:

Դրանք այն օրենսգրքերն ու կանոնակարգող շրջանակներն են, որոնք հիմնական օրենսդրությունը չեն ներկայացնում, սակայն կարող են ազդել ժառանգության քաղաքականության և կիրառվող պրակտիկայի վրա: Դրանք ներառում են առանձին հաստատությունների կողմից ընդունված կանոնակարգումներ և հրամաններ:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական դիտարկումներ

Ժառանգության համար արդյունավետ իրավական հարթությունը հնարավոր է ունենա հետևյալ առանձնահատկությունները՝

- ցուցակների պատրաստման, պահպանության, տարածքի սահմանագծման և միջամտությունների քաղաքականության համար ընդունված հստակ դրույթներ,
- «մյուսների հետ աշխատելու մասին» հստակ հրահանգավորում՝ խորհրդատվությունների լայն շրջանակի և մասնակցության ապահովման համար,
- տեղական մակարդակով կայուն զարգացման դրույթների ներառումը ժառանգության կառավարման ամակարգի բոլոր ոլորտներում: Մշակութային ռեսուրսների օգտագործումից ստացված օգուտներով «կիսվելու» շնորհիվ է, որ հանրությունը ոտքի կկանգնի դիմագրավելու մարտահրավերներին և իր հերթին ստանձնելու ժառանգության հանդեպ պատասխանատվությունը,
- ազգային և մարզային մակարդակներով ընդունված օրենսդրությունների լավագույնս կիրառելու հնարավորությունն ի շահ մշակութային ժառանգության: Նոր Զելանդիայի պահպանության մասին 1987 թ. օրենքը ներկայացվում է որպես օրինակ. նախկինում ընդունված քսանհինգ իրավական ակտ միավորվեցին մեկ՝ բնության և պատմական ռեսուրսների պահպանության մասին օրենքում,⁵⁰
- իշխանության ապակենտրոնացման հնարավորություն, որպեսզի որոշում կայացնելու գործընթացն առավել մոտեցվի ժառանգության հուշարձաններին և լուծվեն հիմնախնդիրները,
- տարբեր վարչական գործիքակազմերի կիրառման մասին դրույթներ և մոնիթորինգի իրականացում դրանց ազդեցության մակարդակը որոշելու համար, ինչպես նաև նոր միջոցների ընդունում՝ մշակութային հուշարձանում և դրա կառավարման ամակարգում տեղի ունեցող փոփոխություններն արդյունավետ կառավարելու համար:

50. <http://www.legislation.govt.nz/act/public/1987/0065/latest/DLM103610.html>

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀԱՐՈՐԴՆԵՐ

- ▶ Եթե իրավական համակարգում տեղ են գտել հուշարձանի կառավարման համակարգի արդյունավետությունը կասկածի տակ դնող բացթողումներ, ապա ժառանգության կառավարիչները կարող են օրենքի բարեփոխում կատարել: Եթե այն իրատեսական չէ բարձր մակարդակով, ապա բարեփոխումների իրականացումը կարող է նպատակահարմար լինել տեղական մակարդակով, օրինակ՝ մարզային օրենք, կառուցապատման մասին օրենքներ, տեղական մակարդակի քաղաքականություն, գործընկերություն հաստատությունների միջև և կարողությունների զարգացման նպատակով:⁵¹ Օրինակ՝ պահպանական գոտու կանոնակարգման նպատակով բազմաթիվ երկրներ կիրառում են մարզային կամ տեղական խորհուրդների կողմից ընդունված օրենսդրությունը: Հաջողված «տեղական» լուծումները կարող են միջոցներ ապահովել ժառանգության ոլորտի ազգային օրենսդրության երկարաժամկետ բարեփոխման համար: Այդ իսկ պատճառով կարող են ազդեցություն ունենալ կառավարման համակարգի միջոցով:
- ▶ Մշակութային շառանգությունը մասնավոր տարբեր սեփականատերերի շահագործումից և/կամ հուշարձանի կամ շրջապատող տարածքում (օրինակ՝ քաղաքային պատմական կենտրոններ, մշակութային տեղանքապատկերներ) ինտենսիվ հողօգտագործումից առաջացած մարտահրավերների նման է, նրանց, որոնց հաճախ ի հայտ են գալիս բնության հուշարձանների լայնամասշտաբ կառավարման համակարգում: Բավականի մեծ գիտելիքներ կարելի է ստանալ բնության ժառանգության ոլորտից. օրինակ՝ կիրառվող մեխանիզմներ (օրինակ՝ քաղաքականություններ, մոնիթորինգ, օգտագործման պայմանագրեր և այլն), որոնցով թույլ է տրվում հուշարձանների և վերջիններիս շրջապատող տարածքներում ռեսուրսների համատեղելի և կայուն օգտագործումը, և որ հնարավորինս ապահովվի օգուտների բաշխումը:⁵²
- ▶ Օրենսդրությունը կայուն վիճակում չի գտնվում, այն զարգանում է: Անհրաժեշտ է պարբերաբար փոփոխության ենթարկել մտածելակերպը՝ ժառանգության օրենսդրությունում կամ այլ իրավական ակտերում մարտահրավերներին դիմագրավելու համար, որոնք կարող են ազդել առանգության կառավարմանը:
- ▶ Օրենսդրության բարեփոխման համար խորհրդատվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ ազգային մակարդակով մշակութային և բնության ժառանգության պահպանությանը վերաբերող առաջարկություններին⁵³, որոնք ընունվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի (1972 թ.) ընդունման հետ մեկտեղ, սակայն քիչ է հայտնի ժառանգության ոլորտի մասնագետներին:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՑԱՊՈՒՄՆԵՐ

- ▶ Արդյո՞ր ազգային սահմանադրությունում գոյություն ունի հիշատակում մշակութային ժառանգության մասին: Ո՞ւմ է վերապահված լիազորությունը: Նույնիսկ դաշնային համակարգերի դեպքում, օրինակ՝ Կանադան, բազմաթիվ լիազորություններ վերապահվում են ազգային մակարդակով, մինչդեռ Գերմանիան ապակենտրոնացնում է մարզային մակարդակով: Այլ երկրներում (օրինակ՝ Իտալիա) մշակութային ժառանգության պահպանությունը և դրա կազմակերպումը կարող է վերահսկվել տարբեր լիազոր մարմինների կողմից:
- ▶ Արդյո՞ր Ձեր ազգային սահմանադրությունը /օրենսդրությունը/ կարևորություն է տալիս պահպանությանը կամ նաև մատչելիության ապահովմանը, այլ մարմինների հետ աշխատելուն, և այլն: Արդյո՞ր գոյություն ունի մշակութային նախարարություն կամ արդյո՞ր մշակութային ոլորտը միացված է կրթության, հետազոտությունների, բնապահպանության կամ նույնիսկ սպորտի ոլորտին: Ինչպիսի՞ մակարդակում է գտնվում ժառանգության ոլորտը Ձեր երկրում այլ առաջնային ոլորտների հետ համեմատությամբ: Եվ արդյո՞ր մշակութային ժառանգության հանդեպ ստանձնած պարտավորությունների մակարդակը համապատասխանում է գործելու համար նախատեսված կարողություններին:
- ▶ Ինչ հարաբերակցություն ունի մշակութային ժառանգության ոլորտի օրենսդրությունն այլ ոլորտի օրենսդրությունների հետ համեմատությամբ:
- ▶ Արդյո՞ր իրավական հենքը երաշխավորում է, որ մշակութային ժառանգության օրենսդրությունը և պլաններն առավել առաջնային նշանակություն ունեն այլ ոլորտի օրենսդրությունների և պլանների նկատմամբ (օրինակ՝ զգալի մասնաշրջանի պլաններ): Կարևոր է համոզվել, որ ժառանգության ոլորտի միջոցառումները չեն ստորադասվում կառավարության այլ միջոցառումներին:
- ▶ Արդյո՞ր օրենսդրությունը կիրառվում է տեղում: Արդյո՞ր այն արդյունավետ է: Արդյո՞ր իրականացվում են քաղաքականությունները: Կարող է կարողությունների կառուցումը⁵⁴ օգնել անձնակազմին օրենսդրության և կանոնակարգումների իրականացման հարցում: Հաճախ օրենսդրությունը գոյություն ունի, սակայն չի կիրառվում, ինչը վնասում է մշակութային ժառանգությանը:

51. See: UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B)
<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

52. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2012. Managing Natural World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual) pp. 57-61.

53. UNESCO World Heritage Centre. 2011. Recommendation on the Historic Urban Landscape.
http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13087&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

54. See: UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B)
<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում



▶ Հուշարձանի արժեքների վրա ազդեցություն (և դրական, և բացասական) ունեցող շահագրգիռ կողմերը կարող են կախված լինել հուշարձանի ռեսուրսներից. արդյո՞ք ստուգել եք, թե նրանց կախվածությունը չի պահանջում իրավական շրջանակի լրամշակում: Ներկա օրենսդրությունը կարող է հետաձգել նրանց ներգրավումը: Գոյություն ունեն իրավական հարթության տարբեր շրջանակներ, որոնք կարող են այլընտրանքային մոտեցումներ առաջարկել: Տե՛ս «Գործիք 3. հարաբերությունները շահագրգիռ կողմերի հետ» բաժինը՝ խթանելով մեր ժառանգության գործիքակազմը փաստաթղթում, ինչն օգտակար է շահագրգիռ մարմինների և հուշարձանի հետ նրանց կանոնավոր փոխհարաբերությունների բացահայտման գործում:⁵⁵

Իրավական նոր համակարգ՝ Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարումը խթանելու համար

Հարավաֆրիկյան պետության կառավարությունը նոր օրենսդրություն է ընդունել Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարումը խթանելու նպատակով:

Նոր օրենքը նպատակ ունի միավորել Համաշխարհային ժառանգության կոնվենցիան և Հարավաֆրիկյան պետության օրենսդրությունը, ապահովել Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի դրույթների պարզադիր կիրառումը Հարավային Աֆրիկայում: Ծանաչել և Համաշխարհային ժառանգության հուշարձանների կարգավիճակ պրամադրել, ձևավորել լիազոր մարմիններ և լրացուցիչ գործառույթներ պրամադրել գոյություն ունեցող պետական մարմիններին, և պարականությունները, հարկապես այն սպորաբաժանումներին, որոնք ներգրավված են Համաշխարհային ժառանգության հուշարձանների ամբողջականության պահպանության գործում, լիազոր մարմինների շրջանակում ձևավորել խորհուրդներ և գործադիր անձնակազմ, մշակել ինստիտուցիոն կառավարման պլաններ Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար, կարգավորել հողային հարցերը Համաշխարհային ժառանգության մասով, ֆինանսական հսկողություն, աուդիտ իրականացնել և հաշվետվություններ ներկայացնել լիազոր մարմիններին, ինչպես նաև լուծում տալ այլ հարցերի:

1999 թ-ի No. 49. Համաշխարհային ժառանգության մասին օրենք, 1999 թ.

<http://www.info.gov.za/view/DownloadFileAction?id=70616>



Ռոբբեն կղզի (Հարավային Աֆրիկա)

© ՅՈՒՆԵՍԿՕ / Ֆ. Բանդարին/

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՍ

Հիմնական դիտարկումներ

Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 4-րդ հոդվածը նշում է, որ մշակութային և բնության ժառանգության (ինչպես նշված է 1-ին և 2-րդ հոդվածներում) հայտնաբերումը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին փոխանցելը յուրաքանչյուր անդամ պետության պարտավորությունն է: Ստեղծելով նոր օրենսդրություն կամ այն կապելով մյուս կառավարման համակարգերի օրենսդրությունների հետ՝ կբավարարվեն Համաշխարհային ժառանգության պահպանման արդեն իսկ գրանցված կամ գրանցման համար նախապատրաստված հուշարձանների համար: Ստորև ներկայացվող ցուցակը ներկայացնում է որոշ առաջնահերթություններ (հիշե՛ք, որ Համաշխարհային ժառանգության պահանջները շարունակաբար փոփոխվում են և անհրաժեշտ է մոնիթորինգի ենթարկել):

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար հնարավոր լրացուցիչ օրենսդրական միջոցառումներ (եթե գոյություն ունեցող կամ հարակից օրենսդրությունը բավարար չէ):

- Ազգային կամ մարզային մակարդակով ընդունված օրենսդրական կամ կանոնակարգող միջոցները պետք է երաշխավորեն Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությունը և կանխեն վերջինիս վրա բացասական ազդեցություն ունեցող փոփոխությունները, օրինակ՝ ազդեցությունների գնահատումը դարձնել օրենքի պահանջ:

55. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage Sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23). Tool 3: Relationships with Stakeholders, p.28. <http://whc.unesco.org/en/series/23/>

- Իրավական հենքն անհրաժեշտ է պաշտպանության և Համաշխարհային ժառանգության հուշարձանների տարածքներում, պահպանական գոտում, և ավելի մեծ մասշտաբով հարող տարածքում (հայտնի է նաև «ազդեցության գոտի» հասկացության անունով) տարբեր մակարդակներով սահմանափակումներ մտցնելու համար (ԳՈՒ-ի 103-107-րդ պարբերություններ):
- Նոր մեխանիզմներն (հավանաբար՝ նոր օրենսդրություն) անհրաժեշտ են Համաշխարհային ժառանգության վրա ազդեցություն ունեցող գործող օրենսդրության ինտեգրումն ապահովելու համար, մասնավորապես այն դրույթները, որոնք վերաբերում են համատեղ սեփականությանը, կառավարման տարբեր մակարդակներին (մարզային, ազգային, և այլն) և շարունակական հոգստագործմանը / ձեռնարկատիրական գործունեությանը/:
- «Սերիական» և /կամ «անդրսահմանային» հուշարձանների պարագայում առանձնահատուկ մեխանիզմներ են անհրաժեշտ (հավանաբար՝ նոր օրենսդրություն), որոնք հաշվի են առնում ներգրավված անդամ պետությունների օրենսդրության դրույթները:

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՎԱԾԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- ▶ Արդյունավետ կառավարման համակարգ ունենալու համար կարևոր է սահմանել այն աստիճանը, որով օրենսդրությունը խթանում է Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունը և այն մակարդակը, որով ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը կաջակցի հուշարձանին (և ընդհանուր առմամբ մշակութային ժառանգությանը): Սա բավականին նուրբ խնդիր է, քանի որ անհամապատասխանությունների հայտնաբերումը կարող է ներկայացվել որպես քննադատություն՝ ուղղված կառավարման համակարգում ընդգրկված բարձրաստիճան ղեկավարության հասցեին: Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը⁵⁶՝ փաստաթղթում ներկայացված «Գործիք 4 – ազգային համատեքստում» առաջարկվող կանոնավոր գնահատման իրականացումը հուշարձանի կառավարիչների համար կարող է միջոց հանդիսանալ գործընթացը և դրա արդյունքներն անաչառ և հեռանկարային դարձնելու համար: Եթե այս գործիքակազմը կիրառվի մասնակցային եղանակով, ապա այն կարող է հնարավորություն ընձեռել ժողովրդին ընկալել, թե ինչպես են ազգային և միջազգային քաղաքականությունները, օրենսդրությունը և կառավարության գործունեությունն ազդում Համաշխարհային ժառանգության հուշարձանների վրա:
- ▶ Կենտրոնական կառավարության քաղաքականություն մշակողները պետք է ամբողջությամբ իրազեկված լինեն կառավարման խնդիրներից: Եթե ոչ, ապա նախարարությունների մակարդակով օրինաստեղծ և հուշարձանի օգտագործման մակարդակների միջև կլինի բավականին թույլ կապ:
- ▶ Իրավական կարգավորումը կարելի է իրականացնել տարբեր ձևաչափերով՝ կախված յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրական համակարգից: Օրինակ՝ Հոմեական իրավունքի կամ Նապոլեոնի օրենսգրքի վրա հիմնված իրավական համակարգերը կարող են տարբերվել անգլո-սաքսոնյան ընդհանուր իրավունքի վրա հիմնված համակարգերից (հիմնված ավելի շատ նախադեպի, քանի ձևակերպված օրենքի վրա): Միջազգային համագործակցությունը (Համաշխարհային ժառանգության ոլորտում տարածաշրջանային կարողությունների կառուցում, անդրսահմանային հուշարձանների համար, և այլն) միայն կշահի նման տարբերությունների մասի իրազեկված լինելուց:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՏԱԳՐՈՒՄՆԵՐ

- ▶ Հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու օրվանից, արդյո՞ք անհրաժեշտություն կար Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության վերաբերյալ դրույթներ ներառել իրավական հարթությունում:
- ▶ Արդյո՞ք ընդունվել է նոր օրենսդրություն (ազգային մակարդակով ընդունված որոշումներ կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտեր)՝ պահպանական գոտիների և ավելի մեծ մասշտաբի տարածքներում գործունեության կանոնակարգման նպատակով:
- ▶ Արդյո՞ք օրենսդրության որևէ մակարդակով փորձ է արվել մասնավորեցնել, թե ինչպես պետք է Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանվածությունն ապահովվի կոնսերվացման և պաշտպանության իրականացման միջոցով:
- ▶ Արդյո՞ք օգտակար կլինի տվյալ պարտավորության հստակ ձևակերպումը:
- ▶ Արդյո՞ք ազգային կամ տեղական օրենսդրական մարմնի կողմից պաշտոնապես ճանաչվել են մշակութային ժառանգության ոլորտի միջազգային կոնվենցիաներ և պայմանագրեր:

56. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage Sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23). Tool 4: Review of National Context, p.32.
http://whc.unesco.org/en/series/23/

57. A useful overview of UNESCO and Council of Europe cultural heritage conventions appeared in an article in ASCHB proceedings in 2012: www.aschb.org.uk/index.asp

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Պահպանական գոյու կանոնակարգման համար կայուն օրենսդրական հենք

Սա այն դեպքն է, երբ պահպանական գոյու հաստատումը և կանոնակարգումը կատարվել է բավականին մեծ մակարդակով: Մշակութային արգելոցի պահպանական գոյին և տարածքը (2455,2 հա) հաստատվել է Լիտվայի Հանրապետության Սեյմի (խորհրդարանի) բանաձևով: Պահպանական գոյին հաստատվել է ֆիզիկական, տնտեսական կամ սոցիալական ցանկացած զարգացումներից՝ մշակութային արգելոցի մշակութային արժեքները, ինչպես նաև ընդհանուր բնապահպանական հավասարակշռությունը պաշտպանելու նպատակով:




Աղբյուր՝ ԻԿԿՈՍ

Կեռնավե հնագիտական վայր (Կեռնավեի մշակութային արգելոց) (Լիտվա)

Տարր 2: ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Ակնարկ

Մշակութային ժառանգության հուշարձանների վարչարարության պահանջները և որոշումներ կայացնելու անհրաժեշտությունը հաճախ հանգեցնում են ինստիտուցիոնալ հարության ստեղծմանը: Դրանք նախատեսում են միջոցառումների պլանավորում և իրականացում, ինչպես նաև աշխատանքային մեթոդների շարունակական վերանայումներ և բարեփոխումներ:



Պատկեր 9: Ինստիտուցիոնալ հարթությունը տեսք է տալիս վարչարարական կարիքներին

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՆ

Բավականին տարբեր են

Ինստիտուցիոնալ շրջանակները ձևավորվում են պաշտոնական օրենսդրության կամ հաստատված պրակտիկայի կամ երկուսի միախառնման հիման վրա: Հարթությունը կարող են ձևավորել մեկ կամ մի քանի կազմակերպություններ՝ փոխլրացնելով միմյանց: Վերջինը հավանաբար աշխարհագրական մեծամասշտաբ տարածքների, մեկից ավելի սեփականատերերի առկայության (քաղաքային կենտրոնների կամ տեղանքապետկերների) կամ Համաշխարհային ժառանգության պարագայում է: Ինստիտուցիոնալ հարթությունը հիմնականում միավորում է մշտական հիմունքներով գործող համակարգեր, սակայն երբեմն կրում է ժամանակավոր բնույթ՝ առանձին իրավիճակներին հասցեական լուծում տալու համար: Դրանք կարող են տարանջատվել (ա) ժառանգության կառավարման համար հիմնական պատասխանատվություն կրող մարմինների հիմնական կառավարման համակարգում, և (բ) առավել սահմանափակ շրջանակներով մարմինների, ինչպես հաջորդիվ ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 9. Ինստիտուցիոնալ հարթություններ. երկու լայն կատեգորիաներ հիմնված պատասխանատվության աստիճանի վրա

Ինստիտուցիոնալ հարթություններում տարբեր մակարդակներով ներգրավված կազմակերպություններ

ԱԶԳԱՅԻՆ	Օժանդակ աջակցության ընդհանուր աղբյուրները (հաճախ վերաբերում է ռեսուրսներին)
Կառավարման համար հիմնական պատասխանատվությունը (հիմնական կառավարման համակարգի մասն է կազմում) - կենտրոնական կառավարություն (նախարարություններ, ստորաբաժանումներ) - կիսակառավարական բնույթի կազմակերպություններ (կառավարվում են կենտրոնից) - տեղական և մարզային մակարդակ - օրենքի հիման վրա գործող (ենթագործառույթային) - մասնավոր հիմնադրամներ - խառը տեսակի հաստատություններ (ինտեգրված), համատեղ կառավարում - հուշարձանին բնորոշ՝ ներառյալ մասնավոր սեփականատերերը - կազմակերպված համայնքային խմբեր - ավանդական սեփականատեր հանդիսացող համայնքային խմբեր ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Կառավարման համար հիմնական պատասխանատվությունը (պլանավորում և իրականացում) - ՅՈՒՆԵՍԿՕ (Համաշխարհային ժառանգության կոմիտե / կենտրոն)	- Ժառանգության ոլորտից դուրս գտնվող պետական մարմիններ - իրականացնող գործակալություններ - վերապատրաստման հաստատություններ /համալսարաններ/ - հետազոտական ինստիտուտներ - մասնագիտական կազմակերպություններ - ֆինանսավորող կազմակերպություններ - ավանդական սեփականատերեր - համայնքային խմբեր - խորհրդատվական ծառայություններ Մասնակի պատասխանատվություն կառավարման համար (հիմնականում ռեսուրսներին վերաբերող) - կարողությունների կառուցում /հետազոտական ինստիտուտներ/ (օրինակ՝ ԻԿԿՈՒՄ, SPAFA) - մասնագիտացված կազմակերպություններ (օրինակ՝ ԻԿՕՄՕՄ, WAC) - ֆինանսավորող կազմակերպություններ (օրինակ՝ WMF, Getty) - խորհրդատվական ծառայություններ

Ինստիտուցիոնալ հենքերից շատերը ներկայում գոյություն ունեն, օրինակ՝

- առանձին հաստատություններ համապարփակ լիազորություններով,
- համատեղ կառավարմամբ «հիբրիդային» հաստատություններ, որոնք համատեղ պատասխանատվություն են կրում առավել լայն ասպեկտով,
- գործող կազմակերպություններ գործող հաստատություններում,
- հուշարձանին բնորոշ նախաձեռնություններ (հաճախ ոգևորված Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելով)
- վերակազմակերպում (օրինակ) ապակենտրոնացման նպատակով,
- «մասնավորի» ներգրավմամբ ձևաչափեր, մասնավորապես պետական սեփականություն հանդիսացող և վերջինիս կողմից կառավարվող, պետական մարմինների դեպքում մշակութային ժառանգությունը հսկող:

Քանի որ մասնավոր սեկտորից և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումներն աճում են ինստիտուցիոնալ համակարգերն ընդունում են տարբեր ձևեր և թիրախավորում են տարբեր կարողություններ: Դա կարող է կախված լինել դոնորներից ստացված աջակցությունից (կոմերցիոն ոլորտ), բարեգործական աղբյուրներից (ՀԿ-ներ, համայնքային խմբեր, ժառանգության ոլորտում գործող հիմնադրամներ և այլն) կամ այլ աղբյուրներից, ստացված՝ լայնածավալ մասնագիտական փորձաքննությունից, ծառայություններից և աշխատանքներից:

Ինչի համար են նախատեսված ինստիտուցիոնալ համակարգերը

Ինստիտուցիոնալ համակարգը պետք է ապահովի արդյունավետ որոշումների կայացումը և խթանի կառավարման համակարգի բոլոր գործընթացները (տես 4.3-րդ մասը): Դրան հասնում են հավասարակշռություն մտցնելով կազմակերպության գործունեության ճկունության շարունակականության ապահովման մեջ՝ անհրաժեշտ փոփոխություններին լուծում տալու համար:

Հիմնական դիտարկումներն ինստիտուցիոնալ համակարգի համար

Ստորև ներկայացվող դիտարկումներից բոլորը նպատակ ունեն ստեղծել և պահպանել արդյունավետ ինստիտուցիոնալ հենք ժառանգության համար.

- առավել լայն կառավարման համատեքստում մանրամասն ճշգրտումների իրականացում (ներառյալ օրենսդրություն, ինստիտուցիոնալ մեխանիզմներ և ժողովրդավարական գործընթացներ, տես 74-րդ պարբերությունը կառավարման վերաբերյալ),

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

- նոր հայեցակարգերին, միտումներին և պահանջներին արձագանքող և ճկուն համակարգ,
- վարչարարական ապակենտրոնացում, ըստ անհրաժեշտության, որը որոշում կայացնելու լիազորություն ունեցող անձանց կմոտեցնի հուշարձանի խնդիրներին՝ խթանելով համայնքային մասնակցությունը և կայուն զարգացման մոտեցումների կիրառումը,
- պատշաճ մակարդակով ուշադրություն դարձնել օրեցօր աճող և մի քանի կազմակերպություններից բաղկացած ինստիտուցիոնալ համակարգերին, որոնցից բխում է երկու հիմնական պարտավորություն՝
 - կառավարման ոլորտում հաջորդական մարտահրավերներին հասցեական լուծում տալու համար նոր հմտությունների անհրաժեշտություն,
 - գործողությունների կրկնակի իրականացման վտանգը (անօգուտ կրկնություն), ցածր մակարդակի հաշվետվողականությունը և թափանցիկության մակարդակի նվազումը՝ ելնելով համակարգի բարդությունից:
- բաց կազմակերպչական կառուցվածք և բավարար գործառնական կարողություն ինտեգրված մոտեցման, այսինքն մյուսների հետ աշխատելու խթանում: Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավումը կայունության և կայուն զարգացման գործընթացներում ժառանգության կատարած ներդրումների (և ստացած օգուտների) հիմնախնդիրների (տես 2.3-րդ մասը) անբաժանելի մասն է:
- ինստիտուցիոնալ համակարգի համար ուղղորդիչ սկզբունքների ամբողջություն: Դրանք պետք է խթանեն լիազորությունների տրամադրումը, մասնակցությունը և ներգրավումը, եթե ակնկալում ենք դրական փոփոխություն՝ այդ ամենի հետ միասին ընդգծելով հակառակ միտումները (մարզինալացում, խտրականություն, լիազորություններից զրկում, բացառում և ծայի իրավունք չունեցողների նկատմամբ արհամարական վերաբերմունք): Հնարավորության դեպքում կառավարման համակարգի կիրառման դեպքում չպետք է լինեն պասիվ հասցեատերեր:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԻՊԵՐՈՒՄԵՐ

- ▶ Ինստիտուցիոնալ հարթությունը, որով բաշխվում է որոշում կայացնելու լիազորությունները և պատասխանատվությունը կազմակերպության մեջ՝ միաժամանակ պահպանելով հստակ դերակատարությունները և հաշվետու լինելու հանգամանքը, կարող է արդյունավետ լինել,
- ▶ Ինստիտուցիոնալ հարթությունը, որը ներդրում է իր թիմի մտավոր զարգացման գործում (օրինակ՝ անձնակազմի վերապատրաստում, հետազոտական նախաձեռնություններ) և իր լուծման է ներդրում պահպանության քննարկման գործում, կարող է ետ բերել այդ ներդրումներն արդյունավետության մեծացման և իր ենթակայության տակ գտնվող մշակութային ժառանգության հուշարձաններին աջակցելու նոր ձևաչափերի տեսքով:
- ▶ Եթե ինստիտուցիոնալ հարթությունում տեղ են գտնում բացթողումներ և եթե վերակազմակերպումը հնարավոր չէ, ապա գործընկերությունը կարող է հանդիսանալ «ինստիտուցիոնալ» կարողությունների զարգացման ձևաչափ կազմակերպության կառուցվածքի շրջանակի և ճկունության ընդլայնման համար (տես 3.8-րդ մասը):
- ▶ Նմանապես, ժառանգության կառավարման պլանավորումը (Հավելված Ա) կարող է օգտակար լինել հիմնական ինստիտուցիոնալ համակարգներում բացթողումները հաղթահարելու համար՝ որոշում կայացնելու մեխանիզմների համար դրական արձագանքով: Այն Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար դարձել է կիրառման հիմնական գործիք:
- ▶ Առանձին հուշարձանների վերաբերյալ գիտելիքների կուտակումը և պահպանումը, ինչպես նաև նախկինում իրականացված միջոցառումների մասին տեղեկատվության հավաքագրումը կարևորվում է հետագա գործողությունների համատեքստում: Ինստիտուցիոնալ հարթությունը և անձնակազմը (տես 4.3-րդ մասը, Ռեսուրսներ) կարևոր դերակատարություն ունեն գիտելիքների շարունակականության երաշխավորման համար: Ցանակացած վերակազմակերպում պետք է այնպիսի փուլային գործընթաց լինի, որ փորձագետների կորուստ տեղի չունենա: Հավասարապես արտաքին պայմանագրային աշխատողների և մասնագետների օգտագործումը պետք է ուղեկցվի փաստաթղթավորման նկատմամբ ներկայացված խիստ և ներքին վերահսկողության բավարար պահանջներով:
- ▶ «Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը» փաստաթղթի «Գործիք 3. Խարտեքությունները շահագրգիռ կողմերի հետ» բաժնում առաջարկվող սխեմատիկ գնահատման պես միջոցառումը կարող է հավաքագրել պահանջվող տեղեկատվություն ինստիտուցիոնալ հարթության բարեփոխման համար:⁵⁸
- ▶ Միախառնված ինստիտուցիոնալ համակարգը, որը միավորում է ժառանգության ոլորտում գործող պետական կազմակերպություններին և նոր միավորումներ, կարող է ծառայել Համաշխարհային ժառանգության համատեքստում ստանձնած պարտավորություններին հասցեական լուծում տալու նպատակով: Դրանք կարող են գործել մշտական հիմունքներով կամ որոշակի ժամանակահատվածով՝ ներգրավելով արտաքին գործընկերություններին որոշակի նպատակներին հասնելու համար, որոնք ձևավորում են դրական պրակտիկա հուշարձանի երկարաժամկետ կառավարման համար (տես, օրինակ, Հերկուլանումի (Իտալիա) նախադեպը, էջ 111):
- ▶ Եթե ինստիտուցիոնալ հարթությունը հիմնված է ավանդական /ձևավորված/ պրակտիկայի վրա, ավելի քան կարևոր է, որ դրա վարչարարական ձևաչափը ունենա ընդհանուր համաձայնություն:

58. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage Sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23). Tool 3: Relationships with Stakeholders, p.28. <http://whc.unesco.org/en/series/23/>

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՄԱԿՐՈՒՄՆԵՐ

- ▶ Արդյո՞րք ինստիտուցիոնալ հարթությունն ունի փաստաթղթային հստակ ձևակերպում, թափանցիկ է և մատչելի: Ի թիվս այլ հարցադրումների սա կարևոր է հաշվետվողականության ապահովման և անձնակազմի պատճառաբանության, ինչպես նաև մասնակցային մոտեցման խթանման համար:
- ▶ Արդյո՞րք մասնակցության եղանակով նախանշվել են արժեքները (տե՛ս Հավելված Ա), արդյո՞րք դրանց պաշտպանության համար նույնպես վերանայվել է ինստիտուցիոնալ հարթությունը:
- ▶ Արդյո՞րք ինստիտուցիոնալ ինքնիշխան կարողությունները (ինքնավարությունը, չափսը, արդյունավետությունը, հակազդելու հատկությունը և այլն) համապատասխանում են մշակութային հուշարձանների կարիքներին: Միևնույն ժամանակ դրանց միջավայրը լայն իմաստով (պահպանական գոտի և դրանից դուրս), և սոցիալական, տնտեսական, և բնապահպանական ոլորտից բխող պարտավորությունները:
- ▶ Արդյո՞րք հաստատություն(ներ)ն ի վիճակի է գրավել ոչ միայն ֆինանսական ռեսուրսներ գնահատված տարբեր աղբյուրների բազամազանությունից:
- ▶ Արդյո՞րք առատ են ինստիտուցիոնալ համակարգի վարչական ռեսուրսները ֆինանսավորողների, վերադաս կառավարման մարմինների, անձնակազմի և թիրախային խմբերի (նաև ապագա սերունդների) հանդեպ հաշվետվողականության ապահովման համար:
- ▶ Ստուգե՞ք հաստատությունում պատասխանատու մարմինին: Այն պետք է լիազորված լինի հուշարձանի տարածքում Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանը և չի կարող մեկուսացվել ավելի ցածր մակարդակի պարտավորություններով: Սա վճռորոշ նշանակություն ունի:
- ▶ Արդյո՞րք գոյություն ունի ներքին կարողություն հաստատությունը նոր և նորարարական գործիքակազմով բարեփոխելու համար:

ԻՆՍԻՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հիմնական դիտարկումներ

1972 թ. կոնվենցիան հղում է կատարում վարչարարական դրույթների անհրաժեշտությանը, սակայն չի սահմանում ինստիտուցիոնալ համակարգի առանձնահատուկ պահանջներ կամ առանձնահատկություններ (միգուցե այն պատճառով, որ դրանք տարբեր երկրներում տարբեր բնույթի են):

Անդամ պետությունը պետք է ներկայացնի մեկ հաստատությունը, որը պետք է գործի որպես Համաշխարհային ժառանգության բոլոր խնդիրների համար հանգուցակետ և պատասխանատվություն կրի Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ հաղորդակցման համար: Պարբերական զեկույցների ներկայացման համար, մասնավորապես, որոշակի անդամ պետությունից նշանակվում է կառավարման հիմնական պատասխանատվություն կրող հաստատությունից «պատասխանատու անձ» Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բոլոր հուշարձանների համար (տե՛ս 3.5-րդ մասը):

Իրանականում, Համաշխարհային ժառանգությանը վերաբերող բոլոր գործընթացներում հաստատություններն ունեցել են հիմնական դերակատարություն՝ սկսած նախնական ցանկի նախապատրաստումից մինչև Համաշխարհային ժառանգության հուշարձանի առօրյա կառավարումը: Իհարկե, Համաշխարհային ժառանգության հուշարձանների արդյունավետ կառավարումը կախված է հաստատությունների կողմից կոնվենցիայի և Գործառնական ուղեցույցի՝ կառավարման յուրաքանչյուր մակարդակում ներգրավվածության աստիճանից:

Համաշխարհային առանգության արդյունավետ կառավարումը նաև կախում ունի հաստատությունների բավարար մակարդակով ճկուն լինելու հանգամանքից, մասնավորապես՝

- Որոշակի հուշարձանի հետ կապված մի շարք հաստատությունների հետ աշխատելու ունակությունից՝ սկսած անվանակարգի նախապատրաստումից մինչև ընդգրկումից հետո կառավարումը,
- Պահպանելու հանդեպ հարգանք (օրինակ՝ մոնիթորինգի անցկացման պատասխանատվություն, «պահպանվածության վիճակին» հետևում, առաքելությունների իրականացման խթանում, պարբերական զեկույցների ներկայացում, ԳՈՒ-ի պահանջների կատարում և ՀԲԱ-ի պահպանության անհրաժեշտություն՝ որպես կառավարման ելակետ, և
- Համաշխարհային ժառանգության համակարգի նոր և ստեղծվող հայեցակարգերի տեղայնացում (օրինակ՝ կարողությունների զարգացման համար մոտեցումների բարեփոխումներ, դիսկերի կառավարում և կայուն զարգացում, ինչպես նաև կլիմայի փոփոխության ազդեցություն):

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Մշակութային ժառանգության ոլորտի կառավարում

«Կառավարումը» դարձել է ժառանգության ոլորտի հիմնական անհանգստության առարկան, քանի որ ժառանգության ոլորտի պետական մարմինները և հասարակական կազմակերպություններն իրականացնում են իրենց քաղաքականությունները և միջոցառումները, որպեսզի կանխարգելվեն մասնավոր սեկտորում տեղ գտած այնպիսի պատահարներ, ինչպիսիք են վատ կառավարման պատճառով մի քանի կարևոր ընկերությունների կործանումը:

Լավ կառավարումը վերաբերում է կառավարման մարմինների, քաղաքացիների և ժողովրդավարական գործընթացների միջև գոյություն ունեցող հարաբերություններին, ինչպես նաև ղեկավարման արդյունավետ, գործառնական ձևաչափերի ներմուծման հնարավորությանը:

Հետազոտությունով⁵⁹ առաջարկվում է, որ ժողովրդավարական պետական հաստատությունների համար OECD-ի կողմից բացահայտված սկզբունքները կիրառելի են մշակութային ժառանգության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և պետական կառավարման ոլորտի, ինչպես նաև ժառանգության հուշարձանների տարածքում կամ դրա հարևանությամբ ապրող քաղաքացիների համար)։

- հարգանք օրենքի գերակայության հանդեպ,
- բաց, թափանցիկ և հաշվետու ժողովրդավարական հաստատություններ,
- քաղաքացիների հետ հարաբերություններում արդարություն և հավասարություն՝ ներառյալ խորհրդատվության և մասնակցության մեխանիզմները,
- արդյունավետ, ներգործուն ծառայություններ,
- հստակ, թափանցիկ և կիրառելի օրենքներ և կանոնակարգեր,
- կայունություն և համախմբվածություն քաղաքականության ձևավորման հարցում, և
- վարվեցողության ստանդարտներ:⁶⁰

OECD-ի կողմից բացահայտված առաջնային ոլորտները նույնպես կարևոր են ժառանգության ոլորտի համար. էլ. կառավարում, կանոնակարգման բարեփոխումներ, պետական հատվածի քյուջետավորում և կառավարում, քաղաքացիների մասնակցություն քաղաքականության մշակմանը, ինչպես նաև պայքարը կոռուպցիայի դեմ:

ՄԱԶԾ-ի համար լավ կամ ժողովրդավարական կառավարումը նշանակում է «իմաստալից և ամբողջական քաղաքական մասնակցություն. հիմնականում այն մարդիկ, ովքեր ավելի շատ բան ունեն ասելու իրենց կյանքի վրա ազդող որոշումների ընդունման ժամանակ»:⁶¹

Կառավարման խթանումը մշտապես կախված կլինի տեղական մակարդակով կատարած ներդրումներից և ստանձնած պարտավորություններից: Միջազգային ուղղորդումը կատարվում է՝ ելնելով երկրին բնորոշ հանգամանքներից և ինստիտուցիոնալ առանձնահատկություններից, իսկ գլոբալ մակարդակով եզրահանգումները չեն կարող կիրառվել ուղղակի: Միայն տեղից ստացվող տվյալները կարող են որոշիչ լինել փոփոխությունների իրականացման համար, և միայն տեղական ենթակառուցվածքների միջոցով է, որ համապատասխան հարցադրումները կարող են նախանշվել և իրականացվել ու կանոնակարգող բարեփոխումներ իրականացվել:

Հիմք ընդունելով կորպորատիվ սեկտորից բխող սահմանումը⁶² մենք մշակութային ժառանգության ոլորտի կառավարման համար կարող ենք առաջարկել հետևյալ ձևակերպումը՝ Ընդհանուր առմամբ կառավարումը ենթադրում է տնտեսական և սոցիալական նպատակների ու անհատների, համայնքային նպատակների միջև հավասարակշռության ապահովում: Վարչարարության համակարգը ներդրված է ռեսուրսների արդյունավետ կիրառումը խրախուսելու և հավասարապես նման տեսակի ռեսուրսները հիմնավորված օգտագործելու, հաշվետվողականություն ապահովելու նպատակով: Նպատակը անհատների, մշակութային ժառանգության և հանրության շահերի միմյանց հնարավորինս համապատասխանեցումն է:

59. Principles of good governance from several international heritage-related agencies, trusts and organizations are used to develop a set of principles for the cultural heritage sector in: Shipley, R. and Kovacs, J.F. 'Good governance principles for the cultural heritage sector: lessons from international experience', in: Corporate Governance, Vol. 8 Iss: 2, 2008, pp. 214–228. Emerald Group Publishing Limited.

60. http://www.oecd.org/about/0,3347,en_2649_37405_1_1_1_37405,00.html

61. <http://www.undp.org/content/undp/en/home/ourperspective/ourperspectivearticles/2011/05/20/why-good-governance-makes-for-better-development.html>

62. Claessens, S. 2003. Corporate Governance and Development. Global Corporate Governance Forum, Focus I. Washington, DC, International Bank for Reconstruction and Development/Bank.

Տարր 3: ՌԵՍՈՒՐՍՆԵՐ


Ակնարկ

Ռեսուրսները գործարկման հենքն են և հանդես են գալիս երեք հիմնական տեսքով՝ մարդկային, ֆինանսական և մտավոր: Դրանք ինստիտուցիոնալ հենքին հնարավորություն են տալիս կիրառել օրենսդրությամբ սահմանված լիազորությունները, ինստիտուցիոնալ կամ իրավական հենքից ավելի շատ են փոփոխության ենթարկվում:

«Կառավարման» բազմաթիվ սահմանումներ մարդկանց և ռեսուրսներին դարձնում են կենտրոնական հիմնահարց՝

«Կառավարումը մի գործունեություն է, որը մարդկային և այլ ռեսուրսների միջոցով ի կատար է ածում որոշակի գործողություններ»:

«Կառավարումը՝ մարդկային գործունեության հիմնական տեսակներից մեկն է, որն ի հայտ է գալիս մարդկանց կողմից գործողության նկատմամբ պատասխանատվություն ստանձնելիս և գիտակցորեն դրա ընթացքն ու արդյունքները հղկելիս»⁶³:



Պատկեր 10: Ռեսուրսներ – մարդկային, ֆինանսական և մտավոր-գործունեության ապահովման հենքը

ՌԵՍՈՒՐՍՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Դրանց մատչելիությունը և օգտագործումը բավականին տարբերվում են

Մարդկային ռեսուրսներ

Պետական կառավարման համակարգի ենթակայության տակ գտնվող մշակութային ժառանգության կառավարման համար սովորաբար հաստատություններն իրենք են ապահովում մարդկային ռեսուրսների առկայությունը: Այնուամենայնիվ, տարբեր երկրներում այլ աղբյուրներից փորձագիտական ներուժի և աշխատանքի ներգրավումը (հաճախ ասոցացվում է պետական կազմակերպություններում հաստիքների կրճատման և/կամ պետական մարմիններին հասցեագրված ուղղակի դիսկերի նվազեցման ցանկության հետ) հնարավորություն է տրվում ժառանգության ոլորտում ներգրավվել արհեստավարժ և պայմանագրային հիմունքներով աշխատող մասնագետների լայն շրջանակ:

Մշակութային տեղանքապետկերների և քաղաքային տեսարժան վայրերի պարագայում այն անձինք, ում համար ժառանգության հուշարձանը կեցության վայր է (օրինակ՝ մասնավոր սեփականատերեր, բնակիչներ, տեղական համայնքներ և հողագործներ), մասնակցում են գործընթացին՝ տրամադրելով լրացուցիչ մարդկային ռեսուրսներ և կամավորներ՝ դրանց խնամքի ապահովման համար:

Համաշխարհային ժառանգության կարողությունների կառուցման ռազմավարությունը (հիմնվելով այլ սեկտորների փորձի վրա) սահմանում է, որ ժառանգության կառավարման համակարգի զարգացումը տեղի է ունենում մարդկային կարողությունների զարգացման դասընթացների կազմակերպման ձևաչափով՝ ընդգծելով մարդկային ռեսուրսների կարևորությունը: Այն նախանշում է ժառանգության համար ներուժ ունեցող երեք հիմնական ոլորտ՝ ոլորտի մասնագետների շրջանում (գործում են ինստիտուցիոնալ համակարգի ներսում և դրանից դուրս), ինստիտուցիոնալ համակարգերում, ինչպես նաև համայնքներում և միություններում, համապատասխան հիմնական թիրախային լսարանի հետ միասին, որոնց միջոցով կարելի է ստեղծել նման կարողություններ. դրանք կենսական նշանակություն ունեցող ոլորտի մասնագետներն են, քաղաքականություն մշակողները և այլ շահագրգիռ կողմ հանդիսացող մարմինների ներկայացուցիչները (տե՛ս 3.8-րդ կետը):

63. Boddy, D. 2008. Management: An Introduction. (Fourth edition). Harlow, UK, Financial Times/Prentice Hall.

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Ֆինանսական ռեսուրսներ

Ֆինանսական ռեսուրսները կարող են լինել կամ որոշակիացված (աղբյուրների, շրջանակի և ժամանակի համատեքստում), կամ փոփոխվող՝ ելնելով աղբյուրների տարբերությունից (օրինակ՝ տեղական, միջազգային կամ ավանդական աղբյուրներ, կամ փոխառություններ, մասնավոր ֆինանսավորումներ, միջազգային համագործակցություն, Համաշխարհային ժառանգության հուշարձաններին տրամադրվող աջակցություն, կայուն ֆինանսավորում և այլն) կամ դրանց երկուսի միաձուլումը:

Պետական սեփականություն հանդիսացող և կառավարման ենթակայությամբ գործող մշակութային ժառանգության ֆինանսական ռեսուրսները սովորաբար տրամադրվում են պետական բյուջեից, սակայն, քանի որ պետական ֆինանսավորումը նվազել է, ապա ֆինանսավորում է փնտրվում նաև այլ աղբյուրներից: Այսպիսով, պետական սեփականություն հանդիսացող հուշարձանները ձեռք են բերում մասնավոր սեփականություն հանդիսացող հուշարձաններին բնորոշ առանձնահատկություններ՝ օրինակ՝ քաղաքային տեսարժան վայրերը և մշակութային տեղանքապատկերները, որոնք ֆինանսավորում են փնտրում բոլոր հնարավոր աղբյուրներից:

Մշակութային հուշարձաններից ուղղակի ստացվող ֆինանսական ռեսուրսները նույնպես կարևոր են տնտեսական կայունության ապահովման տեսանկյունից:

Մտավոր ռեսուրսներ

Մտավոր ռեսուրսների ամբողջությունը, որն ի հայտ է եկել պահպանության սկզբունքների տեսքով, առաջացել է Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարի վերջում: Ռեսուրսները շարունակեցին իրենց զարգացումը, քանի որ աշխարհով մեկ ի հայտ եկան նոր գիտելիքներ: Պահպանության կամ կառավարման ծրագրերի հաջողությունը կախված է գեներացված, պահպանված, թարմացված և փոխանակված գիտելիքներից և առօրյա գործողությունների, կառավարման համակարգերի բարեփոխման, և գոյություն ունեցող ու նոր լսարանների հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

Այս գործողություններն ահրաժեշտ է իրականացնել կառավարման համակարգի տարբեր մակարդակներում կարողությունների կառուցման (տե՛ս «մարդկային ռեսուրսներ» բաժինը և 3.8-րդ մասը)՝ հաճախ հետազոտությունների և անձնակազմի վերապատրաստման միջոցով: Մարդկային և մտավոր ռեսուրսների միջև տարբերությունը բավականին մեծ է: Կառավարման համակարգում գոյություն ունեցող մարդկային ռեսուրսները կարևոր են, սակայն մտավոր ռեսուրսների միակ գեներատորը և կրիչը չեն: Մտավոր ռեսուրսները կարող են ուժեղացվել ներքին մոնիթորինգի և վերանայումների (տե՛ս 4.3-րդ մասը – Մոնիթորինգ), ինչպես նաև արտաքին աղբյուրների ներգրավման միջոցով՝ հիմք ընդունելով կառավարումը, արտաքին միջոցների ներգրավումը (տե՛ս 2-րդ Հավելվածը) և քարոզչական գործունեությունը: Իհարկե, ավանդական փորձը և նորարարությունը կարող են արժեքավոր մտավոր ռեսուրսներ լինել, ինչպիսին է հետազոտական ազգային մարմինների կամ միջազգային կանոնադրություններից բխող գործունեությունը (տե՛ս 4.4-րդ մասը – Կառավարման համակարգերի բարեփոխումները): Մտավոր ռեսուրսները, ինչպես մարդկային և ֆինանսական ռեսուրսները, հաճախ բավարար չեն:

Ինչի համար են ռեսուրսները

Ռեսուրսների օգտագործումը և կառավարումը կոչվում է «ռեսուրսներով ապահովում»: Ռեսուրսները, ինչպես նշվեց վերը, բաժանվում են երեք հիմնական կատեգորիաների՝ մարդկային, ֆինանսական և մտավոր, չնայած, որ կարող են դասակարգվել այլ կերպ (օրինակ՝ որպես նյութական, տեխնոլոգիական, տեխնիկական, բնական կամ ոչ նյութական ռեսուրսներ):

Հաճախ դիտարկվելով որպես «ներդրումներ»՝ ռեսուրսները կառավարման համակարգի գործարկող «վառելիքն» են՝ ուղղված մշակութային ժառանգության պահպանությանը և կառավարմանը: Դրանց քանակը և որակը, այլ գործոնների հետ միասին, որոշիչ են առանձին ինստիտուցիոնալ համակարգի գործառնական կարողությունների սահմանման համար: Քանի դեռ մշակութային ժառանգության համար ռեսուրսները սակավ են, ապա ավելի որոշիչ է դառնում դրանց արդյունավետ օգտագործումը (տե՛ս 4.3-րդ մասը):

Հիմնական դիտարկումներ ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերաբերյալ

Ստորև ներկայացվող դիտարկումները վերաբերում են ժառանգության համար ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը՝

- Թափանցիկություն (կանոնավոր հիմունքներով աուդիտ, ստանդարտների վերանայման ընթացակարգեր, ֆինանսական որակական հաշվետվությունների ներկայացում, հնարավորինս «բաց գրքի» մոտեցման կիրառում և այլն) և հաշվետվողականություն (պատասխանատվության և հաղորդակցման միջոցների հստակ տարանջատում):
- Բնության, մարդկային և սոցիալական կապիտալում ներդրումների իրականացում, կայունության սկզբունքների արտացոլում (տե՛ս 2.3-րդ մասը): Սա կախված է մասնակցային մոտեցումից՝ տրամադրության տակ եղած և/կամ արտաքին մասնագետների ներգրավմամբ, որի հետ կապ-

ված հիմնախնդիրները կարող են լուծվել միայն մասնագետների և առավել լայն շրջանակով խորհրդատվությունների իրականացման միջոցով:

- Ներքին (հաստատությունների շրջանակում) և արտաքին ռեսուրսների օգտագործման միջև հավասարակշռության պահպանում բոլոր երեք կատեգորիաներում՝ մարդկային, ֆինանսական և մտավոր (տե՛ս 4.3-րդ մասը - Իրականացում): Մասնավորապես, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ինստիտուցիոնալ հիշողության կորուստը կանխելու համար, երբ ներքին ֆիքսված փորձաքննությունը կրճատվում է հոգուտ արտաքին միջոցների պարբերաբար ներգրավման:

- Կառավարիչները պետք է ունենան պահանջվող տեղեկատվությունը կառավարումն արդյունավետ կազմակերպելու համար, քանի որ մշակութային ժառանգությունը վերականգնվող ռեսուրս է: Հետազոտությունները կարող են հուշարձանների վերաբերյալ տրամադրել ելակետային տվյալներ և միաժամանակ խթանել կառավարումը ռազմավարությունների, գործողությունների և մեթոդաբանության բարելավման միջոցով:

- Առանձին հուշարձանների և մշակութային ժառանգության սեկտորի հետ ասոցացվող կրթական դրական միջավայրերի ստեղծման խթանումը ընդհանուր առմամբ կարող է հանգեցնել անհատների և հաստատությունների, համայնքների և միությունների բարեփոխված արտադրողականությանը (տե՛ս 3.8-րդ մասը - Կարողությունների կառուցում)՝ ժառանգության համար դրական արդյունքներով: Կարողությունների կառուցման միջոցով արդյունավետության զարգացումը կարող է դիմակայել շատ ու շատ հուշարձաններում ռեսուրսների կրճատմանը: Մտավոր ռեսուրսներ (ավելին, քան ֆինանսական) բերող նոր գործընկերների փնտրտուքը կարող է բեկումնային լինել կազմակերպության համար՝ կարողությունների զարգացման լավ նախաձեռնությունների իրականացման հարցում:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ Ի ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ

- ▶ Ռեսուրսների փնտրման և օգտագործման մոտեցումները կարող են կատարելագործվել այլ ոլորտներում կիրառվող հիմնական սկզբունքների շնորհիվ՝
 - լինելով հստակ և առանց հավակնությունների,
 - նայելով ապագային,
 - դասեր քաղելով անցյալից,
 - գործընթացները դարձնելով հիշարժան և գրավիչ,
 - ձգտումները դարձնել իրատեսական, այսինքն՝ պլանավորումը դարձնել իրատեսական՝ ելնելով տրամադրության տակ եղած ռեսուրսներից,
 - կազմակերպության (կազմակերպությունների) արժեքների և մշակույթի հետ համապատասխանելիության ապահովում,
 - հիմք ընդունել «օգտագործողների» կարիքները (օրինակ՝ հուշարձանների այցելուները, հուշարձանի տարածքում կամ հարևանությամբ գոյություն ունեցող համայնքները, գալիք սերունդները):
- ▶ Այլոց հետ ուժերի համախմբումը և գործընկերության խթանումը կարող է մեծացնել ռեսուրսների մակարդակը (խթանելով հրապարակայնությունը և ուժեղացնելով դրամահավաքային նախաձեռնությունները) և բարելավել դրանց օգտագործումը մշակութային ժառանգությանը հասցեագրված որոշակի մարտահրավերների դիմագրավելու նպատակով: Գործընկերությունը կարող է նաև կատարյալապես հանդիսանալ աջակցության նոր ռեսուրսների ներգրավման և ճկունության խթանման համար, ինչպես նաև արագ արձագանքումը ռեսուրսների պակասորդի ժամանակ (տե՛ս Հերկուլանումի (Իտալիա) նախադեպը, էջ 111):
- ▶ Ընտրության և կառավարման ներքին ընթացակարգերը պետք է բավականին խիստ լինեն արտաքին փորձագետների և ծառայությունների ներգրավման, այլ ծառայությունների կամ կոնսերվացման աշխատանքներից օգտվելու ժամանակ (տե՛ս 4.3-րդ մասը, Իրականացում):
- ▶ Կառավարման արդյունավետության մոնիթորինգը, ի թիվս այլ բաների, ենթադրում է տատանումների ուշադիր գնահատում ռեսուրսների ներգրավման և օգտագործման տեսանկյունից, ինչպես նաև, թե ինչպես է տվյալ գործողությունը ներգրավում պլանավորման և իրականացման գործընթացներում (տե՛ս 4.3-րդ մասը):
- ▶ Կառավարման գործիքակազմը կարող է օգտակար լինել հետազոտությունների իրականացման և ռեսուրսների տատանումների ազդեցության նվազեցման, ինչպես նաև պակասորդների լավագույնս կանխագուշակումը և կառավարումը երաշխավորելու համար:
- ▶ Քանակական գնահատումը, անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկի և դրանց մատչելիության որոշումը կօգնի բացահայտել անձնակազմում, ֆինանսավորման կամ սարքավորումների տեսանկյունից հազեցվածության մեջ գոյություն ունեցող պակասորդները, ինչպես նաև պլանավորած վարչարարական գործունեության համար անհրաժեշտ միջոցառումները, ինչպես, օրինակ, արտաքին ռեսուրսների ներգրավումը: Այս համատեքստում օգտակար է «Խթանելով մեր ժառանգության գործիքակազմի» «Կառավարման կարիքների և ներդրումների գնահատման» 7-րդ գործիքը⁶⁴ (տե՛ս Հավելված Բ-ն):

64. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage Sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23). Tool 7: Assessment of Management Needs and Inputs, p.44. <http://whc.unesco.org/en/series/23/>

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

- • • Այն հուշարձաններում, որտեղ իրականացվում են մի քանի հետազոտական նախաձեռնություններ կամ գոյություն ունի մտադրություն դրանք ներգրավելու համար, ապա IUCN-ի առաջարկություններին⁶⁵ համապատասխան՝ հետազոտողների համար գործունեության վարվելակերպի կանոնագրքի մշակումը կհանգեցնի դրական արդյունքների:
- ▶ Բարեխիղճ և պատասխանատու կառավարումը, որպես կանոն, ենթադրում է գործնականում «գոյից» մշակված և ֆորմալ կրթության շնորհիվ գերազանց հմտությունների առկայություն: Հմուտ կառավարումը հնարավորություն կտա հեռանկարային կառավարում իրականացնել և նվազեցնել կազմակերպության ճգնաժամային կառավարումից կախվածությունը:
- ▶ Կարիքների օբյեկտիվ գնահատումը կարող է առավել հիմնավորել կառավարությունից, դոնորներից և այլ աղբյուրներից աջակցություն ստանալու առաջարկությունները:
- ▶ Խորհրդատվությունների մի մեծ ամբողջություն հովանավորների հետ հարաբերությունների զարգացման վերաբերյալ առկա է միջազգային աջակցության սեկտորում, ինչպես օրինակ՝ դոնորների խորհուրդում առավելությունները, որոնք
 - հայտնի կազմակերպություններ են կամ միավորված գործընկերներ,
 - նպատակ ունեն զարգացնել կարողությունները, հմտությունները և հակամարտությունների լուծման եղանակները,
 - խուսափում են ներքին կազմակերպչական քաղաքականությունների կիրառումից և որդեգրում են չմիջամտելու մեթոդներ,
 - գնահատում են ինստիտուցիոնալ համակարգի ռեսուրսները կլանելու և կառավարելու կարողությունները, ինչպես նաև ադապտացնում են դրանց ֆինանսական միջոցները:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՑԱԳՈՐԾՈՒՆԵՐ

- ▶ Ժառանգության ոլորտը պահանջում է ներդրումներ մի շարք մասնագետներից: Արդյո՞ք ձեռք են բերվել ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում կամ դրանցից դուրս տարբեր գիտական ճյուղերի մատուցվող ծառայությունները: Արդյո՞ք տեղում ներդրված են մեխանիզմներ, որոնք արդյունավետ աշխատում են երաշխավորելու որոշումների ընդունման հիմնավորվածությունը:
- ▶ Մարդկային ռեսուրսների հանդեպ մոտեցումները կիրառվել և փորձարկվել են բազմաթիվ ոլորտներում, օրինակ՝ աշխատանքների նկարագրությունը, անձնակազմի աշխատանքի գնահատումը, բողոքների քննարկման ընթացակարգերը, զարգացման ծրագրերը և ապահովագրությունը:
- ▶ Արդյո՞ք նրանք աշխատանքի են ընդունվել, որպեսզի երաշխավորեն, որ ներքին անձնակազմը համապատասխանում է զբաղեցրած պաշտոններին և ունեն համապատասխան միջոցներ իրենց գործառնությունների իրականացման համար: Արդյո՞ք նրանք խուսափել են տեխնիկական անձնակազմի պարտականությունների չափից դուրս բաշխումից, որոնք սովորաբար առաջանում են վարչարարական խնդիրների առատությունից:
- ▶ Արդյո՞ք կանոնավոր կերպով գնահատվում են ռեսուրսները, որոնք պահանջվում են հուշարձանի արդյունավետ կառավարումն իրականացնելու համար, ինչպես նաև դրանք համեմատել գոյություն ունեցող ռեսուրսների հետ: Արդյո՞ք գնահատումը հիմնված է հուշարձանի կառավարման պահանջների ամբողջական ընկալման վրա:
- ▶ Արդյո՞ք ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է այնպես, որպեսզի մոնիթորինգի ենթարկվի նաև փոփոխություններն անձնակազմում և ռեսուրսների մատչելիությունը ժամանակի ընթացքում:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լրացուցիչ ռեսուրսներ անդամ պետությունների համար, որոնք իրենց խնամքի տակ ունեն համաշխարհային ժառանգություն

Համաշխարհային ժառանգության կոնվենցիան անդամ պետություններից ակնկալում է իրենց տրամադրության տակ եղած ռեսուրսների հնարավորինս ապահովում՝ ցանկում ընդգրկված հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանվածության ապահովման նպատակով: Քանի դեռ միջազգային համագործակցությունը կոնվենցիայի հիմնարար սկզբունքներից մեկն է, կոմիտեն նույնպես աջակցություն է փնտրում միջազգային դոնորներից անդամ պետություններին օգնելու նպատակով: Ավելին, որոշ դեպքերում անդամ պետություններին միջազգային աջակցություն է տրամադրվում նախնական ցանկերի, անվանակարգերի, դասընթացների կազմակերպման և հուշարձանների կոնսերվացման համար՝ կոնվենցիայով հաստատված Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցների հաշվին: Հիմնադրամը կարող է նաև միջոցներ հատկացնել արտակարգ իրավիճակների դեպքերում: Նպատակ հետապնդելով անդամ պետություններին աջակցելու հարցում՝ հետազոտությունների իրականացման և կարողությունների զարգացման նախաձեռնություններ են մշակվել խորհրդատվական մարմինների (ներառյալ ուսուցման ռեսուրսների կարևոր մարմինը) և Համաշխարհային ժառանգության կենտրոնի կողմից, երբեմն այլ գործընկերների հետ միասին:

65. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2012. Managing Natural World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual) pp.75-77.
<http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-703-1.pdf> (English web page).

Հասարակական կազմակերպությունների կողմից հիմնական կառավարման համակարգի ուժեղացման նպատակով ռեսուրսների ներգրավման օրինակ

Գոյություն ունեն հեղափոխական նախադեպեր, երբ հասարակական կազմակերպությունները հիմնական դերակատարություն են ունեցել Համաշխարհային ժառանգության հուշարձանի առաջադրման և կառավարման գործում: Չամպաներ-Փավագադի հնավայրը Հնդկաստանում գտնվող օրինակն է: «Բարոդա» ժառանգության հիմնադրամն օժանդակեց Հնդկաստանի հնագիտական ուսումնասիրությունների կազմակերպությանը, որն իրավական տեսանկյունից պետությունում ժառանգության պահպանություն իրականացնող է, ինչպես նաև հուշարձանի համար Համաշխարհային ժառանգության անվանակարգային փաթեթի նախապատրաստման հիմնական գործակալությունը, ինչի արդյունքում այն ընդգրկվեց 2002 թ-ին՝ կառավարման պլանի մշակումից հետո: Նրանց աչքի ընկնող ձեռքբերումներից մեկը Չամպաներ-Փավագադի հնագիտական վայրի կառավարման մարմնի հիմնադրումն է օրենքով, որում ներգրավված են բոլոր շահագրգիռ կողմերը, որի նպատակն է Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունը և Համաշխարհային ժառանգության հուշարձանի պարածքում տեղի ունեցող զարգացումների հսկողությունը:



Չամպաներ-Փավագադի հնագիտական վայր (Հնդկաստան)

© ՅՈՒՆԵՍԿՕ / Անվանակարգային փաթեթ

Համաշխարհային ժառանգության համար ռեսուրսների տրամադրման վերաբերյալ հիմնական դիտարկումներ

Համաշխարհային ժառանգության ցանկում ընգրկմամբ պայմանավորված լրացուցիչ պարտականությունները, համակարգը և դրանից բխող գործընթացներն առաջացնում են ֆինանսավորման նկատմամբ պարտավորություններ տարբեր մակարդակներում (ֆինանսներ, մարդ/ժամ, նոր փորձաքննությունների իրականացում), որոնք պետք է լուծվեն պետության կողմից:

Անդամ պետություններն անվանակարգի ներկայացման գործընթացի միջոցով պետք է երաշխավորեն ռեսուրսների առկայությունը և համարժեքությունը ցանկում ընդգրկված հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանվածության ապահովման նպատակով: Կառավարման համակարգը պետք է համարժեք լինի և ունենա համապատասխան ռեսուրսներ և ներկայում, և ապագայում (ԳՈՒ-ի 108-118-րդ պարբերություններ): Համաշխարհային ժառանգության պարագայում պլանավորման, իրականացման և մոնիթորինգի պես կառավարման գործընթացները պահանջում են զգալի ռեսուրսներ՝ երրորդ կողմի հետ հաղորդակցվելու համար:

Համաշխարհային ժառանգության համար ոլորտի մասնագետների, ինստիտուցիոնալ համակարգերի, միությունների և համայնքների կարողությունների զարգացումը (ԳՈՒ-ի 212-րդ պարբերություն) կարող է օգնել ռեսուրսների հետ կապված խնդիրները հաղթահարելու հարցում: Անդամ պետությունները պետք է ունենան մեխանիզմներ տեղում մոնիթորինգի իրականացման, իսկ այնուհետ գործելու համար ցանկացած թույլ, թերի օգտագործված կամ բացակայող կարողությունների դեպքում, որոնք կարող են վտանգել արդյունավետությունը և շահավետությունը: Դա կօգնի նվազեցնելու ռեսուրսների հանդեպ լրացուցիչ պահանջարկը, որն առաջանում է Համաշխարհային ժառանգությանը համապատասխանելու անհրաժեշտությունից:

Սկզբնական ժամանակահատվածում կարողությունների կառուցումը կարող է պահանջել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների հատկացում (ԳՈՒ-ի 225-232-րդ պարբերություններ), սակայն երկարաժամկետ հեռանկարում կարող է մեծացնել գոյություն ունեցող ռեսուրսների արդյունավետ օտագործումը: Այս կապակցությամբ անդամ պետությունները կարող են օգտվել Համաշխարհային ժառանգության կարողությունների կառուցման ռազմավարությունից⁶⁵ (տե՛ս 3.8-րդ մասը) և շրջակա միջավայրերի թիրախային ուսումնասիրություններից և հետազոտություններից:

Ի թիվս այլ բաների, կարողությունների կառուցումով անձնակազմին և արտաքին աղբյուրներից ներգրավված մասնագետներին կտրամադրվեն ժառանգության կառավարման պրակտիկային վերաբերող թարմացված գիտելիքներ՝ ներառյալ Համաշխարհային ժառանգությանն առնչվող գործընթացներում տեղ գտած փոփոխությունները, որոնք պարբերաբար արտահայտվում են Գործառնական ուղեցույցում: Համաշխարհային ժառանգության ցանկում ներգրավված բոլոր անձինք

65. UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B) <http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

պետք է ունենան համարժեք գիտելիքներ մշակութային հուշարձանի արժեքների վերաբերյալ, որպեսզի աջակցեն կառավարման բոլոր, հատկապես առանձին հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքների պահպանությունը երաշխավորող գործընթացներին:

Համաշխարհային ժառանգության ռեսուրսների և Համաշխարհային ժառանգության ցանցերի ակտիվ օգտագործումը կարող է աջակցության նոր ձևաչափեր տրամադրել հուշարձանների կառավարիչներին, օգնել պահպանելու հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը, ինչպես նաև զարգացնելու դրա կառավարման ընդհանուր տեսլականը:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԵՐ


- ▶ Հաճախ լիազոր նախարարությունները /հաստատությունները/ մի հուշարձանի համար ձգտում են Համաշխարհային ժառանգության կարգավիճակ ստանալ առանց ներգրավելու ժառանգության հարցերով զբաղվող տեղական մարմինների ներկայացուցիչներին և նույնիսկ խորհրդակցելու հուշարձանի անձնակազմի հետ, ովքեր այնուհետ պետք է երաշխավորեն համապատասխանելիությունը: Հուշարձանի կառավարման գործում ընդգրկված ժառանգության ոլորտի մասնագետները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն անվանակարգային փաթեթի նախապատրաստման գործընթացում այն հիմքով, որ նրանց չներգրավելը կարող է ոչ արդյունավետ լինել հուշարձանի հետագա կառավարման համար ցանկում ընդգրկվելուց հետո:
- ▶ Համաշխարհային ժառանգության կարգավիճակի ստացումն այնպիսի մեծ հաջողություն է, որ հուշարձանի ընդգրկումը նմանվում է անհատականացման, ինչը կխթանի միջազգային հանրության և տեղի համայնքի, ինչպես նաև հուշարձանով զբաղվող միությունների հետաքրքրության աստիճանը: Սա մի հնարավորություն է, որը պետք է ընդգրկի կառավարման համակարգի բոլոր մակարդակները՝ հուշարձանի համար նոր ռեսուրսների ներգրավման նպատակով:
- ▶ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվելուց հետո լրացուցիչ կառավարման պահանջների հետևանքով ռեսուրսների վրա ազդեցությունը հնարավոր է թուլացնել կառավարման գործիքների կիրառման միջոցով՝ ռեսուրսների հատկացման և կառավարման միջոցով:
- ▶ Շատ հաճախ հուշարձանի առօրյա կառավարման գործում ներգրավվածները իրազեկված չեն լինում Համաշխարհային ժառանգության համակարգի առաջարկած հնարավորությունների մասին, ինչպիսիք են միջազգային աջակցությունը, որը տրամադրվում է Համաշխարհային ժառանգության հիմնադրամի միջոցով, ինչպես նաև նոր գիտելիքներից օգտվելու հնարավորությունը:
- ▶ Նոր գիտելիքները հաստատուն կերպով ձևավորվում են և ժառանգության ոլորտի առանձին անհատներ կարող են շահել դրանից և իրենց ներդրումն ունենալ՝ կանոնավոր այցելելով Համաշխարհային ժառանգության կենտրոնի և խորհրդատվական մարմինների կայքէջերը: Դրանցից որոշներն առաջարկում են էլեկտրոնային պարբերականներ և աջակցություն սոցիալական մեդիայի (օրինակ՝ ԻԿԿՌՕՄ) միջոցով, իսկ վերջիններս տեղեկատվություն են տրամադրում կարողությունների կառուցման մասին, որը բոլորի համար հասանելի է:

4.3 Ժառանգության կառավարման համակարգի երեք գործընթացները

Սահմանելով երեք գործընթացները՝ 4.2-րդ մասում նկարագրված երեք տարրը միասին ձևավորում են կառավարման համակարգը, որը գործում է և տալիս արդյունքներ: Հետևյալ գործընթացներն ընդհանուր են ժառանգության կառավարման համակարգի համար՝


1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Այն ընկալումն է, թե «ով» է ընդունում որոշում, ինչպիսի նպատակներ են սահմանվում հասնելու համար, ինչպիսի գործողություններ պետք է իրականացվեն և ինչ ժամանակահատվածում, ինչպես նաև այդ առաջարկությունների փաստաթղթավորումը իրազեկվածության ապահովման տեսանկյունից, ինչպես նաև գործընթացի վերանայումը յուրաքանչյուր փուլում:



2. ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄ

Պլանավորած միջոցառումների իրականացումն է, որի ընթացքում ստուգվում է, թե արդյոք յուրաքանչյուր փուլում ապահովվում են արդյունքները, ինչպես նաև սկզբնական փուլում սահմանված առավել լայն նպատակները: Անհամապատասխանությունների առաջացման ժամանակ՝ գործողություններում փոփոխություններ են մտցվում ընթացքում, գնահատվում է, թե ինչպես են դրանք ընդունվել և արդյոք դրանց անհրաժեշտությունը կար:



3. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Տվյալների հավաքագրումն ու վերլուծություն է՝ կառավարման համակարգի արդյունավետ գործունեության ստուգման և ճշգրիտ արդյունքների ստացման, ինչպես նաև բացթողումների կամ նոր հնարավորությունների առաջացման դեպքում ուղղիչ գործողությունների նախանշման նպատակով:



Այս երեք գործընթացները բավականին տարբեր են ժառանգության կառավարման տարբեր համակարգերում: Դրանք գործարկվում են բազմակի, հաճախ խաչվող և հաճախ ներդաշնակ ցիկլերի միջոցով, ինչը դժվարացնում է դրանց տարանջատումը: Ժառանգությանը վերաբերող այս երեք գործընթացները կուսումնասիրվեն այս բաժնում:

Գործընթացների և ընդհանուր արդյունավետ կառավարման միջև հարաբերակցությունը ստիպեց IUCN-ի Պաշտպանվող տարածքների հարցերով համաշխարհային հանձնաժողովին մշակել մի գործիքակազմ բնության ժառանգության կառավարիչների համար:

Մշակութային ժառանգության ոլորտում դրա կիրառման նախնական փորձերը ցույց տվեցին, որ դա համապատասխանում է և կարող է օգտակար լինել. ամփոփ տարբերակը ներկայացված է Հավելված Բ-ում:

Գործընթաց 1: ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ակնարկ

Պլանների նախապատրաստման և վերանայման տարբերակները տարբերվում են կառավարման համակարգերի շրջանակներում և դրանցից դուրս: Որոշ հաստատություններն ի սկզբանե օտագործել են նույն ընթացակարգը, սակայն գոյություն ունեն ընդունված՝ բավականին նոր պլանավորման մոտեցումներ:

Պլանավորումը, իրականացումը և մոնիթորինգը բոլորն էլ կարևոր գործընթացներ են, որոնք հաճախ խաչվում են շարունակական ցիկլի շրջանակներում, ինչը թույլ է տալիս կառավարման համակարգին արդյունքներ ստանալ: Իրականացման հաջողությունը և մոնիթորինգի իրականացման ռազմավարությունը հիմնականում կախված են պլանավորման փուլում կատարված ներդրումից: Միաժամանակ, մոնիթորինգի գործընթացի արդյունքում ստեղծված հետադարձ կապի միջոցով է, որ հնարավոր է դառնում ստեղծել լավ պլանավորման հիմքը և հանգեցնել կառավարման համակարգի բարեփոխումների, ինչպես նաև նոր մեթոդների ներմուծման:



Պատկեր 11: Կառավարման համակարգի երեք հիմնական գործընթացներից առաջինը. պլանավորում

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մոտեցումները և մարտահրավերները բավականին տարբերվում են

Պլանավորումը ժառանգության, ինչպես և մյուս բնագավառներում, բնորոշվում է մի քանի մոտեցումներով՝ ներառյալ այնպիսիներով, որոնց շրջանակներում որոշումների ընդունման գործընթացները կանոնակարգված չեն ընդհանրապես:

Պլանավորումը պահանջվում է և՛ ազգային, և՛ հուշարձանի մակարդակներով: Ազգային մակարդակով պլանավորման դեպքում գործողությունները պետք է ներառեն մշակութային ժառանգության նախանշման և դրա շուրջ համաձայնության ձեռքբերման գործընթացները որպես ցանկերի նախապատրաստման գործընթացի մի բաղկացուցիչ մասի (ներառյալ նախնական ցանկերի կազմումը), ինչպես նաև իրավական պաշտպանության միջոցները, համապատասխան կոնսերվացման և երկարաժամկետ կառավարման միջոցառումները: Ժառանգության որոշակի տեսակների դեպքում պլանավորման գործընթացներն արդեն իսկ արտահայտված են իրավական սահմանումներում, ինչպիսիք կարող են լինել հողօգտագործման ռազմավարությունները և մասնավորների ներգրավմամբ զարգացման պլանները:

Տարբեր գործընկերների (պլանավորման մարմիններ, համայնքներ, միջազգային հանրություն և այլն) ներգրավման արդյունքում ձևավորված մի շարք զուգահեռ պլաններ կարող են համատեղ գոյատևել՝ հակազդելով շրջակա միջավայրից եկող ազդեցություններին (պահպանական գոտի և ազդեցության առավել լայն շրջանակ) և ընդգծելով պլանավորման անհրաժեշտությունը, ինչպես առօրյա, այնպես էլ մեկանգամյա գործողությունների դեպքերում:

Որոշակի հուշարձանների պլանավորման տեսանկյունից կառավարման համակարգերը կարող են միավորել ակտիվ (խնդիրների և հնարավորությունների կանխատեսում) և արձագանքող պլանավորման գործընթացները (խնդիրներին լուծում են տալիս գլոբալ բարձրացնելուն պես): Իդեալական տարբերակն առաջինն է:

Հուշարձանի մակարդակով պլանավորման հանդեպ համալիր մոտեցումները համատարած կիրառվում են, սակայն փաստացի մասնակցության մակարդակները բավականին տարբեր են: Իհարկե, որոշ համակարգեր մշակում են պլաններ, սակայն ձախողվում են դրանց իրականացման հարցում և վերանայում են դրանք անբավարար ռեսուրսների կամ համաձայնության պատճառով:

Որոշ համակարգեր պլանավորման մոտեցումների բարելավման նպատակով կիրառում են վարչարարական գործիքներ, մինչդեռ մյուսները շարունակում են պահպանել գոյություն ունեցող պրակտիկան՝ չնայած գոյություն ունեցող թերություններին: Շատ երկրներում ռազմավարական պլանավորումը (տե՛ս պլանավորման կառավարում, Հավելված Ա) կարող է հիմնական մոտեցումը դառնալ ազգային մակարդակով և արժեքների վրա հիմնված մոտեցումը (տե՛ս 2.5-րդ մասը) կարող է իսկապես կիրառվել հուշարձանի մակարդակով:


Ինչ է ընդգրկում պլանավորումը

Պլանավորման գործընթացը ենթադրում է հուշարձանի և շահագրգիռ կողմերի համար վերջնական արդյունքների սահմանում (այլ խոսքերով՝ կառավարման համակարգի նպատակների սահմանում) և առանձին արդյունքների ձեռքբերում, որոնք միասին թույլ կտան հասնելու այդ ցուցանիշներին: Որպես նախապատրաստական փուլ, պլանավորման ընթացքում ժառանգության ոլորտին առնչվող գործընթացները և պահանջվող արդյունքները բովանդակության, որակի, արժեքի և ժամանակահատվածի համատեքստում սահմանվում են այնպես, որպեսզի հնարավոր լինի տեղեկատվությունը փոխանակել մյուս կողմերի հետ և վերանայել առաջընթացը յուրաքանչյուր փուլում:

Պլանավորումն, ինքնին, մի ցիկլ է, որը պետք է ներառի հետևյալ՝ միմյանց հետ հաճախ խաչվող փուլերը. մասնակցություն, խորհրդատվություն, մշակում, վերանայում և թարմացում: Մշակութային ժառանգության համար դրանք կարող են մանրամասն սահմանված լինել, օրինակ (կրկին անգամ քայլերը կարող են կրկնվել)՝ շահագրգիռ կողմերի նախանշում և տեղեկատվության հավաքագրում, ժառանգության բացահայտում և բնորոշում, ինչպես նաև փաստացի իրավիճակի նկարագրություն, շրջակա միջավայրի վերաբերյալ տեսական, խնդիրներ և գործողություններ, պլան(ներ)ի մշակում, իրականացում, վերանայում և թարմացում:

Եթե պլանավորման հարցում կան թերացումներ, ապա ուղղիչ միջոցառումների արժեքը կսկսի մեծանալ իրականացման հենց սկզբից: Հենց պլանավորման փուլում է հնարավոր դառնում գործողությունները կատարելության հասցնել նվազագույն ծախսերի միջոցով, ինչպես ներկայացված է հետևյալ պատկերում⁶⁷:

67. Burke, R. 2003. Project Management Planning and Control Techniques. John Wiley & Sons, Chichester, UK, p.24.



Պատկեր 12: Ծախսերի նվազեցում՝ առավել վաղ պլանավորած գործողությունների հաշվին.
«Ազդեցության /արժեքի փոփոխության/» կորը ծրագրի ցիկլի ընթացքում: Աղբյուրը՝ Բուռլ (2003 թ.)

Հիմնական դիտարկումներ պլանավորման գործընթացների վերաբերյալ

Պլանավորման գործընթացները պետք է հասցեական լուծում տան և ադապտացվեն բազմաթիվ, միմյանց հետ փոխկապակցված գործոններին, որոնք վերաբերում են ժառանգության հուշարձանների վրա իրականացվող աշխատանքներին: Մակրո մակարդակում իրականացվող պլանավորումը (օրինակ՝ ազգային) պետք է ձևավորի սիստեմատիկ և համապարփակ որոշումների կայացման հենքը, որն էլ կհանգեցնի միկրո մակարդակի պլանավորմանը (օրինակ մեկ հուշարձանի կամ հուշարձանախմբի համար) և դրանցից բխող գործողությունների: Իհարկե, պլանավորման գործընթացների նախանշման համար կարևոր է այլ մարմինների և գործակալությունների հետ աշխատանքը, որը կարող է ազդել հուշարձանի և շրջապատող միջավայրի (պահպանական գոտի և առավել ընդլայնված ազդեցության տարածք) պլանների և վերջիններիս նկատմամբ իրականացվելիք ուղղումների վրա:

Ստորև ներկայացվող դիտարկումները կիրառվում են հուշարձաններում պլանավորման գործընթացներն արդյունավետ դարձնելու համար:

Շահագրգիռ կողմերի համաձայնությունը և արժեքները

Հուշարձանի մակարդակով կառավարման նպատակները պետք է խարսխված լինեն հուշարձանի արժեքների ընկալման վրա: Մշակութային հուշարձանների արժեքները և կոնսերվացման տարբերակները պետք է գնահատվեն բոլոր շահագրգիռ մարմինների կողմից՝ հուշարձանի ընդհանուր ընկալման և նրանց ուղղակի մասնակցության ապահովման նպատակով: Համապատասխան քանակով արհեստավարժ մասնագետներ պետք է ներգրավված լինեն պլանավորման գործընթացների բոլոր փուլերում: Միայն միջգիտակարգային մոտեցումը պլանավորման համատեքստում կարող է երաշխավորել բոլոր տեսակի կարիքների կանխատեսումը և արդյունավետ հասցեական լուծումը դրանց վեր հառնելուն պես:

Համապարփակ մոտեցումը, հաջող կիրառման դեպքում, հանգեցնում է բոլոր շահագրգիռ մարմինների կողմից ընդունված պլանների, որտեղ միավորվում են հուշարձանին վերաբերող կարիքները և ակնկալվածքները՝ ժառանգության արժեքների պահպանվածության ապահովման նպատակով (տես 2-րդ բաժինը և Հավելված Ա-ն):

Պլաններն արդյունավետ են, եթե դրանց շուրջ ճիշտ մակարդակ(ներ)ում տարածայնություններ չկան և պաշտոնապես ընդունվել են: Ճանաչումը կարող է լինել հաստատման տեսքով, և առաջին քայլը ենթադրում է տեղի համայնքի հետ խորհրդատվությունների իրականացումը: Դրանից հետո ավելի բարձր՝ համապատասխան կազմակերպության(ների) կամ նույնիսկ խորհրդարանի մակարդակով հաստատման է ներկայացվում, ինչը պլանը դարձնում է իրավական գործիք: Հաստատումը կարող է կապող օղակ լինել պլանի և այլ կարևոր ազգային կամ տարածաշրջանային պլանների միջև, ինչն իր ազդեցությունը կունենա հուշարձանի կառավարման վրա:

Պլանի հաստատումը շահագրգիռ մարմինների առավել լայն շրջանակի կողմից կարևոր նշանակություն ունի և դրան հասնելը դժվարությունների հետ է կապված:

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Մասնակցային մոդեցումը կառավարման գործում

Բախա Կալիֆորնիայում (Մեքսիկա) գտնվող Սիեռա դե Սան Ֆրանցիսկոյի ժայռապարկերները տեղակայված են բավականին հեռու շրջանում և ներկայացնում են մասնակցային մոդեցումը: Մարդաբանության և պարմության ազգային ինստիտուտի անձնակազմը, ցանկանալով հետ կանգնել ավանդական մոդեցումներից, սկիզբ դրեց մասնակցային մոդեցմանը՝ միավորելով տեղի համայնքները և այլ շահագրգիռ մարմիններին կառավարման պլանի և վերջինիս իրականացումն ապահովելու նպատակով: Այս փորձարկումով ապացուցվեց, որ մասնակցային կառավարումը կարող է կայուն միջոց լինել հուշարձանների

կառավարման համար, նույնիսկ այն հուշարձանների, որոնք գտնվում են հեռավոր մարզերում և զբաղեցնում են մեծ տարածք, ինչպիսին Սիեռա դե Սան Ֆրանցիսկոյին էր, որի համար ամուր իրավական պաշտպանության (և դրա կիրառման) և ինստիտուցիոնալ աջակցության հիմքեր են անհրաժեշտ:



Սիեռա դե Սան Ֆրանցիսկոյի ժայռապարկերները (Մեքսիկա)

Իրավաբանական պլանավորում

Պլաններն արժեք կունենան, եթե դրանց իրականացման համար գոյություն ունեն կամ կարելի է ձեռք բերել միջոցներ: Պլանավորումը պետք է սահմանազատի իրականացվելիք գործողությունները՝ կիրառելով պարամետրերի մի ամբողջություն, որոնցից ստորև ներկայացվողներն ընդհանուր են գործողությունների մեծամասնության համար՝

- շրջանակների սահմանում (ինչպես պետք է անել),
- իրականացման սահմանում (ինչպես ենք տեսնում վերջնական արդյունքը),
- որակի սահմանում (ինչպիսի առանձին ստանդարտներ է պետք ապահովել),
- արժեքի սահմանում,
- յուրաքանչյուր գործողության համար ժամանակահատվածի սահմանում:

Վերը թվարկված պարամետրերի թիրախների սահմանման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել կանխարգելիչ վարչարարական գնահատումներ, որոշել հինգ պարամետրերի կարևորության հարաբերակցությունը, և դրանից հետո հատկացնել ռեսուրսներ, իրականացնել և մոնիթորինգի ենթարկել գործընթացը: Անկանխատեսելի գործոնների առկայությունը գրեթե անհնար է դարձնում բոլոր հինգ պարամետրերով սահմանված թիրախներին հասնելը: Այս կանխարգելիչ գնահատումները կարևոր են հասկանալու համար, թե որ ռազմավարությունները և գործողությունները պետք է կիրառվեն, եթե իրավիճակը փոփոխվում է իրականացման (օրինակ՝ ծրագրավորման կամ ռեսուրսների հետ կապված դժվարություններ) ընթացքում և ինչպիսի փոխզիջումներ են անհրաժեշտ: Անհրաժեշտ է նաև սահմանել, թե ինչպես և ում հետ պետք է հստակեցվեն իրականացվելիք գործողությունները (ներառյալ գործին առնչվող ընթացակարգերը, դերակատարությունները և պատասխանատվությունը, վտանգների բաշխվածության և կառավարման հետ կապված այլ ռազմավարություններ), մոնիթորինգի գործընթացը, վերանայումը և ուղղումների ներմուծումը:

Նրանց համար ցանկալի արդյունքները և արտադրանքները (և որոնց հասնելու համար իրականացվում են համապատասխան գործողություններ, տե՛ս 4.4-րդ մասը, Արդյունքներ) ուղենիշ կդառնան վերապլանավորման հարցում, երբ նոր հիմնախնդիրներ կառաջանան պլանի իրականացման ընթացքում: Առանձին գործողություններից (ինչպիսիք են կոնսերվացման աշխատանքները), նոր վարչարարական գործառնություններից (օրինակ՝ առցանց ամրագրումը դպրոցականների համար), ծառայությունների (օրինակ՝ նոր աուդիոգիդերի ներմուծում) և «արտադրանքներից» (օրինակ՝ տարածքի փաստաթղթավորում, պլանները կամ դրանցից բխող հետադարձ կապը՝ ուղղված տեղի համայնքների հետ կապերի խաթման մասին և այլն) ելնելով՝ կարող են տարբերվել արդյունքները:

Հավասարակշռության ներմուծումը պլանավորման մեջ

Ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ գործողությունների դեպքում լավագույնս հիմնավորված հավասարակշռությունը ձեռք է բերվում արդյունավետ պլանավորման գործընթացի արդյունքում: Ընթացիկ աշխատանքային պլանները (այսինքն՝ աշխատանքային պլան, զբոսաշրջության պլան, բիզնես պլան) պետք է համալրվեն երկարաժամկետ ռազմավարական պլաններով: Պլանավորումը պետք է նաև ռեսուրսներ հատկացնի չկանխատեսված իրավիճակների համար, որպեսզի բավարարվեն կարիքները (անձնակազմ և ֆինանսներ) պլանների գործողության ընթացքում շարունակական հսկողություն իրականացնելու նպատակով:

Պատշաճ մակարդակով պլանավորումը, որի շրջանակներում տեղեկատվություն է տրամադրվում կառավարման համակարգից և վերջինիս սահմաններից դուրս (տե՛ս 4.4-րդ կետը, Կառավարման համակարգերի բարեփոխումները) կնվազեցնի արձագանքող պլանավորման ծավալը, ինչը այսպես, թե այնպես պետք է իրականացվի, քանի որ ի հայտ եկող նոր կարիքները պետք է բավարարվեն: Ռեսուրսների օպտիմալացման տեսանկյունից դա նպատակահարմար է իրականացնել: Սակայն նույնիսկ այս դեպքում անհրաժեշ է ունենալ արձագանքով պլանավորման կարողություն՝ չնախատեսված հանգամանքներին հասցեական լուծում տալու նպատակով:

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀԱՐԱՐՈՒՄԻ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀԱՐԱՐՈՒՄԻ

- ▶ Պլանավորումը (ինչպես և մոնիթորինգը) հաճախ դիտարկվում են որպես ինքնապատակ, «վերջնական արտադրանք», այլ ոչ թե գործընթացի (ԳՈՒԻ 111-րդ պարբերություն) փուլերից մեկը, որով երաշխավորվում է, որ կառավարման համակարգերը կհանգեցնեն արդյունավետ և գործուն արդյունքների:
- ▶ «Պլան» եզրույթը ենթադրում է վերջնականապես հստակեցված փաստաթուղթ, սակայն վերջինս շատ հաճախ պետք է լինի «կենդանի»՝ զարգանալով դրանում ընդգրկված գործողությունների իրականացման և մոնիթորինգի համաչափությամբ: Մի շարք գործողությունների իրականացման համար ելակետային առաջարկությունները կարող են վերածվել աշխատանքային օգտակար փաստաթղթերի՝ փոփոխությունների համաձայնեցման նպատակով, իսկ հետո կրկին փոխակերպվել գործողությունների, որոնք մանրամասնությամբ նկարագրում են միջոցառումները և ընդունված որոշումները՝ դրանով իսկ ստեղծելով հետագա մոնիթորինգի հիմքը: Գործընթացը կարող է առավել կարևոր լինել, քան փաստաթուղթն ինքնին:
- ▶ Հնարավորության և համապատասխանելիության դեպքում մշակութային ժառանգության ոլորտից դուրս օրենսդրական և ինստիտուցիոնալ կարողությունները կարող են կիրառվել ամրապնդելու ժառանգությանը վերաբերող պլանավորման գործընթացները:
- ▶ Ժառանգությանն առնչվող պլանավորման մոտեցումների և գործընթացների բարեփոխման համար գոյություն ունեն բազմաթիվ գործիքներ (տե՛ս Ա և Բ հավելվածներ): Ժառանգության ոլորտի մարմինները և հասարակական կազմակերպությունները կիրառում են բիզնես պլաներ, օրինակ՝ Անգլիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի ազգային հիմնադրամը հաստատել է եռակի չափորոշիչներով պլանը՝ կառավարման համար որոշումների կայացման ժամանակ կայուն զարգացման հետ կապված մտահոգությունները ներմուծելու (տե՛ս Արթիկի շատրվանների և Սթադլի Թագավորական զբոսայգու (Միացյալ Թագավորություն) նախադեպի ուսումնասիրությունը, էջ 22), իսկ այնուհետ նման պլանավորումից ստացված օգուտը գնահատելու համար:
- ▶ Ցանկացած պլանավորման հիմքը պետք է լինի գնահատման խիստ գործընթացը: Մեր ժառանգության գործիքակազմը⁶⁸ մշակվել է Համաշխարհային ժառանգության բնության հայտերի համար, բայց և դրանում առաջարկվող նախապլանավորման և պլանավորման փուլերի (տե՛ս Հավելված Բ) գնահատման ընթացակարգերը քննության են արժանի:
- ▶ Պլանավորման համատեքստում նպատակահարմար կլինի տարանջատել ներքին ինստիտուցիոնալ աշխատանքը գործընկերների, բաժնետերերի և շահագրգիռ խմբերի հետ իրականացվող արտաքին գործառնություններից: Շահագրգիռ կողմերին առնչվող վերլուծությունը օգտակար միջոց է տվյալ գործընթացի համար: Կազմակերպչական խնդիրների դեպքում այն կարող է խթանել արագ հանգուցալուծմանը և սահմանափակել երրորդ կողմին հասցվող վնասը:
- ▶ Պլանավորումը պետք է նաև նախանշի այն հնարավորությունները, որոնք կարող են փոխադարձաբար շահավետ լինել հասարակության և ժառանգության համար:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

- ▶ Արդյո՞ք հուշարձանի արժեքները, ներառյալ համաշխարհային ժառանգության արժեքը, բավարար մակարդակով ընկալվել են:
- ▶ Արդյո՞ք կառավարման համակարգի ներսում և դրանից դուրս գտնվող կողմերը ներգրավված են, և եթե՛ այո, ապա՞ ի՞նչ փուլում:
- ▶ Արդյո՞ք գոյություն ունի զուգակշիռ ընկալում, թե՛ ինչ միջավայրում է (են) գործում կազմակերպություն(ներ)ը:
- ▶ Արդյո՞ք կառավարման քաղաքականությունը և պլանները, որոնք հաստատվել կամ դեռ պիտի հաստատվեն, ունեն ինստիտուցիոնալ պարտավորություններ:
- ▶ Արդյո՞ք հուշարձանի արժեքներով և վերջնական սպառողների (այցելուներ, ապագա սերունդ և այլն), շահագրգիռ կողմերի լայն շրջանակով, ինչպես նաև ինստիտուցիոնալ համակարգի կարիքներով է սահմանված պլանավորումը:
- ▶ Արդյո՞ք կառավարման համակարգերի համար կենսական նշանակություն ունեցող նպատակների նախանշումը քննության է առնվել պլանավորման գործընթացում:
- ▶ Արդյո՞ք հետևյալ թվարկումները հաշվի են առնվել. առանձին գործողությունների միջոցով կառավարման համակարգի նպատակներին հասնելու նախագծերի նախանշում (օրինակ՝ կոնսերվացման աշխատանքներ), կազմակերպչական նոր գործառնություններ (օրինակ՝ դպրոցականների այցելությունների համար առցանց ամրագրում) կամ ծառայություններ (օրինակ՝ աուդիո գիդեր) կամ «արտադրանքներ» (օրինակ՝ հուշարձանի փաստաթղթավորում կամ տեղի համայնքի հետ կապերի ամրապնդմանն ուղղված մասնակցային նախաձեռնություններից տրամադրվող հետադարձ կապի ապահովում):
- ▶ Արդյո՞ք հաստատվում են առաջանահերթությունները և սահմանվում են նպատակներն այդ ծրագրերի շրջանակների ձևավորման համար՝ սահմանելով դրանց վերաբերող ընթացակարգերը, դերակատարությունները և պատասխանատվությունները, ռեսուրսները, ժամանակահատվածները, վտանգները և այլ կառավարչական ռազմավարությունները:

68. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23). Tool 1: Identifying Site Values and Management Objectives p.20, Tool 2: Identifying Threats p.25, Tool 3: Relationships with Stakeholders p.29, Tool 6: Design Assessment p.40.

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հիմնական դիտարկումներ

Հիմք ընդունելով Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված յուրաքանչյուր հուշարձանի և դրան շրջապատող միջավայրի եզակիությունը՝ պլանավորման նոր մոտեցումները պետք է իրականացվեն գոյություն ունեցող իրավիճակի, ներառյալ ավանդական մեխանիզմների, գոյություն ունեցող քաղաքային կամ տարածքային պլանավորման գործիքների և պլանավորման վերահսկման մեխանիզմների, և ֆորմալ, և ոչ ֆորմալ, ուժեղ և թույլ կողմերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո:

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների կառավարման պլանավորման համար հենքն է (տես 2.5-րդ մասը և Հավելված Ա-ն): Հետևաբար, Համաշխարհային բացառիկ արժեքին վերագրվող ատրիբուտները, որոնք արտացոլում են արժեքների և որոշումների կայացման գործընթացի փոխհարաբերությունները, պետք է հստակորեն նախանշված լինեն և հարգվեն, ինչպես սահմանների, պահպանական գոտիների և ազդեցության առավել լայն հատվածի պարագայում է:

Հուշարձանի հարևանությամբ Համաշխարհային բացառիկ արժեքի վրա ազդող կամ բուն հուշարձանում էական փոխություններ առաջացնող պլանների իրագործման դեպքում անդամ պետությունը պետք է տեղեկացնի Համաշխարհային ժառանգության կոմիտեին պլանավորման գործընթացի սկզբից (ԳՈՒ-ի 172-րդ պարբերություն): Իհարկե, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձաններին վերաբերող պլանավորումները պետք է նպատակ ունենան պաշտպանելու Համաշխարհային բացառիկ արժեքը: Առաջարկվող միջամտությունների համար ժառանգության վրա ազդեցության մակարդակի գնահատման իրականացումը կենսական նշանակություն ունի:

Գործընթացում կայուն զարգացմանը վերաբերող սկզբունքների ներմուծմամբ Համաշխարհային ժառանգությանը վերաբերող պլանավորումը պետք է առավելություններ նախատեսի հանրության համար (տես 2.3-րդ մասը): Սա կախված է շահագրգիռ կողմերի կողմից հուշարձանի մանրամասն ընկալումից: Իհարկե, ԳՈՒ-ը ընդգծում է, որ «արդյունավետ կառավարումը ներառում է երկարաժամկետ փուլ և առօրյա գործողություններ անվանակարգված հուշարձանի պաշտպանության, պահպանվածության և հանրահռչակման համար: Ինտեգրված մոտեցումը պլանավորման և կառավարման համակարգերի նկատմամբ կարևոր է հուշարձանը՝ ժամանակի ընթացքում գնահատելու և դրա համաշխարհային բացառիկ արժեքների պահպանվածության ապահովման տեսանկյունից: Նման մոտեցումը դուրս է գալիս հուշարձանի տարածքից և ընդգրկում է ցանկացած պահպանական գոտի(ներ), ինչպես նաև առավել լայն տարածքներ»:

Համաշխարհային ժառանգության պլանավորման մեխանիզմները պետք է բավականին ճկուն լինեն՝

- Համաշխարհային ժառանգության հուշարձանին բնորոշ պահանջներին համապատասխանացնելու նպատակով փոփոխություններն ադապտացնելու համար,
- արտակարգ իրավիճակների պայմաններում պլանների վերանայումը թույլատրելու համար՝ պահպանվածության վիճակի վերաբերյալ որոշումների արդյունքների կամ վտանգված հուշարձանների ցանկում ընդգրկելու դեպքերում, որոնք ուղղված են Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանմանը (տես 3.3-րդ մասը),
- նոր մարտահրավերներին դիմակայելու համար, որոնք կարող են ի հայտ գալ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկումից հետո, երբ ստուգվում են, որ այցելուների համար նախատեսված ենթակառուցվածքները համարապատասխանում են փոփոխության մակարդակին և այցելուների խմբերին: Այս հիմնավորմամբ է, որ Համաշխարհային ժառանգության համատեքստում «կառավարման պլանավորումը» դարձել է կարևոր գործիք կառավարման համակարգը կարգավորելու, եթե անհրաժեշտ է ամբողջությամբ վերափոխելու համար՝ նոր կարիքներին հասցեական պատասխանելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ աջակցություն ապահովելու նպատակով: «Կառավարման պլանը», որի արդյունքները սերտորեն համապատասխանում են Համաշխարհային ժառանգության անվանակարգային փաթեթի կարիքներին և ցուցադրում են, թե ինչպես է հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը պահպանվելու գործընթացների ժամանակ, կախված է շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությունից: Կառավարման պլանավորումը քննության է առնվում տվյալ ձեռնարկի Հավելված Ա-ում

Պլանավորման նոր գործիքներ

Համաշխարհային ժառանգության հուշարձան հանդիսացող պատմական Կահիրեն ընդգրկվել է 1979 թ.-ին և վերջին տարիներին դիտարկվում է սերտ համագործակցություն պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ու ոչ կառավարական գործընկերների միջև՝ կառավարման նոր մոտեցումները բարեփոխելու նպատակով: Նման նախաձեռնություններից մեկը պատմական Կահիրեի քաղաքային միջավայրի վերականգնման նախագիծն է, որը <<2010 թ.-ից սկսած մշակվել է տեղական մարմինների հետ՝ նպատակ ունենալով նախապայտարարել պլանավորման և կառավարման համար անհրաժեշտ գործիքները՝ վերը նշված ժառանգության արժեքների պահպանման նպատակով՝ ի հավելում Համաշխարհային ժառանգության հուշարձանի մակարդակի բարձրացման սոցիալ-տնտեսական և բնապահպանական տեսանկյունից... Պատմական Կահիրեի քաղաքային միջավայրի վերականգնման նախագիծը ... հույս է հայտնվում, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանը կընկալվի և կպաշտպանվի այս արագ զարգացող նորամուծությունների մեջ արդյունավետ, համապարփակ և կայուն զարգացման համակարգի միջոցով, որն ամրապնդվել է ներգրավված տարբեր հաստատությունների արդյունավետ համակարգման շնորհիվ>>:



© UNESCO / Վ. Դոմ


Պատմական Կահիրե (եգիպտոս)

<http://whc.unesco.org/en/activities/663/>

Գործընթաց 2: ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Ակնարկ

Իրականացման մոտեցումները մեծապես տարբերվում են, քանի որ դրանց վրա ազդում են իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը, ինչպես նաև ռեսուրսների կառավարման և օգտագործման տեղի պրակտիկան: Ինչպես պլանավորման դեպքում է, ժառանգության կառավարման շատ համակարգեր զարգացնում են իրականացման նոր մոտեցումներ: Սա նշանակում է, որ ստորև ներկայացված <<ընդհանուր հենքը>> որոշ անդամ պետություններում տեղակայված հուշարձանների համար քիչ հավանականություն ունի կիրառման տեսանկյունից, սակայն կարող է համապատասխանել հետազայում:



Պատկեր 13: Կառավարման համակարգի երեք հիմնական գործընթացներից երկրորդը. իրականացում

Երեք նախանշված գործընթացներից իրականացումը բավականին կախում ունի մյուս երկուսից: Արդյունավետություն ապահովելու համար այն կախված է լավ պլանավորումից, որն էլ իր հերթին կախված է արդյունավետ մոնիթորինգից: Այնուամենայնիվ, պլանավորումը և մոնիթորինգը գոյություն ունեն իրականացումը խթանելու և բարեփոխելու համար, իսկ պլանավորման ընթացակարգերը կարող են վտանգվել իրականացումը ստուգելու անբավարար հնարավորությունների պատճառով:

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Իրականացման փուլը բեկումնային է, քանի որ մշակութային հուշարձանի, վերջինիս կառավարման համակարգի և դրա համատեքստի միջև փոխկապակցվածությունը հնարավորություն են տալիս ազդելու կամ փոփոխելու արդեն իսկ պլանավորած գործողությունների իրականացումը: <<Փոփոխությունը>> կարող է ներմուծել բարեփոխումներ կամ կառավարել անցանկալի փոփոխության բացասական ազդեցությունը, սակայն այն կարող է վնաս հասցնել, եթե գործընթացի ցիկլն արդյունավետ չի աշխատում:

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ

Մոտեցումներ և մարտահրավերներն էապես տարբերվում են

Պլանավորած գործողությունները, մասնավորապես պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների մասով, հիմնականում իրականացվել են պետական հաստատությունների աշխատակազմի կողմից: Քաղաքային հուշարձանների կամ մշակութային տեղանքապատկերների համար մասնավոր սեփականատերերը և հասարակական կազմակերպությունները մեծ դերակատարություն ունեն: Շատ երկրներում պետական հաստատությունների կամ մասնավոր սեփականատերերի կողմից ոլորտից դուրս հրավիրված մասնագետների, կապալառուների և ՀԿ-ների ներգրավվածության մակարդակը գնալով աճում է:

Ելնելով ինստիտուցիոնալ համակարգից՝ իրականացման շուրջ գոյություն ունեցող մոտեցումները տարբերվում են իրականացման և նախապատրաստական փուլերում անհրաժեշտ համարվող առաջադրանքների, ինչպես նաև գործողություններն ավարտին հասցնելու տեսանկյուններից:

Մեծավ մասամբ նման մոտեցումները միմյանցից տարբերվում են մյուս կողմերի հետ փոխգործակցության հետևանքով, կամ գործընկերության ձևաչափի, կամ արտաքին ծառայությունների, մատակարարումների կամ աշխատանքների ձեռքբերման դեպքերում:

Ի՞նչ է ենթադրում իրականացումը

Կառավարման ցիկլի իրականացման փուլը պետք է ընդգրկի առաջադրանքների և առաջնահերթությունների համակարգում: Այն բնորոշվում է երկու զուգահեռ գործողություններով՝

- (i) պլանավորած գործողությունների իրականացում, և
- (ii) սկզբնական նպատակների հետ համապատասխանելիության հետևողական ստուգում:

Որոշ դեպքերում այդ գործողություններն անհրաժեշտ է միավորել երկու լրացուցիչ գործողությունների հետ՝

- (iii) փոփոխել մոտեցումները և գործողությունները անհրաժեշտության դեպքում,
- (iv) նախանշել և ուղղել ցանկացած սխալ:

Իրականացման գործողությունները կարող են բաժանվել երկու հիմնական կատեգորիաների՝

<<Սովորական>>, առօրյա գործողություններ

Եզրույթը կարող է ներառել հուշարձանի պահպանության հետ կապված ծրագրերը, աշխատավարձի կամ արտաքին կապալառուների վճարումները, իրականացման համակարգումը, հուշարձանի հանրահոշակումը և լայն պարտավորությունների իրականացումը:

Առանձնահատուկ, մեկանգամյա գործողություններ

Սա կարող է ներառել որոշակի տարածքի համապարփակ կոնսերվացման կամ ամրակայման աշխատանքները, այցելուների կենտրոնի կառուցումը, հետազոտական նախագծերը, պահպանական գոտու ենթակառուցվածքների բարելավումը, ինչպես նաև հանրահոշակման և լսարանի զարգացման նոր մոտեցումները:

Նշված գործողությունները կարող են նաև ներառել արտաքին նոր հնարավորությունների կամ ներգործությունների կառավարումը, որոնք ի հայտ են գալիս իրականացված գործողությունների արդյունքում, ինչպիսիք են երրորդ կողմի վնասարար գործողությունների կանխարգելումը և այլ գործողությունների ազդեցությունների կառավարումը:

Իրականացման վերաբերյալ հիմնական դիտարկումները

Իրականացման փուլը պահանջում է որոշակի պատրաստվածություն նոր ազդեցություններին և հնարավորություններին հասցեկան պատասխանելու համար: Ծրագրավորված գործողությունների իրականացումն ուղղիչ գործողությունների հետևողական ինտեգրման համադրությամբ խթանում է գործընթացների անընդհատ կատարելագործման պարույրի վեր բարձրացումը:

Իրականացման շրջափուլում տեղ գտած սխալներն ավելի դժվար է ուղղել պլանավորման և մոնիթորինգի ընթացքում կատարած թերացումների հետ համեմատությամբ, քանի որ մշակութային հուշարձանը, կառավարման համակարգը կամ լայն իմաստով փոխկապակցվածությունը փոփոխության են ենթարկվում: Դիտարկումները տե՛ս ստորև:

Լայն մասնակցություն

Արդյունավետ իրականացումը, ինչպիսին է պլանավորումը, կախված է հասցեական լուծում պահանջող խնդիրներին առնչվող գիտակարգերի ներկայացուցիչներից ձևավորված միջոլորտային թիմի վերահսկողությունից, ովքեր կարող են համարժեք լուծումներ առաջարկել իրականացման ընթացքում ի հայտ եկած նոր կարիքներին: Այն նաև կախում ունի այլ ոլորտներից՝ ներառյալ ռիսկերի կառավարումը, հաղորդակցությունը և այլ ոլորտներից մասնագետների ներգրավումը: Արդյունավետ իրականացումը կախված է առնչություն ունեցող բոլոր շահագրգիռ կողմերի ներդրումների համակարգումից, և այն պահանջում է որոշակի արհեստավարժություն:

Հաշվառում և հաշվետվողականություն

Տվյալների հավաքագրման մեխանիզմները պետք է տեղում ներմուծված լինեն որպես իրականացման գործընթացի մի մաս՝ մոնիթորինգի գործընթացի համար հենքային նյութ տրամադրելու նպատակով (տես տվյալ մասը, Գործընթաց 3 - Մոնիթորինգ):

Սովորաբար ժամանակացույցի որոշակի ձևաչափ է օգտագործվում իրականացրած գործողությունները համակարգված գրանցելու համար: Այս ժամանակացույցերը պետք է համակցված լինեն աուդիտային գործիքների հետ գործընթացը գնահատելու (տես նաև Հավելված Ա-ն) և ուղղիչ գործողությունների արդյունավետ վերապլանավորման ու իրականացման համար:

Հաղորդակցման ռազմավարությունները, ներառյալ պլանները և ծրագրերը, պետք է հաստատվեն համաձայնեցմամբ: Դրանցով պետք է ընդունել ներքին և արտաքին տեղեկատվության փոխանցման տարբեր պահանջները, ինչպես նաև թարմացվեն փոփոխվող կարիքներին համապատասխանեցնելու նպատակով:

Տարբեր ոլորտներից փոխառությամբ վերցված <<հսկողության>> և <<հաղորդակցման>> գործիքակազմերի մի ամբողջություն կարող է բարձրացնել արդյունավետությունը իրականացման շրջափուլում:

Կառավարման համակարգի առօրյա գործողությունների և համաժամանակյա նախաձեռնությունների միջև հավասարակշռություն ձեռք բերելու նպատակով՝ անհրաժեշտ է բավականին ուշադիր լինել, քանի որ այդ երկուսը կարող են իրականացման տարբեր մոտեցումներ պահանջել:

Պատասխանատվության բաշխումը

Իրականացման փուլում ցանկալի արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է գործընթացների հստակ սահմանում, իրականացում և աջակցության ապահովում, դերակատարությունների, պատասխանատվությունների և որոշումներ կայացնելու մեխանիզմների առկայություն, ինչպես նաև ճկունություն իրականացման ընթացքում դրանցում փոփոխություն կատարելու համար:

Բոլոր ներգրավված անձանց համար անհատական պատասխանատվության սահմանումը կարևոր նշանակություն ունի հաշվետվողականության, ինչպես նաև թափանցիկության ապահովման համար: Նման մոտեցումը պետք է զուգորդվի ղեկավար անձնակազմի անկախ և օբյեկտիվ մտածելակերպի հետ, մի բան, որն անհրաժեշտ է ակտիվ խրախուսել իրականացման փուլի ընթացքում:

Հանրային իրազեկվածության զարգացումը և խրախուսումը, իրավազորությունը և կարողությունն անհատական մակարդակում, ինստիտուցիոնալ համակարգը և մասնակցային մոտեցման (տես կարողությունների կառուցման բաժինը 3.8-րդ մասում) կիրառման դեպքում կենտրոնական բաղադրիչ հանդիսացող մյուս ցանցերը երբեմն արհամարհվում են, սակայն կարևոր են և իրականացման, և պլանավորման փուլերի ընթացքում:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԻՌԵՐՈՐԵՐՆԵՐ

- ▶ Պլանավորմանը վերաբերող վերը ներկայացված բաժնում հիշատակված հիմնական պարամետրերը, որոնցով չափվում են պլանավորած աշխատանքային ծրագրի (տես 4.4-րդ մասը՝ Արդյունքներ) յուրաքանչյուր գործողության թիրախային լինելու հանգամանքը - շրջանակը, կատարումը, արժեքը, որակը և ժամանակահատվածը, այժմ կարիք ունի ներկայացվելու չոր տվյալների և հստակ տեխնիկական առանձնահատկությունների տեսքով, որոնք հետևողականորեն ուսումնասիրվում և թարմացվում են իրականացման գործընթացի ամրապնդման նպատակով:



4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

- ▶ Կարևոր է նախանշել, թե վերը ներկայացված պարամետրերից որը (և միգուցե մյուսները) կարող է փոփոխվել (և ինչ կարգով) հանգամանքների փոփոխության պարագայում (օրինակ՝ ծրագրավորման կամ ռեսուրսների հետ կապված խնդիրներ) որոշակի գործողությունների դեպքերում և հասկանալ, թե որտեղ է անհրաժեշտ գնալ փոխզիջման: Հաճախ դա որոշվում է քաղաքականությամբ (օրինակ՝ որոշի հետ կապված խիստ ստանդարտներ) կամ սահմանափակումներով (օրինակ՝ անփոփոխ վերջնաժամկետներ) ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում: Անհրաժեշտ է համաձայնության գալ իրականացման փուլում վերականգնվող հարցի շուրջ:
- ▶ Իրականացման ընթացքում բավականին դժվար է ստուգել, թե արդյո՞ք առաջընթաց կա ընդհանուր նպատակներին (տես 4.4-րդ մասը՝ Արդյունքներ) հասնելու տեսանկյունից, որոնց համար իրականացվում են որոշակի գործողություններ: Այնուամենայնիվ, սա կարևոր հանգամանք է տեղեկատվությամբ ապահովելու ցանկացած վերականգնվող գործողություն:
- ▶ Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պլանավորման ընթացքում տեղ գտած բացթողումներին, որոնք բացասական հետևանքներ են ունենում իրականացման փուլի ընթացքում:
 - անբավարար ռեսուրսներ (մասնավորապես՝ մարդկային և մտավոր),
 - չստուգել այն փաստը, որ սարքավորումները և ենթակառուցվածքները պահպանվում են և դրանցից հնարավոր է օգտվել,
 - ենթակառուցվածքների անբավարար ստուգում (օրինակ՝ ճանապարհներ, մատչելիություն, ծառայությունների մատուցում, գրասենյակներ, հրդեհաշիջման աշտարակներ)
 - նոր գործողությունների հետևանքով առաջացած լրացուցիչ ծանրաբեռնվածություն ընդունելու անհնարինություն (օրինակ՝ հուշարձանի կոնսերվացման աշխատանքներ, համայնքային ջրամատակարարման ընդհատումներ, շահագրգիռ կողմերի միջև շահերի բախում), որոնք կարող են ի հայտ գալ որոշակի գործողությունների արդյունքում
- ▶ Այլ ոլորտներից մասնագետների ներգրավման հարցում մոտեցումները (կառավարման համակարգից դուրս ծառայությունների և աշխատանքների ծեռքերման գործընթացների սահմանում և պայմանագրեր կնքելու թույլտվություն) բավականին տարբերվում են եվրոպական հանրության շրջանակներում, որտեղ անդամ պետություններին միավորում է ընդհանուր իրավական համակարգը: Որոշ երկրներում գոյություն ունեն միավորված և հստակ սահմանված մոտեցումներ մշակութային ժառանգության ոլորտում անհրաժեշտ գործողությունների բաժանման և վտանգների դեպքում գործնական աշխատանքի նկատմամբ, ինչպես նաև այն երկրներում, որոնք դեռ նոր են սկսել զբաղվել նմանատիպ հարցերով վերջին: Սա որոշակի կարևորություն ունեցող գիտելիքի ոլորտ է այն հուշարձանների տեսանկյունից, որոնց կառավարումը կարիք ունի համակարգից դուրս մասնագետների ներգրավման համար փորձաքննություն անցկացնելու, ծառայություններ կամ աշխատանքներ իրականացնելու նպատակով (լինի դա պետական մարմիններ կամ մասնավոր սեփականատերեր):
- ▶ Հուշարձանի որոշ կառավարիչներ օբյեկտին վերաբերող աշխատանքներին ծավալի մեծ հատվածը իրականացնում են այլոց միջոցներով (մասնավոր սեփականատերեր կամ բազմակի նշանակության կազմակերպություններ, որոնք ձևավորում են ինստիտուցիոնալ համակարգը): Նրանց գործունեության հիմնական նպատակը արդյունքների ապահովումը չէ ներքին աշխատակազմի կամ այլ մասնագետների ներգրավման շնորհիվ, այլ բանակցությունների իրականացումը: Խնդիրը որոշակի գործողություններ իրականացման մեջ այլոց համոզելն է, ընդ որում, պատշաճ մակարդակով և համակարգված իրականացնելը, այսինքն՝ պատասխանատվություն, բայց առանց լիազորությունների, ինչը բնորոշ է ժառանգության կառավարման հիմնական համակարգերից շատերին:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

- ▶ Արդյո՞ք ստորև ներկայացվող տակտիկական մոտեցումներից բոլորը կամ որոշները ներմուծված են որպես իրականացման գործընթացի մի հատված:
- ▶ Արդյո՞ք կառավարման համակարգի մեջ կամ դրանից դուրս գտնվող մյուս կողմերը ներգրավված են, և եթե՞ այո, ապա ի՞նչ մակարդակում:
- ▶ Արդյո՞ք մարդկային և ֆինանսական ռեսուրսների, սարքավորումների և ենթակառուցվածքների և այլնի հատկացման և բաշխման ոլորտներում իրականացվում են պարբերական վերանայումներ իրականացման ընթացքում:
- ▶ Արդյո՞ք հաստատվել և շարունակում են գործել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են գնահատելու և նախապատրաստվելու կառավարման համակարգում արտաքին սպառնալիքներով և բացթողումներով պայմանավորված խնդրահարույց գործողություններին, այսինքն՝ վտանգների կառավարման տարբեր արտահայտություններ:
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն տեղում ներդրված մեխանիզմներ՝ երաշխավորելու, որ իրականացման շրջափուլում ստեղծված տեղեկատվությունը և փաստաթղթերը շարունակում են թարմացված, գործին վերաբերող և ապահով մնալ, ինչպես նաև կիրառվում են հետագա գործողությունները հուշելու համար:
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն մեխանիզմներ՝ երաշխավորելու բոլոր անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը կամ դրանց անխափան մատակարարումը իրականացում անմիջապես սկսելուց հետո:
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն մեխանիզմներ՝ երաշխավորելու բոլոր անհրաժեշտ լիազորությունների և հաստատումների առկայությունը, ինչպես նաև գործին առնչվող մարմինների իրազեկվածությունը:
- ▶ Արդյո՞ք անհատների, մատակարարների կամ կապալառուների միջև գոյություն ունի պատասխանատվության պատշաճ տարանջատում, ինչպես նաև բավարար մակարդակի լիազորություն գործողությունների իրականացման համար:
- ▶ Արդյո՞ք տեղում գոյություն ունեն մեխանիզմներ իրականացման ընթացքում մշակութային հուշարձանի շահերի և շահագրգիռ կողմերի միջև առաջացած տարաձայնությունները լուծելու համար:

ԻՌԱՎԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐԻԱԿԻ ժԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հիմնական դիտարկումներ

Համաշխարհային ժառանգության համատեքստում միջոցառումների իրականացման մոտեցումները պետք է ուղղված լինեն հուշարձանի (կամ հուշարձանների) պահպանությանը և կառավարմանը այնպես, որպեսզի ոչ միայն կանխեն արտաքին ազդեցությունները, այլև հնարավորություն ընձեռեն երաշխավորելու Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունը և հանրության կողմից ժառանգության տրամադրած օգուտներից օտվելու հնարավորությունը: Նման խնդիրները պետք է արդեն իսկ դիտարկվեն պլանավորման փուլում (և մանրամասն ներկայացվել են կառավարման պլանում, եթե այդպիսիք կիրառման մեջ են, տես Հավելված Ա-ն), սակայն կարող են ի հայտ գալ պլաներ (ներառյալ իրականացման ռազմավարություն) պահանջող հանգամանքներ, որոնք պետք է վերանայվեն: Ստորև ներկայացվում են սցենարներ, երբ կարող են ի հայտ գալ նման պահանջներ (տես նախկին բաժինը և Հավելված Ա-ն):

- Բնածին կամ տեխնածին աղետներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ, որոնք կարող են պոտենցիալ վտանգ հանդիսանալ Համաշխարհային բացառիկ արժեքի համար,
- Համաշխարհային ժառանգության կոմիտեի պահանջը, որը հիմնված է պահպանվածության վիճակի զեկույցի վրա՝ ժառանգությունից հնարավոր վտանգները հեռացնելու տեսլականով,
- Հուշարձանի ընդգրկումը Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում,
- Փոփոխությունները կառավարման համակարգում, որոնք, ըստ պարբերական զեկույցի, հրատապ բնույթ են կրում,
- Փոփոխությունները կառավարման համակարգում, որոնք ի հայտ են եկել Համաշխարհային ժառանգության պահանջների փոփոխությունից:

Վերջին կետի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հուշարձանի համար իրականացված գործողությունների համապատասխանելիությունը պետք է համեմատել Համաշխարհային ժառանգության համակարգի վերջին պահանջների հետ:

Գործընթաց 3: ՄՈՆԻԹՈՐԻՆԳ


Ակնարկ

Մոնիթորինգը⁶⁹ ենթադրում է տվյալների հավաքագրում և վերլուծություն հասնուկ նպատակների համար, ինչպես նաև դրա արժևորումը, որպեսզի՝

- ստուգվի, թե արդյո՞ք կառավարման համակարգը գործում է արդյունավետ (պահանջելով ժառանգության ոլորտի գործընթացների և կառավարման համակարգի տարբեր ուղղությունների դիտանցումը),
- ստուգվի, թե արդյո՞ք կառավարման համակարգը ապահովում է ճիշտ արդյունքները (միջանկյալ և ավարտական)՝ ի թիվս այլոց սահմանելով բուն հուշարձանը մոնիթորինգի ենթարկելու պահանջը,
- հաստատվի, թե ինչպիսի վերականգնողական միջոցառումներ կամ նոր նախաձեռնություններ են նախանշվել բացթողումների կամ նոր հնարավորությունների ի հայտ գալու պարագայում:

Մոնիթորինգի իրականացման միջոցով կառավարիչներն ապահովվում են այնպիսի փաստերով, որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել իրենց կոնսերվացման քաղաքականությունը, կարիքները և որոշումները: Մոնիթորինգը չպետք է պարզապես չմշակված տվյալների հավաքագրումը լինի, այլ մի գործընթաց, որը ենթադրում է տվյալների վերլուծություն, օրինակ՝ հուշարձանի պահպանվածության վիճակի կամ կառավարման համակարգի արդյունավետության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Պատկեր 14: Կառավարման համակարգի երեք հիմնական գործընթացներից երրորդը. մոնիթորինգ



69. Stovel, H. (ed). 2004. Monitoring World Heritage, Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 10).

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ

Մոտեցումները և մարտահրավերները բավականին տարբերվում են

Ժառանգության ոլորտում մոնիթորինգի իրականացումն ընդգրկում է կառավարման համակարգի գնահատման տարբեր ուղղություններ, սակայն դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի:

(i) Կառավարման համակարգի ընդհանուր արդյունավետություն. օրինակ՝ արդյո՞ք վարչարարության ոլորտում սահմանված նպատակները ձեռք են բերվել, արդյո՞ք գործընթացներն իրականացվում են պատշաճ մակարդակով, արդյո՞ք իրականացված գործողությունները համապատասխանում են արժեքին, որակին և ժամանակացույցին, արդյո՞ք բոլոր գիտակարգերի ներկայացուցիչներն իրենց ներդրումն են ունեցել որոշումների կայացման գործում, ինչպես նաև արդյո՞ք արդյունքներից և մյուս գործողություններից ստացված տեղեկատվությունը ներդրվում է համակարգի մեջ և ապահովվում հետագա գործունեության իրազեկվածությունը:

(ii) Կառավարման համակարգի արդյունքները. օրինակ՝ հուշարձանի վիճակը, արդյո՞ք պաշտպանվել են ժառանգության արժեքները, արդյո՞ք փոփոխվել են իսկությունը և ամբողջականությունը, շրջակա միջավայրի վիճակը, ժառանգության ֆիզիկական վիճակի վատացման աստիճանը, ինչպես նաև սոցիալական ներգրավվածության աստիճանը: Մոնիթորինգային գործընթացը հիմնականում ուսումնասիրում է միտումները: Դրանք տատանվում են տեխնոլոգիաների և միջոցառումների մոտեցումների կիրառմամբ ընթացակարգերի մանրամասն մշակումից մինչև հուշարձանի անձնակազմի կամ տեղի համայնքի ներկայացուցիչների կողմից պարզ, կանոնավոր, վիզուալ ստուգումները:

Ինչ է ենթադրում մոնիթորինգը

Մոնիթորինգը չափում է, թե արդյո՞ք կառավարման համակարգն աշխատում է, թե՛ ոչ, արդյո՞ք մշակութային ժառանգության վիճակը վատթարանում է, թե՛ ոչ, արդյո՞ք հանրությունն օգտվում է ժառանգության տրամադրած առավելություններից: Չնայած փոխկապակցվածությանը՝ դրանք իրենցից ներկայացնում են մոնիթորինգի երկու տարբեր տիպեր, առաջինը չափելի է դարձնում գործընթացը, իսկ մյուսը՝ միջանկյալ և վերջնական արդյունքները: Ցանկացած ներգրավված անձ պետք է հստակորեն ընկալի և տարբերակի դրանք:

Մոնիթորինգի երկու տարբերակներն էլ դրական փոփոխությունների միջոցներ են, օրինակ՝

- ռեսուրսների լավագույնս հատկացում,
- փաստաթղթերի և հաշվետվությունների կազմում այնպես, որպեսզի այն չդառնա ծանրաբեռնող, ժամանակատար և միջոցները վատնող գործընթաց, այլ համապատասխանի հաշվետվությունների ներկայացման գործընթացներին,
- հնարավորություն ընձեռի ղեկավար անձնակազմին փոփոխել, խթանել առաջադեմ վերաբերմունքը ժառանգության կոնսերվացման և կառավարման հանդեպ, այլ ոչ թե հակառակը,
- հնարավոր դոնորներից կամ գործընկերությունից նոր աջակցության ձեռքբերումը՝ ցուցաբերելով համաձայնեցված և արժանահավատ մոտեցում:⁷⁰

Մոնիթորինգի միջոցով վեր են հանվում ժամանակի ընթացքում տեղ գտած փոփոխությունները հատուկ մշակված ինդիկատորների միջոցով: Ժառանգության պարագայում ինդիկատորների ամբողջությունը պետք է ցույց տա հուշարձանի պահպանվածության աստիճանը, ինչպես նաև կարևորություն ունեցող ժառանգության արժեքները: Համաշխարհային ժառանգության պարագայում դրանք արտահայտվում են կառավարման պլանում և անվանակարգի ներկայացման ձևաչափի 6-րդ բաժնում: Այս համատեքստում հետաքրքրություն է ներկայացնում 2012 թ. հրատարակության «Կառավարելով Համաշխարհային բնության ժառանգությունը» մեթոդական ձեռնարկի Հավելված 1-ը (էջեր 90-91), որտեղ ներկայացված են մի շարք ինդիկատորների հնարավոր գնահատման մեկնաբանություններ, որոնք մշակվել են պարբերական զեկույցի ներկայացման հարցաշարի հիման վրա և նշված հարցաշարի երկրորդ բաժնի 4.8.2-րդ կետի հարցին պատասխանելու նպատակով: «Արդյո՞ք մշակվել են պահպանվածության վիճակը չափելի դարձնող հիմնական ինդիկատորներ, որոնք կիրառվել են Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության դիտացման գործընթացի ժամանակ»:

«Մոնիթորինգի» կազմակերպման նպատակով՝ իրականացման ընթացքում չափելի դարձված և հավաքագրված տվյալները պետք է վերլուծվեն այնպես, որ դրանք վերածվեն տեղեկատվության (այլ ոչ թե զուտ տվյալների)՝ թույլատրելով փաստացի արդյունքները համեմատել ակնկալված արդյունքների հետ («պլանավորման» գործընթացի թիրախները կամ նպատակները): Այս տեղեկատվությունը, երբ համակցվում է անցյալում կատարված գործողությունների վերլուծությամբ, միտումները դառնում են ընկալելի:

70. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23) pp. 88-89.

Իհարկե, «մոնիթորինգ» եզրույթը հաճախ կիրառվում է ժառանգության ոլորտում տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության առումով՝ ստուգելու համար առանձին իրավիճակների կամ գործողությունների որակը կամ բովանդակությունը (տես 4.4-րդ կետը, Արդյունք 3. Բարեփոխումներ կառավարման համակարգերում վերանայման կամ փոփոխության ենթակա ոլորտների նախանշման համար):

Մոնիթորինգի վերաբերյալ հիմնական դիտարկումները

Մոնիթորինգի և դրա գնահատման համակարգերի, ինչպես նաև մեթոդաբանությունների ձևավորման ընթացքում պետք է հաշվի առնվի կոնսերվացման և կառավարման ոլորտում գոյություն ունեցող մոտեցումների բազմազանությունը՝ տարբեր տարածաշրջանային և մշակութային համատեքստերում:

Այնուամենայնիվ, ստորև ներկայացվող դիտարկումները կարող են վերաբերվել բազմաթիվ կառավարման համակարգերի:

Նպատակի սահմանում

Մոնիթորինգին վերաբերող նախաձեռնությունները օգտակար կլինեն ստացված տեղեկատվությանը համապատասխան գործելու հնարավորության դեպքում, երբ դրանք նախաձեռնվել են կոնկրետ նպատակի համար, և եթե դրանք հետադարձ տեղեկատվություն են փոխանցում ցիկլային տարբերակով՝

- կառավարման այլ գործընթացներին (և իհարկե մոնիթորինգային գործընթացին)՝ բարելավման նպատակով,
- կառավարման լայն համակարգին՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերում շտկումների առնչությամբ իրազեկվածության ապահովման, ինչպես նաև ռեսուրսների տրամադրման բարելավումն ապահովելու նպատակով:

Նման եղանակով մոնիթորինգը կարող է օգնել կառավարման համակարգի ընդհանուր կատարողականության բարձրացման և լավագույն արդյունքներին հասնելու հնարավորության մակարդակի բարձրացման հարցում: Իհարկե, կենսական նշանակություն ունի, թե ում և ինչին է ուղղված յուրաքանչյուր մոնիթորինգային գործընթացը, արշավները կարող են նախաձեռնվել տարբեր կարիքներից ելնելով:

Օրինակները հետևյալն են՝

- անցյալ և ընթացիկ գործողությունների ու քաղաքականությունների հաջողությունների և ծախս-դրամների գնահատում,
- հետագա պլանների և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվական ապահովում,
- լրացուցիչ ռեսուրսների ներգրավում,
- ժառանգության օբյեկտի տարածքում փոփոխությունների իրականացման շուրջ համաձայնության ձեռքբերում տեղի համայնքից,
- քաղաքական աջակցության մակարդակի մեծացում ժառանգության համար,
- այցելուների համար լրացուցիչ ենթակառուցվածքների ապահովում:

Այնուամենայնիվ, վիճակագրական տվյալների սիստեմատիկ մոնիթորինգը, որն ուղղակի չի վերաբերվում պլանավորած աշխատանքային ծրագրերի (միջանկյալ արդյունքներ) կամ կառավարման լայն նպատակների (վերջնական արդյունքներ) հետ, կարող է ժամանակ առ ժամանակ տրամադրել օգտակար տեղեկատվություն ապագա միտումների քարտեզագրման համար որպես հուշարձանի փոփոխության պարամետրերի: Օրինակ՝ այցելուների թվաքանակը սովորաբար սահմանված նպատակ չէ (քանի դեռ չի սահմանվել այցելուների որոշակի քանակ) կամ ուղղակի կառավարման գործողության արդյունք, սակայն այցելուների թվաքանակի մոնիթորինգը որոշակի եզրակացությունների կհանգեցնի կառավարման նկատմամբ ներկայացված պահանջների վերաբերյալ: Միաժամանակ, այցելուների կողմից հաղթահարած ճանապարհի երկարությունը կարող է օգտակար լինել հուշարձանից համայնքին հասցվող արժեքների և օգուտների գնահատման տեսանկյունից: Որոշակի սիստեմատիկ միտումների մոնիթորինգը կարող է հուշարձանի կառավարման համակարգի արյունափետ տեղեկատվության կառավարման մաս դառնալ: Այս հանգամանքը պետք է հնարավորինս ինտեգրված լինի պարբերական զեկույցների ներկայացման պահանջներում:

Անկողմնակալ և վստահելի տվյալներ

Մոնիթորինգը պետք է իրականացվի սիստեմատիկ մեթոդաբանության կիրառմամբ՝ հնարավորինս նվազեցնելով անաչառությունը և ընդգրկելով ճիշտ գիտակարգային որակավորում ունեցող մասնագետներին:

Տվյալների հավաքագրումը և չափման մոտեցումները կախված կլինեն գործընթացի տեսակից, սակայն պետք է համեմատության հնարավորություն ունենան և կրկնվեն ժամանակի ընթացքում: Տվյալները կարող են լինել լուսականների, տեսանյութերի, չափագրությունների, հարցազրույթների, գրված զեկույցների և այլնի տեսքով: Դիտարկումները պետք է համեմատվեն անցյալում գրանցված պահպանվածության վիճակի հետ (այսինքն՝ ելակետային տվյալ): Համաշխարհային ժառանգության անվանակարգային փաթեթը և խորհրդատվական մարմինների գնահատումը⁷¹ կարող են օգտակար տեղեկատվություն պարունակել պահպանվածության վիճակի վերաբերյալ:

71. Boccardi, G. 2004. 'Improving Monitoring for World Heritage Conservation', in: Stovel, H. (ed). 2004. Monitoring World Heritage, Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 10) p.39.

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Երկարաժամկետ մոնիթորինգ՝ երկարաժամկետ կառավարման օպերիմալացման նպատակով

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Հաղրիանոսի պարզ, որը Համաշխարհային ժառանգություն համարվող Հռոմեական կայսրության սահմանների առաջին բաղադրիչն է, անցնում է Հյուսիսային Անգլիայի արևելքից արևմուտք, ավելի քան 100 կմ երկարությամբ: Տևական ժամանակ այն սիրված էր, հուշարձանի երկարությամբ ձգվող երկար քայլուղին մինչև 2003 թ. պաշտոնապես հաստատված չէր: Նման քայլուղի ունենալու առաջարկությունը պաշտոնապես առաջ քաշվեց 1986 թ-ին, և դրա ստեղծումը որպես Ազգային արահեղի հաստատվեց ՄԹ կառավարության կողմից 1994 թ-ին: Արահեղը հիմնականում անցնում է պարի հնագիտական հատվածի վրայով կամ դրան կից, և հնագետները մտահոգություն հայտնեցին հռոմեական մնացորդների էրոզիայի, իսկ հարևանությամբ ապրող ֆերմերները՝ անցորդների կողմից իրենց կենսամիջոցի վրա ունեցած ազդեցության կապակցությամբ: Ի սկզբանե ծրագրով նախատեսված էր, որ երթուղու հիմնական հատվածը կանցնի ծովային ծածկույթի վրայով՝ դրանով իսկ նվազեցնելով ամուր հարթության հատվածը: Այդ կապակցությամբ Բնության օգտագործման և պահպանության նախկինում գործող հանձնաժողովի կողմից գործընթացի սկզբնական փուլում ընդգծվեց, որ ծրագրի ազդեցության մոնիթորինգը կդառնա հաջողության և կայուն օգտագործման հիմնական գրավականը:

Երթուղին համաձայնեցնելուց հետո Հաղրիանոսի պարի համար պատասխանատվություն կրող Անգլիայի ժառանգության աշխատակազմը սկսեց տարեկան երկու անգամ Ազգային արահեղի երկարությամբ իրականացնել լուսանկարչական մոնիթորինգ: Արդյունքում ապահովվեց գերազանց տեսողական նյութ Արահեղի վիճակի փոփոխության տեսանկյունից: Իսկ Ազգային արահեղի շրջանային հանձնաժողովի աշխատակազմը սկսեց իրականացնել այցելուների թվաքանակի հաշվառումը դարպասների վրա տեղադրված ավտոմատացված համակարգերի և պրոպագոնդակների միջոցով: Արդյունքում, 2003 թ-ին, երբ պաշտոնապես բացվեց արահեղը, արդեն իսկ գոյություն ունեին դրա օգտագործման և վիճակի վերաբերյալ մի քանի տարվա տվյալներ, որոնք հիմք հանդիսացան դրա վիճակի հետագա գնահատման համար: Դրանից հետո կոնկրետ վայրից իրականացված լուսանկարահանումը և այցելուների թվաքանակի գրանցումը շարունակվեց: Դրան զուգահեռ Արահեղի աշխատակազմը, որը ներկայումս վերակազմակերպվել է Հաղրիանոսի պարի ժառանգության ազգային հիմնադրամի, նույնպես հավաքագրում է տվյալներ ջերմաստիճանի տարանջատումների, անձրևների և հողի խոնավության մակարդակի վերաբերյալ: Արահեղն անցնում է տարեկան հետազոտություն և դրա վիճակը գրանցվում է: Այդ տվյալների փոխկապակցվածությունը հստակ պատկերացում է տալիս Արահեղի պահպանվածության վրա ազդեցություն ունեցող տարբեր գործընթացների վերաբերյալ:



© Ջոնիթ Հեման

Հաղրիանոսի պարի ազգային արահեղը Քոֆիլդում (Միացյալ Թագավորություն)

- Այդ գրառումները հիմք են ծառայում Արահերի գործնական կառավարման համար՝ էռոզիան կանխելու նպատակով:
Սա ենթադրում է նախքան մաշվածության ի հայտ գալը հիմնական պահպանության գործում շրջագայող ուղեպահների ներգրավում, մասշտաբային աշխատանքների իրականացման համար պլանավորած ծրագրեր, ինչպես նաև հանրային իրազեկման ինտենսիվ աշխատանքների իրականացում այցելուների շրջանում՝ արահերի հանդեպ հոգաբար վերաբերմունքի ձևավորման և պայմանների վաղաժամանակ դեպքերում չօգտագործելու նպատակով: Մոտավորապես 11000 մարդ է քայլում պարի երկայնքով սկիզբ մինչև վերջ, իսկ արահերի ամենահայտնի հատվածը տարեկան կարող է ընդունել 100000 այցելու:
Չնայած խոնավ մի քանի տարիների, որոնք ի հայտ եկան արահերի՝ 2003 թ-ին բացումից հետո, և էռոզիայի առաջացման պայմաններում, համակարգը հաջողությամբ գործում է՝ թույլատրելով արահերը լավագույնս պահպանել, ապահովել հնագիտական հուշարձանների պահպանվածությունը, ինչպես նաև լավ տրամադրություններ թողնել երթուղուց օգտվողների շրջանում, ինչը լրացուցիչ աջակցություն է տրեղական տնտեսության համար:

Մոնիթորինգային կայուն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ են ինստիտուցիոնալ պարտավորություններ և լայն աջակցություն:

Դա կարող է ընդլայնվել բոլոր մակարդակներում կարողությունների ստեղծմամբ (անհատներ, հաստատություններ, համայնքներ և ցանցեր) և բոլոր շահագրգիռ կողմերի, համայնքների (անհրաժեշտության դեպքում) լայնամասշտաբ մասնակցությունը մոնիթորինգային գործընթացին՝ ցույց տալով վերջինիս գործնական արդյունքները:

Մոնիթորինգը զարգացող դաշտ է, և նոր մոտեցումներ են ի հայտ գալիս: Անհրաժեշտ է հոգ տանել, որ նոր միտումները չհչնչացնեն ներքին տեղական պրակտիկան: Վերջինս ավելի հեշտ է լինում աղապատացնել մատչելի ռեսուրսներով, ինչը երաշխավորում է գործընթացի անընդհատությունը և հավաքագրված տվյալների առավել արդյունավետ կիրառումը բարեփոխումների իրականացման նպատակով⁷²:

ՄՈՆԻԹՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԻՆՏԵՐՆԵՐ

- ▶ Մոնիթորինգը հաճախ ստանդարտ հսկողություն իրականացնելու մեխանիզմ է՝ արդյունքները երաշխավորելու և որոշակի ստանդարտների ձեռքբերման նպատակով: Այս պարագայում տեղեկատվության կառավարումը պետք է արդյունավետ լինի և բխի օգտվողների կարիքներից: Ցանկացած համակարգում պետք է հատուկ շեշտադրում կատարել տվյալներից առավելագույն օգտվելու հնարավորության ապահովման վրա, որպեսզի այն վերածվի առօրյա և հարմարավետ գործիքի՝ պլանավորման և իրականացման գործընթացում:
- ▶ Կառավարման ոլորտի ընդհանուր արդյունավետությունը գնահատելու համար տվյալ բաժնում առաջարկվում է ինը բաղադրիչ կառավարման համակարգի հիմնական նպատակների հետ համադրությամբ, որոնք ձևավորում են գործնական ելակետային համակարգ անհրաժեշտ ինդիկատորների սահմանման նպատակով (տես 4.5-րդ կետը): Սույնով երաշխավորվում է, որ նախանշված ինդիկատորները հաշվի են առել փոխկապակցված գործոնները և մշակութային ժառանգության ոլորտի կառավարման համակարգի համալիր բնույթը, ինչպես նաև բացառվել է սոսկ ստուգման թերթիկ լինելու հանգամանքը:
- ▶ Ինչպես և կառավարման հետ առնչվող բոլոր գործընթացներում, մոնիթորինգի կազմակերպման գործողություններն անհրաժեշտ է կանոնավոր կերպով վերանայել, որպեսզի հսկողություն իրականացվի կարևոր համարվող ասպեկտների նկատմամբ և, որ չլինի պահանջվածից ավել տեղեկատվություն: Հնարավորինս պետք է օգտագործվեն արդեն իսկ հավաքագրված տվյալները:
- ▶ Ինդիկատորների սահմանման և աղբյուրների հաստատման համար հիմնական հարցադրումը «Ո՞վ է օգտագործելու տեղեկատվությունը»: Եթե մոնիթորինգը նախաձեռնվում է առանց հստակ օրակարգի, ապա այն կառավարման համակարգի համար դառնում է արտահոսքի աղբյուր, և ոչ մի կերպ առավելություն (այսինքն՝ տվյալների ստեղծում, որին անհրաժեշտ է կառավարում, սակայն բացակայում են օգտագործողները):
- ▶ Ո՞վ է իրականացնելու: Միգրուց այն պետք է իրականացնել չեզոքության պայմաններում՝ ներգրավելով արտաքին (չեզոք) մասնագետների կամ երաշխավորելով լայնամասշտաբ ներգրավվածություն մասնակցային մոտեցման միջոցով:
- ▶ Բացի առանձին նախանշված տեղեկատվության տրամադրումը մոնիթորինգային ծրագրերը կարող են հետազոտական ավելի մեծ տվյալներ տրամադրել կառավարման կարիքների և հնարավորությունների նախանշման համար:
- ▶ Անգլիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի ազգային հիմնադրամը հաստատել է այսպես կոչված եռակի չափորոշիչների գործիքը, որը նախատեսված է երեք սոցիալական, բնապահպանական և ֆինանսական բնագավառներում որոշումների ընդունման առավել արդյունավետ դարձնելու, ինչպես նաև ընթացիկ գործողությունների և հետագա պլանավորման համար տեղեկատվական ապահովվածության երաշխավորման նպատակով (տես 2-րդ մասը):

72. Stovel, H. (ed). 2004. Monitoring World Heritage, Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 10).

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Հիմնական դիտարկումներ

Համաշխարհային ժառանգության համակարգի հիմքում ընկած է մոնիթորինգը: Անվանակարգի առաջադրման գործընթացի սկզբից անդամ պետությունից պահանջվում է մոնիթորինգի կազմակերպում (ԳՈՒ-ի 132.6-րդ պարբերություն): Մոնիթորինգային մեխանիզմները Համաշխարհային ժառանգության համատեքստում ներառում են՝

- մոնիթորինգի համար ինդիկատորների նախանշում անվանակարգի ձևաչափում (ձևաչափի 6-րդ բաժին),
- արձագանքող մոնիթորինգ և պահպանվածության վիճակի գործընթաց,
- պարբերական զեկույցի ներկայացում (ԳՈՒ-ի 5-րդ գլուխ):

Ավելին, մոնիթորինգի ընդհանուր պլանը պետք է հասցեական ուղղված լինի կառավարման համակարգի արդյունավետությանը, ինչպես նաև պետք է հաստատվեն և մոնիթորինգային գործընթացի մեջ ներմուծվեն Համաշխարհային բացառիկ արժեքի, ներառյալ իսկության և ամբողջության, պահանջության ուղղված մի շարք առանձնահատուկ պահանջներ:

Ինդիկատորներ

Համաշխարհային ժառանգության հուշարձանի մոնիթորինգի իրականացման վերջնականատակն արդյունավետ պահպանության իրականացումն է: Հետևաբար, արդեն իսկ պլանավորման փուլում պետք է նախանշված լինեն Համաշխարհային բացառիկ արժեքին վերաբերող ինդիկատորները, որոնք առնչվում են Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտներին, ինչպես նաև իսկությանն ու ամբողջականությանը (տես 3-րդ մասը):

Հուշարձանի պահպանվածության վիճակի, դրա վրա ազդող գործոնների, տեղում կոնսերվացման միջոցառումների, ուսումնասիրությունների պարբերականության գնահատման և չափման, ինչպես նաև պատասխանատու մարմինների նախանշման նպատակով անհրաժեշտ է մշակել ինդիկատորներ (ԳՈՒ-ի 132.6-րդ պարբերություն):

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն ինդիկատորները, որոնց միջոցով հնարավորություն է ընձեռնվում պարզելու՝ արդյո՞ք Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանը և դրա կառավարման համակարգը սպառնալիքի տակ են գտնվում:

Ինդիկատորները կարող են լինել քանակական կամ որակական: Դրանց ընտրության հարցում ներկայացվող ընդհանուր բնույթի դիտարկումները հիմնականում վերաբերվում են հուշարձանի, դրա շրջապատող տարածքի պահպանվածության վիճակի և շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններին և դրանցում ցանկացած փոփոխությունը մոնիթորինգի ենթարկելուն: Ինդիկատորները կատարելապես պետք է՝

- թվով սահմանափակ լինեն,
- փոփոխությունների հանդեպ զգայուն, որի շնորհիվ հնարավոր է դառնում ներկայացնել, թե արդյո՞ք կառավարչական գործողություններն ազդեցություն են ունենում,
- մոնիթորինգի ենթարկվող միտումների հետ ունեն հստակ և չափելի կապ (օրինակ, եթե ժառանգություն համարվող հուշարձանի միջավայրում կլիմայական կայունությունը պետք է չափվի, ապա նյութակազմի ակտիվ քայքայման առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև կլիմայական միտումներին առնչվող ինդիկատորներ պետք է ներառված լինեն, եթե տեղի համայնքի տնտեսական կայունությունը հետաքրքրություն է ներկայացնում, ապա ինդիկատորների միջոցով, օրինակ, պետք է ուսումնասիրության ենթարկվի զբաղվածության մակարդակը և միջին եկամուտը),
- արտացոլեն երկարաժամկետ փոփոխությունները, այլ ոչ թե կարճաժամկետ և տեղային տա-տանումները (օրինակ, եթե ուսումնասիրվում է քայքայման որոշակի տեսակ, ապա անհրաժեշտ է ընտրել այնպիսի ինդիկատորներ, որոնք ամենայն հավանականությամբ կներկայացնեն երկարաժամկետ փոփոխությունները, այլ ոչ թե, օրինակ՝ եղանակային փոփոխությունները): Միաժամանակ, անհրաժեշտ է խուսափել երկարաժամկետ շրջափուլ ունեցող միտումների քարտեզագրումներից (օրինակ՝ մտավոր տեղաշարժերը մեկ սերնդից մյուսին), ինչի արդյունքում կառավարման համակարգին առնչվող օգտակար տեղեկատվության փոխանցումը իրատեսական ժամանակահատվածում դառնում է գրեթե անհնար,
- հասցեական լուծում տան փոփոխության ենթակա տարբեր ոլորտներին և ի հայտ եկած ազդեցություններին, որոնք կարող են ուղղակի պարտավորություններ առաջացնել հուշարձանի կառավարման հարցում, ներառյալ՝ սոցիալական, մշակութային, տնտեսական, բնապահպանական և քաղաքական,
- ի հայտ բերեն նոր ազդեցություններ: Օրինակ՝ կլիմայի փոփոխության ազդեցության փաստերը երկարաժամկետ հեռանկարում հնարավոր է տեսանելի չլինեն, սակայն մոնիթորինգի միջոցով կարելի է երաշխավորել, որ դրանք նախանշվում են հնարավորինս շուտ,
- պահանջեն մոնիթորինգի իրականացման ընթացակարգեր, որոնք հնարավորինս պարզեցված և արդյունավետ են ծախսերի տեսանկյունից՝ և տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, մեկնաբանման, կառավարման, և տեղեկատվության հավաքագրման մատչելիության, ինչպես նաև արդեն իսկ հավաքագրված տեղեկատվության հնարավոր օգտագործման համատեքստում: Եթե գործընթացում պահանջվում են սարքավորումներ, մասնագիտացված ծրագրային ապահովում, հատուկ գիտելիքներ, հմտություններ կամ լիազորություն, ապա նման միջոցառումներն ավելի խոցելի են դառնում ռեսուրսների անբավարարության կամ կադրային հոսքի հետևանքով առաջացած գիտելիքների կորստի պատճառով,

- ասոցացվեն հստակ նպատակների հետ, որոնք (երբ դրանց հասնում ես) կառավարման համակարգում գործողությունների մեկնարկի պատճառ են դառնում, օրինակ, եթե առանձին ոլորտում այցելուների թվաքանակը հասնում է որոշակի ինտենսիվության, ռոտացիոն այցելության մեխանիզմ է ներմուծվում տվյալ վայրերում մաշվածության մակարդի կրճատման նպատակով,
- մասնակցային եղանակով նախանշվեն և մոնիթորինգի ենթարկվեն, հատկապես այն դեպքերում, երբ հնարավոր է դառնում կառավարման համակարգի և դրա արդյունքների բարելավումը՝ օգուտ տրամադրելով շահագրգիռ կողմերին:

Կառավարման գործընթացները, արդյունքները և օգուտները մոնիթորինգի ենթարկող և գնահատող՝ 4.4-րդ կետում նշված ինդիկատորներն առավել մանրամասն են ուսումնասիրության ենթարկվում ամբողջ կառավարման համակարգի արդյունավետությունը և ներգործությունը լավագույնս հասկանալու համար:

Մոնիթորինգային պլանի մշակման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ դիտարկումներին՝

- հստակ սահմանել մոնիթորինգի իրականացման նպատակները,
- կապել նպատակներ մոնիթորինգի ինդիկատորների հետ, և հնարավորինս նախանշել յուրաքանչյուր ինդիկատորի սահմանը,
- հավաքագրել գործին առնչվող նյութերը (հրապարակումներ, նախկին գործողությունների, ներառյալ մոնիթորինգի, վերաբերյալ նախկինում կազմված զեկույցներ),
- նախանշել գոյություն ունեցող (օրինակ՝ արխիվի վերաբերյալ խորհրդատվությունները) և նոր աղբյուրներից (օրինակ՝ նմուշների վերցնում, հարցախոյզների անցկացում, դիտարկումներ) տվյալների հավաքագրման մեթոդները, ինչպես նաև սահմանել տվյալների հավաքագրման պարբերականությունը,
- ստանդարտացնել և պարզեցնել ընթացակարգերը՝ ռեսուրսների վատնում սահմանափակելու և ստորև ներկայացվող երեք ուղղություններում անվտանգության ընթացակարգերը օպտիմալացնելու նպատակով՝
 - տվյալների հավաքագրում
 - տվյալների վերլուծություն
 - տվյալների կառավարում, որը պետք է ներառի անցյալի արդյունքները, ներկա միտումները և ապագայի կանխատեսումները, ինչպես նաև գրանցի մոնիթորինգի հանդեպ ժամանակի ընթացքում ունեցած մոտեցման հարցում փոփոխությունները
- Ընկալել մոնիթորինգի արդյունքում ի հայտ եկած միտումները, ինչպես նաև վարչարարական համարժեք արձագանքի բովանդակությունը և ժամկետները, նախանշել դրանց իրականացման ժամանակացույցը (միաժամանակ կամ հազվադեպ, պարբերական կամ անկանոն, հաճախակի կամ անընդհատ կրկնվող մոնիթորինգ), ներգործության տակ գտնվող հատվածը և նման ներգործության մակարդակը ժառանգության կենսական արժեքների, մասնավորապես Համաշխարհային բացառիկ արժեքի վրա:
- Համաշխարհային ժառանգության պարագայում խնդրում ենք համապատասխանեցնել մոնիթորինգային պլանը պարբերական զեկույցի ներկայացման հարցաշարի հետ:

Բնության ժառանգության ոլորտը բավականին առաջադիմել է մոնիթորինգի իրականացման մոտեցումների հարցում, և նրանց առցանց ռեսուրսները անհրաժեշտ է հաշվի առնել:⁷³

Իհարկե, գործընթացների և ընդհանուր կառավարման արդյունավետության գործընթացների միջև գոյություն ունեցող հարաբերակցությունը Պաշտպանվող տարածքների հարցերով IUCN-ի Համաշխարհային հանձնաժողովին ստիպել է բնության ժառանգության կառավարիչների համար մշակել մի գործիքակազմ, որը կարող է օգտագործվել նաև մշակութային ժառանգության պարագայում: Դրա կիրառումը մշակույթի ոլորտում մինչ օրս փորձարկվում է, և համառոտ ամփոփագիրը ներկայացված է Հավելված Բ-ում:

73. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23).

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- ▶ Մշակութային արժեքների, այդ թվում՝ Համաշխարհային բացառիկ արժեքի վրա ունեցած ներգործությունը և հնարավոր միջամտությունները Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի բուն կամ հարակից տարածքում արդյունավետ գնահատելու տեսանկյունից ժառանգության վրա ազդեցության գնահատումը կարող է օգտակար միջոց լինել:
- ▶ Տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը և կառավարումից ստացված արդյունքները ժամանակ առ ժամանակ պետք է հավաքագրվեն: Ստանդար լուծումներ գոյություն չունեն: Կարողությունների զարգացման ծրագրերը կարող են հասցեական լուծում տալ այս կարիքներին՝ մասնավորապես խթանելով միջին հատվածի աշխատակազմի հմտությունները և դա պարտադիր պայման դարձնելով արտահաստիքային մասնագետների և կապալառուների համար: Համաշխարհային ժառանգության ռազմավարությունը կարողությունների կառուցման համար⁷⁴ և Համաշխարհային ժառանգության ընտանիքի և դրա սահմաններից դուրս գործող միությունները տարածաշրջանային կենտրոնների (տե՛ս 3.8-րդ կետը) օգնությամբ կարող են առաջարկել աջակցություն ցուցաբերող մի համակարգ:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

- ▶ Արդյո՞ք բավարարվում են Համաշխարհային ժառանգության հուշարձանի վերաբերյալ զեկույցի ներկայացման բոլոր պահանջները:
- ▶ Արդյո՞ք մոնիթորինգի միջոցով ներկայացվում է Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման համար պահանջվող տեղեկատվությունը:
- ▶ Արդյո՞ք հարաբերակցությունն ատրիբուտներից մինչև արժեքներ, և մասնավորապես Համաշխարհային բացառիկ ժառանգություն բավարար մակարդակով հաստատվել է, որպեսզի հնարավոր լինի նման ատրիբուտները ծառայեցնել որպես շոշափելի տվյալներ Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության արդյունավետությունը մոնիթորինգի ենթարկելու համար առանց վնասելու մյուս արժեքները:
- ▶ Արդյո՞ք Համաշխարհային ժառանգության հուշարձանների պահպանվածության վիճակի մասին զեկույցների տարածաշրջանային կամ համաշխարհային մակարդակով կատարած վերլուծությունների արդյունքները մատչելի են առանձին կառավարիչների համար միտումների նախաձեռնում և մյուսներից դասեր քաղելու նպատակով:
- ▶ Արդյո՞ք համաշխարհային ժառանգության մոնիթորինգի գործընթացում ներգրավված բոլոր անձինք ընկալել են, որ տեղեկատվության փոխանցումը նպատակ ունի խթանելու կառավարման գործընթացները և կոնսերվացման պլանավորումը և արտաքինից պարտադրված վերահսկողություն չէ: Սա սկզբունքային նշանակություն ունի երաշխիքների տրամադրման տեսանկյունից, որ ազգային հեղինակության նման ասպեկտները բացասական ազդեցություն չեն ունենա մոնիթորինգի իրականացման որակի և ռազմավարության հուսալիության վրա:

Նախադեպ

Մարչելի դասընթացներ և գործիքակազմ՝ ժառանգության վրա ներգործության գնահատումը կազմակերպելու համար

2012 թ. ԻԿԿՈՒՄ-ի և Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համար դասընթացների կազմակերպման և հեղափոխությունների Համաշխարհային ժառանգության ինստիտուտի (WHITRAP) կողմից ԻԿՕՄՍՍ-ի և Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ համագործակցությամբ կազմակերպված ժառանգության վրա ներգործության ազդեցությունը խորագրով դասընթացի մասնակիցները խոսում են քաղաքի բնակիչների հետ հուշարձան այցի ընթացքում:



Լիցզյանի պարմական քաղաք (Չինաստան)

Աղբյուր՝ ԻԿԿՈՒՄ


74. UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B) <http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

4.4 Ժառանգության կառավարման համակարգի երեք արդյունքները

Երեք արդյունքների սահմանումը. երեք արդյունքները (իրավական և ինստիտուցիոնալ համակարգեր և ռեսուրսներ, 4.2-րդ կետ) միավորվում են և միասին խթանում են ժառանգությանը վերաբերող գործընթացները (կառավարման համակարգի գործողությունները, 4.3-րդ կետ), որի միջոցով էլ սահմանվում են նպատակները, փոխակերպում դրանք գործողությունների և արդյունքների: Այս արդյունքները փոփոխվում են կառավարման գործընթացների մեջ ներգրավված անձանց ակնկալիքների հետ միասին և միևնույն ժամանակ կարող են խմբավորվել երեք ընդհանուր տեսակի մեջ. «արդյունքներ», «օգուտներ» և «կառավարման համակարգի բարեփոխումներ»: Բոլոր արդյունքները, և հատկապես արդյունքները և օգուտները, ուշադրության կենտրոնում են պլանավորման փուլի ընթացքում (4.3-րդ կետ): Տերմինաբանությունը բխում է «ծրագրային-նպատակային պլանավորման» աշխատանքի մշակույթից, որը կիրառվում է արդյունաբերության և առևտրի մեջ, այն նկարագրված է Հավելված Ա-ում՝ կապված կառավարման պլանի մշակման հետ:

1. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (ՆՊԱՏԱՎՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄ)


Կառավարման համակարգի առարկան որոշակի նպատակների նվաճումն է, որոնք հայտնի են արդյունքի տեսքով: Արդյունքներն արտահայտում են փոփոխությունները (կամ շարունակականությունը) գոյություն ունեցող իրավիճակում, որոնք նախանշվել են պլանավորման փուլում: Այս արդյունքներն անհրաժեշտ են օգուտների ձեռքբերման տեսանկյունից:



2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ)


Գործընթացներին մատակարարում են արդյունքները, որոնք պլանավորված աշխատանքային ծրագրերից ստացված շոշափելի արտադրանք և ծառայություններ են՝ դրանով իսկ հատատելով ուղղակի աջակցությունը ժառանգությանը և հասարակությանը՝ լայն իմաստով: Այս արտադրանքներն անհրաժեշտ են վերջնական արդյունքներին հասնելու համար:

Վերջնական արդյունքի հստակեցումը կարևոր նշանակություն ունի ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացները և դրանց արդյունավետությունը հասկանալու համար:



3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Կառավարման համակարգերի բարեփոխումներն իրականացվում են ուղղիչ գործողությունների և դրանցից ստացվող տեղեկությունների, կամ արտաքին կամ կառավարման համակարգի ներսում տեղ գտնող միջամտությունների շնորհիվ՝ հիմնականում մոնիթորինգային և գնահատման գործընթացների արդյունքների միջոցով: Շարունակական բարեփոխումը կարևոր նշանակություն ունի լավ կառավարման համար: Այն հանգեցնում է կառավարման համակարգի փոփոխությունների, որոնց միջոցով հասնում են ավելի լավ արդյունավետության և արտադրողականության:



4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Ավելի շատ արտադրանք և արդյունքներ

Արդյունքներն արտադրողականությունը չափելու լավագույն միջոցներն են, սակայն վատ չափորոշիչ են կառավարման համակարգի կատարողականության չափման համար: Արդյունքները ներկայացնում են կառավարման համակարգից գոյացած արտադրանքները և ծառայությունները:

Օրինակ՝ հուշարձանի կառավարիչը կարող է իր կատարողականությունը գնահատել հուշարձանի այցելուներին առաջարկած նոր երթուղիները (արտադրանքներ): Սակայն այցելուների համար նախատեսված նոր երթուղիները կարող են՝

- մատուցվել ուշ և բաց թողնել զբոսաշրջային սեզոնի բարձրակետը (ժամանակավորեպություն),
- հարմարացված չլինեն այցելուների պահանջներին՝ թեմատիկ բովանդակության տեսանկյունից (հաճախորդների բավարարվածություն),
- հուշարձանի վերաբերյալ տրամադրել ոչ ճշգրի տեղեկատվություն (ճշգրտություն),
- հուշարձանի պահապանների և այցելուների համար բավականին երկար լինեն՝ ավարտին հասցնելու համար (քանակ և շրջանակ),
- անհամատեղելի լինել կոնսերվացման կարիքների հետ, ինչը ենթադրում է այցելուների ավելորդ կենտրոնացում որոշակի հատվածներում՝ դրանով իսկ հանգեցնելով մաշվածության (որակ):

Մի շարք երթուղիների հետ միասին այս ասպեկտները, որոնք հայտնի են որպես «չափորոշիչներ» կարող են չափելի դարձվել գործընթացի արդյունավետությունը գնահատելու համար (ստեղծելով նոր երթուղիներ) և արտադրանքներ (նոր երթուղիներն ինքնին) (տես 4.3 «Գործընթաց 3. Մոնիթորինգ»):

Սակայն նախաձեռնության իրական արդյունավետությունը հասկանալու համար հուշարձանի կառավարիչները պետք է մեկ քայլ հետ գնան և գնահատեն կատարողականությունը հետևյալի միջոցով՝

- ինչպես են փոփոխվել այցելուների գիտելիքները և վերաբերմունքը նոր երթուղիների շնորհիվ,
- արդյո՞ք այն հանգեցրել է հուշարձանի արժեքները լավագույն ճանաչելի դարձնելուն և ներգրավել է աջակցություն դրա խնամքի համար:


Այլ խոսքերով, արդյո՞ք հուշարձանի կառավարիչները նոր երթուղիների միջոցով կարողացել են ապահովել այն արդյունքների ստացումը, որը բխում է կառավարման ընդհանուր համակարգի նպատակներից: Արդյունքները ձեռքբերումների լավագույն չափելու միջոցներն են: Դրանք կարող են ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացների ուղղակի արդյունքը հանդիսանալ կամ լինել կառավարման համակարգի տված արտադրանքի արգասիքը:

Մոնիթորինգի և գնահատման արդյունքները ապահովում են հետադարձ կապը՝ տրամադրելով տեղեկատվություն այն ուղղիչ գործողությունների մասին, որոնք անհրաժեշտ են կառավարման համակարգի բարեփոխման ու վարչարարության բոլոր նպատակներին առավել արդյունավետ միջոցով հասնելու համար:

Արդյունք 1: Արդյունք (նպատակների ձեռքբերում)

Ակնարկ

Կառավարման համակարգը որպես մեկ ամբողջություն գործում է որոշակի նպատակների հասնելու համար, որոնք հայտնի են, որպես «արդյունք»: Արդյունքները հաճախ ոչ շուտափելի ձեռքբերումներ են, որոնք առնչվում են ժառանգության արժեքներին կամ ունեն հետևանքներ հասարակության համար (մեծապես հայտնի են որպես «Ժառանգության օգուտներ»): Դրանք սովորաբար ի հայտ են գալիս արդյունքների արդյունավետության միջոցով՝ ավարտին հասցված առանձին գործողությունների, ինչպես նաև ժառանգության ոլորտում տեղ գտած գործընթացների արդյունքում ստեղծած արտադրանքների և ծառայությունների շնորհիվ: (Արդյունք 2, տես էջ 104):



Պատկեր 15: Կառավարման համակարգի արդյունքները

Կատարողականի գնահատման նպատակով մարդիկ հաճախ ուշադրություն են դարձնում արդյունքներին, քանի որ դրանք առավել հեշտ է հսկել և մոնիթորինգի ենթարկել, քան արդյունքները: Սակայն գործողությունները պետք է գնահատվեն ձեռքբերումներով (արդյունքներով), այլ ոչ թե նրանով, թե ինչ են արտադրում (արտադրանք): Աշակերտն առավել հեշտությամբ կպատասխանի «Ինչ սովորեցի այսօր» հարցին, իսկ վերջնական արդյունքի մասին հարցը դժվար կլինի նրա համար: «Ինչպես ես, ինչպես ես պատրաստվում օգտագործել քո ստացած գիտելիքները»:

Սա ժառանգության բնագավառի և մասնավորապես Համաշխարհային ժառանգության համակարգի իրական պատկերն է: Համաշխարհային ժառանգության հուշարձանների վերջնական արդյունքները Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության երաշխավորումն է (ԳՈՒԻ 7-րդ, 96-97-րդ պարբերություններ) և համայնքների կյանքում ժառանգության ունեցած դերակատարությունը:

Ուշադրության կենտրոնացումն արդյունքների վրա նպատակ ունի ստուգել, թե արդյո՞ք կառավարման համակարգի սահմանած առաջնահերթությունները ձեռք են բերվել: Նույնիսկ լավ կառավարվող ժառանգության հուշարձանում, որտեղ բոլոր արդյունքները ձեռք են բերվել, երբեմն շարունակում են կորցնել իրենց մշակութային արժեքները:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մոտեցումները և մարտահրավերները բավականին տարբերվում են

Արդյունքները կարող են ուղղակի կապված լինել հուշարձանի կառավարմանը, օրինակ՝ արդյո՞ք հուշարձանն պահպանում է իր բուն արժեքները, թե՞ ոչ, իսկ Համաշխարհային ժառանգության հուշարձանների պարագայում Համաշխարհային բացառիկ արժեքը:

Սակայն արդյունքները հաճախ վերաբերվում են հուշարձանի տարածքից դուրս ավելի լայն ասպեկտների: Օրինակ՝ համահունչ տեղական զարգացմանն աջակցություն ցուցաբերելը կարող է կարևոր արդյունք հանդիսանալ, որն իր հերթին ներդրում է ժառանգության կայունության ապահովման գործում (ավելին, քան տեղական աջակցությունը) և թույլ է տալիս հասնելու բազմակի կառավարման ոլորտում սահմանված թիրախների: Համանմանորեն, երաշխավորելով ժառանգության կողմից մշակութային բազմազանության խթանումը համայնքներում, կարող է խթանել և պաշտպանել մշակութային արժեքները՝ ստեղծելով ավելի մեծ սոցիալական համախմբվածություն, աջակցելով ժառանգության հանրահոգակմանը և սեփականատիրության զգացմունքի ձևավորմանը՝ դրանով իսկ ստեղծելով աջակցության նոր ձևաչափեր: Արդյունքների շնորհիվ ժառանգության և լայն հասարակության միջև հարաբերությունները կարող են բարելավվել, ինչը կարևոր խնդիր է մշակութային ժառանգության հետագա կայունության տեսանկյունից (տե՛ս 2.3-րդ կետը):

Արդյունքները կարող են ամենակարևորը լինել, սակայն ամենադժվար գործը դրանք ճշգրտորեն չափելն է: Ժառանգության ոլորտում գոյություն ունեն ընդհանուր խնդիրներ, սակայն, թե ինչպես են դրանք լուծվում կախված է հուշարձանի և դրա սոցիալական, բնապահպանական և տնտեսական միջավայրի բնույթից:

Ժառանգության ոլորտի արդյունքների օրինակները

Ստորև ներկայացվող աղյուսակը ներկայացնում է ժառանգության կառավարման համակարգից ակնկալվող արդյունքներից ամենատարածվածները: Այն նաև ցույց է տալիս այլ արդյունքների հետ խաչվելը: Օրինակ՝ այցելուների բավարարվածությունը կարող է հանգեցնել աջակցության նոր ձևերի՝ ուղղված հուշարձանի կառավարմանը: Տեղի համայնքի արդյունավետ ներգրավվումը կարող է երաշխավորել ժառանգության արժեքների հանրահոգակումը և պաշտպանությունը: Նմանապես, ժառանգության արժեքների արդյունավետ պաշտպանությունը կմեծացնի այցելուների բավարարվածության մակարդակը և հաճախ իր ներդրումը կունենա համայնքի բարեկեցության ապահովման գործում, ինչպես ներկայացված է աղյուսակ 10-ում: Այս արդյունքներին հասնելու նպատակով՝ ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացները (տե՛ս 4.3-րդ մասը) ստեղծում են միջանկյալ բազմակի արտադրանքներ՝ հաճախ տարբեր ժամանակահատվածներում:

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Աղյուսակ 10. Համաշխարհային ժառանգության հուշարձաններից ակնկալվող հիմնական արդյունքները

Արդյունք 1 Խնդիրը՝ այցելուների բավարարվածության մակարդակի բարձրացում	Փոխկապակցված այլ արդյունքներ Մեծացնել այցելուի իրազեկվածության և աջակցության մակարդակը Հանրահոգակել և պահպանել Համաշխարհային բացառիկ և այլ մշակութային արժեքները	Արդյունքների չափորոշիչները <i>Թույլատրվում են ընկալել, թե՛ արդյոք նպատակը արդեն իսկ ձեռք է բերվել</i> Քանակ (այցելությունների տևողությունը և քանակը) Որակ (այցելուների բավարարվածություն)
Արդյունք 2 Խնդիրը՝ զարգացող տեղական համայնք ժառանգության շուրջ, որից շահում է հուշարձանը	Փոխկապակցված այլ արդյունքներ Հանրահոգակել և պահպանել Համաշխարհային բացառիկ և այլ մշակութային արժեքները	Արդյունքների չափորոշիչները <i>Թույլատրվում են ընկալել, թե՛ արդյոք նպատակը արդեն իսկ ձեռք է բերվել</i> Զբաղվածության մակարդակը և այլ միտումները տեղական տնտեսության տվյալներում Միտումները սոցիալական / բնապահպանական վիճակագրության մեջ, օր.՝ հանցագործություն, գործալքություն, վանդալիզմ Աջակցության նոր ձևեր՝ ուղղված ժառանգության գիշերներին, որոնք անցկացվում են տեղական հյուրընկալության պայմաններում այցելուների հետ Տարածաշրջանային զբոսաշրջություն, փոխայցելություններ
Արդյունք 3 Խնդիրը՝ Համաշխարհային բացառիկ և այլ մշակութային արժեքների պահպանություն	Փոխկապակցված այլ արդյունքներ Զարգացող տեղական համայնք ժառանգության շուրջ, որից շահում է հուշարձանը Այցելուների բավարարվածություն	Արդյունքների չափորոշիչները <i>Թույլատրվում են ընկալել, թե՛ արդյոք նպատակը արդեն իսկ ձեռք է բերվել</i> [Որոշ դեպքերում, նպատակին հասնելու մակարդակը կարող է ընկալվել գործընթացների գնահատման և ազդեցություն ունեցող արդյունքների միջոցով: Տե՛ս ստորև]:

10-րդ աղյուսակը նաև ներկայացնում է, թե՛ այցելուների բավարարվածության համատեքստում որոշ արդյունքներ ուղղակի ինչպես կարելի է չափել: Համայնքի բարեկեցության նման արդյունքները կարելի է ուղղակի գնահատել, սակայն այնպիսի չափորոշիչների միջոցով, որոնք կարող են ազդվել այլ գործոններից՝ այցելուների համար նախատեսված ժամանցի այլ միջոցներով: Գիշերակացով կարող են մեծացնել այցելությունների թվաքանակը տեղի համայնքում, և այդ իսկ պատճառով անհուսալի են (տե՛ս Գործընթաց 3-ը, Մոնիթորինգ): Որոշ դեպքերում, արդյունքն այնքան մեծ է ստացվում, որ դժվար է դառնում այնպիսի չափորոշիչի նախանշումը, որի միջոցով հնարավոր է դառնում ուղիղ գնահատումը: Սա համաշխարհային ժառանգության համար ակնկալվող ամենակարևոր արդյունքն է, Համաշխարհային բացառիկ արժեքի և մշակութային այլ արժեքների պահպանության ապահովումը:

Մոնիթորինգի և գնահատման արդյունքների համար չափորոշիչների ընտրությունը

Հիմք ընդունելով արդեն իսկ առաջարկված չափորոշիչները՝ պլանավորման գործընթացի ընթացքում անհրաժեշտ է ընտրել արդյունքները մոնիթորինգի ենթարկելու ինդիկատորները (Գործընթաց 3, Մոնիթորինգ 4.3): 1-ին հավելվածը նկարագրում է չափորոշիչների ինդիկատորներ, որոնք ընդունվել են Սթոնհենջի (ՄԹ) հաջողված արդյունքների գնահատման համար: Ժառանգությանն առնչվող գործընթացները և արդյունքները կարող են իրենց ներդրումն ունենալ մեկից ավելի արդյունքի ձևավորման գործում (տե՛ս նաև ստորև): Հուշարձանի տարածքի բարեկարգումն այցելուների հոսքի կառավարման համար կարող է օգտակար լինել Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության համար (մի քանի երթուղիներ և ռոտացիոն այցելություններ, որոնք նվազեցնում են մաշվածությունը), ինչպես նաև իր ներդրումն ունենալ հարակից տարածքներում գտնվող համայնքների առավել առողջ տնտեսության ձևավորման գործում (տարբեր հետաքրքրություն ունեցող այցելուներ, հարակից տարածքներ): Տե՛ս «Արդյունք 2, Արտադրանք» էջ 104-ում:

Ավելի մեծ ուշադրություն է դարձվել արդյունքների ինդիկատորների վրա «Արդյունք 3-ում, Կառավարման համակարգերի բարեփոխում» բաժնում, էջ 110:

Հիմնական դիտարկումներ կառավարման համակարգի արդյունքների առնչությամբ
Վերջնական արդյունքները կարող են ոչ բավարար մակարդակով շոշափելի լինել, քան միջանկյալները: Սովորաբար դրանք կարող են ներկայացված լինել միտումների գծապատկերով, որը ներկայացնում է, թե ինչպես է կատարողականությունը փոփոխվում ժամանակի ընթացքում: Միտումների գծապատկերների կիրառմամբ կատարողականության թիրախների մակարդակների ներկայացումը և համապատասխան համեմատականների անցկացումը թույլատրում է վերանայման նպատակով օգտագործել մոնիթորինգի արդյունքները, և անհրաժեշտության դեպքում բարեփոխել կառավարման համակարգը:

Քանի դեռ դրանք բավարար մակարդակի շոշափելի չեն, անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ հաղորդակցման քաղաքականություններ՝ դրական արդյունքների հասնելու նպատակով, ինչը կարող է խթանիչ դառնալ հիմնական կառավարման համակարգի համար դրսից աջակցություն ստանալու նպատակով: Աջակցությունը կարող է արժեքավոր տեղեկատվություն տրամադրել կառավարման համակարգի և դրա շրջանակներում իրականացվող գործողությունների ուժեղացման համար (տես Արդյունք 3, էջ 110):

Քանակապես հաշվարկված և փաստաթղթավորված արդյունքների պարագայում դրանց մասին տեղեկատվությունը կարելի է ներկայացնել մյուսներին, որպեսզի ներկայացվեն ժառանգության կառավարման և կոնսերվացման օգուտները: Ժառանգության ոլորտում գործողությունների հարցում հանրային համերաշխությունը կառավարության վրա ազդելու միջոցներից է, որպեսզի երաշխավորվեն համարժեք իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները, ինչպես նաև համապատասխան միջոցներ հատկացվեն մշակութային ժառանգությանը:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀԱՆՈՒՐՆԵՐ

- ▶ Մոնիթորինգի և գնահատման արդյունքները կարիք ունեն մանրակրկիտ պլանավորման՝ ավելորդ ծախսերը և ժամանակի կորուստը բացառելու համար, ինչպես նաև, հնարավորության դեպքում, այն պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի գոյություն ունեցող մոնիթորինգային տվյալների վրա:
- ▶ Արդյունքների գնահատումը հաճախ կախված է մի քանի չափորոշիչների կարգավիճակի գնահատումից, որոնք առանցվում են համաձայնեցված սահմանափակումների և նախկին կատարողականի հետ: Չափորոշիչի կարգավիճակի կայունությունը գծապատկերային ներկայացնելով՝ ժամանակի ընթացքում հնարավոր է դառնում պատկերել միտումները՝ արդյունքների բարելավումը կամ անկումը:
- ▶ Ժառանգության ոլորտում իրականացվող գործողությունների հետևանքները լավագույնս հասկանալու համար անհրաժեշտ է ներգրավել տարբեր ոլորտի մասնագետների, այլ ոչ թե միայն նրանց, ովքեր ընդգրկված են ժառանգության ոլորտի գործընթացներում:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՐՑԱԿՈՐՈՒՆԵՐ

- ▶ Ընթացիկ հանգամանքները հետևողական ուսումնասիրության ենթարկելը լավ գաղափար է, որպեսզի հնարավոր լինի ստուգել, թե արդյո՞ք կառավարման համակարգը հուշարձանի համար սահմանել է բավականին լայն նպատակներ և բավականին ուշադրություն է հատկացրել ժառանգությունից ստացվող օգուտներին (տես 2-րդ մասը):
- ▶ Արդյո՞ք գոյություն ունի համագործակցություն հուշարձանին կից գտնվող սեփականատերերի և օգտագործողների միջև:
- ▶ Արդյո՞ք հուշարձանին կից գտնվող սեփականատերերի և օգտագործողների միջև գոյություն ունի կանոնավոր հաղորդակցում:
- ▶ Արդյո՞ք տեղի համայնքի բնակիչները, որոնք ապրում են հուշարձանի կամ դրան հարակից տարածքներում իրենց ներդրումն են ունենում որոշումների կայացման գործում:
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն ծրագրավորված նախաձեռնություններ, որոնք տեղի բնակչության բարեկեցությունն ավելի բարձր են դասում հուշարձանի արժեքների պահպանությունից:
- ▶ Արդյո՞ք լայն տարածքների կառուցապատման աշխատանքները մշտապես մոնիթորինգի են ենթարկվում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հիմնական դիտարկումները

Համաշխարհային ժառանգության համար հիմնական արդյունքը հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությունն է: Այնուամենայնիվ, Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների համար կիրառելի են նաև այլ արդյունքներ: Համաշխարհային ժառանգության դեպքում լայնորեն կիրառվող գործիքակազմ համարվող կառավարման պլանավորումը նկարագրված է Հավելված Ա-ում և կենտրոնանում է Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության հիմնական նպատակների վրա: Այնուամենայնիվ, կառավարման

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

պլանավորման գործընթացը նույնպես իր ներդրումն է ունենում հուշարձանների համար առավել մեծ արդյունքների հասնելու գործում, որոնցից մի քանիսը պահանջում են պլանավորում հուշարձանի տարածքից դուրս:

Ստորև ներկայացվում են Համաշխարհային ժառանգության հուշարձանների համար վերջնական արդյունքների օրինակներ, որոնք սպառիչ չեն՝

- Աջակցություն ցուցաբերել Համաշխարհային ժառանգության կոնվենցիան լավագույն ճանաչելու հարցում և առավել ամուր հետաքրքրություն ստեղծել տարբեր լսարանների շրջանում,
- Խթանել Համաշխարհային ժառանգության համակարգի համատեքստում անդամ պետությունների և այլ կազմակերպությունների միջև համագործակցությունը,
- Խթանել Համաշխարհային ժառանգության կոմիտեի ռազմավարական նպատակներից մեկը կամ մի քանիսը (արժանահավատություն, կոնսերվացում, կարողությունների կառուցում, հաղորդակցություն, համայնքներ),
- Երաշխավորել, որ Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված առանձին հուշարձանների դեպքում ձեռքբերված փորձը շրջանառվի Համաշխարհային ժառանգության համակարգում և փոխանցվի Համաշխարհային մշակութային ժառանգության կարգավիճակ չունեցող ժառանգության բնագավառին,
- Հասցեական լուծում տալ պարբերական զեկույցների ներկայացման ընթացքում նախանշված կարիքներին հուշարձանի և/կամ տարածաշրջանային մակարդակներով,
- Կարողություններ կառուցել ուսումնառության նոր միջավայրի և հանրահոգակման գործողությունների միջոցով՝ թիրախավորելով համապատասխան լսարանը և ամրապնդելով ոլորտի մասնագետների, ինստիտուցիոնալ համակարգերի, համայնքների և միությունների կարողությունները, ինչպես նաև մշակելով տարածաշրջանային կամ ենթատարածաշրջանային կարողությունների կառուցման ծրագրեր,
- Հավաստիացնել, որ Համաշխարհային ժառանգության հուշարձանները դերակատարություն ունեն կայուն զարգացման գործում՝ ապահովելով ժառանգությունից ստացված օգուտների տրամադրումը հուշարձանին և այլ շահագրգիռ կողմերին:


Վերջին կետի կապակցությամբ ԳՈՒ-ը բավականին լուրջ շեշտադրում է կատարում Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանների կառավարման գործում մասնակցային մոտեցման վրա: Մասնակցային մոտեցման արդյունավետության գնահատման համար լավ չափման միջոց է այն հանգամանքը, թե արդյոք այդ շահագրգիռ կողմերը, ովքեր ուղղակի պատասխանատվություն չեն կրում հուշարձանի առօրյա շահագործման համար, օգուտ են ստացել դրանից:

Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարիչներից ոմանք տվյալներ են հավաքագրում ժառանգության արժեքների կամ դրանցից որոշների կարգավիճակի կամ պահպանվածության վիճակի մասին (ի պատասխան պարբերական զեկույցով սահմանված նոր պահանջի): Համաշխարհային ժառանգության հուշարձանները պետք է նպատակ հետապնդեն ունենալու կամ բարելավելու իրենց մոնիթորինգային արդյունքները, որը ժամանակ և ռեսուրսներ պահանջող գործընթաց է: Դրանք պետք է նաև երաշխավորեն դրանց շարունակականությունը, քանի որ ինստիտուցիոնալ և մասնակցային պարտավորությունները կենսական նշանակություն ունեն: Պետք է ունենան կայուն ֆինանսավորման աղբյուր, որպեսզի մարդկային և ֆինանսական միջոցները քիչ խոցելի լինեն ընդհատվելու տեսանկյունից:

Մոդուլն 2: Արտադրանք (վերջնական գործընթաց)

Ակնարկ

Ժառանգության ոլորտի գործընթացների նպատակը արդյունքների ապահովումն է: Ավարտին հասցված գործողությունները և մատուցված ծառայությունները հայտնի են որպես արդյունքներ: Դրանք նյութական արդյունքներ են, որոնցով հնարավոր է կիսվել տեղի համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Դրանք հաճախ նաև ուղղակի աջակցություն են ցուցաբերում ժառանգության ոլորտին, համայնքներին և մասնակիցներին: Միասին դրանք աջակցում են արդյունքների ձեռքբերմանը, կառավարման համակարգի ընդհանուր նպատակներին հասնելուն:



Պատկեր 16: Կառավարման համակարգի արդյունքները

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Մոտեցումները և մարտահրավերները բավականին տարբերվում են

Արտադրանքները պլանավորված գործողությունների արդյունքներն են, որոնք կարևոր նշանակություն ունեն առանձին վարչարարական և կոնսերվացման թիրախներին, գործողությունների նախանշման, ինչպես նաև կառավարման համակարգի սահմանած ընդհանուր նպատակներին հասնելու համար (արդյունքներ, ինչպիսիք են մշակութային արժեքների, և մասնավորապես Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությունը):

Կառավարման ցիկլի պլանավորման, իրականացման և մոնիթորինգի գործընթացներից ակնկալվում են տարբեր բնույթի արտադրանքներ՝

- Պլաններն ինքնին (օր.՝ ավարտին հասցված կառավարման պլանը),
- Տեղում ձեռք բերված շոշափելի արդյունքներ (օր.՝ շինությունների վերանորոգումներ, տեղադրված տեղեկատվական վահանակներ),
- Այդ արդյունքներին հասնելու և դրանց հասնելու գործընթացների մասին տեղեկատվությունը կարող է հուշել հետագա գործողությունների մասին (օր.՝ երկու տարվա ընթացքում այցելուների թվաքանակը ավելացել է մեկ միլիոնով),
- Հակահրդեհային համակարգերի պահպանության պես ծառայություններ:

Ինչ են ընդգրկում արդյունքները

Ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացները տալիս են բազմաթիվ արտադրանքներ երկարաժամկետ և կարճաժամկետ հեռանկարով: Դրանց համակցված ազդեցությունը երաշխավորում է, որ կարելի է հասնել ավելի ընդգրկուն նպատակների և երաշխիքների տարբեր շահագրգիռ կողմերի համար, ովքեր ներկայացնում են կառավարման համակարգի վերջնական շահառուներին:

Արտադրանքը հնարավոր է ուղղակի չբավարարի կարիքը, սակայն ձևավորում է այլ գործընթացների համար իմպուլս: Օրինակ՝ որպես այցելուների կառավարման ռազմավարության մասնիկ առաջին արտադրանքն ամենայն հավանականությամբ այցելուների կառավարման պլանն է, որը բխում է պլանավորման գործընթացից: Նոր նշանների տեղադրումը հուշարձանի տարածքում կարող է հանդիսանալ հիմնական արդյունքներից մեկը իրականացման փուլում: Հուշարձանի տարածքից դուրս գալուց գրանցված այցելուների արձագանքները մոնիթորինգից բխող արտադրանք է, որը կարող է խթան հանդիսանալ այլ գործողությունների համար, մասնավորապես ուղղիչ գործողությունների՝ նշաններն առավել նպատակային տեղադրելու համար՝ դրանով իսկ ապահովելով այցելուների բավարարվածությունը:

Հիմնական դիտարկումներ

Համալրված լինելով արտաքին խորհրդատվությամբ և արդյունքների ձեռքբերման մասին տեղեկատվությամբ (տե՛ս հետագա բաժինները) արտադրանքների և դրանց ստեղծող գործընթացների վերլուծությունն է, որ ընդհանուր կառավարումն առավել արդյունավետ է դարձնում (տե՛ս Արդյունք 3, Կառավարման համակարգերի բարեփոխումները, էջ 110):

Արդյունքները թույլ են տալիս չափելի դարձնել կառավարման համակարգի արտադրողականությունը: Արտադրանքների փաստաթղթավորումը և դրանց ստեղծող գործընթացների մոնիթորինգը (տե՛ս 4.4-րդ կետը, Գործընթաց 3, Մոնիթորինգ) անբաժանելիորեն կապված են ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացների և կառավարման արդյունավետության ընկալման հետ՝ հիմնարար նշանակություն ունենալով դրանց համար: Ավելին, հավաքագրված տեղեկատվությունը կարևոր հենք են տեղի ունեցածի մասին զեկուցելու համար – դրանք պետք է լինել տարեկան հաշվետվությունների անկյունաքարն արտադրանքների հետ միասին (տե՛ս հաջորդ բաժինը), և գնահատումից անմիջապես հետո տեղեկատվություն են տրամադրում հետագա կառավարման շրջափուլի բարեփոխման համար (տե՛ս 4.5-րդ կետը, Արդյունք 3, Բարեփոխումներ կառավարման համակարգում):

Պլանավորման և գնահատման արդյունքները կարող են արտադրանք հանդիսանալ, սակայն չպետք է դիտարկվեն որպես «վերջնական արտադրանք», այլ որպես ուրիշ գործընթացի և արտադրանքի իրացման միջոցներ, որոնք միասին աշխատում են կառավարման համակարգի գործառնականության և արդյունավետության ուղղությամբ:

Պլաններն արտադրանքի օրինակներ են, որոնք հաճախ լայնամասշտաբ տարածում են ստանում, սակայն չեն փոխանցվում կառավարման ներքին օղակներին (դրանց իրականացումից հետո): Արտադրանքները պետք է այնպես փաստաթղթավորվեն, որ շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան տեսնելու իրենց ներդրումների շոշափելի արդյունքները և շարունակեն իրենց աջակցությունը, նույնիսկ եթե գոյություն ունի տարբերություն թիրախների և արդյունքների միջև:

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Ընկալելով արդյունքների և արտադրանքների միջև գոյություն ունեցող տարբերությունը («բազմաթիվից դեպի մեկը» հարաբերակցությունը) Գործընթացների միջև հարաբերակցությունը, արդյունքը և արտադրանքը բավականին դժվար կլինի ընկալել: Գործընթացների և որոշակի արտադրանքի միջև հարաբերությունները հանգեցնում է «բազմաթիվից դեպի մեկը» հարաբերակցությանը: այլ խոսքերով մի քանի արդյունքներ կարող են հանգեցնել մեկ արտադրանքի:

Ստորև ներկայացվող աղյուսակը ցուցադրում է ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացներում արդյունքների և արտադրանքների միջև գոյություն ունեցող տարբերությունները՝ բավականին մանրամասն ներկայացնելով նախանշված արդյունքները: Առաջին օրինակը ներկայացնում է 4.4-րդ կետում արդեն իսկ հիշատակած այցելուների երթուղիները և այցելուներին գոհացնելու հարցում դրանց ունեցած դերակատարությունն ի թիվս այլ հարցերի: Վերջին օրինակը, որը վերաբերում է մշակութային արժեքների պահպանությանը, ներկայացնում է մի գործընթաց, բնապահպանական դիտացում վերջնական արդյունքով, ինչն ուղղակի չի բավարարում պահանջը, սակայն կարող է ներդրում լինել այլ գործընթացի և արտադրանքի համար:

Աղյուսակ 11. Արդյունքների, արտադրանքների և գործընթացների հարաբերակցության օրինակներ
Սա լրացնում է «Արդյունքները» բաժնի 10-րդ աղյուսակը

Արդյունք 1	Արդյունքի չափորոշիչները <i>Հաստատվում են, եթե նպատակը ձեռք է բերվել</i>	Արդյունք(ների) <i>վրա ազդող արտադրանք(ներ)ը</i>	Գործընթաց / արդյունք/ Չափորոշիչներ <i>Հաստատվում են գործընթացի արդյունավետությունը, արդյունքի որակը և ընդհա- նուր նպատակների հասնելու գործում դրանց դերակատարությունը</i>	Ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթաց (ներ)ը <i>Ներկայացնելով արտադրանքները արդյունքների հասնելու համար</i>
Այցելուների բավարարվածություն Այլ արդյունքների վրա ազդեցություն Այցելությունների իրազեկվածության աստիճանի բարձրացում և աջակցություն Համաշխարհային բացառիկ և այլ մշակութային արժեքների հանրահռչակում և պահպանություն	Քանակ (այցելությունների տևողությունը և քանակը) Որակ (Այցելուների բավարարվածություն)	Այցելուների համար նոր երթուղիներ	Քանակ Quantity (այցելությունների տևողությունը և քանակը) Որակ (այցելուների բավարարվածություն և ճշգրտություն) Ճշտապահություն (այցելությունների բարձր հաճախելիության ժամանակ) Համատեղելիություն (մաշվածության վտանգի նվազեցում)	Քանակ (այցելությունների տևողությունը և քանակը) Այցելուների երթուղիների պլանավորում, կազմակերպում և մոնիթորինգի իրականացում (Նշանների, աուդիոգիդերի, վեբ-պատճիորմերի, հերթականությամբ իրականացվող բացումներ և այլն)
Արդյունք 2	Արդյունքի չափորոշիչները	Արդյունք(ներ)	Գործընթաց / արդյունք/ Չափորոշիչներ	Ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթաց
Հուշարձանի շուրջ բարգավաճող համայնք, որից շահում է հուշարձանը Այլ արդյունքների վրա ազդեցությունը՝ Համաշխարհային բացառիկ և այլ մշակութային արժեքների պահպանություն	Զբաղվածության մակարդակը և տնտեսության տվյալների միտումները Սոցիալական / բնապահպանական վիճակագրության մեջ, օրինակ հանցագործություն, պարապուրդ, վանդալիզմ Աջակցության նոր ձևեր հուշարձանին Այցելուների տեղում անցկացված գիշերների քանակը տարեկան կտրվածքով Տարածաշրջանային զբոսաշրջություն, փոխադարձ այցելություններ	Ժառանգության համար նպաստավոր ծեռնարկատիրական գործունեության հնարավորություններ Նոր գործընկերություն, նոր հովանավորներ Նոր շնորհալի անձնակազմի ներգրավում՝ տեղական տնտեսության զարգացման նպատակով Բարեփոխված քաղաքային միջավայր	Քանակ (օրինակ՝ ներգրավված միջոցների քանակը կամ գործընկերի/ աշխատողների / ստեղծված աշխատատեղերի թվաքանակը) և հաճախականությունը (օր.՝ կրկայցելուներ) Որակ Արդիականություն Ժառանգության կարիքների հետ համատեղելիություն Ներառվածություն Ստանձնած պարտավորությունների շրջանակը և ժամանակահատվածը Տեղի համայնքի բավարարվածությունը	Հուշարձանին առնչվող շուկայի հնարավորությունների նախանշում Գործընկերների և ներդրումների ներգրավում Մեկնարկային կապիտալ նոր ծեռնարկատիրական նախաձեռնությունների համար Քաղաքի վերակենդանացման համար համապարփակ պլանավորում

Արդյունք 3	Արդյունքի չափորոշիչները	Արդյունք(ներ)	Գործընթաց / արդյունք/ Չափորոշիչներ	Ժառանգության ուղորտում տեղի ունեցող գործընթաց
Համաշխարհային բացառիկ և այլ մշակութային արժեքների պահպանություն	[Եթե բացակայում է արդյունքի չափորոշիչը, ապա անհաժեշտ է հղում կատարել համապատասխան արտադրանքների և գործընթացների գնահատմանը]	Առաջին արտադրանքը. Վերանորոգված տանիքներ Երկրորդ արտադրանքը. Նվազեցնելով երկարաժամկետ ծախսերին ուղղված հուշարձանի պահպանությանը Պահպանության պարզեցված ընթացակարգեր	Քանակ (տարածքների քանակը և ընդհանուր տարածքը) Արդյունավետություն (նախագծում և պլանավորում) Արդիականություն Արժեք (ճշգրիտ գնառաջարկ, պահպանության գործառույթների իրականացման համար մատչելիության ապահովում) Շրջակա միջավայր (0 կմ նյութեր)	Օրինակ 1. Հուշարձանի ատրիբուտները ֆնասված և հոսող տանիքների վերանորոգում և երկարաժամկետ պահպանության ապահովում
		Առաջին արտադրանքը Նոր տվյալներ. Երկրորդ արտադրանքը. Վիճակագրություն, միտումներ Երրորդ արտադրանք. Վատթարացման մեխանիզմների ընկալում Բարելավված կոնսերվացման բարեփոխված մոտեցումներ Ոչ ծախսատար և պարզեցված պահպանության իրականացում	Քանակ (տվյալներ, ժամանակահատված) Որակ (տվյալների առատություն, ճշգրտություն և առնչություն) Արդիականություն (սեզոնային անկայունություն) Արժեք (կայունություն ապահովում ֆինանսավորման մեջ) Տվյալների մատչելիություն / օգտագործում	Օրինակ 2. Շրջակա միջավայրի մոնիթորինգ՝ ուղեկցելով տվյալների վերլուծությամբ

Ինչպես ներկայացվում է 11-րդ աղյուսակում մեկ կամ մի քանի արդյունքի հասնելու համար ժառանգության ուղորտում տեղի ունեցող գործընթացները (տե՛ս 4.3-րդ մասը) պետք է հանգեցնեն մի քանի արտադրանքների ապահովմանը տարբեր ժամանակահատվածներում: Հաջողության դեպքում արդյունքների նախանշումը և տրամադրումը ցույց է տալիս, որ կառավարման համակարգը հասել է բոլոր շահագրգիռ կողմերի սահմանած նպատակներին համակցված ազդեցության միջոցով:

Մոնիթորինգի և գնահատման արդյունքները

11-րդ աղյուսակում օրինակները ներկայացնում են տարբեր արդյունքներ, որոնք կարող են նախանշվել և ունենալ տարբեր արտադրանքներ և կարող են իրենց ներդրումն ունենալ դրանց հասնելու համար (հաջողական է այն դեպքերում, երբ մի քանի հաջողական արտադրանքներ հանգեցնում են արդյունքի): Աղյուսակը նաև նախանշում է որոշ հնարավոր արդյունքներին առնչվող չափորոշիչներ (օգտագործելով խորհուրդը, որն արդեն իսկ առաջարկվել է չափորոշիչների մասով Գործընթաց 3-ի, Մանիթորինգ, Մաս 4.3)։

Արդյո՞ք դժվար չափելի համարվող արդյունքները ձեռք են բերվել այն քանակով, որքանով ապահովվել են արտադրանքների մատակարարումը: Չափորոշիչների տիպային օրինակների համար կարող եք ուսումնասիրել Հավելված Ա-ն, որոնք հաստատվել են Սթենհենջի համար (ՄԹ):

Արտադրանքների համար չափորոշիչների ընտրությունը

Մոնիթորինգի ենթակա արտադրանքները պետք է որոշվեն նախապես, գերադասելի է տարեկան պլանի կամ ընդհանուր կառավարման պլանի մշակման ընթացքում (տե՛ս 4.3-րդ մասը, և կառավարման պլանի համար նախատեսված Հավելված Ա-ն):

Արտադրանքների գնահատման համար կարևոր է համեմատություն անել ընթացքի և հուշարձանի աշխատանքային ծրագրով սահմանված նպատակների միջև: Արտադրանքների նյութական բովանդակությունը, ի համեմատություն կառավարման համակարգի մյուս արդյունքների, հնարավոր է դարձնում հեշտությամբ նախանշել անբաժանելի ինդիկատորները, որոնցով չափվում է տարեկան «արտադրողականությունը»: («Անբաժանելի ինդիկատորներ» ասելով մենք հասկանում ենք, որ պահանջվող տեղեկատվությունն անհրաժեշտ է հավաքագրել՝ անկախ այն հանգամանքից, թե ով է հավաքագրում, ինչը հնարավոր է դարձնում այն գերծ պահել անձնական մոտեցումից):

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Փոփոխությունները, արտադրանքները կամ ծառայությունները, որոնք ձևավորվում են արտադրանքներից կարող են ինքնին «չափելի» արդյունք լինել (այսպես կոչված չափորոշիչ), օրինակ՝ պահպանական գոտու տարածքի ընդլայնում, որն արտահայտվում է քառակուսի մետրով: Սակայն չափորոշիչների մի խումբ (այլ ոչ սոսկ մեկը) սովորաբար ավելի արդյունավետ է լինում արտադրանքի քանակական և որակական հատկանիշները որոշելու համար:

- ա. Հնարավորության դեպքում արտադրանքների չափորոշիչները քանակական արտահայտություն են ստանում հետևյալ դեպքերում՝
- ֆիզիկական արտադրանք (օր.՝ տեղադրված անվտանգության տեսախցիկների թվաքանակը, տպագրված կամ տարածված բրոշյուրների քանակը, վերանորոգված տանիքների ընդհանուր մակերեսը և արժեքը),
 - աշխատանքների ծավալը (օր.՝ տեղական համայնքների հետ հանդիպման թվաքանակը կամ հաստատված արտաքին գործընկերությունն արժեքային արտահայտմամբ),
 - օգտագործողներ (օր.՝ տարեկան այցելությունների թվաքանակը կամ վարձակալությունները, օգտագործված աուդիոգրդեր կամ հարցումների պատասխանները):
- բ. Որոշ դեպքերում արտադրանքի համար նախատեսված չափորոշիչները կարող են որակական գնահատական տալ տվյալների միջոցով, որոնցով ներկայացվում են վիճակագրական միտումները՝
- ֆիզիկական արտադրանքի արդյունավետությունը, օրինակ՝ վերանորոգված տանիքների հարաբերական երկարակեցությունը,
 - իրականացված աշխատանքի որակը, օրինակ՝ ազգային տարբեր գործընկերների առկայությունը կամ արտաքին թիրախային խմբերի կարծիքները,
 - օգտագործողների առանձնահատկությունները, օրինակ՝ հուշարձան այցելողների անցած ճանապարհի երկարությունը:
- գ. Արտադրանքների չափորոշիչները հաճախ հնարավորություն են տալիս աշխատանքը գնահատել ֆինանսական տեսանկյունից. փաստացի կատարած ծախսերն ի տարբերություն պլանավորված ծախսերի, որպեսզի տրամադրվի ֆինանսական հաշվետվություն կառավարումն իրականացնող լիազոր մարմինների, դոնորների և այլոց հանդեպ հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:

ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ Ի ՑԵՆՈՒՆԵՐ

- ▶ Արդյունաբերության և ձեռնարկատիրության մեջ արտադրանքները բացարձակապես ստեղծվում են (կամ կարող են բացարձակապես ստեղծվել) գործընթացի «հաճախորդի» առկայության պայմաններում, ով դրանց կարիքն ունի: Չնայած, որ ուղղակի կիրառելի չէ Ժառանգության ոլորտում, այսպիսի մտածելակերպը օգտակար է որոշակի արդյունքների (արդյունք) և ընդհանուր նպատակների (արտադրանք) ձեռքբերման հարցում տարբերակում մտցնելու համար, ինչպես նաև հիշեցնելու, որ տարեկան աշխատանքային ծրագրերը պետք է ուղղված լինեն փաստացի կարիքները հոգալուն:
- ▶ Արտադրանքների գնահատման համար ընտրված չափորոշիչներից միայն մի քանիսն են անհրաժեշտ հաջողության մակարդակը որոշելու, կայուն կերպով չափողականություն ապահովելու և, ամենակարևորը՝ հիմք ընդունելով «SMART» համակարգը (հայտնի մենմոնիկ հապավում, որը կիրառվում է նպատակների սահմանման համար):⁷⁵
- Արտադրանքին կամ մատուցվող ծառայությանը բնորոշ, որոնց միջոցով պետք է իրականացվի չափումը
 - Չափելի (կամ քանակական, կամ որակական)
 - Հասանելի արժեքի կամ ընդհանուր համաձայնության տեսանկյունից (չափագրվող մարմինների կողմից հաստատված)
 - Գործին վերաբերող հուշարձանի կառավարիչների կարիքների տեսանկյունից
 - Ժամանակային առումով սահմանափակում ունեցող, այնպես, որ հնարավոր լինի ակնկալել արտադրանքների ձեռքբերումը: Չափորոշիչները կգնահատեն առանձին արտադրանքները, սակայն յուրաքանչյուր արտադրանքի համար չափորոշիչների ընտրության վրա կարող են ազդել առավել լայն արդյունք(ներ)ը, որոնց հասնելու համար էլ ստեղծվում են այլ արդյունքներ:
- ▶ Հսկողության ազգային կամ միջազգային ստանդարտներն առաջարկում են անկողմնակալ չափորոշիչներ որակական ինդիկատորների համար (կառավարման որակ⁷⁶, շրջակա միջավայր): Ավելին, ներքին մոնիթորինգի պրոտոկոլների մշակումը կարող է օգտակար լինել մոտեցումների ստանդարտացման հարցում, ինչպես նաև պահպանել որակը և արժանահավատությունը:

75. http://en.wikipedia.org/wiki/SMART_criteria

76. The ISO 9000 family of standards published by the International Organization for Standardization (www.iso.org), and available through national standards bodies.

- ▶ Որոշ կառավարչական մոտեցումներ «արտադրանքները» և «արդյունքները» մեկնաբանում են ոչ շատ մեծ տարբերությամբ, ինչն անհրաժեշտ է ստուգել: Օրինակ՝ որոշ գիտական դպրոցներն «արտադրանքները» բաժանում են երկու մակարդակի (օրինակ՝ ջրահեռացման ցանցերի անցկացում, տանիքների և ջրախողովակների վերանորոգում), որոնք իրականացվում են առանձին «նպատակի» համար, ինչը նյութական արդյունք է (օրինակ՝ անձրևաջրերի հավաքում և հեռացում):⁷⁷
- ▶ Բնության ժառանգության ոլորտը լավ առաջընթաց է արձանագրել ժառանգության գնահատման և արդյունքների գնահատման գործընթացներում իր «Կառավարման արդյունավետության գնահատման համար շրջանակով» (տես Հավելված Բ), և մասնավորապես «Գործիք 10. Աշխատանքի/ հուշարձանի արդյունքների ցուցանիշներ», որը ներկայացված է «Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը» բաժնում:⁷⁸

ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հիմնական դիտարկումներ

Համաշխարհային ժառանգության համատեքստում արտադրանքները որպես հիմնական նպատակ պետք է նպաստեն Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությանը, ինչպես նաև ստեղծվեն ի շահ հանրությանը: Արտադրանքներն ընտրվում են որպես պլանավորման գործընթացի մի հատված (կամ կառավարման պլանավորման, տես Հավելված Ա), լինեն դրանք քայլեր՝ ուղղված ատրիբուտների, իսկության և ամբողջականության կամ տեղական համայնքի համար շահույթ ապահովող: Ի թիվս այլ բաների, դրանք պետք է հիմնված լինեն գնահատման գործոնների վրա, որոնք իրենց ազդեցությունն են ունենում հուշարձանի և դրան առնչվող շահագրգիռ մարմինների վրա:

Ցանկում ընդգրկելուց հետո ի հայտ եկած լրացուցիչ մարտահրավերները կարող են հանգեցնել նոր արտադրանքների ստեղծմանը, ինչպիսիք են բազմակի պլանները (4.3-րդ մաս) կամ Համաշխարհային ժառանգության հուշարձաններին վերաբերող ինստիտուցիոնալ համակարգերի մանրակրկիտ ձևավորումը (4.2-րդ մաս): Համաշխարհային ժառանգության ոլորտում տեղի ունեցող այլ գործընթացներ, ինչպիսիք են արձագանքող մոնիթորինգը և պարբերական զեկույցների ներկայացումը, կարող են ազդել պլանավորած արտադրանքների վրա, և համակարգերը պետք է պատրաստ լինեն նման իրավիճակներին լուծում տալուն:

Հուշարձաններում տեղի ունեցող գործընթացների կամ դրանց կառավարման ոլորտներում առանձին նախագծերի պարագայում, որոնք ուղղված են Համաշխարհային ժառանգության պահանջների բավարարմանը, առանձնակի կարևորություն ունի համապարփակ մոտեցումը՝ ժառանգության գործընթացների և դրանցից բխող արտադրանքների մոնիթորինգի և գնահատման համար: Նախագծերը պետք է «պատկանեն» տեղի շահագրգիռ և տեղում դրա իրականացումն ապահովող մարմիններին, իսկ տեղեկատվության ապահովումն ունի կարևոր նշանակություն: Չափորոշիչները չպետք է արտահայտեն այն, թե ինչ է ուզում իմանալ «դոնորը», այլ թե ինչի կարիք ունեն տեղի կառավարիչները, տեղական համայնքը և այլ շահագրգիռ մարմինները: Այդ իսկ պատճառով կարևոր է հասկանալ, թե ինչպես են աշխատում տեղեկատվական համակարգերը, և երաշխավորել տեղական շահագրգիռ մարմինների փաստացի դերակատարությունը համապատասխան չափորոշիչների մշակման գործում:

77. European Commission. 2004. Aid Delivery Methods. Volume 1. Project Cycle Management Guidelines. Brussels, European Commission. p.82. https://www.aswat.com/files/europeaid_adm_pcm_guidelines_2004_en.pdf

78. Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23) pp.58-59. <http://whc.unesco.org/en/series/23/>


4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Արդյունք: ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Ակնարկ

Կառավարման համակարգերի նպատակը մշակված տարբեր գործողությունների միջոցով արտադրանքի արդյունքի հասնելն է: Արդյունքներին և արտադրանքներին արդյունավետ հասնելու համար անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել վերը հիշատակված երեք բաղադրիչներին և երեք գործընթացներին: Տարրերին և գործընթացներին վերաբերող բաժինները նկարագրեցին, թե ինչպես երկրորդական կառավարման համակարգերը կարող են օգնել կառավարչին անհրաժեշտ արդյունքներին և արտադրանքներին հասնելու գործում: Եթե դրանք ձեռք չեն բերվում, ապա լավ կառավարիչը պետք է փոփոխություններն այնպես իրականացնի, որը կհանգեցնի բարեփոխված կառավարման համակարգի ձևավորմանը, ինչպես նաև անհրաժեշտ արդյունքների և արտադրանքների ձեռքբերմանը: Տվյալ բաժինը նկարագրում է, թե բարեփոխումները ինչպես կարող են կառավարման համակարգերում հանգեցնել երկարաժամկետ փոփոխությունների:

Ներուժ ունեցող բարեփոխումների մշակումն ընկած է բացահայտման մեջ, թե որտեղ են կառավարման համակարգի երեք տարրերը և երեք գործընթացները թերանում և ինչպիսի ուղղիչ միջոցառումներ են անհրաժեշտ: Բարեփոխումները կարող են իրականացվել ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացների դիտանցման, արդյունքների և արտադրանքների, ինչպես նաև երեք տարրերի համապատասխանելիության գնահատման միջոցով: Դրանք կարող են բաղկացած լինել գոյություն ունեցող բաղադրիչներում աննշան փոփոխություններից կամ ունենան արտաքին ծագում՝ երկրորդական կառավարման համակարգերի ամրապնդման տեսքով:



Պատկեր 17:
Կառավարման համակարգի
բարեփոխումները

Արտաքին ներդրումները կարող են գալ տարբեր աղբյուրներից (տես Մաս 2): Օրինակ՝ տարբեր երկրներում մշակույթը գրավում է աջակցության նոր ձևաչափեր (պետական և մասնավոր)՝ ի շնորհիվ սոցիալական օրակարգերում օրեցօր աճող ներդրման (կրթություն, տեղական համայնքների իրազեկման և զարգացման աշխատանքներ): Սա կարող է հանգեցնել կառավարման մեկդարյա պատմություն ունեցող որոշ համակարգերի բովանդակային փոփոխությանը՝ ժառանգության ոլորտում փաստերի վրա հիմնված և թափանցիկ որոշումների կայացման պահանջի ներմուծման հետ միասին (տես 4.3-րդ մասը - Մոնիթորինգ):

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մոտեցումները և մարտահրավերները բավականին տարբերվում են

Եթե պլանավորման, իրականացման և մոնիթորինգի գործընթացները չեն հանգեցնում ցանկալի արդյունքների կամ արտադրանքների ձեռքբերմանը, ապա ի սկզբանե կարող է ենթադրվել, որ դրանք արտաքին գործոնների հետևանքներն են: Սակայն իրական պատճառը կարող է լինել գոյություն ունեցող համակարգի բացթողումը (լավ կառավարման համակարգը պետք է ունենա չնախատեսված դեպքերի համար մեխանիզմներ՝ նույնիսկ աննշան կանխատեսելի վտանգները չեզոքացնելու համար): Տվյալ բաժնի քննարկման առարկան բացթողումների նախանշումն է:

Բացթողումները կարող են առաջանալ իրավական և ինստիտուցիոնալ համակարգերում գոյություն ունեցող բացատներից, ռեսուրսների անբավարար կամ խոցուկ հատկացումներից, կամ գործընթացների ինքնին անհամապատասխանելիության պատճառով: Արտադրանքները կդառնան

անբավարար, իսկ ծեռք բերված արդյունքները մասնակի կամ ընդհանրապես կբացակայեն: Լուծումը կարող է բավականին պարզ լինել (օրինակ՝ ռեսուրսների նպատակային բաշխումը): Սակայն, եթե իրավիճակի շտկման ուղղակի միջոցների կիրառումը հնարավոր չէ կարճաժամկետ հեռանկարում (օրինակ՝ իրավական համակարգում անհամապատասխանությունների վերացում), ապա լուծումները հնարավոր է գտնել կառավարման համակարգի այլ բնագավառներում: Անուղղակի միջոցների կիրառման համար կպահանջվի ստեղծագործ մոտեցում:

Բացթողումների վերացումը կարող է վերաժվել դրական ներդրման: Կառավարման համակարգում, փոփոխությունների իրականացումը կարող է պահանջել օրեր, ամիսներ կամ տարիներ: Երկարաժամկետ բարեփոխումների ապահովման համար պահանջվող ժամկետների սահմանում և բավարար մակարդակով հետևողականության երաշխավորումը կարող են իրենցից մարտահրավեր ներկայացնել:

Ինչ են ենթադրում կառավարման համակարգերի բարեփոխումները:

Տեղեկատվության հավաքագրումը և բարեփոխումների իրականացումը կարող են բազմաբայլ գործողություն լինել:

1. Ժառանգության ոլորտի հիմնական կառավարման համակարգում արդյունավետությանը և արգասաբերությանը խոչընդոտող բացթողումների նախանշում:
2. Այն բնագավառներում, որտեղ հիմնական կառավարման համակարգը չի կարող լուծումներ առաջարկել, անհրաժեշտ է դիմել երկրորդական աղբյուրներին (տե՛ս 118-րդ էջի 4.5-րդ մասի տիպային օրինակը)՝ կառավարման համակարգում փոփոխություններ մտցնելու և արդյունավետության ու արգասաբերության մակարդակը բարձրացնելու նպատակով (օրինակ՝ Հերկուլանումի նախադեպի ուսումնասիրությունը ներկայացված է ստորև):
3. Հիմնական կառավարման համակարգի փոփոխությունը կարող է լինել ժամանակատար և պահանջել հզոր քաղաքական աջակցություն:

Արտաքինից իրականացվող բարեփոխումները կարող են առաջանալ մասնագիտական գրականության ուսումնասիրությունից կամ տեղեկատվության հավաքագրման ծրագրի իրականացումից, ինչը կարող է մի քանի արդյունք ապահովել: Օրինակ՝ բանավոր հիշողությունների ծրագիրը կարող է ընդգրկել հուշարձանի պահպանության ապահովմամբ զբաղվող նախկին աշխատողների փորձի վերաբերյալ նյութերի, կառավարման համակարգի ինտելեկտուալ ռեսուրսներում տեղ գտած բացթողումները լրացնելու, տեղեկատվության հավաքագրումը կամ ոլորտից դուրս աղբյուրներից օգտվելու պատճառով կորսված տեղեկատվության վերականգնման համար:

Գործընթացն ինքնին (ներքևից վեր) կարող է օգնել իրավական հենքում կամ ինստիտուցիոնալ համակարգում բացթողումների վերացման հարցում, որոնք հաճախ ծախսվում են (վերից վար) մասնակցային մոտեցումն ապահովելու ժամանակ: Ժառանգության ոլորտում կարող են գոյություն ունենալ նաև նոր գիտելիքներ, որոնք առնչվում են ժառանգության կառավարման համակարգերի ձևավորմանը:

Նախադեպ

Գործընկերություն՝ գոյություն ունեցող կառավարման համակարգի բարելավման համար առանց հիմնական իրավական կամ ինստիտուցիոնալ բարեփոխումների

Հերկուլանումի հնագիտական վայրը, որը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Պոմպեյի, Հերկուլանումի և Տոռոն Անունգիապայի (Իտալիա) հնագիտական վայրերի սերիական անվանակարգի մի մասն է, գործընկերության նշանակալից օրինակ է ժամանակավոր կառավարման համակարգի ներդրման վերաբերյալ, որի շնորհիվ երկարաժամկետ բարելավումներ են ներմուծվել գոյություն ունեցող կառավարման համակարգի մեջ՝ առանց որևէ էական ինստիտուցիոնալ կամ իրավական բարեփոխումների:

Պոմպեյ և Հերկուլանում քաղաքներն ու իրենց տարածքում գտնվող առանձնատները, որոնք ծածկվել են Վեզուվի հրաբխային լավայով մ.թ. 79 թ-ին, ներկայացնում են անցյալում համայնքի և առօրյա կյանքի ամբողջական և հստակ պատկեր, որն իր համեմատականը չունի աշխարհում: Պեպական սեփականություն հանդիսացող և պեպության կողմից շահագործվող հնագիտական հուշարձանը մինչև 1997 թ-ն ուներ կենտրոնական պեպական կառավարման համակարգ և մինչև 20-րդ դարի վերջին տասնամյակները պեպության կողմից ժամանակ առ ժամանակ թերֆինանսավորվում էր: Ժառանգության ոլորտի տեղի իշխանություններին տրվեց ֆինանսական և վարչարարական ինքնիշխանություն (տրամաբանորեն առաջացած գումարն այլևս մուտք չէր արվում նախարարություն վերաբաշխման նպատակով) և բյուրոկրատիայի նվազեցման համար: Այնուամենայնիվ, կառավարչական բարեփոխումները մնացին անավարտ, և մարդկային ռեսուրսները կապված էին մշակույթի նախարարության կենտրոնական աշխատակազմի հետ, ինչը ճկունություն չէր ապահովում և չէր համապատասխանում տեղի կարիքներին: Ավելին, ազգային պեպական աշխատանքների հետ կապված ընթացակարգերի բարդությունը դժվարեցնում էր արդյունավետ գործարկումը:

2002 թ-ին Հռոմում կայացած «PisaMed» խորհրդաժողովի ընթացքում Հերկուլանումը ներկայացվեց որպես հնագիտական հուշարձանի պահպանության, թերևս, ամենավաղ օրինակ՝ չպատերազմող երկրում: 2012 թ-ին այն ներկայացվեց որպես դրական մոդել «որի լավագույն փորձը կարող է կիրառվել աշխարհով մեկ՝ լայնատարած հնագիտական տարածքներում», ինչը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Իրինա Բոկովայի եզրահանգումն էր հուշարձանայելությունից հետո:



4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Հանգամանքների այս տպավորիչ փոփոխությունը պետություն-մասնավոր գործընկերության մի մասն է կազմում, որը հայտնի է Հերկոլանումի պահպանության ծրագիր⁷⁹ անվամբ և իր աջակցությունն է ցուցաբերում հուշարձանի կառավարմանը և կոնսերվացմանը 2001 թ.-ից ի վեր: Բազմաթիվ գործոններ իրենց ներդրումն են ունեցել նախաձեռնության հաջողության ապահովման գործում, ինչը հնարավորություն է տվել դրական փոփոխություններ իրականացնել ժառանգության ոլորտում ներգրավված տեղական իշխանությունների կողմից: Կատարված ընտրությունները ճշգրտությամբ հասցեական լուծում տվեցին կառավարման համակարգում տեղ գրած անհամապատասխանություններին՝ ներդրում ունենալով բաղադրիչներում, որոնք նպատակ ունեին ապահովագրելու երկարաժամկետ բարեփոխումները կառավարման արդյունավետության և արժասաբերության մեջ:

- Իրավական հենքի օգտագործման հարցում ստեղծարար մոտեցման կիրառում, որի նպատակը կոմերցիոն հովանավորչության ներգրավումն է (օրենքներ N. 42/2004-ի 120-րդ հոդված և N 30/2004-ի 2-րդ հոդված)՝ հնարավորություն տալով մասնավոր գործընկերներին (տվյալ պարագայում բարեգործներին) առաջարկելու իրենց աջակցությունը գործարկման հարցում - գործողություններ և վարչարարական բաժնակցական ծնունդներ ոչ միայն պարզապես ֆինանսական աջակցություն - նվիրատվություններ - պե-տական գործընկերներին: Ժառանգության ոլորտում ներգրավված մարմինները բավականին կարողու-թյուններ ունեին վարչարարական, այլ ոչ թե ֆինանսական տեսանկյունից:
- Հյուրընկալ կազմակերպության ժառանգության ոլորտում ներգրավված մարմին, որում տեղ գրած համագործակցությունը երաշխավորեց եզակի գործընկերություն և առկա կառավարման համակարգի դոնոր բացեց նոր աշխարհաճոհի հանդեպ, ինչպես նաև սեփականատիրության զգացում արթնացրեց նրանց շրջանում, ովքեր նոր մոտեցումներն առաջ կմղեին գործնականում:
- Արձագանքող և ծնունդ գործընկերության տարբերակների ստեղծումը (այլ ոչ թե մասնագիտացված կազմակերպության) ապահովեց անհրաժեշտ արձագանքում ծրագրի նոր փուլերին՝ հուշարձանի և հյուրընկալ կառավարման համակարգի կարիքների աճին համապատասխան: Վերջին տասը տարվա ընթացքում ծրագիրը վրանգված տարածքներում մասշտաբային աշխատանքների իրականացումից առաջընթաց ապրեց դեպի նոր թանգարանային ենթակառուցվածքների պլանավորում, բնականի վարչարարությունը բաղադրյալ վերակենդանացման նախաձեռնությունների իրականացում, ինչպես նաև Վեզուվի տարածքում առկա այլ հուշարձանների համար կարողությունների կառուցման նախաձեռնությունների իրականացում՝ ծրագրի փուլային ավարտի հեռանկարով:
- Ժառանգության ոլորտում ներգրավված ազգային մասնագետներից և պայմանագրային մասնագետներից (բազմաթիվ տեղացիներ) ձևավորեց միջգիտակարգային թիմ՝ ժառանգության ոլորտի անձնակազմի ամրապնդման և հնագիտական վայրի կոնսերվացման գործողություններն ուժեղացնելու նպատակով:
- Տեղացի և միջազգային գիտահետազոտական գործընկերների աշխատանքային ցանցի ստեղծումը ոչ միայն հնարավորություն տվեց ամրապնդելու մրավոր ռեսուրսները, այլև ներդրում ունեցավ հուշարձանի հանրահոշակամ գործում և տվեց բազմակի ազդեցություն Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված այս սերիական անվանակարգի մյուս հուշարձանների համար:
- Ծրագրի իրականացման մոտեցումը ներմուծեց նպատակին հասնելու մշակույթ և մեծ շեշտադրում արեց ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացների արդյունավետության վրա:
- Կարևորություն է տրվել այն գործողություններին, որոնք կարող են թույլատրել կառավարման համակարգին ապահովելու հուշարձանի կայուն կառավարումը պետական միջոցներով՝ ծրագիրն ավարտելուց հետո: Օրինակները ենթակառուցվածքների զարգացմանը և կոնսերվացմանն ուղղված միջոցառումներն են՝ ծախսերը երկարաժամկետ կորովածրվ նվազեցնելու և հուշարձանի կառավարումը հեշտացնելու, սպասարկման պլանավորած ցիկլերի համար նոր մոտեցումների փորձարկման և օպերիմալացման, ինչպես նաև երկարաժամկետ հետազոտական գործընկերության ապահովագրման նպատակով:
- Անհրաժեշտ է գիտակցել հուշարձանի համար ժամանակակից քաղաքի կյանքում նոր դերի և անհատ-կանության վերահաստատման, ժառանգության առավելություններից ստեղծված շահի երկուստեք օգտագործման անհրաժեշտությունը: Հերկոլանում կենտրոնի ստեղծումը, որը հարակից նախաձեռնություն էր, տեղի քաղաքացիական իշխանությունները և այլ շահագրգիռ մարմինների միջև կապի հաստատման նպատակով էր՝ ապագայում հնագույն և ժամանակակից քաղաքային հատվածների միջև երկարաժամկետ հարաբերությունների հաստատման համար:



Պոպեյի, Հերկոլանումի և Տոռոե Աննունզիաբայի հնագիտական վայրերը (Իտալիա)

© HCP / Սարահ Քամեր

79. A Packard Humanities Institute initiative in partnership with the Soprintendenza Speciale per i Beni Archeologici di Napoli e Pompei (the local semi-autonomous heritage authority) and the British School in Rome.

Հիմնական դիտարկումներ կառավարման համակարգերի բարեփոխումների համար

Համաշխարհային ժառանգության պարագայում կառավարման պլանավորումը լայնորեն կիրառվող գործիք է, քանի որ այն կարևոր նշանակություն ունի կառավարման համակարգի բարեփոխման, թերությունների բացահայտման գործում (տես Հավելված Ա-ն): Նույնիսկ կառավարման պլանի բացակայության պայմաններում կառավարման գործընթացը շահում է գործընթացների գնահատման տեսանկյունից թիրախների (արտադրանքներ) և լայն նպատակների (արդյունքներ), ինչպես նաև տարբերությունների և դրանց առաջացման պատճառների բացահայտման տեսանկյունից: Կառավարման համակարգի բարեփոխումը կախված է դրա հետևողական գնահատման հետ. արդյո՞ք երեք տարրերը աջակցում են ժառանգության ոլորտում տեղի ունեցող երեք գործընթացներին՝ ապահովելով թիրախային արտադրանքներ և ձեռք բերելով բոլոր նախանշված արդյունքները:

Չափորոշիչների կիրառման միջոցով մոնիթորինգի ենթարկված՝ արտադրանքների և արդյունքների մասին տեղեկատվությունն օգնում է առաջնայնություն սահմանել կառավարման համակարգի հետագա գործունեության ընթացքում: Հաջորդ՝ 4.5-րդ բաժինը առաջարկում է ժառանգության ոլորտի կառավարման համակարգերի փաստաթղթավորման և գնահատման տիպային օրինակ: Տիպային օրինակի իններորդ բաղադրիչում՝ «Բարեփոխումներ կառավարման համակարգերում» ներկայացվում են բոլոր բացթողումները կամ հնարավորությունները, որոնք նախանշվել են մյուս ութ բաղադրիչներում: Այնուհետ այն փոփոխություններ է առաջարկում դրանք հաղթահարելու կամ լուծելու համար, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով համապատասխան կառավարման գործիքներ:

ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐՆԵՐ

- ▶ Բարեփոխումները հաճախ դիտարկվում են որպես «ներդրումներ», սակայն կարող է թյուրընկալման հանգեցնել մարդկային, ֆինանսական և մտավոր ռեսուրսների տեսանկյունից, որոնք նույնպես դիտարկվում են որպես «ներդրումներ»:
- ▶ Անընդատ կատարելագործման վեր բարձրացող պարույրի ապահովումը, որը լավ կառավարման կենտրոնական բաղադրիչներից է, կախված է թերությունների բացահայտման և դրանց հասցեկան լուծում տալու հմտություններից: Նման հմտությունները կարող են իղկվել կարողությունների կառուցման միջոցներով (տես 3.8-րդ մասը):
- ▶ Իր մեկուսացման արդյունքում մշակութային ժառանգության ոլորտը, գործնական ծրագրերի իրականացման և շահագրգիռ մարմինների հետ տարվող աշխատանքների համատեքստում, ունի կարևոր նշանակության հմտությունների ավելի մեծ պակաս, քան որևէ մեկ այլ ոլորտ⁸⁰: Սա թուլացնում է հուշարձանի համար նախատեսված ժառանգության կառավարման համակարգը և միաժամանակ խոչընդոտում է դրա զարգացմանը:
- ▶ Մեկուսացումը պահանջում է մյուս ոլորտների լավագույնս ընկալում և հիմնական կառավարման համակարգի կատարելագործում:⁸¹
- ▶ Մշակութային ժառանգության վրա աճող ճնշումը և հանրության կողմից դրա նկատմամբ նոր պահանջների ներկայացումը հաճախ պահանջում է նոր գիտակարգերի ընդգրկում. օրինակ՝ տնտեսագետ, սոցիոլոգ և քննապահպան:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՏԵՔՍ

Հիմնական դիտարկումներ

Թերությունների բացահայտումը և դրանց հասցեական լուծում տալը բարեփոխվող կառավարման համակարգի բաղադրիչներից է արգասաբերության, արդյունավետության և հիմնական արդյունքների (Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտանություն) ու այլ նպատակներին հասնելու տեսանկյունից: Համապատասխանելիության ապահովման անհրաժեշտությունը լրացուցիչ ճնշում է ցանկում ընդգրկված հուշարձանների համար: Հավելված Ա-ն ներկայացնում է, թե ինչպես է կառավարման պլանավորումը խթանում այդ նպատակներին հասնելը:

80. Deputy Prime Minister's Office. 2004. Skills for Sustainable Communities. London, RIBA. http://dera.ioe.ac.uk/11854/1/Egan_Review.pdf

81. Brundtland, G.H. 1987. Report of the World Commission on Environment and Development: Our Common Future. Oxford, UK, Oxford University Press, Incorporated. Chapter 7. 'Merging Environment and Economics in Decision Making', paragraph No.75.

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Օրինակ՝ Գործառնական ուղեցույցում առաջարկված մասնակցային մոտեցումը (ԳՈՒ-ի 108-րդ պարբերություն) կախված է շահագրգիռ մարմինների ներգրավումից կառավարման գործընթացների բոլոր փուլերում, այսինքն, այն կողմերի մասնակցությամբ, որոնց վրա ազդում է արտադրողականությունը, արդյունավետությունը և որոշակի արդյունքների հասնելու կառավարման համակարգի կարողությունը:

ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐՆԵՐ


▶ Մշակութային ժառանգության կառավարման լիազոր մարմնի համար Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելը լրացուցիչ պարտավորություններ և նոր մարտահրավերներ է: Սա էլ իր հերթին պահանջում է անդամ պետությունից վերանայել և բարեփոխել կառավարման համակարգերը: Մյուս կողմից, Համաշխարհային ժառանգության համակարգը հնարավորություն է տալիս օգտվելու տարբեր փորձառության ցանցերից, ինչպես նաև փորձաքննություն ստանալ Համաշխարհային ժառանգության կոմիտեից, դրանց խորհրդատվական մարմիններից (ԻԿԿՈՒՕՄ, ԻԿՕՄՕՍ, IUCN), տարածաշրջանային կենտրոններից և ասոցացված այլ կազմակերպություններից (տես Համաշխարհային ժառանգության կայքէջը), ինչը կարող է օգտակար լինել կառավարման համակարգերի բարեփոխման գործընթացի ժամանակ:

4.5 Ժառանգության կառավարման համակարգի փաստաթղթավորում և գնահատում

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ «ԱԱՄԲՈՂՋԱԿԱՆ» ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Կառավարման համակարգի կառուցվածքն ազգային և հուշարձանի մակարդակով

4.2-րդ, 4.3-րդ և 4.4-րդ մասերում վեր հանած ինը բաղադրիչները միասին ձևավորում են ժառանգության կառավարման ամբողջական համակարգ, ինչպես ներկայացված է հետևյալ պատկերում:



Պատկեր 18: Ժառանգության կառավարման համակարգի ինը բաղադրիչները

Ժառանգության կառավարման համակարգն ինը բաղադրիչների բաժանումը թույլ է տալիս բոլորի համար ձևավորել մեկ ընդհանուր համակարգ, որոնք օգտագործում են դրանցից մեկը. հուշարձանների կառավարման գործում ներգրավված ժառանգության ոլորտի մասնագետները, ինստիտուցիոնալ համակարգերը սահմանող քաղաքականություն մշակողները, ինչպես նաև համայնքներն ու միությունները, որոնք պետք է ներգրավվեն ժառանգության ոլորտում կարիք ունեն թափանցիկության՝ որոշումներ ընդունելու տեսանկյունից:


Ինչպես նշված է 4.1-ին բաժնում ժառանգության կառավարման համակարգը որպես շահագործման հիմնական համակարգ ազգային կամ տարածաշրջանային մակարդակով կարող է ունենալ հիմնական առաջադրանքների իրավական մանդատ, ինչպիսիք են հուշարձանների նախանշումը և գրանցումը, ունենալ հսկողության լիազորություններ: Սակայն դրա համապատասխանելիությունը փորձարկվում է, երբ հուշարձանի կառավարումը (կոնսերվացում, մեկնաբանություն, այցելուների կառավարում, զարգացման հետ կապի հաստատում, և այլն) հաճախ ուժեղացվում է արտաքին ներդրումների շնորհիվ: Դրանից հետո է, որ երկրորդական կառավարման համակարգերի (կամ դրանց բաղադրիչների) աջակցության անհրաժեշտություն է սովորաբար առաջանում: Ձեռնարկի այս բաժինը բացատրում է, թե ինչպես է անհրաժեշտ փաստաթղթավորել և գնահատել ժառանգության կառավարման հիմնական համակարգերի համարժեքությունը, և ինչպիսի դերակատություն ունեն կառավարման երկրորդական համակարգերը:

Ազգային կամ տարածաշրջանային կառավարման համակարգը կարող է նույն ստանդարտի լինել մշակութային հուշարձանների որոշակի կատեգորիաների համար, սակայն այն պետք է փորձարկվի որոշակի առանձնահատկություն ունեցող հուշարձանի կամ հուշարձանախմբի պարագայում կիրառելիության տեսանկյունից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բնույթը և շրջակա միջավայրը, որով էլ ձևավորվում են կառավարման մոտեցումները: Ինը բաղադրիչներից առանձին դեպքերի ներգործությունից ամենակարևորված բաղադրիչներն են՝ գործընթացների հանդեպ մոտեցումը և արդյունքները: Այս ոլորտը կուսումնասիրվի հետագայում:



Պատկեր 19: Թե ինչպես են ժառանգության (ազգային) կառավարման համակարգի, թերևս, միանման (հիմնական) տարրերն աջակցություն ստանալու մեկ հուշարձանի կամ հուշարձանախմբի համար նախատեսված պայմաններից

Առանձին հուշարձանով կամ հուշարձաններով ներկայացված սահմանափակումները կամ հնարավորությունները նույնպես կարող են ազդել երեք տարրերի վրա: 20-րդ պատկերը ներակայացնում է որոշ օրինակներ, որոնք նույնպես ցույց են տալիս, թե ինչպես կառավարման այլ համակարգերի բաղադրիչները կարող են օգտակար լինել:



Պատկեր 20: Երկրորդական կառավարման համակարգերի կամ դրանց բաղադրիչների կիրառումը հիմնական կառավարման համակարգերի ուժեղացման նպատակով

Իրավական համակարգ

- Տեղական հողօգտագործման իրավունքից բխող ենթաօրենսդրական ակտեր
- Այլ ոլորտների օրենսդրությունը (օրինակ՝ հարկերից ազատում, աղտոտվածության ստանդարտներ, ափամերձ պաշտպանություն)
- Հաստատված հողօգտագործում կամ օգտվելու իրավունք

Ինստիտուցիոնալ համակարգ

- Տեղական հասարակական կազմակերպությունների ուժեղացում
- Տեղական քաղաքացիական իշխանությունների գործառույթների հետ խաչվում
- Պետական և մասնավոր սեփականության, ինչպես նաև կառավարման հսկողության տարբեր մակարդակներ

Ռեսուրսներ

- Թիրախային շրջան՝ հիմնական ֆինանսավորում ներգրավելու նպատակով (օրինակ՝ Համաշխարհային բանկ, Եվրոպական հանձնաժողով)
- Համայնքային կայուն համերաշխություն և կամավորություն
- Ավանդական հմտությունների և գիտելիքների շարունակականություն

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Ժառանգության կառավարման համակարգի կառուցվածքի նպատակը

Կառուցվածքն ունի երեք հիմնական գործառույթ մշակութային ժառանգության կոնսերվացման և կառավարման բնագավառներում ներգրավվածների համար՝

Նպատակ 1. Ժառանգության կառավարման համակարգի սահմանման և փաստաթղթավորման համակարգը և հաղորդակցություն, թե ինչպես է այն աշխատում մյուսների հետ

Երրորդ կողմից ժառանգության կառավարման համակարգերը խթանելու և ստանդարտացնելու, ինչպես նաև դրանց արդյունքների մասին զեկուցելու նպատակով ինը բաղադրիչների բաղկացած համակարգն առաջարկում է մեկ ընդհանուր մոտեցում: Համաշխարհային ժառանգության կառավարման պարագայում սա ձևավորում է անվանակարգի նախապատրաստման գործընթացի (տես ձևաչփաի 5-րդ բաժինը) և, ընդգրկումից հետո, պարբերական զեկույցի վերլուծության և պահպանվածության վիճակի մասին զեկույցների մի մասը:

Համաշխարհային ժառանգության անվանակարգի նախապատրաստման գործընթացը առանձնահատուկ պահանջ է ներկայացնում, որ հուշարձանի կամ հուշարձանախմբի համար տեղում պաշտոնապես փաստաթղթավորված լինի ժառանգության կառավարման համակարգը (ԳՈՒ-ի 130-րդ և 132,5-րդ պարբերություններ):⁸² Անվանակարգային փաթեթը կարող է լուրջ խթանիչ հանդիսանալ հուշարձանի կառավարման համար և լինել այն ելակետը, որի միջոցով հնարավոր կլինի չափելի դարձնել հուշարձանի կառավարումը և պահպանվածության վիճակը հետագա տարիների ընթացքում:⁸³

Նպատակ 2. Կառուցվածք, որը հնարավորություն է տալիս հուշարձանին առնչվող ցանկացած խնդիր տեղադրել առավել լայն համատեքստում և ցուցադրել ժառանգության կառավարման բնագավառում ինտեգրված մոտեցման կիրառման անհրաժեշտությունը

Ժառանգության կառավարման համակարգը գործում է առավել լայն միջավայրում, որը կարող է ճնշում գործադրել մշակութային ժառանգության հուշարձանի վրա և հակառակը: Սակայն այս փոխկապակցվածությունը կարող է նաև մի շարք հնարավորություններ ընձեռել (տես 2-րդ մասը): Ծնշումների և հնարավորությունների լավ կառավարումից զատ հուշարձանի և դրան հարակից համայնքների համար կարող է օգտակար լինել մշակութային, սոցիալական, տնտեսական և բնապահպանական արժեքների ավելացումը:

Ինը բաղադրիչներից «բարեփոխումները» և «արդյունքները» ամենամեծ ազդվողներն են ուղղակի շփումից առավել լայն համատեքստով (ներկայացված է պատկերում հակադրված սլաքների տեսքով): Սակայն ժառանգության կառավարման համակարգի բոլոր բաղադրիչները կախված են այդ համատեքստից և պետք է ընդգրկեն դրանց ներկայացուցիչներին:

Համակարգը թույլ է տալիս ժառանգության խնդիրները դիտարկել ավելի լայն համատեքստում և խթանել ինտեգրված մոտեցումը ժառանգության կառավարման բնագավառում: Այն ցուցադրում է կառավարման համակարգի կարիքները և ձեռքբերումները, ինչպես նաև կառավարման այլ համակարգերի ունեցած դերակատարությունը այդ գործում it (տես 4.1-ին մասը): Թափանցիկության և երկխոսության շնորհիվ՝ հանրությանը տված օգուտներն ավելի լայն ճանաչում են ստանում, իսկ շահագրգիռ մարմինների ներգրավումը և դրանից ստացված տեղեկատվությունը՝ առավել արդյունավետ կիրառում:

Նպատակ 3. Ժառանգության կառավարման համակարգի (կառավարման այլ համակարգերի հետ միասին) գնահատման և բարեփոխման կառուցվածք

Լավագույնս հայտնի է, որ կառավարման շրջափուլի անցկացման հետ միասին առավել դժվար է դառնում գնահատել, թե որքան արդյունավետ են ժառանգության կառավարման գործընթացները և արդյունքները (տես ստորև):

82. his overview of the management system may be delivered on its own or as part of a management plan.

83. UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2011. Preparing World Heritage Nominations. (Second edition). Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual) p.91. <http://whc.unesco.org/en/activities/643/> (English web page).



Պատկեր 21: Գնահատումն առավել դժվար է դառնում կառավարման շրջափուլի անցկացման հետ

Գնահատման տեսանկյունից առավել դժվար է գնահատվում կառավարման համակարգի հենքը, մասնավորապես իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը, ինչպես նաև ռեսուրսների արդյունավետ կառավարման մոտեցումը:

Ժառանգության ոլորտում տեղի ունեցող գործընթացները կարող են ներկայացնել, թե տվյալ հուշարձանի կամ հուշարձանախմբի համար նախատեսված կառավարման համակարգը արդյոք ձախողվում է նպատակների ձեռքբերման հարցում կամ դրանց հասնելն անարդյունավետ է, ինչպես նաև կարող է նախանշել առանձին ուժեղ և թույլ կողմերը: Սակայն դժվար է ընկալել դրանց հետևանքները կառավարման համակարգի մյուս բնագավառների համար:

Հնարավոր է ի հայտ գա կառավարման համակարգի փոփոխման անհրաժեշտություն՝ ելնելով Համաշխարհային ժառանգության ցանկում ընգրկելուց /պահպանելուց (ԳՈՒ-ի 117-րդ և 132.5-րդ պարբերություններ) հետո առաջացած պահանջների կամ հուշարձանում կամ հուշարձանախմբում տեղ գտած փոփոխությունների (ցանկալի կամ ոչ) հետևանքով, որոնց անհրաժեշտ է հասցեական լուծում տալ (տես Հավելված Ա): Ցանկացած փոփոխություն, ամենայն հավանականությամբ, կարող է ունենալ հետևանքներ կառավարման ամբողջ համակարգի համար:

Ինը բաղադրիչների բաղկացած համակարգը ներկայացնում է ստուգաթերթիկ՝ տվյալ կառավարման համակարգի ուժեղ և թույլ կողմերը գնահատելու համար, ինչպես նաև առաջարկություններ՝ ներկայացնելու համար տրամաբանական կառուցվածքը, թե երբ է անհրաժեշտ փոփոխություն կատարել արժեքների և բոլորից առավել Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության համար: Այն հեշտացնում է կառավարման համակարգի կարիքների և ձեռքբերումների վերանայումը կառավարման տարբեր մակարդակներում (տեղական, ազգային, տարածաշրջանային, միջազգային):

Ժառանգության կառավարման համակարգի փաստաթղթավորում և գնահատում

Ստանդարտ, տիպային օրինակ՝ կառուցվածքի կիրառման համար 12-րդ աղյուսակը մշակվել է ինը բաղադրիչից բաղկացած կառուցվածքը կիրառելու համար՝ ժառանգության կառավարման համակարգի փաստաթղթավորման (օրինակի համար 5 e կետը անվանակարգային ձևաչափի, ԳՈՒ-ի 5-րդ հավելված) և գնահատման նպատակով: Օգտագործողին այն օգնում է նախանշելու, թե բոլոր ինը բաղադրիչներն ամբողջությամբ կամ մասնակի կիրառվում են կառավարման հիմնական համակարգում, կամ եթե ոչ, որոնք են կառավարման մյուս համակարգերի դերակատարությունները: Ստորև ներկայացված Համաշխարհային ժառանգության հուշարձանների օրինակները հստակեցում կմտցնեն: ԳՈՒ-ի 5-րդ հավելվածը նկարագրում է Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման համար պահանջները, որոնք անհրաժեշտ են փաստաթղթավորել:

Օգտատերերի համար «Word» ձևաչափով տիպային օրինակը ներառված է տվյալ ձեռնարկում: Օգտագործողները տիպային օրինակի լրացման ընթացքում պետք է կիրառեն համապատասխան բաժինները և պատասխանեն հարցերին՝ հաշվի առնելով ներկայացված ցուցումները, երբ փաստաթղթավորում են ժառանգության կառավարման համակարգը:

4 Ժառանգության կառավարման ամակարգերի սահմանում, գնահատում և կատարելագործում

Աղյուսակ 12. Կառավարման համակարգի փաստաթղթավորման տիպային օրինակ

Առանձին մշակութային հուշարձանի համար ժառանգության կառավարման համակարգի համարժեքության փաստաթղթավորում և գնահատում

1. Հուշարձանի անվանումը և գտնվելու վայրը.

2. Հուշարձանի համառոտ նկարագրությունը.

Հիմնական ատրիբուտները.
Իսկություն.
Ամբողջականություն.

3. Համաշխարհային ժառանգության չափորոշիչը.

4. Մշակութային հուշարձանի համար նախատեսված կառավարման համակարգի փաստաթղթավորում և գնահատում

Կառավարման համակարգի շրջանակը.
3 բնագավառ,
9 բաղադրիչ

- Խնդրում ենք նկարագրել մշակութային հուշարձանի կառավարման համակարգը

Ըստ անհրաժեշտության խնդրում ենք ընդգծել հիմնական և հարակից առանձնահատկությունները կամ կցել համապատասխան տեղեկանքները

- Խնդրում ենք գնահատել դրա համապատասխանելիությունը.

Գոյություն ունեցող թերությունները և ընձեռված նոր հնարավորությունները (հիմք ընդունելով հուշարձանի բնույթը, որից հետո հղում կատարելով տվյալ ձեռնարկի համապատասխան բաժիններին)

- Խնդրում ենք ընդգծել երկրորդական / կառավարման այլ համակարգերից կամ գործիքակազմերից ստացվող լրացուցիչ աջակցությունը, որը կիրառվում է հիմնական կառավարման համակարգ ուժեղացման և գոյություն ունեցող բացթողումները վերացնելու համար
- Խնդրում ենք նախանշել պահանջվող լրացուցիչ միջոցները և մեխանիզմները

Ե Ր Ր Ս	Իրավական համակարգ (կամ «մանդատը»)			
	Ինստիտուցիոնալ համակարգը			
	Ռեսուրսներ			
Գ Ր Ծ Ն Թ Վ Ն Ե Ր	Պլանավորում			
	Իրականացում			
	Մոնիթորինգ			
Բ Ր Ք Ն Ե Ր	Արտադրանք			
	Արդյունք			
	Բարեփոխումներ (ներառյալ պահանջվող լրացուցիչ միջոցների ամփոփագիրը)			

Հետևյալ օրինակը գոյություն ունեցող կառավարման համակարգի փաստաթղթավորման փորձն է, որը մշակվել է ժամանակի ընթացքում հուշարձանը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելուց հետո:

Աղյուսակ 13. Կառավարման համակարգի փաստաթղթավորման տիպային օրինակ

Առանձին մշակութային հուշարձանի համար ժառանգության կառավարման համակարգի համարժեքության փաստաթղթավորում և գնահատում

1. Հուշարձանի անվանումը և գտնվելու վայրը. Կանդի սուրբ քաղաքը, Շրի Լանկա

2. Հուշարձանի համառոտ նկարագրությունը.

Հիմնական ատրիբուտները.
Հղում Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունից

Իսկություն.
Հղում Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունից

Ամբողջականություն.
Հղում Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունից



Կանդի սուրբ քաղաքը
(Շրի Լանկա)

3. Համաշխարհային ժառանգության չափորոշիչը. (iv) (vi)

4. Մշակութային հուշարձանի համար նախատեսված կառավարման համակարգի փաստաթղթավորում և գնահատում

Կառավարման համակարգի շրջանակը. 3 բնագավառ, 9 բաղադրիչ	• Խնդրում ենք նկարագրել մշակութային հուշարձանի կառավարման համակարգը	• Խնդրում ենք գնահատել դրա համապատասխանելիությունը. Գոյություն ունեցող թերությունները և ընձեռված նոր հնարավորությունները (հիմք ընդունելով հուշարձանի բնույթը, որից հետո հղում կատարելով տվյալ ձեռնարկի համապատասխան բաժիններին)	• Խնդրում ենք ընդգծել երկրորդական 7 կառավարման այլ համակարգերից կամ գործիքակազմերից ստացվող լրացուցիչ աջակցությունը, որը կիրառվում է հիմնական կառավարման համակարգի ուժեղացման և գոյություն ունեցող բացթողումները վերացնելու համար • Խնդրում ենք նախանշել պահանջվող լրացուցիչ միջոցները և մեխանիզմները
Իրավական համակարգ (կամ «մանդատը»)	1940 թ. ընդունված, իսկ 1980 թ. վերանայված «Հնության հուշարձանների մասին որոշումը» կանոնակարգում է պետության տարածքում ժառանգության պաշտպանությունը և կառավարումը Հուշարձանների մի մասը բուդդիստական համայնքի սեփականությունն է և կառավարվում է տաճարային կանոններով	Անհրաժեշտ հսկողություն սահմանել հուշարձանից դուրս գտնվող տարածքների և պահպանական գոտու նկատմամբ Գոյություն մի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն	Հուշարձանն ընկնում է նաև «Քաղաքաշինության մասին» օրենքի և քաղաքային խորհրդի կանոնակարգերի ենթակայության տակ, ինչը հնարավորություն է տալիս ավելի լավ հսկողություն սահմանել առավել ընդլայնված տարածքի նկատմամբ: 1981 թ. հուշարձանը բերվեց «Մշակութային կենտրոնական հիմնադրամի» ենթակայության, ինչը մեծացրեց ֆինանսական միջոցների ծավալը և կարողությունները միջոցառումներ իրականացնելու համար

ՅՈՒՆԵՍԿՕ	Ինստիտուցիոնալ համակարգը	Հնագիտության դեպարտամենտը պատասխանատու հաստատությունն է Տաճարի վարչակազմը, որը գլխավորում է ավագ վանահայրը, պատասխանատու է Ատամի մասունքի տաճարի (առօրյա ծեսեր, տարեկան շքերթներ, և այլն) և դրա կառավարման համար	Բոլոր շահագրգիռ կողմերին միավորելու մեխանիզմի անհրաժեշտություն Վանականներին որոշում կայացնելու գործընթացին ավելի շատ ներգրավելու անհրաժեշտություն	Ստեղծվեց Համաշխարհային ժառանգության սուրբ վայրերի կոմիտե քաղաքապետի գլխավորությամբ և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որպես անդամներ
	Ռեսուրսներ	<i>Մարդկային.</i> Հիմնականում ներգրավված են հնագիտության դեպարտամենտի աշխատակիցները <i>Ֆինանսական.</i> Տարեկան ֆինանսավորումը հատկացնում է կետրոնական կառավարությունը Օտարերկրյա զբոսաշրջիկների համար տաճարը սահմանել է մուտքի վճար <i>Մրավոր.</i> Դեպարտամենտի համակարգումը կուտակված գիտելիքները	Հնագիտության դեպարտամենտի անձնակազմի թերի համալրվածությունը և տարբեր մասնագետների աշխատանքի ընդունելու հարցում առավել ճկուն համակարգի անհրաժեշտություն Արտաքին ռեսուրսների ներգրավման անհրաժեշտություն Թերֆինանսավորում Նոր գիտելիքների, մասնավորապես համաշխարհային բացառիկ արժեքի վերաբերող նոր գիտելիքների ստացում	Մշակութային կենտրոնական հիմնադրամն իր վրա է վերցնում կոնսերվացման աշխատանքների իրականացումը Նախաձեռնվել է արտաքին աղբյուրներից ռեսուրսների ներգրավումը Մշակութային կենտրոնական հիմնադրամը տրամադրել է լրացուցիչ ֆինանսավորում Դեռևս անհրաժեշտ են բարեփոխումներ
ԳՈՐԾՆԵՐՆԵՐՈՒՄ	Պլանավորում	Տարեկան կտրվածքով հնագիտության դեպարտամենտի կողմից կոնսերվացման աշխատանքների պլանավորում	Երկարաժամկետ հեռանկարով պլանավորման անհրաժեշտություն Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանությունը երաշխավորելու տեսանկյունից Հնագիտության դեպարտամենտի անբավարար մասնակցություն Արժեքների հենքի վրա հիմնված մոտեցում պլանավորման գործում	Մասնակցային գործընթացների կիրառմամբ պլանավորման նոր մոտեցման և տարբեր շահագրգիռ մարմինների ռեսուրսների օգտագործման համար նոր ստեղծված կոմիտեի գործառնությունների իրականացման ապահովում Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայեցակարգը առաջին անգամ քննարկվեց սուրբ քաղաքի հարցերով ստեղծված կոմիտեի շրջանակներում Որպես Սուրբ քաղաքի պլանավորման անվամբ հայտնի մեխանիզմները կիրառության մեջ են 1949թ.-ից:
	Իրականացում	Հնագիտության անձնակազմի կողմից ծրագրերի իրականացում	Միջոցառումների իրականացման համար արտաքին ռեսուրսների ներգրավման անհրաժեշտություն Մյուս շահագրգիռ կողմերի աջակցությունն օգտագործելու անհրաժեշտություն պլանավորման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացնի քաղաքապետարանը, քանի որ հանդիսանում է «Քաղաքաշինության մասին» օրենքի կիրարկող մարմինը	Համապարփակ կառավարման պլանի բացակայության պայմաններում դեպարտամենտի կամ կոմիտեի մշակված ցանկացած ծրագիր իրականացվում է համապատասխան հաստատության(ների) կողմից սեփական միջոցների հաշվին Կառուցապատման նկատմամբ հսկողությունն իրականացնում է քաղաքապետարանը՝ համապատասխան գործակալություններից ստեղծված աշխատանքի միջոցով

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՆԵՐ	Մոնիթորինգ	Հնագիտության դեպարտամենտը հաստատել է մոնիթորինգի մեթոդներ իրականացվող աշխատանքների համար Հնագիտության դեպարտամենտն իրականացնում է կանոնավոր տեսչական ստուգումներ հուշարձանի տարածքում ապօրինի շինությունների հայտնաբերման ուղղությամբ:	Առավել մեծ տարածքում մոնիթորինգի իրականացման անհրաժեշտություն Համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտող բոլոր ատրիբուտների պահպանության ապահովման անհրաժեշտություն Հուշարձանի բուն տարածքի և պահպանական գոտու նկատմամբ ավելի ուժեղ հսկողության սահմանման անհրաժեշտություն	Հնագիտության դեպարտամենտի, Մշակութային կենտրոնական հիմնադրամի, Քաղաքաշինության մարմնի և քաղաքապետարանի մի գերատեսչական հանձնաժողովը ստեղծվեց կառուցապատման և դրա նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով Աշխատանքների իրականացման ընթացքը քննարկվում է կոմիտեի ամսական նիստերի ընթացքում, իսկ առանձին գործակալությունները դիտանցում են դրանց աշխատանքը
	Վերջնական արդյունք	Հնագիտության դեպարտամենտը պատասխանատու է ժառանգության, ներառյալ համաշխարհային բացառիկ արժեքների պաշտպանության համար Կրոնական նշանակության հուշարձանի համար պատասխանատու վանականները պատասխանատու են ծեսերի անցկացման համար	Հուշարձանի համաշխարհային բացառիկ արժեքի մասին հանրային իրազեկվածության ցածր մակարդակ համայնքում	Պաշտպանել և ապահովել Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանվածությունը՝ մասնակցության ավելի մեծ ծավալի ապահովման միջոցով Համաշխարհային ժառանգության հուշարձանից ստացված օգուտները փոխանցել համայնքին
	Միջանկյալ արդյունք	Հնավայրերի, շինությունների և հուշարձանների առանձին ընտրված հատվածների նկարագրողունների կոնսերվացում, որի միջոցով կերաշխավորվի Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանությունը Վանականների և վանահոր կողմից կրոնական գործողությունների շարունակականության ապահովում, որը կխթանի Համաշխարհային բացառիկ արժեքը	Հուշարձանի մասնավոր սեփականություն հանդիսացող հատվածների կոնսերվացման, դրանց նկատմամբ հսկողության իրականացման անհրաժեշտություն, ծիսական միջոցառումների իրականացման համար ենթակառուցվածքների զարգացում	Հուշարձանի մասնավոր սեփականություն հանդիսացող հատվածների կոնսերվացման ծրագրի ներկայացում՝ տնտեսական օգուտները համայնքին տրամադրելու նպատակով Ենթակառուցվածքների ապահովում՝ նախապատրաստված պլաններին համապատասխան Փառատոների ընթացքում ենթակառուցվածքների ապահովում
	Բարեփոխումներ (ներառյալ պահանջվող լրացուցիչ միջոցների ամփոփագիրը)	Կար զգացողություն, որ Սուրբ քաղաքի կոմիտեն իրավական լիազորությունների կարիք ուներ: Կոմիտեին համապատասխան լիազորություններով օժտելու նախագիծը մշակման փուլում է:		

Հավելված Ա

Կառավարման պլանի մշակման, իրականացման և մոնիթորինգի շրջանակ

4.3-րդ կետի «պլանավորման» գործընթացի քննարկումն առավել մանրամասն ներկայացվում է Հավելված Ա-ում: Դրա նպատակը խորհրդատվություն տրամադրելն է կառավարման պլանի մշակման տեսանկյունից, որը պահանջվում է Համաշխարհային ժառանգության անվանակարգի ներկայացման ձևաչափի 5-րդ բաժնով: Համաշխարհային ժառանգության համատեքստում կառավարման պլանավորումն օրեցօր զարգացող հանրամատչելի գործիք է մշակութային, և մասնավորապես Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության տեսանկյունից: Կառավարման պլանի նախապատրաստումը և իրականացումը պահանջում է կառավարման համակարգի բոլոր ինը բաղադրիչներից ներդրում (տես 4-րդ մասը), ինչպես նաև հնարավորություն է տալիս հուշարձանում գոյություն ունեցող կառավարման համակարգ(եր) ի փաստաթղթավորումն իրականացնել կառուցվածքային եղանակով: Այն նաև օգնում է գոյություն ունեցող համակարգերում նախանշել բացթողմաները, որն իր հերթին լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացնում դրա փոփոխության կամ բարեփոխման համար: Տվյալ տեղեկատվությունը պահանջվում է նաև անվանակարգի ներկայացման ձևաչափի 3.1 e, 4.5-րդ և 6-րդ կետերով:

Հավելվածը կառուցված է ստորև ներկայացվող վերնագրերին համապատասխան

A.1 Ներածություն. կառավարման պլանները կառավարման համակարգում

A.2 Կառավարման պլանավորման գործընթացը

A.3 Կառավարման պլանի բովանդակությունը

A.1 Ներածություն. կառավարման պլանները կառավարման համակարգում

Կառավարման պլանավորում. ակնարկ

Համաշխարհային ժառանգության համակարգում «կառավարման պլանավորումն», անխոս, դարձել է ամենահանրամատչելի գործիքը: Անդամ պետությունները, Համաշխարհային ժառանգության կոմիտեն և խորհրդատվական մարմինները կիրառում են կառավարման պլանավորումը որպես անդամ պետության կողմից որոշակի հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության ուղղությամբ ստանձնած պարտավորությունների գնահատման, ինչպես նաև համայնքին ստացված օգուտների փոխանցումը երաշխավորելու համար: «Կառավարման պլան» եզրույթն օգտագործվում է շատ հաճախ և ընդգծում է պլանավորման տրամադրած միջանկյալ արդյունքները, այլ ոչ թե կառավարման մոտեցումները և գործընթացները, որն այն ենթադրում է:

Այնուամենայնիվ, գործընթացի արդյունքում ի հայտ եկած կառավարման պլանավորումը և կառավարման պլանները պետք է ընկալվեն կառավարման համակարգ(եր)ի հետ ունեցած հարաբերակցությունների համատեքստում, ինչպես նկարագրված և մանրամասն մշակված է 4-րդ մասում (տես նաև անվանակարգի ներկայացման ձեռնարկի 89-91-րդ էջերը): Կառավարման պլանը պետք է լինի ամբողջ կառավարման համակարգի արտացոլումը: Որպես ամբողջ կառավարման համակարգը փաստաթղթավորող մի գործիք, այն հնարավորություն է տալիս նկարագրելու և գնահատելու տվյալ համակարգը, որի միջոցով էլ հնարավոր է դառնում ցույց տալ, թե ինչպես է անդամ պետությունը պատրաստվում ապահովել հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանվածությունը:

Համաշխարհային ժառանգության հուշարձանների պարագայում Համաշխարհային բացառիկ արժեքն արտահայտող ատրիբուտների պաշտպանությունը պետք է հանդիսանա հիմնական, սակայն ոչ միակ նպատակը: Ինչպես նկարագրված է ստորև ներկայացվող «կառավարման պլանավորման գործընթացում» կառավարման պլանը պետք է հասցեական լուծում տա հուշարձանի ընդհանուր մշակութային արժեքների պահպանությանը և հուշարձանի անմիջական տարածքում տեղի ունեցող փոփոխություններին, որոնք կարող են ազդել դրանց վրա: Այս համապարփակ մոտեցումը կառավարման պլանավորման մոտեցման որակական հատկանիշներից մեկն է, քանի որ այն պահանջում է կապի հաստատում մյուս պլանների (ինչպիսիք են տեղական կամ շրջանային հողօգտագործման պլանավորումը կամ զարգացման պլանները) և ժառանգության համակարգից դուրս գտնվող շահագրգիռ կողմերի հետ:

Հուշարձանի ֆիզիկական սահմաններից դուրս գտնվող տարածքի կառավարման պլանավորումը նպատակ ունի պաշտպանելու համաշխարհային բացառիկ և մշակութային այլ արժեքների լավագույնս պաշտպանությունը, ինչպես նաև ապահովելու սոցիալական օգուտների երաշխավորումը, որը կարող է ժառանգությունը առաջարկել և որը կարող է հուշարձանը ստանալ համայնքային լայն ներգրավվածության տեսանկյունից (տես կայուն զարգացմանը վերաբերող 2.3-րդ մասը):

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

▶ Կառավարման պլանի մշակումը սերտորեն կապված է անվանակարգային փաթեթի մշակման հետ: Համաշխարհային բացառիկ արժեքի հաստատումից հետո լավ գաղափար կլինի կառավարման համակարգի գնահատման իրականացումը՝ անվանակարգի ներկայացման ձևաչափի 5-րդ բաժնին համապատասխան (ԳՈՒ-ի 5-րդ հավելված), ինչպես նաև մեկնարկել ստորև ներկայացվող գործընթացը: Անվանակարգի ներկայացման ձևաչափի 4-րդ, 5-րդ և 6-րդ բաժինները պետք է լրացված լինեն՝ օգտագործելով կառավարման պլանի համար հավաքագրված տեղեկատվությունը:

Կառավարման պլանավորման գործընթացի հիմնական նպատակը մշակութային ժառանգության հուշարձանների ռազմավարական պաշտպանության ապահովումն է: Սույնի հիմնարար հատվածը որոշակի մշակութային ժառանգության հուշարձանի մասով որոշումների ընդունման և փոփոխությունների կառավարման համար կառուցվածքի սահմանումն է: Այս կառուցվածքն ու փաստաթղթավորումը, այլ կառավարման նպատակների, խնդիրների և մշակութային ժառանգության հուշարձանի կառավարման գործում ներգրավված անձանց համատեղ ջանքերով մշակված գործողությունների հետ միասին կոչվում է «կառավարման պլան»: Ըստ էության, կառավարման պլանն ուղեցույց փաստաթուղթ է, որը մշակվել և նկարագրում է որոշակի կառավարման համակարգ: Մշակութային ժառանգության հուշարձանի կառավարման ցիկլի բոլոր փուլերի համար (պլանավորում, իրականացում, մոնիթորինգ) այն կարևոր գործիք է, որն անհրաժեշտ է պարբերաբար վերանայել և թարմացնել:

Նախախոս

Կառավարման պլանը կառավարման համակարգի անբաժանելի մասն է:

Բիսկայան կամրջի կառավարման հիմնական համակարգը գործում է մարզային մակարդակով: Այն օրենսդրությամբ պաշտպանված է Բասկյան կառավարության կողմից (Իսպանիայի մարզային կառավարություններից մեկը): Բիսկայան կամրջի պաշտպանության և կառավարման համար իրավաբանորեն ուղղակի պատասխանատվություն կրող մարմինը Բիսկայան մարզային խորհուրդն է, մարզային լիազոր մարմին, որը պատասխանատու է Բիսկայան մարզի համար, որպեսզի գտնվում է կամուրջը: Պահանջվող ռեսուրսները նույնպես տրամադրվում կամ ստեղծվում են նույն հաստատության կողմից: Հուշարձանների պահպանության հարցերով հանձնաժողով է ստեղծվել բոլոր շահագրգիռ մարմիններին միավորելու և կառավարման պլանը մանրամասն մշակելու համար: Սա նույնպես հեղափոխիչ արդյունաբերական ժառանգության հուշարձանի օրինակ է, որի առօրյա կառավարման և պահպանության ապահովման համար ներգրավվել է մասնավոր ընկերություն: Սա նաև արդյունաբերական ժառանգության հուշարձանի միակ օրինակ է, որը կառավարվում է առավել լայն նպատակի հասնելու համար՝ այն է, Բիլբաո քաղաքի զարգացումը մեկ այլ ուղղությամբ, քանի որ դրա՝ որպես ծանրարդյունաբերական կենտրոնի գոյությունը մոլորեցնել է ավարտին:



Բիսկայան կամրջը (Իսպանիա)

© ՅՈՒՆԵՍԿՕ

Կառավարման պլան

Կառավարման պլանը համեմատաբար նոր գործիք է, որը սահմանում և հաստատում է համապատասխան ռազմավարությունը, խնդիրները, գործողությունները և իրականացման կառուցվածքը՝ մշակութային ժառանգության հուշարձանի արդյունավետ և կայուն եղանակով կառավարման և, անհրաժեշտության դեպքում, զարգացման համար, որպեսզի դրա արժեքները պահպանվեն ներկա և ապագա գնահատանքի արտահայտման համար: Այն հավասարակշռում և համակարգում է մշակութային ժառանգության կարիքները ժառանգության «օգտագործողների», ինչպես նաև պատասխանատու կառավարական և/կամ մասնավոր/համայնքային մարմինների կարիքների հետ համեմատությամբ:

Կառավարման պլանի բովանդակությունը և բնույթը բավականին փոփոխական է՝ կախված հուշարձանի տեսակից: Օրինակ՝ հնավայրի կամ քաղաքային կենտրոնի կառավարման պլանը կարող է համալիր լինել, քան առանցիկ շինության համար մշակվածը: Պլանով մանրամասնվում է, թե ինչպես Համաշխարհային բացառիկ արժեքը (կամ առաջադրման դեպքում ներուժ ունեցող Համաշխարհային բացառիկ արժեքը) պետք է պահպանվի և կոնսերվացվի, ինչպես նաև ներկայացնի գործնական արդյունավետ միջոցառումներ տեղում պահպանվածության ապահովման արդյունքների ձեռքբերման նպատակով:

Ինչպես նկարագրվեց վերը կառավարման պլանի նախապատրաստումը հավաքական և մասնակցային մոտեցման կիրառման արդյունք է և ընդգրկում է.

- Համաշխարհային ժառանգության հուշարձանների պարագայում, Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով ստանձնած պարտականությունների կատարման պետական երաշխիք,
- բոլոր շահագրգիռ կողմերի համար հնարավորություններ⁸⁴, մասնավորապես սեփականատերերի և կառավարիչների համար, ներգրավված լինելու հուշարձանի կառավարման գործում և կիսելու դրա վերաբերյալ ընկալումը, ինչն ամուր աջակցություն կլինի պլանի իրագործման համար,
- հուշարձանի հստակ նկարագրություն դրա արժեքների, մասնավորապես Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատման տեսանկյունից,
- գոյություն ունեցող համակարգի թափանցիկ նկարագրություն և ինչպես այն կարող է բարեփոխվել,
- մշակութային հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը, որը համաձայնեցվել կամ առաջարկվել է Համաշխարհային ժառանգության կոմիտեին՝ նախանշելով կառավարման ենթակա ատրիբուտները և իսկության ու ամբողջականության վիճակը, որն անհրաժեշտ է պահպանել,
- հուշարձանի այլ արժեքների գնահատում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հետագա կառավարման ընթացքում,
- հուշարձանի ներկա վիճակի և տարբեր՝ ատրիբուտների, իսկության և ամբողջականության վրա դրական կամ բացասական գործոնների վերաբերյալ ակնարկ,
- հուշարձանի կառավարման համար ընդհանուր տեսլական (օրինակ՝ որտեղ կլինի այն 20-30 տարի հետո),
- կառավարման քաղաքականությունների և/կամ նկատակների մի շարք, որն անհրաժեշտ է տեսլականին հասնելու համար հինգ տարիների ընթացքում,
- գործողությունների շարք (կոնսերվացման, մեկնաբանման և ներկայացման, հանրության զարգացման և այլն),
- իրականացման ռազմավարություն՝ ներառյալ մոնիթորինգը և վերանայումը,
- ըստ անհրաժեշտության պլանների կամ համակարգերի ինտեգրումը կամ երաշխավորումը, որ դրանք փոխընդանուր են,
- ժառանգության տված օգուտները համայնքին, որն իր հերթին օգտակար է հուշարձանի համար (բոլոր արժեքների, համայնքային աջակցության նոր ձևաչափերի ներգրավում):

Կառավարման պլանը կարող է.

- նկարագրել հուշարձանի ընդհանուր կառավարման համակարգը,
- սահմանել կառուցվածքը՝ համալիր գործընթացների վերլուծության համար,
- սահմանել համակարգը՝ տեղեկացված որոշումներ կայացնելու և փոփոխությունները կառավարելի դարձնելու համար,
- տրամադրել ուղեցույցային սկզբունքներ հուշարձանի տարածքում գործողությունների /ստանձնած պատասխանատվությունների/ համակարգման համար,

84. In this context, stakeholders may include local people, indigenous peoples, property owners and managers, government at all levels, commercial interests including tourism, and NGOs.

- օգնել կառավարելու համագործակցությունը պետական ու մասնավոր բնագավառներում տարբեր շահագրգիռ խմբերի շրջանում,
- երաշխավորել, որ միջամտությունները գիտակցորեն պլանավորված են համաշխարհային բացառիկ և այլ արժեքների պաշտպանության նպատակով, քանի դեռ դրանք համատեղելի են Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության հետ,
- օգնել ռեսուրսների նպատակային օգտագործման և ֆինանսների ներգրավման հարցում:

Պլանը նաև պետք է արտացոլի՝

- հիմնական շահագրգիռ մարմինների և լայն իմաստով համայնքի մասնակցությունը անվանակարգի նախապատրաստման ժամանակ, Համաշխարհային ժառանգության հայեցակարգի ընդհանուր ընկալումը և ցանկում ընդգրկելուց հետո հուշարձանի կառավարման ոլորտում առաջացած պարտավորությունները,
- ներկայիս կառավարման համակարգի համընդհանուր ընկալումը (օրենսդրական և կանոնակարգող հենքերը, կառավարման կառուցվածքը և մոտեցումները), զարգացման պլաները և քաղաքականությունները, ինչպես նաև հողօգտագործման տեսակները, որոնք ներկայում գոյություն ունեն հուշարձանի տարածքում,
- ժառանգության հուշարձանի Համախարհային բացառիկ արժեքի, իսկության և ամբողջականության, հուշարձանի վրա ազդող գործոնների վերաբերյալ բոլոր շահագրգիռ մարմինների շրջանում ընդհանուր ընկալում,
- հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանվածության ապահովման համար պահանջվող վարչարարական մոտեցումների և գործողությունների մասով ընդհանուր պատասխանատվության զգացում և աջակցության տրամադրում բոլոր շահագրգիռ մարմինների կողմից,
- պլանավորման, գործին առնչվող բոլոր մարմինների և շահագրգիռ կողմերի միջև առաջադրանքների բաժանման հարցում համապարփակ մոտեցման կիրառում՝ որոշումների ընդունման համար նպատակահարմար կառուցվածքի ձևավորման համար, որը կերաշխավորի հուշարձանի կայուն կառավարումն ապագայում,
- կառավարման կառուցվածքները ներդրված են պլանի իրականացման տեսանկյունից, պատրաստ են և ունեն համապատասխան կարողություն պահանջվող վարչարարական գործողությունների իրականացման նպատակով: Այս առումով պլանը «միջոց է վերջնականապես հասնելու համար» (այլ ոչ թե ավարտին, ինչը կարող է վտանգավոր լինել պլանավորման գործընթացում):

Կառավարման պլանի բովանդակությունը պետք է՝

- ուշադրությունը կենտրոնացնի հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի պաշտպանության վրա՝ միաժամանակ պատասխանելով տեղական նշանակության վարչարարական հիմնախնդիրներին,
- տրամադրի ելակետային տեղեկատվություն հուշարձանի պահպանվածության վիճակի մասին՝ ներառելով դրանց համարժեք նկարագրությունը,
- նկարագրի կառավարման համակարգը. օրենսդրական, կանոնակարգող, պաշտպանություն ապահովող քաղաքականության միջոցառումները, կառավարչական համակարգերը և պրակտիկան, ինչը գոյություն ունի հուշարձանում (դրանք փաստացի ուժի մեջ են, այլ ոչ թե տեսականորեն կիրառվող),
- մատչելի լինեն և դյուրըմբռնելի բոլոր շահագրգիռ կողմերի համար՝ բացառելով մասնագիտական բառապաշարի անհարկի օգտագործումը,
- ներկայացնեն տեսլականը և Համաշխարհային ժառանգության հուշարձանների երկարաժամկետ նպատակները, ինչպես նաև դրանց հասնելու համար պահանջվող գործողությունները,
- վեր հանեն կառավարման պլանի կարգավիճակը մյուս պլանների հետ համեմատությամբ (զարգացում / կոնսերվացում), որոնք գործում են հուշարձանի տարածքում,
- օգտակար լինի կրթության և կայուն զարգացման տեսանկյուններից,
- հաշվի առնի վտանգների կառավարումը,
- հիմք ընդունի ռազմավարական մոտեցումը, կիրառի նախկին գործողություններից կուտակած փորձը՝ ապագա կառավարման ուղղությունը կանխատեսելու նպատակով,
- նկարագրի, թե ինչպես պետք է կիրառվեն, մոնիթորինգի ենթարկվեն և վերանայվեն պլանը և կառավարման համակարգը,
- ուրվագծեն վերջնական պլանը և ակնկալվող ձեռքբերումները, որոնք կապված են ռեսուրսի հետ:

Կառավարման պլանի պատրաստումը ենթադրում է երկու փոխլրացնող առաջադրանք՝ գործընթաց (պլանավորում և մշակում) և դրա բովանդակությունը (վերջնական և միջանկյալ արդյունքները՝ պլանը որպես վարչարարական գործիք):

Կառավարման պլանի նպատակը

Ամստերդամի (Նիդերլանդներ) Սինգելգրահի թաղամասի 17-րդ դարի ջրանցքի օղակի համար կառավարման պլանի նպատակը Կառավարման պլանով նկարագրվում է, թե ինչպես են կառավարական մարմինները կիսում մշակութային և պատմական եզակի արժեք ունեցող Ամստերդամի (Նիդերլանդներ) Սինգելգրահի թաղամասի 17-րդ դարի ջրանցքի պահպանության հետ կապված պատասխանատվությունը որպես Համաշխարհային ժառանգության:

Կառավարման պլանն ուղեցույց է հուշարձանի՝ 17-ր դարով թվագրվող Սինգելգրահի ջրանցքների ցանցի և պահպանական գոտու պահպանությունն իրականացնելու համար: Պլանով միա-



Ամստերդամի (Նիդերլանդներ) Սինգելգրահի թաղամասի 17-րդ դարի ջրանցքի օղակի

© անվանակարգային փաթեթ /Ռոբերտ դե Յոնգ

վորվում են տարբեր պատասխանատվությամբ մարմինների քաղաքականությունը Համաշխարհային ժառանգության հուշարձանի նկատմամբ երկարաժամկետ մեկ միասնական տեսլական ձևավորելու նպատակով: Հավասար պատասխանատվություն կրող մարմինների՝ Ամստերդամի քաղաք, Ամստերդամ քաղաքի կենտրոնական վարչական միավոր ու Ամստել, Գոի և Վեխ ջրային ռեսուրսների կառավարման խորհուրդը, ընդհանուր տեսլականը, ինչպես նաև պաշտպանության և կառավարման հարցում ձեռք բերված պայմանավորվածությունները ներկայացված են երկու պայմանագրով: Ստորագրված պայմանագրերը, ինչպես նաև հուշարձանի պահպանության հարցերով շահագրգիռ մարմինների մտադրությունների մասին հայտարարությունը կառավարման պլանի մասն են կազմում:

Հիմնական սկզբունքները

Ամստերդամի Սինգելգրահի թաղամասի 17-րդ դարի ջրանցքի օղակի համար կառավարման պլանը պետք է բավարարի Համաշխարհային ժառանգության կոմիտեի կողմից սահմանված պայմանները: Մասնավորապես, այն պետք է համապատասխանի ստորև ներկայացվող չորս հիմնական սկզբունքներին՝

- արդյունավետություն՝ պլանով պետք է երաշխավորվի նպատակների իրականացումը,
- հիմնավորվածություն՝ աշխարհայացքը, նպատակը, միջոցառումները և խնդիրները պետք է կայուն լինեն,
- ֆունկցիոնալություն՝ պլանը պետք է աշխատող լինի,
- իրավասություն՝ պլանը պետք է հասանելի և իրագործելի լինի:

Նշված հիմնական սկզբունքների բավարարման նպատակով՝ կառավարման պլանը պետք է ներառի՝

- հուշարձանի կառավարչի, պատասխանատու մարմինների և շահագրգիռ կողմերի (որպես հուշարձանի գործընկերներ) ստորագրված հայտարարությունը՝ նկարագրելով դրանց ուղղակի ներգրավվածությունն իրենց ընդհանուր աշխարհայացքին հասնելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց համաձայնությամբ ջանքերը միավորելու հարցում հուշարձանի և դրա պահպանական գոտու պաշտպանության և կոնսերվացման համար: Սա կհամալրի անվանակարգային փաթեթը:
- Կառավարման պլանի նախապատրաստման, իրականացման, մոնիթորինգի, գնահատման, լրամշակման և վերագնահատման փուլեր, որոնք սահմանել է հուշարձանի կառավարիչը և համակարգվում է Համաշխարհային ժառանգության գրասենյակի կողմից:
- Ռեսուրսների բաշխում. բավարար մարդկային ուժի, համապատասխան փորձաքննության անցկացման և անհրաժեշտ ժամանակի վերաբերյալ դիտարկումները պետք է գնահատվեն և ձևակերպվում ստանան Համաշխարհային ժառանգության գրասենյակի համար մշակված պլանի նախագծում:
- Համաշխարհային ժառանգության գրասենյակի ֆինանսավորում. Ամստերդամի կենտրոնական վարչական շրջանի կողմից այս նպատակով նախապատրաստված պլանի նախագիծը՝ իրականացման բաժինների հետ միասին: Կառավարման համակարգի հավասարակշռված գործարկումը և իրականացման թափանցիկության ապահովումը (կառավարման պլան, մասնավորապես 4-րդ Գլուխ), առաջադրանքների, իրավասությունների և պատասխանատվությունների շուրջ համաձայնությունների ձեռքբերում, ինչպես 3-րդ գլխի 3.6-րդ բաժինը՝ բարելավված կառավարում. գործառնական պլան և գործողությունների պլան:
- Պլանի իրագործումը, դրա ուղղորդումը և իրականացման համակարգումը Ամստերդամի դեռևս ստեղծվելիք Համաշխարհային ժառանգության գրասենյակի խնդիրն է:
- Կառավարման պլանի ֆունկցիոնալությունը կգնահատվի գործնականում և փոփոխության կենթարկվի ըստ անհրաժեշտության:

(Նիդերլանդների Թագավորություն 2009, «Ամստերդամի Սինգելգրահի թաղամասի 17-րդ դարի ջրանցքի օղակ» անվանակարգային փաստաթուղթ, էջ 53):

A.2 Կառավարման պլանավորման գործընթացը (տարբեր փուլեր)

Կառավարման պլանավորման գործընթացը

Տվյալ բաժինը վեր է հանում Համաշխարհային ժառանգության համար մշակվող կառավարման պլանի նախապատրաստման գործընթացի մի քանի փուլ:

Այս գործընթացը կարևոր է հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքի միասնական վերջնական արդյունքի ձևավորման, հուշարձանի պաշտպանությամբ բոլոր շահագրգիռ և պատասխանատվություն կրող մարմինների միջև համաձայնության ձևավորման համար: Պլանը շահագրգիռ մարմինների միջև երկխոսության պահպանման և համաշխարհային բացառիկ ու այլ արժեքի պահպանության շարունակական վերանայման համար գործիք է:

Կառավարման պլանավորման գործընթացը կարող է մեկնարկել երեք տարբեր սցենարով. 1-ը, երբ նախապատրաստվում է անվանակարգային փաթեթը, 2-րդը՝ հուշարձանն արդեն իսկ ընդգրկված է, 3-րդը՝ գոյություն ունեցող կառավարման պլանի /հիմնական պլանի/ կոնսերվացման պլանի վերանայման ընթացքում: Առաջին սցենարի դեպքում այս բաժնում նկարագրված յուրաքանչյուր փուլի ավարտին հասցնելը կօգնի անվանակարգի նախապատրաստման ձևաչափի 3.1-ի ե, 4.5-րդ և 6-րդ կետերի լրացման հարցում:

2-րդ և 3-րդ սցենարների դեպքում արդեն իսկ ավարտին հասցված կլինեն մի քանի փուլ: Օրինակ՝ Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը անվանակարգի ներկայացման կարևոր մաս է կազմում, սակայն Համաշխարհային ժառանգության ցանկում արդեն իսկ գրանցված հուշարձանի համար այն արդեն գոյություն ունի և չի կարող փոփոխության ենթարկվել:

Կառավարման պլան(ներ)ի վերանայման դեպքում կարևոր է համակողմանի գնահատել դրա հաջողությունները, ձախողումները և թույլ կողմերը, ինչպես նաև հասցեական լուծում տալ դրանց (տես 4.5-րդ մասը):

Նախկինում կառավարման մի քանի պլան հիմնված էին հաստատված Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության վրա, քանի որ դրանք պարտադիր չէին մինչև 2007 թ.-ը, և միայն 2005 թ. պայմանն ամբողջությամբ ներմուծվեց Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների մասով: Այս երկու նորամուծությունների ազդեցությունը քիչ հավանական է, որ արտացոլված լինեին նախկին կառավարման պլաններում:

Կառավարման պլանի մշակումն ունի հետևյալ փուլերը՝

ՓՈՒԼ ԱՈՒԱՋԻՆ. Նախապատրաստում


ՓՈՒԼ ԵՐԿՐՈՐԴ. Տվյալների /տեղեկատվության/ հավաքագրում

ՓՈՒԼ ԵՐԿՐՈՐԴ. Կարևորության /ֆիզիկական վիճակի գնահատում

ՓՈՒԼ ՉՈՐԻՈՐԴ. Պատասխան միջոցառումների /առաջարկությունների/ մշակում:


Այս ամենն առավել մանրամասն ներկայացված է ստորև: Ներկայացված պլանավորման գործընթացի հիմքն արժեքների վրա հիմնված մոտեցումն է, որը նկարագրված է տվյալ ձեռնարկի 2-րդ և 4.3-րդ մասերում.

Աղյուսակ 14. Արժեքների վրա հիմնված մոտեցումը Համաշխարհային ժառանգության կառավարման համար



Կառավարման պլանավորմամբ պահանջվող նախապատրաստական փուլը ոչ գծակերպ է և ոչ էլ վերևից ներքև իրականացվող (ինչպես նկարագրված է 22-րդ պատկերում), այլ շրջանաձև է, ինչպես ներկայացված է 2-րդ պատկերում, իսկ կատարյալ տարբերակը 3-րդ պատկերում ներկայացված ինտերակտիվ գործընթացն է, որտեղ յուրաքանչյուր փուլ հղում է կատարում մյուս՝ նախկին կամ հետագա փուլերին: Օրինակ՝ հուշարձանի պահպանվածության վիճակը գնահատելիս անհրաժեշտ է վերադառնալ տվյալների հավաքագրման փուլին՝ լրացուցիչ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով: Փոխներգործությունը նկարագրված է 22-րդ պատկերում:

Մյուս կողմից պլանավորման գործընթացն ամուր կապված է իրականացման և մոնիթորինգի հետ, և այդ գործընթացները կարող են կյանքի կոչվել զուգահեռ, քանի որ կառավարման պլանը փոփոխման ենթակա փաստաթուղթ է, որը պահանջում է հետևողական վերանայումներ: Իրականացումը և մոնիթորինգն առանձին գործընթացներ են, սակայն 5-րդ պատկերում դրանք ներկայացված են այնպես, որ հնարավոր լինի ուրվագծել դրանց շարունակական կապը պլանավորման գործընթացի հետ:



Պատկեր 22: Պլանավորման գործընթացի բնույթը

ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ. Նախապատրաստում

Այս փուլը կարող է դիտարկվել, որպես նախապլանավորման փուլ, երբ դաշտային աշխատանքներն իրականացված են և կա ընդհանուր համաձայնություն կառավարման պլանավորման գործընթացի նպատակների և ներգրավվող անձանց հարցի շուրջ:

Նախապատրաստական քայլեր

Կառավարման պլանի նախապատրաստումը պետք է արտոնվի գործին առնչություն ունեցող հաստատության կողմից, ինչպես նաև ունենա հիմնական շահագրգիռ մարմինների աջակցությունը, որոնք պետք է այն հաստատեն և հնարավորություն ընձեռեն իրականացման և թարմացման հարցում: Պլանի հաստատումը կարող է նաև պահանջել հուշարձանի սեփականատերերի կամ Համաշխարհային ժառանգության կոմիտեի համաձայնությունը, կամ մի քանի կազմակերպությունների (կառավարական կամ մասնավոր) պաշտոնական հավանությունը՝ համատեղված մեկ նպատակի համար (Համաշխարհային ժառանգության պարագայում, հավանաբար որպես անվանակարգի ներկայացման գործընթացի մի հատված):

Հաճախ հենց ազգային մակարդակով իրականացվող քաղաքականությունը հանգեցնում է կառավարման պլանի ընդունմանը, իսկ դրա իրագործումը դառնում է պարտադիր պահանջ: Սակայն դրա նախաձեռնման և մշակման ազդակը պետք է գա հուշարձանի մակարդակի (կամ տեղական՝ հուշարձանախմբերի դեպքում): Սա կենսական նշանակություն ունի, որի միջոցով երաշխավորվում է շահագրգիռ մարմինների մասնակցությունը հավասար պայմաններում և ձևավորվում է գործընթացի և պլանի նկատմամբ սեփականատիրության զգացողությունը:

Ծրագրի կառավարման հմտությունները կարևոր են հիմնական ուղին նախանշելու կամ կառավարման գործընթացը պլանավորելու, ինչպես նաև սկսվելուն պես կատարման ժամկետների և բյուջեի նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով: Անհրաժեշտ է նախանշել և, որպես «ծրագրի» (այս դեպքում կառավարման պլանավորման գործընթացի) կառավարման համար նշանակել պատասխանատու անձ կամ աշխատախումբ (համալիր հուշարձանների կամ հուշարձանախմբերի դեպքերում):

Ո՞վ է ղեկավարում աշխատանքը և կազմում պլանը

Հիմնական կառավարման համակարգի (4.1 մաս) գլխադասային կազմակերպություն(ներ)ը, խորհրդակցելով մյուս մարմինների հետ, պետք է ձևավորի ծրագրի իրականացման աշխատախումբ համապատասխան ղեկավարով, ով պետք է համակարգի տարբեր հմտություններ գործընթացի մեկնարկն ապահովելու, ինչպես նաև պահանջվող պլանի նախապատրաստման՝ ֆինանսական, ինստիտուցիոնալ և մարդակային ռեսուրսները նախանշելու համար: Ղեկավարը համակարգում է մյուսների աշխատանքը և հիմնական շարժիչ ուժն է պլանի նախապատրաստման հարցում՝ սահմանելով առաջնահերթությունները տեղի և/կամ կառավարման պլանն իրականացնող մասնագետների միջև:

Որոշ երկրներում արտաքին խորհրդատուները վարձվում են գործընթացի ղեկավարման համար: Այդ դեպքում նրանց դերակատարությունը սահմանափակվում է գործընթացի ուղղորդմամբ, որին կարող են մասնակցել մյուս շահագրգիռ մարմինները՝ դրանով իսկ ձևավորելով պլանի հանդեպ սեփականատիրության զգացողություն: Անհրաժեշտ է հստակ սահմանել խորհրդատվական նշանակումները կամ աշխատանքի նկարագրությունների շրջանակը: Պլանի իրագործման ուղղությամբ աշխատող թիմը պետք է լավ ծանոթ լինի գոյություն ունեցող կառավարման համակարգի հետ, որը կիրառվում է հուշարձանի (հուշարձանների) տարածքում: Որոշ երկրներում կառավարման պլանի մշակման, դրա իրականացման և վերանայման հարցերով ստեղծվում է հատուկ աշխատանքային խումբ:

ՕԳՏԱԿԱՐ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄՆԵՐ

- ▶ Հիմնական կառավարման համակարգերի բարձրաստիճան պաշտոնյաների և անվանակարգային փաթեթի կազմման գործում ներգրավված անձանցից ձևավորված հատուկ աշխատանքային խումբը կարող է ներկայացնել կատարման ընթացքը և խնդրել ցանկացած տեսակի աջակցություն:

Ծրագրի աշխատախումբը և դրա պարտականությունները

Աշխատախմբի ղեկավարը պետք է ձևավորի այնպիսի թիմ, որի անդամներն ունենան տարբեր գիտակարգեր և որոնց համատեղ աշխատանքն ընդհանուր առմամբ թույլ կտա ստանալ հետևյալը՝

- Համաշխարհային ժառանգության կոնվենցիայով և Համաշխարհային ժառանգության կոմիտեի սահմանված պահանջների ընկալում,
- հուշարձանի և դրա արժեքների վերաբերյալ ավանդական գիտելիքների և դրանց վրա ազդող գործոնների վերաբերյալ մանրամասն գիտելիքներ,
- ժառանգության համար նախատեսված կառավարման և ուսումնասիրվող հուշարձանում գործող որոշակի համակարգ(եր)ի վերաբերյալ ընկալում,
- ուսումնասիրվող հուշարձանի վերաբերյալ գիտելիքների ձևավորում և ֆիզիկական պահպանվածության, և պատմական անցյալի տեսանկյունից,
- իրավական /կանոնակարգող/ քաղաքականության իրականացման համակարգերի մասով, համաձայն որոնց հուշարձանը պետք է նպաստի գիտելիքների ձևավորմանը,
- հուշարձանի, դրա միջավայրի և շահագրգիռ մարմինների վրա ազդեցություն ունեցող սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների գիտակցություն (և ինչպես է հուշարձանը ներգործում սոցիալական և տնտեսական հիմնախնդիրների վրա),

- գործողությունների իրականացման համար ծախսերի հստակ նախանշմամբ ծրագրերի կազմման հնարավորություն,
- արդյունավետ հաղորդակցվելու հնարավորությունների ձևավորում (և բանավոր, և գրավոր),
- տեղեկատվության կառավարման հարցում փորձաքննությանը,
- բանակցություններ վարելու /հիմնավորելու և խթանելու հմտությունների ձևավորմանը,
- քաղաքական վարվելակերպի, ինչպես նաև փոխընկալման և վստահության մթնոլորտի ձևավորմանը,
- այլոց կարիքները գիտակցելու ճկունությանը /հանդուրժողականությանը և պատրաստակամությանը,
- ծրագրի իրականացման հմտությունների ձևավորմանը,
- «վերջնական օգտագործողների» (օրինակ՝ այցելուներ, տեղի համայնքներ) մասին գիտելիքների ձևավորմանը և ներգրավվածության ապահովմանը:

Պլանավորման փուլում աշխատախմբի ղեկավարը, խորհրդակցելով մյուս անդամների և համապատասխան մարմինների հետ, պետք է որոշում կայացնի չորս հիմնական բաղադրիչների հարաբերական կշռի վերաբերյալ. ռեսուրսներ (մարդկային և ֆինանսական), ժամանակ, որակ և բովանդակություն, որոնք հնարավոր կլինի փոփոխել ծրագրի նպատակների հստակեցումից հետո: Այս բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և պետք է արդյունավետ կառավարվեն՝ երաշխավորելու կառավարման պլանավորման գործընթացի հաջողությունը: Պլանավորման փուլը պետք է ուրվագծի ծրագրի շրջանակը (այս պարագայում հուշարձանը կամ հուշարձանախմբերը, որոնք հանդիսանում են կառավարման պլանավորման գործընթացի թիրախը, ինչպես նաև նպատակները, որոնք պետք է ձեռք բերվեն): Բովանդակությունը ժամանակացույցի և բյուջեի հետ հստակեցնելուց հետո հնարավոր կլինի ներգրավել մարդկային և ֆինանսական ռեսուրսները:

Աշխատախմբի ղեկավարը պետք է՝

- սահմանի գործողությունների շրջանակը և մշակի ծրագիր,
- գնահատի պահանջվող մասնագիտացումները,
- նախանշի շահագրգիռ մյուս կողմերին,
- սահմանի խորհրդակցական գործընթացի էությունը (մասնակցային մոտեցում),
- նախապատրաստի ժամանակացույց,
- նախանշի ֆինանսական, մարդկային ռեսուրսները և տեխնիկական սարքավորումները:

Պլանավորման և իրականացման գործընթացների նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով աշխատանքային առանձին խումբ պետք է ձևավորվի հիմնական շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներից: Համաշխարհային ժառանգության անվանակարգերի համար նման աշխատախումբ պետք է ձևավորվի նախքան նախապատրաստման փուլը:

Առանձին հարցերով աշխատանքային խմբի առկայությունը կարևոր է այն հուշարձանների համար, որոնք դուրս են գալիս մեկ վարչատարածքային միավորից (հիմնականում լինում է մշակութային տեղանքապատկերների և սերիական հուշարձանների դեպքերում) կամ երկրի տարածքից (անդրսահմանային հուշարձաններ): Դրանք պետք է ձևավորվեն հնարավորինս վաղ ժամանակահատվածում և անհրաժեշտ է սահմանել կանոնավոր հանդիպումների և խորհրդակցությունների օրացույց:

Շահագրգիռ կողմերի նախանշումը

Շահագրգիռ կողմը ցանկացած անձնավորություն կամ կազմակերպություն է, որը կարող է ազդվել պլանի իրագործումից կամ ազդել դրա հաջող իրականացման վրա: Մյուս շահագրգիռ կողմերը նրանք են, որոնք ունեն որոշակի պարտավորվածություններից կամ օրենքի պահանջից բխող իրավունքներ: Դրանք բաժանվում են չորս հիմնական ստորոգումների՝

- հիմնական կառավարման համակարգում ընդգրկվածներ (հուշարձանների սեփականատեր հանդիսացող և կառավարող հաստատություններ)
- ժառանգության հուշարձանների մասնավոր սեփականատերեր,
- այլ կառավարման համակարգերում ներգրավվածներ, որոնք երկրորդական ռեսուրսներ են ապահովում ժառանգության կառավարման համար (օրինակ՝ քաղաքային խորհուրդը՝ պահպանական գոտու նկատմամբ հսկողություն սահմանելու իրավական ուժով),
- համայնքներ և այլ շահագրգիռ խմբեր:

Կառավարման պլանը կառավարման համակարգի անբաժանելի մասն է:

Հուշարձանի և մշակութային, և բնական արժեքների կառավարման գործում ներգրավված են կառավարությունը և Մաորի ցեղական համայնքը «1993 թ. Տոնգարիրոն դարձավ առաջին հուշարձանը, որն ընդգրկվեց Համաշխարհային ժառանգության ցանկում վերանայված չափորոշի համաձայն՝ ներկայացնելով մշակութային փեղանքապատկեր: Պարկի կենտրոնական հատվածում գտնվող լեռները մշակութային և կրոնական նշանակություն ունեն Մաորի ժողովրդի համար և խորհրդանշում են այս համայնքի և շրջակա միջավայրի միջև գոյություն ունեցող հոգևոր կապը... Պարկի կառավարման պլանի վերանայման ընթացքում Համաշխարհային ժառանգության հուշարձան հանդիսանալու կարգավիճակն օգնեց բնության և մշակութային արժեքների պաշտպանության գործում առաջնահերթությունների սահմանման հարցում: Պարկի կառավարման նոր պլանով



© ՅՈՒՆԵՍԿՕ / Ալի Տաբաթան

Տոնգարիրո ազգային պարկ (Նոր Զելանդիա)

շեշտը դրվում է Համաշխարհային ժառանգության արժեքների և այնպիսի կարիքների վրա, որոնց միջոցով հնարավոր է դառնում երաշխավորելու, որ այդ արժեքների վրա կառավարման քաղաքականությունը չի ազդում:»

Տոնգարիրոն հեղափոխական մոդել է, որով ներկայացվում է, թե ինչպես է հուշարձանը կառավարվում կառավարության և Մաորի համայնքի կողմից:

<http://whc.unesco.org/en/activities/613/>

Շահագրգիռ կողմերի հետ աշխատանքներ տանելու կարևորությունը

Կառավարման պլանավորման գործընթացում որպես կանոն ընդունվում է այն փաստը, որ շահագրգիռ կողմ և ժառանգության «սեփականություն» եզրույթներն օգնում են շահագրգիռ մարմիններին և պատասխանատու գործակալություններին ժառանգության հուշարձանը պաշտպանելու հարցում: Շահագրգիռ մարմինների հետ աշխատանքը հնարավորություն է տալիս փոխանակելու տեղեկատվությունը, բարձրացնելու շահագրգիռ մարմինների մասնակցության շրջանակը, ընդլայնելու հավաքական պատասխանատվության և գիտելիքների ձեռքբերման շրջանակը, իրենց համաձայնությունը և աջակցությունը տալ այնպիսի գործողությունների հարցում, որոնք կպաշտպանեն և կհանրահոջակեն ժառանգության օբյեկտի արժեքները, իսկությունը և ամբողջականությունը:

Սակայն ամբողջական դարձնելու գործընթացը պետք է մնա կառավարելի՝ արդյունավետություն ապահովելու համար: Շահագրգիռ մարմինների քանակը կարող է շատ բարձր լինել, օրինակ՝ քաղաքային կենտրոններում: Հաղթանակի պատճառով «Հոմեական կայսրության սահմանները» Համաշխարհային ժառանգության հուշարձանի մի մասն է, ունի ավելի քան յոթ հարյուր սեփականատեր: Նման դեպքերում շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն անհրաժեշտ է կառավարելի դարձնել գործընթացի հենց սկզբից:

Մասնակցային գործընթաց

Մասնակցային գործընթացում բոլոր շահագրգիռ մարմինները տարբեր մակարդակներով պետք է մասնակցեն որոշումների կայացման գործընթացներին: Կառավարման աշխատախումբը պետք է մշակի ռազմավարություն նախապատրաստական փուլում:

Տարբեր շահագրգիռ մարմինների և կառավարման այլ համակարգերի ներգրավվածությամբ պետք է մշակել որոշումների ընդունման նոր մեխանիզմներ, և այս գործընթացը կարող է կառավարվել հիմնական կառավարման համակարգի միջոցով: Որոշումների կայացման բավականին հստակ գործընթացը, որտեղ պայմավորման և իրականացման փուլերում կնխանչվեն դեբանախարությունները և պատասխանատուները, պետք է համաձայնեցվի նախապատրաստական փուլում:

A photograph of Uluru, a large red sandstone monolith in Australia. The rock is massive and rounded, with visible vertical grooves and shadows. It stands in a flat, arid landscape with sparse green and yellow shrubs. The sky is clear blue with a few wispy clouds.

© Էմմանուել Պիվարդ

ՓՈՒԼ ԵՐԿՐՈՐԴ. Տվյալների /տեղեկատվության/ հավաքագրում

Տեղեկատվության հավաքագրումը կարող է այնպիսի անվերջ գործընթաց լինել, որ դրանում ներգրավվածները հեշտությամբ մոլորվեն: Այդ իսկ պատճառով գործընթացի սկզբից անհրաժեշտ է նախանշել, թե ինչ տեսակի տեղեկատվություն է պահանջվում, ինչպես այն պետք է ձեռք բերել և ինչպես կառավարել: Տեղեկատվությունը պահանջվում է հուշարձանի արժեքների և Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատման, դրանք իրենց մեջ ներառող ատրիբուտների նախանշման, ինչպես նաև իսկությունը և ամբողջականությունը գնահատելու համար: Հարակից տեղեկատվության անհրաժեշտությունը պայմանավորված է մյուս արժեքների կարևորության գնահատմամբ, որի համար էլ կառավարվում է հուշարձանը; Հուշարձանը հասկանալու և համապատասխան սահմանումը տալու, ինչպես նաև պլանավորման, և ի վերջո ֆիզիկական վիճակի և Համաշխարհային բացառիկ կամ այլ արժեքների վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործոնների գնահատման համար: Այս տեղեկատվությունը կարող է հիմք հանդիսանալ հետագա մոնիթորինգի իրականացման համար: Լրացուցիչ տեղեկատվությունը կարող է մշտապես հավաքագրվել կառավարման պլանավորման գործընթացի հետագա փուլերի ընթացքում որոշումների կայացմանն աջակցելու համար:

Տեղեկատվության մի հատված կարող է հավաքագրվել անվանակարգային փաթեթի նախապատրաստման համար, կամ ներառված լինի ԻԿՕՄՍՍ-ի կողմից անվանակարգային փաթեթի գնահատման մեջ: Թե որքան կարևոր կլինի այս ժառանգած տեղեկատվությունը կառավարման պլանավորման գործընթացի համար կախված է նրանից, թե որքան ժամանակ հետո է հուշարձանն ընդգրկվել Համաշխարհային ժառանգության ցանկում:

Տեղեկատվության հնարավոր աղբյուրները

Հուշարձանն ինքնին տեղեկատվության հիմնական աղբյուրն է: Այն կարող է տեղեկատվություն հավաքագրել գոյություն ունեցող աղբյուրներից կամ փնտրել նորը (ներառյալ հետազոտության իրականացումը):

Գոյություն ունեցող աղբյուրները կարող են լինել արխիվները, հետազոտությունները, շինարարական արձանագրությունները, թանգարանային հավաքածուները, լուսանկարչական արխիվները, քարտեզագրման գործակալությունները (ազգային հետազոտական գրասենյակները), գրադարանները, հուշարձաններին առնչվող ֆայլերը, մյուս նախարարությունները, / գործակալությունները/ կազմակերպությունները և շահագրգռի մարմինները (հաճախ, ի թիվս այլոց, հին լուսանկարները լավ աղբյուր են): Ավանդական գիտելիքների համակարգը նույնպես կարող է հաշվի առնվել:

Նոր տեղեկատվությունը պետք է ընդգրկի նոր քարտեզագրումը, հետազոտությունները, երկրաֆիզիկական հետազոտությունները, շինությունների հաշվառումը, լուսանկարները (սովորական, մշակված և այլն), շտեմարանների մշակումը, ֆիզիկական (տեսլային) հետազոտությունները, տարբեր տեսակի գրավոր կամ բանավոր հետազոտությունները, հարցազրույցները և բանավոր պատմությունները, խորը հետազոտությունների և ուսումնասիրությունների քննությունը (օրինակ՝ համեմատական վերլուծությունները):

Ստուգման թերթիկի հիմնական պահանջները

- Ստորև ներկայացվողը նվազագույն տեղեկատվությունն է, որը կարող է պահանջվել
1. հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը (գոյություն ունեցող ներուժը), իսկությունը, ամբողջականությունը և այլ արժեքները գնահատելու համար տեղեկույթ,
 2. ֆիզիկական վիճակի մասին տեղեկատվություն (տարբեր գործոններից բխող ազդեցությունները, ռիսկերը և խոցելի կողմերը)
 3. սահմանների և շրջակա միջավայրի մասին տեղեկատվությունը (ներառյալ հարակից հողերի օգտագործումը, զարգացման պլանները և գործողությունները),
 4. ընդհանուր (նկարագրված է 4-րդ մասում, ստուգման թերթիկ)

Տեղեկատվության հավաքագրման ստուգման թերթիկ

Մասն 1 – հուշարձանի Համաշխարհային բացառիկ արժեքը (գոյություն ունեցող ներուժը), իսկությունը, ամբողջականությունը և այլ արժեքները գնահատելու համար տեղեկություն

Թեման

Արժեքներ, կարևորություն և պատմություն

Աղբյուրը

- գրավոր / բանավոր պատմություններ
- լուսանկարներ
- հարցազրույցներ / քննարկումներ շահագրգիռ մարմինների հետ
- միջազգային համեմատություններ
- նախկինում կատարած վերլուծություններ՝ հաճախ հնագիտական կամ շինարարական
- համեմատություն հին քարտեզների հետ և այլն
- ավանդական գիտելիքների համակարգեր

Հուշարձանի ներկայիս վիճակը

- հողօգտագործման քարտեզներ կամ պլաններ
- գրավոր նկարագրություններ
- տեղեկատվություն ներկայիս սեփականության տեսակի մասին, որը ներառում է տեղաբնակ և ավանդական սեփականատերերի վերաբերյալ
- կիրառության տարբեր ձևեր – ծիսական, գործնական և այլն

Շահագրգիռ մարմինների տեսակետները և մտահոգությունները

- շահագրգիռ մարմինների հետ ունեցած հարցազրույցներից, քննարկումներից

Դա կարող է հաստատել տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտությունը և շարունակել Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատումը՝ զուգահեռաբար հավաքագրելով այլ տեղեկատվություն: Այնուհետ դյուրին կլինի ճանաչել այդ արժեքները կրող կարևոր ատրիբուտները և պարզել իսկությունն ու ամբողջականությունը, որին հաջորդում է ատրիբուտների ֆիզիկական վիճակի, իսկության և ամբողջականության, դրանց վրա ազդող գործոնների գնահատումը:

Վիճակի գրանցումը հնարավորություն կտա նախանշելու դրական և բացասական ազդեցությունները, ներկա և ապագա ազդեցությունների և դրանց առաջացման աղբյուրները՝ արդյոք դրանք հուշարձանի ներսում են ի հայտ գալիս, թե արտաքին աշխարհից (տե՛ս ստորև):

Տեղեկատվության հավաքագրման ստուգման թերթիկ

Մաս 2 – ֆիզիկական վիճակի մասին տեղեկատվություն (տարբեր գործոններից բխող ազդեցությունները, ռիսկերը և խոցելի կողմերը)

Թեման

Պահպանվածության վիճակը
– նյութակազմի (քայքայում և այլն), կառուցվածքների (ձևափոխում և այլն), տեսարժան վայրերի (տեղանքապետ–կերներ, գործառույթներ) վրա ազդեցությունները

Աղբյուրը

- Վիզուալ գրառումներ
- Գիտական հետազոտություններ
- Ներկա մոնիթորինգային պրակտիկան
- Նախկինում տեղ գտած քննարկումների գրառումները

Պահպանվածության վիճակը
– Ժառանգության վրա ազդող գործոնները և դրանց հետևանքները

- Ժառանգության վրա ազդեցություն ունեցող որոշ գործոններ (շինություններ և կառուցապատում, տրանսպորտային ենթակառուցվածք, հարմարանքներ կամ ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներ, աղտոտվածություն, կենսաբանական ռեսուրսների օգտագործում / փոփոխություն, ֆիզիկական ռեսուրսների արդյունահանում, ֆիզիկական նյութակազմի վրա ազդող տեղի պայմանները, հուշարձանի սոցիալական / մշակութային կիրառությունը, մարդկային գործունեու-

Թեման	Աղբյուրը
	թյան այլ տեսակներ, ինվազիվ / օտար կամ բավականին առատ կենսատեսակներ, կառավարման և ինստիտուցիոնալ գործոններ, կլիմայի փոփոխություն և խիստ եղանակային պայմաններ, անսպասելի էկոլոգիական կամ երկրաբանական երևույթներ, • ուսումնասիրություններ, զեկույցներ, զարգացման պլաններ, միջազգային հետազոտություններ, օրինակ՝ աղետների (հնարավոր) ազդեցության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրների մասին - վերջերս և հեռավոր անցյալում տեղ գտած աղետների, և ներկայում գոյություն ունեցող վտանգների/ սպառնալիքների/ մասին գրառումներ, - աղետներ առաջացնելու ներուժ ունեցող փոփոխությունների մասին տեղեկատվություն - ժառանգության կամ ընդհանրապես վտանգների մեղմման ու աղետների կառավարմանն ուղղված առկա պլանների մասին տեղեկատվություն - վտանգների և աղետների կառավարման համար նշանակված գործակալությունների մասին տեղեկատվություն - վտանգների և աղետների համար նախատեսված մոնիթորինգային պրակտիկայի մասին տեղեկատվություն
Պահպանվածության վիճակը, իրականացվող գործողությունները	• Գոյություն ունեցող մոտեցումները, պլանները (կոնսերվացման, համապարփակ պլաններ), գրավոր հաշվետվություններ • Կոնսերվացմանն ուղղությամբ իրականացվող շարունակական աշխատանքներ • Կիրառման դեպքում ավանդական գիտելիքները
Մեկնաբանություն, հանրահոշակում և այցելուների կառավարման պրակտիկան	• Մեկնաբանությունների և այցելուների կառավարման վերաբերող առկա մոտեցումների /պլանների/ մասին զեկույցներ • Այցելուների համար նախատեսված առկա հարմարությունները (տոմսեր, զովացուցիչ ընկերներ, զուգարաններ և այլն) • Այցելուների ակնկալիքների և նրանց ունեցած ազդեցությունների վերաբերյալ հետազոտություններ • Առկա կրթական ռեսուրսներ • Վիճակի բարելավմանն ուղղված ցանկացած առաջարկություններ
Մոնիթորինգ	• Առկա քաղաքականություններ, ընթացակարգեր

Տեղեկատվության հավաքագրման ստուգման թերթիկ

Մաս 3 – սահմանների և շրջակա միջավայրի մասին տեղեկատվությունը (ներառյալ հարակից հողերի օգտագործումը, զարգացման պլանները և գործողությունները)

Թեման	Աղբյուրը
Սահմաններ և ֆիզիկական առանձնահատկություններ	• Հուշարձանի և դրա շրջապատող միավայրի քարտեզներ և պլաններ • Ճարտարապետական կամ հնագիտական նախագծեր (առկայության դեպքում) • Վերերկրյա լուսանկարներ • Ժառանգության և պանավորման տեսանկյունից կիրառելի օրենսդրություն • Պանավորման այլ գործիքակազմ, որն ազդում է հուշարձանի վրա • Տեղաբնակների / ավանդական սեփականության մանրամասներ
Հուշարձանին վերաբերող պլանավորման այլ մեխանիզմներ	• Հողօգտագործման պլաններ • Գոտիավորման պլաններ • Ենթակառուցվածքների սխեմաներ • Ռեսուրսների օգտագործման / միներալների արդյունահանման պլան և այլն, գյուղատնտեսություն, տեղաբնակների կողմից օգտագործման եղանակներ



Թեման

Տեղական, մարզային և ազգային պլանավորմանը և զարգացմանն ուղղված գործողություններ

Աղբյուրը

- Քաղաքային կամ մարզային պլանավորում և կիրառելի կանոնակարգումներ, օրինակ՝ հարակից տարածքների համար նախատեսված հողօգտագործումներ
- Միներալների և հանքարդյունաբերության այլ պլաններ
- Շրջակա միջավայրի պաշտպանության պլաններ
- Տեղական, մարզային կամ ազգային մակարդակով զարգացման պլաններ
- Առանձին գործունեությանը վերաբերող օրենսդրություն, օրինակ՝ գյուղատնտեսություն
- Ենթակառուցվածքների զարգացում

Տեղեկատվության հավաքագրման ստուգման թերթիկ

Մաս 4 – ընդհանուր

Թեման

Գոյություն ունեցող իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը, պլանավորվող ընթացակարգերը, ռեսուրսները, որոնք առկա են կամ կարող են գոյանալ հետագայում

Աղբյուրը

- Հուշարձանի վրա ազդող բոլոր իրավական մեխանիզմներ (ազգային, մարզային, տեղական կամ հուշարձանին բնորոշ)
- Կազմակերպության կառուցվածք (տարբեր մակարդակներով)
- Որոշումների ընդունման և պլանավորման ընթացակարգերի գրավոր նկարագրություն
- Պատասխանատվություն կրող աշխատողների աշխատանքի նկարագրություն
- Մատչելի մարդկային, ֆինանսական, մտավոր ռեսուրսներ
- Տարեկան բյուջե
- Յուրահատուկ ոլորտներին առնչվող մանրամասն նկարագրված բյուջե
- Արտաբյուջետային նախագծերի մասին տեղեկատվություն
- Նախկին ֆինանսական աղբյուրների մասին տեղեկատվություն
- Առկա մոնիթորինգային պրակտիկայի մասին տեղեկատվություն
- Շահագրգիռ մարմինների ստանձնած պատասխանատվություններ և ներդրումներ
- Հնարավոր շահագրգիռ մարմինների պատասխանատվություններ և ներդրումներ
- Մյուս շահագրգիռ մարմիններին վերաբերող խնդիրներ և հիմնահարցեր
- Համաշխարհային ժառանգության հետ գործ ունեցող հատուկ ստորաբաժանումներ, եթե կան այդպիսիք

Ավանդական կառավարման համակարգերի տարրերը

- Գրավոր արձանագրություններ (սկզբունքներ, մոնիթորինգի իրականացման մեթոդներ տարբեր միջոցով և այլն)
- Բանավոր ավանդույթներ
- Տեղեկատվությունը հավաքագրելու մեթոդներ որոշում կայացնելու նպատակով
- Ազգային և/կամ տարածաշրջանային մակարդակներով լայն վարչարարական համակարգերի հետ կապ (Այս թեմաներից ոմանց գրանցումը կարող է հանգեցնել սահմանափակումների)

Տնտեսական և սոցիալական օգուտների բաղադրիչները

- Աղբյուրներ, որոնք կարող են բերել սոցիալական / տնտեսական օգուտների, ինչպիսին հնարավոր զբաղվածությունն է

ՓՈՒԼ ԵՐՐՈՐԴ. Կարևորության / ֆիզիկական վիճակի գնահատում

Այս փուլն ընդգրկում է Համաշխարհային բացառիկ արժեքի կամ այլ արժեքների ու ատրիբուտների գնահատումը, որոնք կարող են ցուցադրել այդ արժեքները, ինչպես նաև այդ ատրիբուտների իսկությունը և ամբողջականությունը: (Ստորև ներկայացվող քայլը կլինի կառավարման հիմնական խնդիրների գնահատման և նախանշման պայմանը):

Արժեքների գնահատում

Կարևորության գնահատումը (տե՛ս 3-րդ մասը) պետք է ներառի հնարավոր համաշխարհային բացառիկ կամ այլ արժեքների (որոնք կարող են համաշխարհային բացառիկ արժեքի մաս չհանդիսանալ, սակայն ենթակա են պահպանման) գնահատումը: Սա կարելի է իրագործել երկու փուլով. (1) Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատում և Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության մշակում, որտեղ կնախանշվեն Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտներ, ինչպես նաև դրանց ամբողջականությունը և իսկությունը, և (2) այլ արժեքների գնահատում և այդ արժեքները կրող ատրիբուտների նախանշում: Գնահատումը պետք է իրականացվի համապատասխան շահագրգիռ մարմինների մասնակցությամբ: Ինչպես ներկայացվեց վերը Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատման ժամանակ ժառանգության կոնսերվացման և կառավարման պարագայում կիրառվում է արժեքների վրա հիմնված մոտեցումը (Համաշխարհային բացառիկ արժեքի գնահատման համար տե՛ս անվանակարգերի նախապատրաստման ձեռնարկը):

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը

Սեյթ այն հաստատված չէ, ապա անհրաժեշտ է մշակել «Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը»՝ հիմք ընդունելով Համաշխարհային բացառիկ արժեքը, ինչպես նաև իսկության և ամբողջականության պայմանները: Սա կդառնա հիմնական հենքը՝ ապագայում հուշարձանի արդյունավետ պաշտպանության և կառավարման համար, ինչպես նկարագրված է տվյալ ձեռնարկի 3-րդ մասում և անվանակարգերի նախապատրաստման մեթոդական ձեռնարկում: Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարությունը նախանշում է Համաշխարհային բացառիկ արժեքը կրող ատրիբուտները, ինչպես նաև պահպանության տեսանկյունից պայման հանդիսացող իսկությունը և ամբողջականությունը:

Այլ արժեքները և կարևորության մասին հայտարարությունը

Համաշխարհային բացառիկ արժեքի մասին հայտարարության հիմքում ընկած են Համաշխարհային բացառիկ արժեքները, սակայն հուշարձաններն անխոս կրում են այլ արժեքներ ևս՝ ժառանգությանը վերաբերող արժեքներ և այլ (ինչպիսիք են տնտեսական, սոցիալական, բնապահպանական), որոնք կարևոր նշանակություն ունեն տեղական, մարզային և նույնիսկ ազգային մակարդակներով: Գործնական տեսանկյունից նպատակահարմար չէ կառավարել համաշխարհային բացառիկ արժեքները մյուս արժեքներից առանձին, քանի որ այն կարող է հանգեցնել արժեքների միջև առաջնահերթությունների առաջացմանը՝ դրանով իսկ խթանելով հակասությունը: Սոցիալական և տնտեսական արժեքների տեսանկյունից, եթե հուշարձանի տարածքում, օրինակի համար, շարունակական գյուղատնտեսական աշխատանքներ են իրականացվում, ապա ֆերմերների մտահոգություններին անհրաժեշտ է պատշաճ մակարդակով ուշադրություն դարձնել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ձեռնարկը շեշտադրումը կատարում է Համաշխարհային բացառիկ արժեքի վրա, կառավարման պլան մշակող մարմինները պետք է համակողմանի ձևակերպում տան կարևորության հայտարարությանը (տե՛ս վերը), որն ընդգրկում է Համաշխարհային բացառիկ և մյուս արժեքները, ինչպես նաև դրանց, որպես հենք, օգտագործումը ժառանգության հետագա կառավարման համար:

Վիճակի գնահատում

Հիմա, երբ մենք նախանշեցինք ատրիբուտները, իսկությունը և ամբողջականությունը, հաջորդ քայլը դրանց վրա և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն ունեցող տարբեր գործոնների գնահատումն է: Այս գործընթացը նաև հայտնի է «Վիճակի գնահատում» անվամբ: Դրա նպատակը ատրիբուտների, իսկության և ամբողջականության վրա ազդող գործոնների բացահայտումն է՝ դրանց երկարաժամկետ կառավարման տեսլականով: Հաջորդը ժառանգությունից և դրա հետ առցանցվող մյուս արժեքներից ստացվող շահերի բացահայտումն է ու դրանց տրամադրումը տեղի համայնքներին և հասարակությանը լայն մասշտաբով: Վիճակի գնահատումները բացահայտում են այն հիմնախնդիրները, որոնք կարող են ի հայտ գալ և օգնել ապագա կառավարման խնդիրների ու գործողությունների (հաճախ հայտնի են «քաղաքականություններ» անվամբ) սահմանման հարցում:

Խորհրդատվական մարմինները և Համաշխարհային ժառանգության կենտրոնը մի շարք անդամ պետությունների և հուշարձանի կառավարման լիազոր մարմինների հետ խորհրդակցությամբ մշակել է գործոնների մի ցանկ, ինչը կարող են ազդել ժառանգության վրա (աշխատանքն իրականացվել է երկրորդ պարբերական զեկույցի նախապատրաստման ընթացքում, որը սկիզբ դրվեց 2009 թ-ին): Դրանք ունեն հիմնական գլուխներ և գործոններից բխող մի շարք ենթագործոններ:

Շինություններ և կառուցապատում
Տրանսպորտային ենթակառուցվածք
Հարմարություններ կամ ծառայությունների մատուցման համար նախատեսված ենթակառուցվածք
Աղտոտվածություն
Կենսաբանական ռեսուրսների օգտագործում / փոփոխություններ
Ֆիզիկական ռեսուրսների արդյունահանում
Տեղի պայմաններ, որոնք ազդում են ֆիզիկական նյութակազմի վրա
Ժառանգության սոցիալական / մշակութային նպատակներով օգտագործում
Մարդկային այլ գործոններ
Կլիմայի փոփոխություն և խիստ եղանակային պայմաններ
Բնապահպանական կամ երկրաբանական հանկարծակի տեղումներ
Ինվազիվ / օտար կամ բավականին առատ կենսատեսակներ
Կառավարչական կամ ինստիտուցիոնալ գործոններ
Այլ գործոն(ներ)

Անվանակարգային փաթեթի նախապատրաստման ձևաչափի 4-րդ բաժինը հղում է կատարում վերոգրյալ գործոններից մի քանիսին, սակայն կառավարման պլանի մշակման համար անհրաժեշտ է դիտարկել ազդող գործոնների հնարավորինս լայն շրջանակը:

Այս փուլում կփորձենք գնահատել ժառանգության վրա ազդող տարբեր գործոնների ազդեցությունը, ինչպես նաև նախանշել և՛ սպառնալիքները, և՛ հնարավորությունները: Մենք կարող ենք քննության առնել ժառանգության, ինչպես նաև համայնքի վրա ազդող պատճառները և աղբյուրները: Որպես կանոն ժառանգության վրա տարբեր գործոններով պայմանավորված ազդեցությունները դիտարկվում են որպես բացասական, սակայն ոչ բոլոր գործոններն են բացասական: Այնպես որ կդիտարկվեն նաև դրական ազդեցությունները: Օրինակ՝ զբոսաշրջությունը կարող է լուրջ հետևանքներ ունենալ ատրիբուտների վրա (օր.՝ մաշվածություն) և եկեղեցու կամ տաճարի սուրբ միջավայրի վրա, որը կարող է նախանշվել որպես իսկության կարևոր ասպեկտ: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում դա կարող է օգնել եկամուտ ստանալ, որն այնքան անհրաժեշտ է նման վայրերի պահպանվածության ապահովման համար: Սուրբ միջավայրի հոգևոր կապը կարող է դրական ազդեցություն ունենալ համայնքի վրա: Կառավարչական և ինստիտուցիոնալ գործոնները նույնպես կարող են ունենալ դրական կամ բացասական ազդեցություններ: Օրինակ՝ համարժեք կոնսերվացման քաղաքականությունը, կանոնակարգումները և ռեսուրսների առկայությունը կարող են դրական ազդել հուշարձանի վրա, մինչդեռ դրանց բացակայությունը՝ բացասական: Եթե հաստատությունը ցանկություն չունի կամ չունի բավարար լիազորություններ համայնքների հետ խորհրդակցություններ իրականացնելու համար, ապա որոշումները կընդունվեն միակողմանի փորձագետների կողմից և ամենայն հավանականությամբ կարող են բացասաբար ազդել այդ համայնքների վրա: Եթե որոշումները կայացվում են առօրյա խնդիրներից ելնելով՝ կենտրոնական մարմնի կողմից, ապա հեռավոր վայրերում տեղակայված հուշարձանների համար պատասխանատու պաշտոնյան կառերեսվի խնդիրների հետ:

Միաժամանակ, անհրաժեշտ է գնահատել պոտենցիալ ազդեցությունները, ինչպես նաև գոյություն ունեցողները: Զբոսաշրջությունը կարող է բացասական ազդեցության չունենալ հիմա, սակայն կարող է դինամիկ զարգացում ապրել Համաշխարհային ժառանգության կարգավիճակի ստացումից հետո՝ ապագայում առաջացնելով բացասական և/կամ դրական ներգործություն: Հնարավոր չէ մշտապես կանխատեսել զբոսաշրջությունից բխող հնարավոր ազդեցությունները, սակայն դրանք ենթակա են քննության: Ոչ բոլոր գործոնները կարող են ի հայտ գալ հուշարձանի տարածքում. օրինակ՝ հյուրանոցի կառուցումը հուշարձանի անմիջական սահմանների մոտ կարող է բացասական ազդեցություն ունենալ դրա տեսլային ասպեկտի վրա, իսկ բացատրական աշխատանքների իրականացումը հուշարձանի տարածքում կարող է բացասաբար ազդել հնագիտական շերտերի վրա:

Հուշարձանի վրա ազդեցություն ունեցող նման լայն գործոնների և ենթագործոնների նախանշումը կարող է հանգեցնել հետևյալ տիպային օրինակի մշակմանը, որը կօգնի վիճակի գնահատմանը.

Հիմնական գործոն՝

3.8 Ժառանգության սոցիալական և մշակութային նպատակներով օգտագործումը

Ենթագործոններ:

- 3.8.1 – Ծիսական /հոգևոր/ կրոնական և դրանց հետ ասոցացվող օգտագործման տարբերակներ
- 3.8.2 – Ժառանգության արժևորումը հանրության կողմից
- 3.8.3 – Որսորդության, հավաքչության իրականացումը տեղացի բնակչության կողմից
- 3.8.4 – Ավանդական կենսակերպում և գիտելիքների համակարգում փոփոխությունները
- 3.8.5 – Ինքնագիտակցություն, սոցիալական համախմբում, փոփոխություններ տեղի բնակչության կազմում և համայնքում
- 3.8.6 – Զբոսաշրջության /այցելուների կառավարման/ վերականգնման արդյունաբերության ազդեցությունը

Աղյուսակ 15. Տիպային օրինակ, որը կիրառվել է պարբերական զեկույցների ներկայացման ներկայիս գործընթացի ընթացքում՝ ժառանգության վրա ազդող գործոնների գնահատման համար

3.8.1 Ծիսական /հոգևոր/ կրոնական և դրանց հետ ասոցացվող օգտագործման տարբերակներ

Անվանում	Ազդեցություն				Սկզբնաղբյուրը	
	Դրական	Բացասական	Առկա	Հնարավոր	Ներսից	Դրսից
3.8.1 Ծիսական /հոգևոր/ կրոնական և դրանց հետ ասոցացվող օգտագործման տարբերակներ						

3.8.2 Ժառանգության արժևորումը հանրության կողմից

Անվանում	Ազդեցություն				Սկզբնաղբյուրը	
	Դրական	Բացասական	Առկա	Հնարավոր	Ներսից	Դրսից
3.8.2 Ժառանգության արժևորումը հանրության կողմից						

Նման տիպային օրինակը կկիրառվի, թե՛ ոչ, անհրաժեշտ է գնահատել ժառանգության վրա ազդեցությունները՝ նախանշելով Ա՝ սպառնալիքները, Ա՝ հնարավորությունները, որոնք բացահայտվում են վերլուծությամբ: Սա կարող է լինել շահագրգիռ մարմինների քանակական կամ որակական կամ հավաքական որոշումներ: <<SWOT>>-ի նման գործիքակազմը (<<strengths, weaknesses, opportunities and threats>> (<<ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ>>)), որը հարմարեցվել է այս նպատակով: Դրանք օգնում են վեր հանել այն հիմնախնդիրները, որոնց պետք է տրվի առաջնահերթություն, ինչպես նաև անհրաժեշտ վարչարարական գործողությունները: Սա նկարագրված է չորրորդ փուլում:

Ընդհանուր հիմնախնդիրներից մի քանիսը վերաբերում են հետևյալ թեմաներին՝

- վարչարարություն (կառուցվածք, մարդկային ռեսուրսներ, ֆինանսներ),
- պլանավորում և քաղաքային դիզայն,
- ենթակառուցվածք,
- կոնսերվացում,
- պահպանություն,
- օգտագործում,
- սոցիալական և տնտեսական իրավիճակ,
- հուշարձանի հանրահռչակում,
- այցելուների կառավարում,
- բնածին և մարդածին վտանգներ և սպառնալիքներ (աղետների կառավարում)
- հարաբերությունները համայնքի հետ
- հատուկ լսարան
- իրականացում և մոնիթորինգ
- հետազոտություն
- Համաշխարհային ժառանգությանը վերաբերող առանձին հարցեր:

ՓՈՒԼ ՉՈՐՐՈՐԴ. Պատասխան միջոցառումների /առաջարկությունների/ մշակում:

Պատասխան առաջարկությունների մշակման նպատակով խորհուրդ է տրվում հուշարձանը դիտարկել իր ամբողջական համատեքստում և կանխատեսել դրա երկարաժամկետ ապագան, ամենայն հավանականությամբ որպես Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձանի (եթե դեռ ընդգրկված չէ): Տեսլականը, թե որտեղ կլինի հուշարձանը հաջորդ 20-30 տարիների ընթացքում, օգտակար կլինի մեկնարկի տեսանկյունից: Տվյալ տեսլականի հայտարարությունը կարող է հիմք ծառայել կառավարման քաղաքականությունների, տարեկան աշխատանքային պլանների և իրականացման ռազմավարության մշակման համար: Պլանների վերանայման ծրագիրը պետք է համաձայնեցվի շահագրգիռ մարմինների հետ:

<<Տեսլականի մասին հայտարարությունը>>

Տեսլականի մասին հայտարարությունը նկարագրում է, թե որտեղ կլինի հուշարձանը հաջորդ 20-30 տարիների ընթացքում, ինչպես նաև համաշխարհային բացառիկ և մյուս արժեքների պահպանության, հանրության լայն շերտերին ժառանգությունից ստացված օգուտները փոխանցելու և կայուն զարգացման գործում դրական ներդրումը երաշխավորելու համար պահանջվող քայլերը: Տեսլականի մասին հայտարարությունը բոլոր շահագրգիռ մարմինների հավաքական աշխատանքի արգասիքը պետք է լինի և հանդիսանա ուղեցույց՝ նպատակների և գործողությունների պլանի մշակման համար: Անհրաժեշտության դեպքում այն կարող է աջակցվել կամ նույնիսկ փոխարինվել <<ուղղորդող սկզբունքներով>>՝ նպատակների մշակումն ուղղորդելու նպատակով:

Նախադրեալ

Տեսլականի մասին հայտարարություն

Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Սթոնհենջ հուշարձանը համաշխարհային նշանակության հենքը եզակի և խիստ դասավորված նախապարմական հուշարձանները և րեսարժան վայրերն են, որոնք միասին ձևավորում են զուգահեռ չունեցող րեղանքապարկեր: Մենք կպահպանենք և կպաշտպանենք այս յուրահատուկ րարածքը և դրա հնագիտական շերտը, ինչպես նաև կձևավորենք համեմատաբար հանգիստ, կենսաբազմազանության արտահայտմամբ և գյուղատնտեսական միջավայր՝ թույլ տալով ներկա և ապագա սերունդներին ամբողջությամբ վայելել այն և րեղանքապարկերը: Բացի դրանից մենք կերաշխավորենք նաև դրա առանձին որակական հատկանիշների հանրահռչակումը, մեկնաբանությունը և խթանումն այնպես, որ այցելուները լավագույնս կրնկալեն նախապարմական մարդկանց բացառիկ ձեռքբերումները, ովքեր թողեցին այս ժառանգությունը մեզ:

Յանգ Բ., Չադբլոն Ա. և Բեդու Ի., 2009թ. Սթոնհենջ: Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման պլան, 2009 թ.
Լոնդոն, Անգլիական ժառանգություն



© ՅՈՒՆԵՍԿՕ /Մեզումի Տակիմուր/

Սթոնհենջ, Ավերուրի և
հարակից վայրեր
(Միացյալ
Թագավորություն)

Նպատակները

Հաջորդ քայլը

Հաջորդ քայլը նպատակների կամ «արդյունքների» մշակումն է (տե՛ս 4.4-րդ մաս), ինչը կօգնի հասնել այն տեսլականին, թե ինչպես է անհրաժեշտ պաշտպանել Համաշխարհային բացառիկ արժեքը և հանրությանը մատուցել ստացված օգուտները: (Որոշները դրանց անվանում են լայն «քաղաքականություններ», որի շրջանակներում էլ դրանք մշակվում են):

Նպատակներն ամրապնդում, հարստացնում և փոխանցում են տեսլականի մասին հայտարարության ասպեկտները, որպեսզի հասցեական լուծում տրվի 4-րդ մասում նախանշված հիմնախնդիրներին: Նպատակները պետք է «SMART» («առանձնահատուկ, չափելի, հասանելի (կամ մատչելի), գործի առնչվող, հետևելի (ժամկետային սահմանափակմամբ» (Specific, Measurable, Attainable (or Achievable), Relevant, Trackable (or Time-bounded)) լինեն:

Գործողությունների պլան

Հաջորդ քայլը գործողությունների պլանի մշակումն է՝ նշելով, թե ինչպես պետք է կյանքի կոչվեն նպատակները առանձին գործողությունների իրականացման միջոցով՝ մատուցելով արտադրանքներ կամ ծառայություններ: Նման շոշափելի արդյունքները հայտնի են նաև արտադրանք անվանմամբ (4.4-րդ մաս): Գործողությունների պլանով պետք է սահմանվեն բյուջեի շրջանակներում ստացված արդյունքները, իրականացման համար պատասխանատու կողմերը, յուրաքանչյուր գործողության համար պահանջվող ժամկետները, այլ ռեսուրսները (մարդկային, մտավոր, կազմակերպչական և սարքավորումներ), ինչպես նաև իրականացվելիք գործողությունների հերթականությունը: Այլ խոսքերով, գործողությունների պլանը սահմանում է գործողությունների առաջնահերթություն և տրամադրության տակ եղած ռեսուրսների լավագույնս օգտագործում: Գործողությունների պլանով կսահմանվեն թիրախներ, արդյունքներ և չափորոշիչներ, որոնց միջոցով հնարավոր կլինի չափել գրանցվել է հաջողություն, թե՛ ճախողում: Այն պետք է կազմված լինի տարեկան և երկարաժամկետ գործողություններից:

Գործողությունների պլանը կարող է բաղկացած լինել մի քանի ռազմավարություններից, կամ այցելուների կառավարման, կոնսերվացման, աղետների կառավարման կամ մոնիթորինգի պլաններից: Սրա միջոցով հնարավոր կլինի պատասխանել անվանակարգի ներկայացման ձևաչափի 4-րդ, 5-րդ, 6-րդ բաժիններին:

Իրականացման պլան

Նախկին բաժինները կենտրոնացած էին տեսլականի ձևավորման, նպատակների (արդյունքների) և մի շարք գործողությունների միջոցով արտադրանքի նախանշան վրա: Կառավարման պլանավորման գործընթացի հաջորդ կարևոր փուլը ռազմավարության մշակումն է այս գործողությունների իրականացման նպատակով (տե՛ս 4.3-րդ մասը):

Լավագույն տարբերակը կազմակերպության համակարգում գոյություն ունեցող ստորաբաժանման լավագույնս օգտագործումն է, որն ունի պլանի իրականացման համար նախատեսված լիազորություններ: Որոշ դեպքերում ձևավորվում են նաև նոր ստորաբաժանումներ: Եթե հուշարձանը մեծ տարածք է զբաղեցնում և/կամ բաժանված է մի քանի սեփականատերերի միջև, ապա այս ստորաբաժանումը կարող է ավելի շատ կենտրոնանալ համակարգման, այլ ոչ թե ուղղորդման վրա: Այն նախապես կվերանայի և կվերակազմակերպի որոշումների ընդունման ընթացակարգը հետևյալ նպատակների համար՝

- ունենալ ուժեղ ղեկավար կամ համակարգող՝ անհրաժեշտ լիազորություններով,
- ձևավորել համակարգման մեխանիզմ՝ ներգրավված կազմակերպությունների միջև (սերիական հուշարձանի դեպքում տարբեր բաղադրիչներ, կամ անդրսահմանային հուշարձանի պարագայում՝ երկրներ)
- ձեռք բերել հաստատումներ համապատասխան սեփականատերերից /կազմակերպություն(ներ)ից/,
- նախանշել և հատկացնել ռեսուրսներ,
- նախանշել համապատասխան մասնագետներ, կապալառուներ և մատակարարներ
- նախանշել համապատասխան գնման ընթացակարգեր՝ երաշխավորելով թանփանցիկ և արդյունավետ ձեռքբերումներ, որոնք համապատասխանում են որակի, արժեքի և յուրաքանչյուր գործողության համար սահմանված ժամանակի չափորոշիչներին,
- համապատասխան մասնագետների, կապալառուների և մատակարարների ընտրությունից հետո վերահաստատել, որ պայմանագրային հարաբերությունները բավարար են հաճախորդին վճարելու և տարածքում գործող շահագրգիռ մարմինների լայն շահերի պաշտպանության համար (տե՛ս 2-րդ մասը),
- անձնակազմի նշանակումից և գործողությունների մեկնարկից հետո ցուցաբերել համակարգված մոտեցում թիմերի զեկույցների և հանդիպումների նկատմամբ՝ համակարգումը և արդյունքներն օպտիմալացնելու նպատակով,

- հաստատել հաղորդակցման քաղաքականություն, որով երաշխավորվում է, որ բոլոր շահագրգիռ կողմերը և հատուկ ձևավորված աշխատախմբերը (եթե այդպիսիք կան) բավարար մակարդակով իրազեկված են,
- ամրապնդել միջազգային հարաբերությունների համար պատասխանատու ազգային մարմինների կապերը (օր.՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնի հետ),
- ներգրավել պահպանվածության վիճակի մոնիթորինգի, ինչպես նաև պլանի իրագործման գործընթացներում:

Գործողությունների պլանը պետք է ներառի տարեկան աշխատանքային պլան:

Իրականացնող ստորաբաժանման կառուցվածքը տարբերվում է՝ ելնելով սերիական բաղադրիչներ ունեցող հուշարձանին կամ քաղաքային կենտրոնների կամ մշակութային տեղանքապատկերների նման լայն հուշարձաններին առնչվող շահագրգիռ մարմինների տարատեսակությունից:

Կառավարիչը կարող է նշանակվել շահագրգիռ մարմիններին բացառապես համակարգելու նպատակով՝ ապակենտրոնացնելով առօրյա կառավարումը տարբեր կազմակերպությունների և համապատասխան ղեկավարների միջև:

Մոնիթորինգը կառավարման պլանի համատեքստում

Մոնիթորինգը կարևոր քայլ է կառավարման գործընթացում, քանի որ այն տրամադրում է տեղեկատվություն կառավարմանը վերաբերող գործողությունների վերանայման, հաստատման և թարմացման համար: Մոնիթորինգի պլանը գրավոր ձևակերպված ռազմավարություն է, որն ուղղված է հետևյալի չափմանը՝

a) առաջընթացի, և

b) կառավարման պլանի արդյունքների, որպեսզի կառավարման ոլորտի լիազոր մարմինները իրազեկված լինեն հուշարձանի տարածքում տեղի ունեցող գործընթացներից, պլանավորած ծրագրի (գործողություններ և արդյունքներ) կատարման ընթացքից և որքան արդյունավետ է այն իրականացվել (ծեռք բերված արդյունքներ):

Այլ կերպ ասած՝ մոնիթորինգը չափում է կառավարման պլանը և քանակական, և որակական ասպեկտներով, և վերջինը վերաբերում է Համաշխարհային բացառիկ արժեքի պահպանության ապահովմանը:

Ավելին, անհրաժեշտ է մշակել չափորոշիչներ, որոնց միջոցով կարելի է չափելի դարձնել փոփոխությունները (տես 4.3-րդ մասը - Մոնիթորինգ): Այդ գնահատումներից հավաքագրված տեղեկատվությունը և արդյունքները կարևոր մեխանիզմներ են պլանը վերանայելու կամ փոփոխության ենթարկելու համար:

Պլանի կատարման ընթացքի միջոցով իրականացման փուլում տեղեկատվություն է տրամադրվում, թե արդյոք կառավարման պլանը աշխատում է և արդյոք այն իրականացվում է ժամանակի և բյուջեի համապատասխան (արդյունքների գնահատում): Այն ցուցադրում է կառավարչի գործունեության արդյունավետությունը և պլանը: Արդյունքների գնահատումը կառավարման արդյունավետության իսկական գնահատման աղբյուրն է:

Մոնիթորինգը դիտարկման, տեղեկատվության հավաքագրման և առաջընթացի գնահատման համար նախատեսված գործիքակազմ է, այն վերջնական մեխանիզմ չէ, սակայն դրա համար է նախատեսված: Սա կառավարման գործընթացի կարևոր և շարունակական մասն է, և կիրառվում է փոփոխությունները չափելու և պլանավորելու համար՝ թույլատրելով կառավարման քաղաքականությունների մշակումը և անհրաժեշտության դեպքում կառավարման պլանի վերանայումը: Քանի որ այն կարող է ժամանակատար և ծախսատար գործընթաց լինել, կառավարիչները պետք է ընտրություն կատարեն, թե պլանի որ ճյուղն է պահանջում մոնիթորինգի իրականացում, չափորոշիչների նախանշում և որոշումների կայացում, թե ինչպես անհրաժեշտ մոնիթորինգը կազմակերպել:

Որոշ հուշարձաններում մշակվել են մոնիթորինգի իրականացման կանոնավոր մեխանիզմներ՝ հիմնականում պահպանվածության վիճակը գնահատելու համար: Այնուամենայնիվ, մոնիթորինգին առնչվող բոլոր ռազմավարությունները (Համաշխարհային ժառանգության հուշարձանների պարագայում) պետք է նպատակ հետապնդեն հավաքագրելու Գործառնական ուղեցույցում ուրվագծված նպատակներին հասնելու մասին տեղեկատվությունը և պետք է առնչվեն Համաշխարհային ժառանգության պահանջների հետ, ինչպիսիք են պահպանվածության վիճակը, արձագանքող մոնիթորինգը և պարբերական զեկույցը:

Մոնիթորինգ

Մոնիթորինգի չափորոշիչներ

13.6.1 Մոնիթորինգի կազմակերպման նպատակը Համաշխարհային ժառանգության հուշարձանի արժեքների գնահատումն է, որոնք պահպանվել են ժամանակի ընթացքում, ինչպես նաև Համաշխարհային ժառանգության հուշարձանի համար գրված կառավարման պլանի նպատակների հասնելու առաջընթացը որոշելը: Չափման գործընթացը կարևոր նշանակություն ունի հուշարձանի կառավարման քաղաքականության որոշումներն և համակարգի բարեփոխման համար: Հիմնական սպառնալիքների նախօրոք նախանշումը հնարավորություն է տալիս տեղում մշակելու վերականգնողական գործողություններ, քանի դեռ մնասի չափերը ահռելի չեն: Կանոնավոր մոնիթորինգի իրականացումն անհրաժեշտ է առաջնահերթությունների վերագնահատման համար՝ նոր հիմնականիչների և կատարման ընթացքի վերահսկման տեսանկյունից: Մոնիթորինգի չափորոշիչներն անհրաժեշտ են Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման պլանի արժեքների և նպատակների միջև հաստատուն առնչության ապահովման համար:

Համաշխարհային ժառանգության ցանկում ընգրկված Սթոնհենջի և Ավերուրի հուշարձանների համար երկու համակարգողների կողմից մշակվել է 19 մոնիթորինգային չափորոշիչներից բաղկացած գործիքակազմ, որին մասնակցել են նաև Սթոնհենջի համաշխարհային ժառանգության կոմիտեն և մի շարք գործընկերներ: Նրանց նպատակը պահպանության, մեկնաբանման և կառավարման գործընթացներում առաջընթացի չափումն է: Չնայած չափորոշիչներից շատերը կիրառելի են Ավերուրի և Սթոնհենջի դեպքերում, գոյություն ունեն աննշան տարբերություններ, որոնց միջոցով արտահայտվում են հուշարձանների առանձնահատկությունները: Ընդհանուր համաձայնություն է ձեռք բերվել, որ չափորոշիչները պետք է լինեն պարզ, իմաստային, հեշտ՝ հավաքագրման և շարունակականության ապահովման տեսանկյունից, որպեսզի համեմատականների անցկացումը ժամանակի ընթացքում լինի հնարավոր: Այժմ, քանի որ համաշխարհային ժառանգության ատրիբուտները նախանշված են, կարևոր է չափորոշիչների վերանայումը կառավարման պլանի գործողությունների ընթացքում դրանք առավել համարժեք դարձնելու նպատակով:

Մեջբերումները Յանգ Բ., Չադբրոն Ա. և Բեդու Ի., 2009թ. Սթոնհենջ: Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման պլան, 2009 թ., *Լոնդոն, Անգլիական ժառանգություն*

Տես Աղյուսակ 16 չափորոշիչների համար

Աղյուսակ 16. Մոնիթորինգի չափորոշիչներ - Սթոնհենջ. Համաշխարհային ժառանգության հուշարձանի կառավարման պլան

Նպատակը	Մոնիթորինգի հիմնական չափորոշիչներ	Ինչպես և ով	Ինչ հաճախականությամբ	Առկա է
Հնավայրերի կոնսերվացում	1. Հնավայրերի համար թարմացված գրառումների առկայություն	Տեսարժան վայրերի և հուշարձանների ցուցակագրում, որն իրականացվում է Ուիլջիորի շրջանային խորհրդի կողմից	Ըստ անհրաժեշտության	Այո
		Սթոնհենջի աշխարհագրական տեղեկատվական համակարգ, որը գործարկվում է Անգլիական ժառանգության կողմից		Այո
	2. Հնավայրի վիճակը	Համաշխարհային ժառանգության հուշարձանի պահպանվածության վիճակի ուսումնասիրություն, որը ֆինանսավորվում է Անգլիական ժառանգության կողմից	Յուրաքանչյուր վեց տարին	Այո
		Ազգային հիմնադրամի կամավորների և Անգլիական ժառանգության պատմական միջավայրի դաշտային գիտաշխատողների կողմից պարբերական մոնիթորինգի իրականացում	Ըստ անհրաժեշտության	Այո
	3. Հեկտարներով խոտածածկի վերականգնում և մի շարք հուշարձանների պաշտպանություն գոյթանից առաջացող վնասներից	Քարտեզներ և տվյալներ՝ հավաքագրված Համաշխարհային ժառանգության հուշարձանի համակարգողից, Դեֆրայից, ազգային հիմնադրամից	Տարեկան թարմացում	Այո

Հուշարձանին բնորոշ մոնիթորինգի անցկացման օրինակ

Տարաբնույթ շինություններից և պարտեզներից ձևավորված Համաշխարհային ժառանգության հուշարձանը ոգեշնչեց հավակնոյր և դժվարին մոնիթորինգային ծրագրի մշակմանը, որն իրականացվում է մշակութային ժառանգության պեյսկան վարչակազմի և Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Սուժոյի դասական պարտեզներ (Չինաստան) հուշարձանի կառավարման լիազոր մարմնի կողմից:



© ՅՈՒՆԵՍԿՕ / Ֆ. Բանդարանի/

Սուժոյի դասական
պարտեզներ
(Չինաստան)

Կառավարման պլանի վերանայում

Կառավարման պլանի նախապատրաստումը կրկնվող, շարունակական գործընթաց է և նախատեսված մեկնագամյա գործողություն է: Բոլոր շահագրգիռ մարմինները պետք է հասկանան, որ կառավարման պլանը պետք է կանոնավոր կերպով վերանայել (տարեկան կամ երկամյակի կտրվածքով): Մոնիթորինգային գործընթացներից ստացված տեղեկատվությունը պետք է գնահատվի և օգտագործվի պլանի վերանայման համար:

Ի հավելում կանոնավոր վերանայումների՝ հնարավոր է անհրաժեշտություն առաջանա վերանայելու պլանն ամբողջությամբ կամ դրա առանձի հատվածները՝ հետևյալ իրավիճակներից ելնելով՝

- երբ անհրաժեշտ է հրատապ ուշադրություն դարձնել՝ ելնելով մոնիթորինգային գործընթացի արդյունքներից,
- երբ աղետաբեր (օրինակ՝ դժբախտ պատահար) իրավիճակի են դիմագրավում,
- երբ հուշարձանը կոմիտեի որոշմամբ ընդգրկվում է Համաշխարհային ժառանգության վտանգված հուշարձանների ցանկում, կամ
- երբ մեծամասշտաբ փոփոխություններն անհնար են դարձնում պլանի որոշակի հատվածների իրականացումը:

Վերանայման գործընթացին պետք է նախորդի պլանի նախապատրաստման ընթացքում կիրառված մասնակցային գործընթացը՝ ներգրավվելով ցանկացած նոր շահագրգիռ կողմ ըստ անհրաժեշտության (օրինակ՝ պաշտպանության բնագավառի լիազոր մարմիններին, եթե հուշարձանը ենթարկվել է հարձակման ահաբեկիչների կողմից):

Վերանայման գործընթացը պետք է կառավարման պլանի մի հատվածը լինի և համաձայնեցվի շահագրգիռ մարմինների հետ՝ մասնավորապես վերը թվարկված արտակարգ իրավիճակների դեպքերում: Պլանների վերանայումը պետք է իրականացվի տարեկան, հնգամյա և ամբողջական կտրվածքով և այլն, ըստ անհրաժեշտության՝ լրամշակելով արձագանքվող վերանայումներով, որոնք իրականացվում են արտակարգ իրավիճակների դեպքերում:

A.3 Կառավարման պլանի բովանդակությունը

Կառավարման պլանի բովանդակությունը

Վերն ուրվագծված պլանավորման գործընթացի վերջնական փուլը կառավարման պլանի մշակումն է: Եթե բոլոր նյութերը հավաքագրված են, ապա ժամանակն է դիտարկելու, թե ինչպես է անհրաժեշտ աշխատել բովանդակության հետ, ինչպես է պետք ներկայացնել վերջնական փաստաթուղթը, դրա ձևավորումը, կառուցվածքը և բովանդակության վերնագրերի ստորադասությունը: Եթե դա պարունակում է ցանկացած օգտագործման համար սահմանափակված տեղեկատվություն, ապա դրա տարածումը պետք է նույնպես վերահսկվի:

Պլանը պետք է ներքուստ կայուն լինի և սիստեմատիկ կերպով նկարագրի, թե ինչպես ժառանգությունը կառավարվի և ինչպես է դրա կարևորությունը պահպանվելու և հանրահռչակվելու բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են հուշարձանի ճակատագրով:

Պլանը կարող է ունենալ հետևյալ բովանդակությունը՝

Կառավարման պլան. բովանդակություն

- նպատակը
- գործընթացը (ինչպես է այն նախապատրաստվել և ովքեր են ներգրավվել)՝ ներառյալ որոշում կայացնելու գործընթացի գծապատկերը
- հուշարձանի նկարագրությունը
- կարևորությունը (համաշխարհային բացառիկ արժեքների հետ միասին Համաշխարհային ժառանգության հուշարձանների պարագայում)
- հիմնախնդիրների նախանշում
- հայտարարության /ուղղորդող սկզբունքների, քաղաքականությունների/ նպատակների տեսականը
- քաղաքականությունների / նպատակների բավարարման ուղղված գործողությունները (ներառյալ ժամանակը, առաջնահերթությունները, ռեսուրսները և չափորոշիչները)
- իրականացման պլան, տարեկան աշխատանքային պլան, ծրագրի նախագծում, ռեսուրսների նախանշում
- մոնիթորինգի իրականացման պլան
- վերանայման ժամանակացույց

Հետնախապատրաստական գործողություններ

Կառավարման պլանի հաջողությունը կախված է դրա նախապատրաստումից և իրականացումից հետո տրված կարևորությունից: Գործընթացի սկզբից նախանշված կազմակերպություններն այժմ պետք է հաստատեն և ստանձնեն կառավարման պլանից բխող պարտավորությունները՝ տրամադրելով ռեսուրսներ (օր.՝ անձնակազմ իրականացման համար), որոնք խոստացվել էին պլանավորման ընթացքում և ձեռք բերել լրացուցիչներ: Հնարավորության դեպքում պլանը պետք է ամրապնդվի իրավական կարգավիճակով՝ գոյություն ունեցող կառավարման համակարգի շրջանակում:

Պլանն ուժի մեջ մտնելուն պես պետք է իրականացվի՝ հետևելով նախկինում նախապատրաստված պլանի իրականացմանը: Պետք է մեկնարկի առօրյա վարչարարությունը:

Խնդրում ենք կցել այն կառավարման պլաններին, որոնք վերաբերվում են Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված հուշարձաններին: (<http://whc.unesco.org/en/list/>)

Հավելված Բ


Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը (IUCN)

Պահպանվող տարածքների կառավարման արդյունավետությունը գնահատելու նպատակով մշակվեցին մի շարք կամավոր կիրառման մեխանիզմներ 1990-ական թվականների վերջին: Նման գնահատումների նպատակը պահպանվող տարածքների գնահատումն է, թե որքան լավ են կառավարում, արդյո՞ք պաշտպանվում են դրանց արժեքները և ձեռք են բերվում համաձայնեցված նպատակները և խնդիրները: Այդ գործիքներից մեկը, որը կոչվում է <<Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը>> մշակվել է հատկապես Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բնության հուշարձանների համար:

Կառավարման արդյունավետության ներածականը

Կառավարման արդյունավետության եզրույթն արտահայտում է երեք հիմնական <<թեմա>>, որոնք վերաբերվում են պահպանվող տարածքների կառավարմանը՝

- նախագծային հարցադրումներ, որոնք վերաբերվում են և առանձին հուշարձանների, և պահպանվող տարածքի համակարգերին,
- կառավարման համակարգերի և գործընթացների համարժեքությունը և իրավաչափությունը,
- պահպանվող տարածքների նպատակների ձեռքբերման ապահովում՝ ներառյալ արժեքների կոնսերվացում:



IUCN-ի պահպանվող տարածքների հարցերով համաշխարհային հանձնաժողովը (ՊՏՀՀ) մշակել է պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման գնահատման համար մի համակարգ, որի նպատակը գնահատման համակարգերի մշակման հարցում ընդհանուր խորհրդատվության տրամադրումն է ու գնահատումը, զեկույցների ներկայացման հիմնական ստանդարտների մշակումը: Համակարգն ընդհանուր գործընթաց է, որի շրջանակներում կիրառվում է ճշգրիտ մեթոդաբանություն արդյունավետության գնահատման նպատակով այն պահպանվող տարածքներում, որոնք տարբերվում են գործոններով, ինչպիսիք են ժամանակը և առկա ռեսուրսները, տարածքի կարևորությունը, տվյալների որակը և շահագրգիռ մարմինների գործադրած ճնշումները, գնահատման մեխանիզմների թվաքանակը: Եվ որպես արդյունք մի շարք գնահատման մեխանիզմներ են մշակվել կառավարման բնագավառում խորհրդատվություններ տրամադրելու և փոփոխությանների գրանցման համար: ՊՏՀՀ-ի համակարգը կառավարումը տեսնում է որպես մի գործընթաց կամ շրջափուլ վեց հեռավոր փուլերով կամ բաղադրիչներով՝

Պատկեր 23:

Գործիքակազմի մեխանիզմների հարաբերակցությունը ՊՏՀՀ-ի կառավարման արդյունավետության համակարգի նկատմամբ. արդյուրը՝ Հոբինգ (2008 թ.):

- ▶ այն սկսում է գոյություն ունեցող արժեքների և սպառնալիքների համատեքստի նախանշմամբ
- ▶ առաջընթաց պլանավորման միջոցով
- ▶ ռեսուրսների բաշխում (ներդրումներ)
- ▶ կառավարման գործողությունների արդյունք (առաջընթաց)
- ▶ արտադրում է ապրանքներ և ծառայություններ (արդյունքներ)
- ▶ հանգեցնում է ազդեցության կամ արդյունքի

Վերջնական այդ արդյունքներից մեկը՝ արդյո՞ք պահպանվում են դրա հիմնական արժեքները կամ՝ ոչ, ամենակարևորն է և միաժամանակ ամենադժվար չափման միավորը: Համակարգի մյուս բաղադրիչներից բոլորը նույնպես կարևոր են որոշակի բնագավառների նախանշման տեսանկյունից, որտեղ անհրաժեշտ է հաստատել կամ բարեփոխել կառավարման համակարգը:

Երկու ընդհանրական կիրառելի համակարգեր են մշակվել ՊՏՀՀ-ի համակարգին համահունչ՝ նման տեսակի գնահատումների իրականացման նպատակով: Առաջինը Համաշխարհային վայրի բնության արագ գնահատման և պահպանվող տարածքների բնագավառում առաջնահերթությունների

սահմանման մեխանիզմն է, որը պահպանվող տարածքի գործակալություններին տրամադրում է պահպանվող տարածքների կառավարման, սպառնալիքների, թույլ կողմերի և քայքայման մասին տեղեկատվություն երկրի մակարդակով: Երկրորդ մեխանիզմը Համաշխարհային վայրի բնության / Համաշխարհային բանկի գլոբալ անտառային ալյանսի կառավարման արդյունավետության հսկման մեխանիզմն է, որը նախագծվել է հետևելու և առաջընթացի մոնիթորինգի իրականացման համար Համաշխարհային պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության ստանդարտների նկատմամբ: Այս համակարգերից երկուսն էլ հարաբերականորեն էժան և պարզունակ են գնահատման գործիքների կիրառման տեսանկյունից, որոնք կարող են օգտագործվել պահպանվող տարածքի անձնակազմի կողմից (կամ ծրագրի աշխատակազմի կողմից), սակայն դրանցից ոչ մեկը չի տրամադրում մանրամասն գնահատում արդյունքների տեսանկյունից: Համաշխարհային բանկի գլոբալ անտառային ալյանսի կառավարման արդյունավետության հսկման մեխանիզմի բաղադրիչներից շատերը և կիրառման փորձը հիմք հանդիսացան պարբերական զեկույցի ներկայացման ձևաչափի փոփոխման համար (տես 6.3-րդ կետը):

Խթանելով մեր ժառանգության գործիքակազմը

Մեր ժառանգության գործիքակազմը առանձնակի համապատասխանություն ունի այս համատեքստում, որը կիրառում է ՊՏՀՀ-ի համակարգը Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բնության հուշարձանների կառավարիչների համար առավել մանրամասն գնահատման մի շարք գործիքներ մշակելու համար: Գործիքակազմը կարող է օգտագործվել հուշարձանի տարածքում համապարփակ համակարգի ձևավորման համար կառավարման արդյունավետության գնահատման նպատակով: Դա մշակվեց յոթ տարվա ընթացքում, որի աշխատանքներում ընդգրկվեցին Աֆրիկայի, Ասիայի և Կենտրոնական ու Լատինական Ամերիկայի Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարիչները: Գործիքները տաններկուն են՝

- **Գործիք 1. Հուշարձանի արժեքների և կառավարման նպատակների նախանշում**՝ նախանշում և ցուցակագրում է հուշարձանի հիմնական արժեքները և դրանց վերաբերող կառավարման նպատակները, որոնք միասին օգնում են որոշելու, թե ինչն է անհրաժեշտ մոնիթորինգի ենթարկել և վերլուծել գնահատման ընթացքում:
- **Գործիք 2. Սպառնալիքների բացահայտում**. կառավարիչներին օգնում է կազմակերպել և զեկույցել տեսակի մեջ տեղ գտած փոփոխությունները, հուշարձանին ուղղված սպառնալիքի մակարդակը, ինչպես նաև կառավարել դրանց հակազդման միջոցները:
- **Գործիք 3. Հարաբերությունները շահագրգիռ մարմինների հետ**. նախանշում է շահագրգիռ մարմինների և դրանց հետ առնչությունը հուշարձանի հետ:
- **Գործիք 4. Ազգային համատեքստի ուսումնասիրություն**. օգնում է ընկալել, թե ինչպես են ազգային և միջազգային քաղաքականությունները, օրենսդրությունը և կառավարության գործողություններն ազդում հուշարձանի վրա:
- **Գործիք 5. Կառավարման պլանավորման գնահատում**. գնահատում է հուշարձանի կառավարման համար ուղենիշ հանդիսացող հիմնական պլանավորման փաստաթղթի համարժեքությունը:
- **Գործիք 6. Նախագծային փաստաթղթերի գնահատում**. գնահատում է հուշարձանի նախագծումը և քննության է առնում, թե ինչպես են դրա չափը, գտնվելու վայրը և սահմաններն ազդում կառավարիչների կարողությունների վրա, որոնք ուղղված են հուշարձանի արժեքների պահպանությանը:
- **Գործիք 7. Կառավարչական կարիքների և ներդրումների գնահատում**. գնահատում է գոյություն ունեցող անձնակազմի հնարավորությունները վերջինիս կարիքների և առկա բյուջեի հետ՝ համեմատելով պահանջվող բյուջետային հատկացումների հետ:
- **Գործիք 8. Կառավարչական գործընթացների գնահատում**. նախանշում է կառավարչական գործընթացների լավագույն փորձը և ցանկալի ստանդարտները, ինչպես նաև գնահատում է կատարողական այդ ստանդարտների համեմատությամբ:
- **Գործիք 9. Կառավարման պլանի գնահատում**. ցույց է տալիս կառավարման պլանի կատարման ընթացքը (կամ պլանավորման մեկ այլ փաստաթղթի)՝ ընդհանուր և առանձին բաղադրիչների կտրվածքով:
- **Գործիք 10. Աշխատանքի / հուշարձանից ստացված արդյունքների չափորոշիչներ**. գնահատում է տարեկան աշխատանքային ծրագրի թիրախները և այլ արդյունքների համար սահմանված չափորոշիչները:
- **Գործիք 11. Կառավարման արդյունքների գնահատում**, պատասխանում է ամենակարևոր հարցերին՝ արդյո՞հուշարձանը չի շեղվում ծրագրավորվածից՝ պահպանելով բնապահպանական ամբողջականությունը, վայրի բնությունը, մշակութային արժեքները, տեղանքապատկերը և այլն:
- **Գործիք 12. Վարչարարության արդյունավետության գնահատման արդյունքներ**. ամփոփվում են արդյունքները, որն օգնում է առաջնայնություն սահմանել կառավարման գործողություններում հակազդման համար:

Գործիքակազմը մշակված է Համաշխարհային ժառանգության հուշարձանների կառավարման գործում ներգրավվածների համար և նպատակ ունի ապահովել սկզբնական տեղեկատվություն և առանձին մեխանիզմներ, որոնք կարող են կիրառվել հուշարձանների կառավարումը գնահատելու գործում: Դրանք ավելի շատ հարմարեցվող, այլ ոչ թե կրկնող մեխանիզմներ են առկա մոնիթորինգի համար, այնպես որ դրանք միայն հասցեական լուծում են տալիս հիմնախնդիրներին: Գործիքակազմի հրապարակումը պարունակում է բոլոր մեխանիզմները, ինչպես նաև խորհրդատվություն՝ ինչպես իրականացնել գնահատումը և մի շարք նախադեպերի ուսումնասիրությունները, թե ինչպես են կիրառվել դրանք Համաշխարհային ժառանգության հուշարձանների տարածքներում աշխարհով մեկ: Գործիքակազմն օրեցօր աճող համբավ ունի Համաշխարհային ժառանգության հուշարձանների տարածքների կենսական գոտիներում, դրա կիրառումը մեկնարկել է նաև Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների տարածքներում:

Մատենագիտություն

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՓԱՍՏԱԹՂԵՐԸ

Albert, M.-T., Richon, M., Viñals, M.J. and Witcomb, A. (eds). 2012. Community development through World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 31.) <http://whc.unesco.org/en/series/31/>

Colette, A. (ed). 2007. Climate Change and World Heritage. Report on predicting and managing the impacts of climate change on World Heritage and Strategy to assist States Parties to implement appropriate management responses. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Reports 22.) <http://whc.unesco.org/en/series/22/>

Hockings, M., James, R., Stolton, S., Dudley, N., Mathur, V., Makombo, J., Courrau, J. and Parrish, J. 2008. Enhancing our Heritage Toolkit. Assessing management effectiveness of Natural World Heritage sites. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 23.) <http://whc.unesco.org/en/series/23/>

Martin, O. and Piatti, G. (eds). 2009. World Heritage and Buffer Zones, International Expert Meeting on World Heritage and Buffer Zones, Davos, Switzerland, 11–14 March 2008. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 25.) <http://whc.unesco.org/en/series/> (English web page)

Mitchell, N., Rössler, M. and Tricaud, P-M. (Authors/eds). 2009. World Heritage Cultural Landscapes: A Handbook for Conservation and Management. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 26.) <http://whc.unesco.org/en/series/26/>

Pedersen, A. 2002. Managing Tourism at World Heritage Sites: a Practical Manual for World Heritage Site Managers. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Manual 1.) <http://whc.unesco.org/en/series/1/> (English web page)

Stovel, H. (ed). 2004. Monitoring World Heritage, Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 10.) <http://whc.unesco.org/en/series/10/>

UNESCO. 1972. Convention concerning the Protection of the World Cultural and Natural Heritage. (World Heritage Convention). <http://whc.unesco.org/en/conventiontext> (English web page)

UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2010. Managing Disaster Risks for World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual.) <http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-630-1.pdf> (English web page)

UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2011. Preparing World Heritage Nominations. (Second edition). Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual.) <http://whc.unesco.org/en/activities/643/> (English web page)

Մատենագիտություն

UNESCO, ICCROM, ICOMOS and IUCN. 2012. Managing Natural World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Resource Manual.)
<http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-703-1.pdf> (English web page)

UNESCO World Heritage Centre. 2004. Linking Universal and Local Values: Managing a Sustainable Future for World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 13.)
http://whc.unesco.org/documents/publi_wh_papers_13_en.pdf

UNESCO World Heritage Centre. 2005. Vienna Memorandum on World Heritage and Contemporary Architecture – Managing the Historic Urban Landscape.
<http://whc.unesco.org/en/activities/48>

UNESCO World Heritage Centre. 2007. Climate Change and World Heritage. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 22.)
<http://whc.unesco.org/en/series/22/>

UNESCO World Heritage Centre. 2007. Strategy for Reducing Risks from Disasters at World Heritage Properties. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-07/31.COM/7.2)
<http://whc.unesco.org/archive/2007/whc07-31com-72e.pdf>

UNESCO World Heritage Centre. 2008. Policy Document on the Impacts of Climate Change on World Heritage Properties. Paris, UNESCO World Heritage Centre.
<http://whc.unesco.org/uploads/activities/documents/activity-397-2.pdf>

UNESCO World Heritage Centre. 2010. Reflection on the Trends of the State of Conservation. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-10/34.COM/7C)
<http://whc.unesco.org/archive/2010/whc10-34com-7Ce.pdf>

UNESCO World Heritage Centre. 2010. World Heritage Convention and Sustainable Development. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-10/34.COM/5D)
<http://whc.unesco.org/archive/2010/whc10-34com-5De.pdf>

UNESCO World Heritage Centre. 2011. Presentation and adoption of the World Heritage strategy for capacity building. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/9B)
<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-9Be.pdf>

UNESCO World Heritage Centre. 2011. Recommendation on the Historic Urban Landscape.
http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=48857&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

UNESCO World Heritage Centre. 2011. World Heritage Convention and Sustainable Development. Paris, UNESCO World Heritage Centre. (Doc WHC-11/35.COM/5E)
<http://whc.unesco.org/archive/2011/whc11-35com-5Ee.pdf>

UNESCO World Heritage Centre. 2012. Operational Guidelines for the Implementation of the World Heritage Convention.
<http://whc.unesco.org/en/guidelines/> (English web page)

Մատենագիտություն

van Oers, R. and Haraguchi, S. 2010. Managing Historic Cities. Paris, UNESCO World Heritage Centre. (World Heritage Papers 27.)
<http://whc.unesco.org/en/series/27/>

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Boccardi, G. 2007. World Heritage and Sustainability; Concern for social, economic and environmental aspects within the policies and processes of the World Heritage Convention. London, M.Sc. dissertation, UCL Bartlett School of the Built Environment.

Boccardi, G. 2012. Introduction to Heritage and Sustainable Development. Paper presented at Special Module on Sustainable Development during the ICCROM's course on Conservation Built Heritage, Rome.

Boddy, D. 2008. Management: An Introduction. (Fourth edition). Harlow, UK, Financial Times/Prentice Hall.

Brundtland, G.H. 1987. Report of the World Commission on Environment and Development: Our Common Future. Oxford, UK, Oxford University Press, Incorporated.

Burke, R. 2003. Project Management Planning and Control Techniques, Chichester, UK, John Wiley & Sons.

Claessens, S. 2003. Corporate Governance and Development. Global Corporate Governance Forum, Focus I. Washington, DC, USA, The International Bank for Reconstruction and Development/The World Bank.

Deputy Prime Minister's Office. 2004. Skills for Sustainable Communities. London, RIBA.
http://dera.ioe.ac.uk/11854/1/Egan_Review.pdf

Director of National Parks, Australia. 2010. Uluru-Kata Tjuta National Park. Management Plan 2010–2020. Canberra, Australia, Director of National Parks.
<http://www.environment.gov.au/parks/publications/uluru/pubs/management-plan.pdf>

European Commission. 2004. Aid Delivery Methods. Volume 1. Project Cycle Management Guidelines. Brussels, European Commission.
https://www.aswat.com/files/europeaid_adm_pcm_guidelines_2004_en.pdf

Feilden, B.M. and Jokilehto, J. 1993. Management Guidelines for World Cultural Heritage Sites. (First edition). Rome, ICCROM.

ICOMOS Australia. 1999. The Burra Charter. The Australia ICOMOS Charter for Places of Cultural Significance. ICOMOS Australia.

ICOMOS. 2011. 17th General Assembly and Scientific Symposium, 'Heritage, Driver of Development' 27 November – 2 December 2011. in: ICOMOS News, Vol. 18, No.1. Paris, ICOMOS.

ICOMOS. 2011. Guidance on Heritage Impact Assessments for Cultural World Heritage Properties. Paris, ICOMOS.

Մատենագիտություն

IUCN. 2008. Management Planning for Natural World Heritage Properties. A Resource Manual for Practitioners. Gland, Switzerland, IUCN Programme on Protected Areas. (IUCN World Heritage Studies 5.)

<http://cmsdata.iucn.org/downloads/whmanagement.pdf>

Kerr, J. 2013. The Seventh edition. Conservation Plan. A Guide to the Preparation of Conservation Plans for Places of European Cultural Significance. (Original Text: Kerr, J. 1982. The Conservation Plan). ICOMOS Australia.

Kingdom of the Netherlands. 2009. The Seventeenth century canal ring area of Amsterdam within the Singelgracht. Nomination Document.

<http://whc.unesco.org/uploads/nominations/1349.pdf>

Lithgow, K. 2011. 'Sustainable decision making: change in National Trust collections conservation', in: Journal of the Institute of Conservation, Vol. 34, No. 1, pp. 128-142. London, ICON.

Mitchell, B. and Hollick, M. 1993. 'Integrated Catchment Management in Western Australia: The Transition from Concept to Implementation', in: Environmental Management, Vol. 17 Iss: 6, 1993. pp. 735-43. Springer-Verlag.

OECD. 2009. OECD Principles for Integrity in Public Procurement. OECD Publishing. http://www.oecd.org/document/25/0,3746,en_2649_34135_42768665_1_1_1_1,00.html

Phillips, A. 2003. Turning ideas on their head: the new paradigm for protected areas. The George Wright Forum. <http://www.uvm.edu/conservationlectures/vermont.pdf>

Shipley, R. and Kovacs, J.F. 2008. 'Good governance principles for the cultural heritage sector: lessons from international experience', in: Corporate Governance, Vol. 8 Iss: 2, 2008, pp. 214-228. Emerald Group Publishing Limited.

Stovel, H. 1991. Safeguarding historic urban ensembles in a time of change: A Management Guide. Quebec, Canada, International Symposium on World Heritage Towns.

Stovel, H. 1998. Risk Preparedness: A Management Manual for World Cultural Heritage. Rome, ICCROM.

Thomas, L. and Middleton, J. 2003. Guidelines for Management Planning of Protected Areas. Gland, Switzerland, IUCN and Cambridge, UK.

<http://data.iucn.org/dbtw-wpd/edocs/PAG-010.pdf> (English web page)

Wijesuriya, G. 2008. 'An Integrated Approach to Conservation and Management of Heritage', in: ICCROM Newsletter 34, 2008, p.8. Rome, ICCROM.

Young, C., Chadburn, A. and Bedu, I. 2009. Stonehenge. World Heritage Site Management Plan 2009. London, English Heritage.

Կոնտակտային տեղեկատվություն

Անվանումը և հասցեն	Համառոտ մանրամասներ	Պատասխանատվությունը կոնվենցիայի շրջանակներում
ԻԿԿՌՕՄ Դի Սան Միշել 13 I-00153 Հռոմ Իտալիա Հեռ. +39 06 585-531 Ֆաքս. +39 06 585-53349 Էլ. փոստ. iccrom@iccrom.org http://www.iccrom.org	ԻԿԿՌՕՄ-ը (Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոն) միջկառավարական կազմակերպություն է, որի կենտրոնականացված գտնվում է Հռոմում, Իտալիա: Այն հիմնադրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1956 թ.-ին, և կազմակերպության կանոնադրական նպատակներն են հետազոտությունների իրականացումը, փաստաթղթավորումը, տեխնիկական աջակցությունը, վերապատրաստումը, և հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը շարժական և անշարժ մշակութային ժառանգության ամրակայման նպատակով:	Կոնվենցիայի շրջանակներում ԻԿԿՌՕՄ-ին վերապահված դերակատարությունն ընդգրկում է՝ • մշակութային ժառանգության բնագավառում հանդիսանալ առաջնային գործընկեր դասընթացների կազմակերպման հարցում, • Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգի իրականացում, • անդամ պետությունների ներկայացրած միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրություն, • ներդրումների և աջակցության տրամադրում կարողությունների կառուցման բնագավառում:
ԻԿՕՄՕՍՍ Սեմինար դե Կոնֆլանս փողոց 11 94220 Շարենտոն-լե-Պոնտ 75015 Փարիզ Ֆրանսիա Հեռ. +33 (0)1 45 67 67 70 Ֆաքս. +33 (0)1 45 66 06 22 Էլ. փոստ. secretariat@icomos.org http://www.icomos.org	ԻԿՕՄՕՍՍ-ը (Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդ) հասարակական կազմակերպություն է՝ կենտրոնակայանը Փարիզ, Ֆրանսիա: Հիմնադրված լինելով 1965 թ.-ին՝ կազմակերպությունը խթանում է տեսական գիտելիքների, մեթոդաբանության և գիտական տեխնիկայի կիրառումը ճարտարապետական և հնագիտական հուշարձանների կոնսերվացման նպատակով: Սշխատանքը հիմնված է 1964 թ.-ին ընդունված Հուշարձանների պահպանության և վերականգնման մասին միջազգային սկզբունքների վրա (Վենետիկյան խարտիա):	Կոնվենցիայի շրջանակներում ԻԿՕՄՕՍՍ-ին վերապահված դերակատարությունն ընդգրկում է՝ • Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով առաջադրած հուշարձանների գնահատում, • Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված մշակութային հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգի իրականացում, • անդամ պետությունների ներկայացրած միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրություն, • ներդրումների և աջակցության տրամադրում կարողությունների կառուցման բնագավառում:
IUCN Մովերնել փողոց 28 1196 Գլանդ Շվեյցարիա Հեռ. +41 (22) 999-0000 Ֆաքս. +41 (22) 999-0002 Էլ. փոստ. worldheritage@iucn.org http://www.iucn.org	IUCN-ը (Բնության պահպանության միջազգային միություն) հիմնադրվել է 1948 թ.-ին և միավորում է ազգային կառավարություններին, հասարակական կազմակերպություններին և գիտնականներին գլոբալ մակարդակով: Կազմակերպության առաքելությունը համայնքներին խրախուսել և աջակցել է, գլոբալ մակարդակով բնության ամբողջականությունը և բազմազանությունը պահպանելը, ինչպես նաև երաշխավորել, որ բնական ռեսուրսների ցանկացած օգտագործումը հավասարաչափ է ու կայուն բնապահպանության տեսանկյունից: IUCN-ի կենտրոնակայանը գտնվում է Շվեյցարիայի Գլանդ քաղաքում:	Կոնվենցիայի շրջանակներում IUCN-ին վերապահված դերակատարությունն ընդգրկում է՝ • Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու նպատակով առաջադրած հուշարձանների գնահատում, • Համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բնության հուշարձանների պահպանվածության վիճակի մոնիթորինգի իրականացում, • անդամ պետությունների ներկայացրած միջազգային աջակցության հայտերի ուսումնասիրություն, • ներդրումների և աջակցության տրամադրում կարողությունների կառուցման բնագավառում:
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն 7, Ֆոնտենոյ հրապարակ 75352 Փարիզ 07 SP Ֆրանսիա Հեռ. +33 (0)1 45 68 11 04 Ֆաքս. +33 (0)1 45 68 55 70 Էլ. փոստ. http://whc.unesco.org	Հիմնադրվելով 1992 թ.-ին՝ Համաշխարհային ժառանգության կենտրոնը հիմնական խողովակն ու համակարգողն է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համակարգում բոլոր այն գործերի, որոնք առնչվում են Համաշխարհային ժառանգությանը: Երաշխավորելով կոնվենցիայի կիրառումը՝ այն կազմակերպում է Համաշխարհային ժառանգության կոմիտեի տարեկան նիստերը, խորհրդատվություն է տրամադրում անդամ պետություններին հուշարձանների անվանակարգերի նախապատրաստման հարցում, կազմակերպում է միջազգային աջակցության տրամադրումը Համաշխարհային ժառանգության հիմնադրամից ըստ ներկայացված հայտերի, ինչպես նաև համակարգում է հուշարձանների պահպանվածության վիճակի վերաբերյալ զեկուցների ներկայացման, իսկ սպառնալիքների դեպքում անհապաղ միջոցառումների իրականացման աշխատանքները: Կենտրոնը նաև կազմակերպում է տեխնիկական սեմինարներ և աշխատաժողովներ, թարմացնում է Համաշխարհային ժառանգության ցանկը և շտեմարանը, մշակում է տեխնիկական ձեռնարկներ ժառանգության պահպանության համար երիտասարդների շրջանում իրազեկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ և հանրությանն իրազեկված է պահում Համաշխարհային ժառանգության հիմնախնդիրների վերաբերյալ:	



ՅՈՒՆԵՍԿՕ



Համաշխարհային
ժառանգության
կոմիտեի գրասենյակ

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք՝

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կենտրոն

Ֆոնտենոյ հրապարակ 7
75352 Փարիզ 07 SP, Ֆրանսիա
Հեռ.՝ +33 (0) 1 45 68 11 04
Ֆաքս՝ +33 (0) 1 45 68 55 70
<http://whc.unesco.org>